## ՋՈՆ ԲԻՎԵՐ

ՀԱՆՐԱՃԱՆԱՉ ՀԵՂԻՆԱԿ՝ ԸՍՏ *«USA TODAY»* ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ

# X

## ԲԱԶՄԱՊԱՏԿԻ՛Ր
## ԱՍՏԾՈՒՑ ՔԵԶ ՏՐՎԱԾ ՆԵՐՈՒԺԸ

Ընդգրկում է «*Բազմապատկում*»
DVD հավաքածուն



Սիրելի՛ Ընկեր,

Մեզնից յուրաքանչյուրը Նրա ձեռքի գործն է՝ ստեղծված Քրիստոս Հիսուսում բարի գործերի համար: Դուք վերստին ծնվել եք շնորհքի ձրիաբար տրված պարգևով՝ Աստծո զավակ լինելու համար, և դուք զորություն եք ստացել նույն այդ շնորհքով՝ հատուկ նպատակի համար: Դուք գիտակցո՞ւմ եք, որ ձեզանում կա զարմանալի ներուժ՝ Աստծուց տրված պարգևների և կարողությունների տեսքով, որպեսզի իրականացնեք այդ նպատակը:

Այն պարգևները, տաղանդները և կարողությունները, որոնք շնորհվել են ձեզ, նախատեսված չեն ձեզ համար. դրանք ձեր միջոցով պետք է տրվեն այլ մարդկանց: Ձեզանում կա այն, ինչ Աստված կամենում է, որ ունենան այլ մարդիկ: Մեզնից յուրաքանչյուրը պետք է ճանաչի իր պարգևները, հավատարմորեն տնօրինի դրանք և նպատակաուղղված օգտագործի այլ մարդկանց օգտի և Թագավորության տարածման համար:

Երջանիկ և օրհնված է այն մարդը, որը գիտի իր պարգևների մասին և գործում է դրանցով: Դժբախտ և ճնշված է այն մարդը, որը փորձում է գործել այլ մարդու պարգևներով: Լինելով հավատարիմ և համագործակցելով Աստծո շնորհքի հետ՝ Նրա օծության ներքո, մենք պետք է ձգտենք բազմապատկել մեր պարգևները՝ ոչ թե պայքարի, այլ հանգստի դիրքից:

Դուք օծված ու զորացված եք Նրա շնորհքով և օծությամբ: Եղե՛ք վճռական և առա՛ջ գնացեք, որպեսզի մեծ գործեր անեք Աստծո համար:

Ձեզ հետ միասին՝





MessengerX.com

Ջոն Բիվեր
JohnBevere@ymail.com

MESSENGER INTERNATIONAL
MessengerInternational.org

X

ՋՈՆ ԲԻՎԵՐ

ՀԱՆՐԱՃԱՆԱՉ ՀԵՂԻՆԱԿ՝ ԸՍՏ *«USA TODAY»* ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ

# X

## ԲԱԶՄԱՊԱՏԿԻ՛Ր ԱՍՏԾՈՒՑ ՔԵԶ ՏՐՎԱԾ ՆԵՐՈՒԺԸ

***X: Multiply Your God-Given Potential*** by John Bevere, Armenian
© 2021 Messenger International
MessengerInternational.org
Originally published in English as X: Multiply Your God-Given Potential
Additional resources in Armenian by John and Lisa Bevere are available for free download and video streaming at: **MessengerX.com** and on the **MessengerX** App.
To contact the author: JohnBevere@ymail.com

This book is a gift from Messenger International and is
NOT FOR SALE

*«X. Բազմապատկի՛ր Աստծուց քեզ տրված ներուժը»*, Ջոն Բիվեր, հայերենով
© 2021 Messenger International
MessengerInternational.org
Սկզբնապես հրատարակվել է անգլերենով, «X: Multiply Your God-Given Potential» վերնագրով
Հավելյալ նյութեր հայերենով հասանելի են անվճար ներբեռնման և հոսքային հեռարձակման համար **MessengerX.com** կայքում և **MessengerX** հավելվածում:
Հեղինակի հետ կապ հաստատելու համար. JohnBevere@ymail.com

Այս գիրքը նվեր է «Messenger International» ծառայության կողմից և
ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ

Download on the App Store
GET IT ON Google Play

App Store-ը Apple Inc.-ի ապրանքանիշն է, որը գրանցված է ԱՄՆ-ում և այլ երկրներում:
Google Play-ը և Google Play-ի պատկերանիշը Google LLC- ի ապրանքանիշերն են:

*Ընծայվում է մեր որդիների սքանչելի կանանց...*

Լիզան և ես խորապես սիրում ենք ձեզ: Յուրաքանչյուրդ ունեք ներքևում թվարկված հրաշալի հատկանիշները և ավելին, պարզապես այս մի քանիսն առավել արտահայտիչ են ձեր կյանքում.

*Ջուլիաննա*

Ամուսնացել է Էդիսոնի հետ 2009 թվականի հոկտեմբերի 25-ին:

Դու գեղեցիկ և իմաստուն ես:

Դու միշտ կլինես իմ առաջին դուստրը:

*Ջեսիկա*

Ամուսնացել է Օսթինի հետ 2018 թվականի սեպտեմբերի 24-ին:

Դու բարի և հմայիչ ես:

Ցանկացած վայր, որտեղ դու հայտնվում ես, լցվում է ուրախությամբ:

*Կրիսչեն*

Ամուսնացել է Ա՛րդենի հետ 2018 թվականի նոյեմբերի 18-ին:

Դու շնորհալի ես և մեղմ սիրտ ունես:

Դու հիասքանչ կերպով ես սիրում մեր որդուն:

*Ապագա տկն. Ալեք Բիվեր*

Իմ սիրտը փափագում է հանդիպել մեր ապագա դստերը:

Ես արդեն խորապես սիրում եմ քեզ:

Յուրաքանչյուրդ ուրախություն է պարգևում Լիզային և ինձ:

Շնորհակալություն մեր ընտանիքը մեծացնելու համար:

Հավիտյան՝ մեր դուստրեր:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Այս գրքի մասին IX

1. Ընդհանուր պատկեր 1

2. Փոխանցված կարողություններ 17

3. Անկեղծորե՛ն գնահատեք ձեզ 33

4. Տնտեսներ 45

5. Հավատարմություն 63

6. Աշխատասիրություն և բազմապատկում 81

7. Մեծ բազմապատկում 97

8. Մարտավարական գաղափարներ 113

9. Ներդրում 131

10. Խթանիչ 151

11. Նմանակե՛ք ինձ 169

12. Բազմապատկման խոչընդոտներ Ա 189

13. Բազմապատկման խոչընդոտներ Բ 203

14. Բացահայտե՛ք և զարգացրե՛ք ձեր պարգևները 217

15. Օծված 237

Հավելված 249

Նշումներ 252

# ԱՅՍ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

Այս գրքի էջերում դուք կգտնեք աստվածաշնչյան գաղափարներ և մարտավարություններ, որոնք կօգնեն բացահայտել ձեր նպատակը, բորբոքել ձեր եռանդը և իրագործել ձեր ներուժը: Յուրաքանչյուր գլխում ընդգրկված են նաև հարցեր մտորելու համար, որոնք կօգնեն ձեզ անձնավորել այն, ինչ սովորում եք:

Եթե ուզում եք ավելին իմանալ բազմապատկելու մասին, ես ստեղծել եմ հավելյալ նյութեր, որոնց թվում են վիդեո դասեր, ուղեցույց-ձեռնարկ և այլ առցանց նյութեր, որոնք կարելի է օգտագործել ինքնուրույն կամ փոքր խմբերում: Դուք կարող եք ստանալ այդ նյութերը, ինչպես նաև իմ նյութերի ամբողջ դարանը՝ նախատեսված աշակերտության համար, MessengerX.com կայքում: Մեր նյութերն օգտագործել են միլիոնավոր մարդիկ, և մեր նպատակն է հասանելի դարձնել դրանք յուրաքանչյուրին՝ անկախ գտնվելու վայրից, լեզվից և ֆինանսական վիճակից (դուք կկարդաք այս մասին այս գրքում): Մեկ րոպե հատկացրեք՝ այցելելով մեր կայքը և միանալով մեր ավետաբերների համաշխարհային ընկերակցությանը:

Եվ եթե ունեք հարցեր, անվարան գրե՛ք ինձ և մեր «Մեսինջեր ինտերնեյշնլ» ծառայության թիմին:

Ուրախ եմ, որ միասին ենք,
Ջոն

*«Տիրոջ երկյուղն իմաստության հիմքն է... Իմաստությունը կբազմապատկի քո օրերը և կավելացնի տարիներ քո կյանքին: Եթե դու իմաստուն դառնաս, դու ես օգուտ ստանալու դրանից»:*

– Առակաց 9.10-12, NLT

1

# Ընդհանուր պատկեր

Այս պատմությունը տեղի ունեցավ 2012 թվականին: Ես պետք է քարոզեի Լոս Անջելեսի տարածքում գտնվող մի եկեղեցու շաբաթավերջի հավաքույթներին: Սովորաբար ես ինքնաթիռով տեղ եմ հասնում շաբաթ ցերեկը, ծառայում եմ շաբաթ երեկոյան և կիրակի առավոտյան և տուն եմ վերադառնում կիրակի ցերեկը: Այս անգամ սահմանված կարգը փոխվելու էր:

Մեր ծառայության գործընկերներից մեկը (ես կանվանեմ նրան Սթեն), իմանալով, որ պետք է քարոզեի Լոս Անջելեսի տարածքում, զանգեց ինձ և հարցրեց, թե արդյո՞ք կցանկանայի գոլֆ խաղալ հայտնի «Ռիվյերա» քաղաքամերձ ակումբի խաղադաշտում: Կարիք չկար, որ երկար մտածեի, քանի որ վաղուց էի ցանկանում խաղալ այնտեղ: Ես խանդավառված պատասխանեցի.

- Իհա՜րկե, մեծ սիրով:

Թույլ տվեք մի փոքր նախապատմություն ներկայացնել: Ավելի քան 35 տարի ճանապարհորդելու և Աստծո Խոսքը քարոզելու ընթացքում ժամանակ առ ժամանակ իմ ուղերձների մեջ անդրադառնում եմ գոլֆ խաղալու նախասիրությանս: Տարիներ շարունակ այս երևույթի չծրագրված, բայց հաճելի արդյունքը եղել է աշխարհի լավագույն ակումբներից մի քանիսում գոլֆ խաղալու հրավերներ ստանալը: Եվ սա հերթական նման դեպքն էր:

Այս հրավերը *շատ հատուկ* էր: «Ռիվյերան» բացառիկ և փակ ակումբ է, և այնտեղ գնալը շատ դժվար է: Ամեն տարի այդ խաղադաշտում անցկացվում է «Պրոֆեսիոնալ գոլֆ խաղացողների ընկերակցության» «Ջենեսիս ինվիտեյշնլ» կոչվող միջոցառումը (նախկինում՝ «Լոս Անջելեսի բաց մրցույթ»): Այդ դաշտում անցկացվել են նաև այլ խոշոր մրցույթներ՝ մի քանի «ԱՄՆ-ի բաց» և «Պրոֆեսիոնալ գոլֆ

խաղացողների ընկերակցության» առաջնություններ, «ԱՄՆ-ի սիրողական» և այլ ակնառու մրցույթներ:

Շաբաթ օրը, վաղ առավոտյան, Սթենի հետ մեքենայով գնացինք այդ երազանքի խաղն իրականացնելու համար: Այդ օրն է՛լ ավելի հաճելի էր այն պատճառով, որ իմ մտերիմ ընկերներից մեկը՝ Ահարոն Բեդլին, ընդամենը մեկ տարի առաջ հաղթանակ էր տարել այդ դաշտում՝ «Լոս Անջելեսի բաց մրցույթում»: Ես ակնկալում էի այդ խաղը՝ մտովի վերախաղարկելով նրա ուշագրավ հարվածներից մի քանիսը, որոնցով նա հաղթանակ էր տարել 2011 թվականի մրցույթում:

Ես գրավեցի առաջին չորս փոսիկը՝ երեքով ավելի փարով (ես մի փոքր լարված էի), բայց ավարտեցի ռաունդը երկուսով պակաս փարով: Սթենը և ես արտակարգ ժամանակ անցկացրինք. այդ առավոտն իսկապես հիշարժան էր՝ առանց չափազանցության:

Երբ վերադառնում էինք հյուրանոց, որը Լոս Անջելեսի կենտրոնում էր, Սթենը սրտագին հարցրեց.

- Ջո՛ն, կարո՞ղ եմ մի հարց տալ, որի մասին որոշ ժամանակ լրջորեն մտածում եմ:

- Իհա՛րկե:

Նա անկեղծ և բաց սրտով ասաց.

- Ջո՛ն, վերջին երկու տասնամյակում ես եռանդուն և ջանասիրաբար աշխատել եմ և տրամադրել եմ անթիվ ժամեր՝ իմ ձեռնարկությունները կառուցելու համար: Իմ անձնական կապիտալը հավասար է ինը միլիոն դոլարի: Ներկա հաճախորդներիս հետ իմ գործն ընթանում է անխափան: Իմ երկարամյա քրտնաջան աշխատանքի արդյունքում կնոջս և երեխաներիս կյանքը ֆինանսապես ապահովված է:

Այնուհետև նա տվեց իր հարցը.

- Ես արդեն հիսունն անց եմ: Ինչո՞ւ պետք է աշխատեմ նույն ուժերով: Ինչո՞ւ պայքարեմ՝ իմ ձեռնարկությունների կապիտալը հաջորդ տասը տարվա ընթացքում 35 միլիոն դոլարի հասցնելու համար:

Սուրբ Հոգին անմիջապես իմաստություն տվեց ինձ պատասխանելու համար.

- Այսպես կպատասխանեմ, - ասացի ես: - Պատկերացրու, քեզ ասում եմ. «Սթե՛ն, տարիներ շարունակ ես ջանասիրաբար աշխատել եմ և 17 գիրք եմ գրել, որոնք այժմ թարգմանված են 80 լեզուներով՝ միլիոնավոր օրինակներով: Վերջին 25 տարում ես թռչել եմ ավելի քան 16 միլիոն կիլոմետր, պայքարել եմ ժամային գոտիները փոխելուց առաջացած բիոռիթմերի խախտման հետ, հանդիպել եմ տարատեսակ մշակույթների, փորձել եմ տարօրինակ կերակուրներ և կանգ եմ

առել փոքրիկ հյուրանոցներում, որպեսզի աշխարհով մեկ կարողանամ ծառայել Ավետարանով: Իմ ծառայությունը լավ վիճակում է, և ֆինանսները կայուն են: Լիզան և իմ երեխաները նույնպես ապահովված են: Ինչո՞ւ ես պետք է շարունակեմ աշխատել նույն ուժերով:

Ամեն ինչ գերազանց ստացվեց: Նա պատասխանեց՝ քթի տակ ծիծաղելով.

- Այդ դեպքում ես չէի ցանկանա լինել քո տեղում, երբ հանդիպեիր Հիսուսին:

Ես անմիջապես ասացի.

- Սթե՛ն, քիչ առաջ դու ասացիր ինձ ճիշտ նույնը քո գործի մասին:

Նրա ժպիտն անմիջապես անհայտացավ: Ցնցված՝ նա կտրեց իր հայացքը ճանապարհից՝ ուղղելով ինձ: Չհավատալով լսածին՝ նա հարցրեց.

- Ինչո՞ւ ես այդպես կարծում:

- Սթե՛ն, Աստված օժտել է Իր զավակներից յուրաքանչյուրին: Նա պարգևներ է տվել մեզ՝ Իր թագավորությունը կառուցելու համար: Սակայն մենք ենք այդ պարգևների տնտեսները և ամեն վայրկյան կարող ենք որոշել գործածել դրանք երեք հնարավոր կերպով.

Մենք կարող ենք օգտագործել այդ պարգևները, որպեսզի կառուցենք Աստծո թագավորությունը:

Մենք կարող ենք օգտագործել այդ պարգևները, որպեսզի կառուցենք մեր կյանքը:

Եվ մենք կարող ենք ընդհանրապես անտեսել այդ պարգևները:

Սթենն ուշադիր լսում էր. այնպես որ, ես շարունակեցի.

- Իմ ակնհայտ պարգևների թվում է գրելը և քարոզելը: Քո պարգևներն առնչվում են գործարարության և նվիրատվությունների հետ: Իմ օրինակը ծիծաղելի թվաց քեզ, սակայն քո հարցը ճիշտ նույն բանի մասին էր: Քո պարգևները նույնքան կարևոր են Աստծո թագավորությունը կառուցելու համար, որքան իմը: Իրականում, քո պարգևները կարող են ավելի կարևոր լինել, պարզապես դու չես տեսնում ընդհանուր պատկերը:

Մենք շարունակեցինք զրուցել այս մասին: Անչափ հաճելի էր տեսնել Սթենի մտքերի և վերաբերմունքի արագ փոփոխությունը մեր զրույցի ընթացքում:

Վեց ամիս անց ես զանգեցի Սթենին, որպեսզի իմանայի, թե ինչպես էր: Ինձ սպասում էր ևս մեկ անմոռանալի զրույց:

- Ողջո՛ւյն, Սթե՛ն, ինչպե՞ս ես:

- Ուզո՞ւմ ես անկեղծ լինեմ, - ես չէի սպասում նման պատասխանի:

- Այո՛, իհա՛րկե:

- Այն, ինչ ասացիր վեց ամիս առաջ, հանգիստ չէր տալիս ինձ՝ լավ իմաստով:

- Եվ ի՞նչ ես պատրաստվում անել:

Նա ծիծաղելով ասաց.

- Ես կաշվիցս դուրս եմ գալիս, որպեսզի հասցնեմ իմ ձեռնարկությունների կապիտալը 35 միլիոն դոլարի՝ Աստծո թագավորությունը կառուցելու համար:

- Կեցցե՛ս:

Սթենը յուրացրել էր այն ճշմարտությունը, որ ինքը դիտորդ չէ Աստծո թագավորության տարածման մեջ, այլ՝ կարևոր մասնակից: Նա որսացել էր այն տեսիլքը, որն անհասանելի է մնում շատերի համար՝ այն, որ իր եզակի կարողություններն ունեն հավիտենական արժեք, ոչ միայն ժամանակավոր: Նա լիովին հասկացել էր, որ իր պարգևն ուներ ավելի մեծ նպատակ, քան իրեն և իր ընտանիքն ապահովելը: Ես այնքա՜ն շնորհակալ եմ, որ նա անմիջական, անկեղծ և խոնարհ էր: Այս հատկանիշներն օգնեցին նրան ընդունել այն ճշմարտությունը, որը փոխելու էր նրա կյանքը: Եվ, շնորհիվ նրա վկայության, փոխելու էր ոչ միայն նրա, այլև շատերի կյանքը:

Իր լուսավորման շնորհիվ Սթենը ձգտեց բազմապատկման, և նրա օրինակը ցույց է տալիս այս գրքի գլխավոր նպատակը: Ցավալի է, որ տարիներ շարունակ իմ ճանապարհորդությունների ընթացքում, շփվելով հավատացյալների հետ, կարող եմ ասել, որ նրանցից շատերը մտածում են ճիշտ այնպես, ինչպես Սթենը: Իրականում, եթե ինձ լրջորեն հարցնեին այս մասին, ես կասեի, որ այսպես է մտածում հավատացյալների մեծ մասը: Թեև շատերը չեն խոստովանում սա նույնքան վճռականորեն, որքան Սթենը, շփման ընթացքում այս մտածելակերպը բացահայտվում է:

Եթե դուք կասկածի եք ենթարկում ձեր կյանքի կոչումը այդպիսի մտքերով, ես անչափ ուրախ եմ, որ այս գիրքը հայտնվել է ձեր ձեռքում: Ես անկեղծորեն հույս ունեմ, որ ձեր պատկերացումը նույնպես կփոխվի:

Ինչպես և Սթենը, անկեղծ եղեք ձեզ հետ. դա կօգնի տեսնել ընդհանուր պատկերը: Անկեղծությամբ և խոնարհությամբ դուք կբացահայտեք և վստահաբար կհավատաք, որ կարող եք բազմապատկել ձեր եզակի պարգևները՝ Աստծո թագավորությունը կառուցելու համար: Դուք կանչված եք Աստծուց նույնքան, որքան ձեր հովիվը կամ ես: Ձեր

կոչումը նույնքան օրինավոր է, որքան Բիլլի Գրեհեմի կամ այլ հանրահայտ ծառայողի կոչումը:

Մենք կխոսենք այն մասին, թե ինչպես բացահայտել, զարգացնել և ամենակարևորը՝ բազմապատկել ձեր պարգևները՝ ձեր եզակի կոչումն ընդլայնելու համար: Այս գրքի աստվածաշնչյան հատվածները և պատմությունները կկառուցեն ձեր հավատքը, ինչի շնորհիվ ձեր արդյունավետությունը մեծապես կավելանա: Ես անձամբ կարող եմ վկայել այս մասին. սա տեղի ունեցավ ինձ հետ, երբ գրում և խմբագրում էի այս գիրքը:

## ԾՆՎԱԾ՝ ՆՊԱՏԱԿՈՎ՝ ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿԻ ՀԱՄԱՐ

Եկեք սկսենք՝ ուսումնասիրելով շատ հայտնի աստվածաշնչյան հատված.

> «Որովհետև *շնորհքով* եք փրկված՝ հավատքի ձեռքով, և սա ոչ թե ձեզնից է, այլ *Աստծո պարգևն է*, ոչ թե գործերից, որ մեկը չպարծենա» (Եփեսացիների 2.8,9):

Այս երկու խոսքերն *Աստծո շնորհքի* մասին են: Լիովին ակնհայտ է, որ մենք փրկված ենք շնորհքով, և որ սա պարգև է Աստծուց: Քսանմեկերորդ դարում եկեղեցին փայլուն կերպով փոխանցել է այս ճշմարտությունը: Մենք ոչ մի դեպքում չենք կարող այնքան քրտնաջան աշխատել, այնքան սուրբ կյանք վարել և այնքան զոհաբերել, որ վաստակենք մեր Արարչի՝ Ամենակարող Աստծո հետ հավիտենությունն անցկացնելու արտոնությունը: Այս հայտնի աստվածաշնչյան հատվածը եղել է այս կարևոր ճշմարտության գլխավոր հղումներից մեկը, եթե ոչ՝ ամենագլխավորը: Այնուամենայնիվ, այն, ինչ գրված է սրանից հետո, անտեսվել է.

> *«Որովհետև* Նրա ստեղծվածն ենք՝ Քրիստոս Հիսուսով հաստատված բարի գործերի համար, որոնց համար Աստված առաջուց պատրաստեց մեզ (կամ՝ որոնք Աստված առաջուց պատրաստեց մեզ համար), որ նրանցում *վարվենք»* (Եփեսացիների 2.10):

Ուշադրություն դարձրեք, որ 9-րդ խոսքին հաջորդում է *«որովհետև»* բառը: Այս բառը շաղկապ է, որը միացնում է երկու նախադասություն: Այլ կերպ ասած՝ նախորդ երկու խոսքերն ընդամենը փոխանցվող

մտքի սկիզբն են, ոչ թե առանձին ավարտուն միտք: «Որովհետև» բառը նշանակում է «այս պատճառով», այնպես որ, 8-րդ և 9-րդ խոսքերը մեջբերելիս՝ 10-րդ խոսքը չպետք է անտեսվի: Հակառակ դեպքում, դուք լիովին չեք ընկալի փոխանցվող միտքը:

Տասներորդ խոսքում գրված է, որ մենք Նրա ձեռքի գործն ենք՝ ստեղծված հատուկ նպատակի՝ բարի գործեր անելու համար: Այնպես որ, ըստ էության, Պողոսն ասում է հետևյալը այս երեք խոսքերում.

> «Մենք փրկված ենք շնորհքով՝ *առաջին հերթին Աստծո զավակ լինելու համար, և* նույն շնորհքը հավասարապես զորացրել է մեզ՝ *գործելու համար»:*

Մենք ոչ մի դեպքում չպետք է չափից ավելի շեշտադրենք մի ճշմարտություն՝ մյուսն անտեսելու հաշվին: Սակայն թույլ տվեք նախապես ասել, որ մեր ինքնությունը Քրիստոս Հիսուսում շատ ավելի կարևոր է, քան մեր գործերը, քանի որ *մեր բոլոր գործերը պետք է բխեն մեր ինքնությունից:*

Հեշտ է խույս տալ գործելու պահանջից, քանի որ դրանով ազատում ենք մեզ ցանկացած ճնշումից՝ կապված այն բանի հետ, որ մենք պետք է ինչ-որ բան անենք, որպեսզի կառուցենք Աստծո թագավորությունը: Բայցևայնպես, ճշմարտությունն այն է, որ հենց մեր գործերն են ուժ հաղորդում մեզ: Հիսուսն ասում է. «Իմ կերակուրն այն է, որ Ինձ ուղարկողի կամքն անեմ և Նրա գործը կատարեմ» (Հովհաննես 4.34): Նա նույնպես ասում է. «Ինչպես Իմ Հայրն Ինձ ուղարկեց, Ես էլ ձեզ եմ ուղարկում» (Հովհաննես 20.21): Միավորելով այս երկու պնդումները մենք հստակ տեսնում ենք, որ մեր կերակուրն է՝ կատարել և ավարտել մեզ ուղարկող Հիսուսի կամքը: Կերակուրն այն է, ինչն ուժ է տալիս մեզ: Եթե մենք չսնվենք, կտկարանանք և պիտանի կլինենք շատ քիչ բանի համար:

Այժմ վերագրենք սա մեր հոգևոր կյանքին: Եթե չկատարենք մեզ ուղարկող Հիսուսի կամքը, մենք կտկարանանք՝ դառնալով խոցելի գայթակղության համար:

Հիսուսի հետ ավելի քան քառասուն տարի վարվելուց հետո ես նկատել եմ, որ հավատքից հեռանալու գլխավոր պատճառներից մեկը գործերի բացակայությունն է: Մարդիկ դառնում են ծույլ և անգործ իրենց կոչման հանդեպ և չեն էլ նկատում, թե ինչպես են հայտնվում ինքնագոհ արբեցության կամ անբարոյության մեջ, կամ տարվում են այնպիսի հետաքրքրություններով, որոնք վերադարձնում են իրենց այս աշխարհի կենսառիթմին: Նրանք կորցնում են իրենց հոգևոր ուժը: Ամփոփելով սա՝ կարելի է ասել.

*Այն, ինչ մենք անում ենք, զորացնում է մեզ:*

Թույլ տվեք կրկնել այս երեք աստվածաշնչյան խոսքերի ճշմարտությունը: Դուք վերստին ծնվել եք Աստծո ձրիաբար տրված շնորհքով՝ Աստծո զավակ լինելու համար, և դուք զորություն եք ստացել նույն շնորհքով՝ գործելու համար: Աստվածաշունչը պնդում է, որ Աստված նախապես ծրագրել է մեր բոլոր գործերը: Դավիթը գրում է.

> «Դու տեսար ինձ մինչև իմ ծնվելը: Իմ կյանքի ամեն օրը գրված էր Քո գրքում: Ամեն վայրկյանը ծրագրված էր, երբ իմ օրերից ոչ մեկը դեռ չէր եղել» (Սաղմոս 139.16, NLT):

Աստված ձեզ համար գործեր է պատրաստել մինչև ձեր ծնվելը: Եվ Նա գրի է առել դրանք առանձին գրքում: Կարելի է միայն պատկերացնել, թե որքան մեծ է այդ գիրքը, քանի որ դրանում գրի է առնված մեր կյանքի ամեն վայրկյանը: Այն առաջադրանքները, որոնք Նա ծրագրել է մեզ համար, վերաբերում են Իր թագավորությունը կառուցելուն: Նրա խորին ցանկությունն է, որ մենք կատարենք այն, ինչ ծրագրել է մեր կյանքի համար, սակայն չկա երաշխիք, որ մենք կանենք դա: Ուշադրություն դարձրեք, որ Եփեսացիների 2.10-ում գրված է՝ «որ նրանցում *վարվենք»:* Այս խոսքում գրված չէ՝ «և մենք նրանցում *կվարվենք»,* այլ՝ *«որ* նրանցում *վարվենք»:* Մենք ազատ կամք ունենք. Նա նախապես պատրաստել է գործեր մեզ համար, սակայն մենք ենք որոշում՝ արդյո՞ք կվարվենք ըստ Նրա ծրագրի:

Ես համոզված եմ՝ երբ մենք կանգնենք Հիսուսի առջև հավատացյալների ատյանում (որտեղ վարձատրվելու ենք մեր գործերի համար՝ որպես քրիստոնյաներ, կամ վնաս ենք կրելու, որ թերացել ենք), Նա կբացի այդ գիրքը և կասի. «Եկ համեմատենք, թե որքանով է քո կյանքը համապատասխանել այն ծրագրին, որն Իմ Հայրը և Ես սկզբնապես կազմել էինք քեզ համար»: (Ինչ վերաբերում է դատաստանին, երկու աստվածաշնչյան խոսքերում գրված է, որ «գրքերը բացվեցին». կարդացե՛ք Դանիել 7.10 և Հայտնություն 20.12): Ես հավատում եմ, որ Աստված գրել է այդ գրքերը մեր կյանքի մասին մինչև մեր ծնվելը: Ինչ վերաբերում է մեր հատուկ կոչմանը, մենք չենք դատվի ըստ այն գործերի, որոնք կատարել ենք, այլ՝ ըստ այն գործերի, որոնք կատարելու համար կանչված ենք եղել: Սա սթափեցնող միտք է:

Այս պահին հնարավոր է, որ մի փոքր խուճապի մատնվեք: Դրա կարիքը չկա: Կա երեք կարևոր բան, ինչը պետք է հաշվի առնել: Առաջինը՝ Աստված ավելի շատ է ձգտում, որ կատարեք այն, ինչի համար Նա կանչել է ձեզ, քան դուք: Նա ավելի շատ է ցանկանում, որ բացա-

հայտեք ձեր կոչումը, քան դուք: Երկրորդը՝ ձեր կոչման մեջ լիարժեք կերպով լինելու համար անհրաժեշտ է աճ, որն ընթացք է, ոչ թե մեկանգամյա իրադարձություն. այնպես որ, հակառակվե՛ք անհամբերությանը տեղի տալու ցանկությանը: Երրորդը՝ այս գրքում դուք կգտնեք օգտակար խորհուրդներ թե՛ Աստվածաշնչից, թե՛ կյանքի փորձից՝ ձեր կոչումը բացահայտելու և զարգացնելու համար:

Ահա մի օրինակ՝ այս ամենը բացատրելու համար: Ենթադրենք, ես քաղաքաշինության կոմիտեի նախագահ եմ և ցանկանում եմ տպավորիչ բնակելի, հանգստի և առևտրային համալիր կառուցել քաղաքի կենտրոնում: Որպես քաղաքաշինության կոմիտեի նախագահ՝ նաև գլխավոր ճարտարապետն եմ, և կազմում եմ այդ համալիրի գլխավոր նախագիծը հմուտ շինարարների և ճարտարապետների հետ: Ես ցանկանում եմ, որ այդ համալիրում լինեն խաղային տարածքներ, կարուսելներ, մարզադաշտեր, շատրվաններ և այգիներ՝ հանգստի և զբոսանքի համար: Նույնպես ցանկանում եմ ընդգրկել մանրածախ առևտրի խանութներ բնակելի շենքերի առաջին հարկերում, նաև ռեստորաններ, կինոթատրոններ և այլ ստեղծարար տարրեր՝ մեր համալիրը եզակի դարձնելու համար:

Նախագիծը պատրաստ լինելուն պես ես որոշում եմ, թե ինչ կապալառուներ են անհրաժեշտ՝ իմ գլխավոր նախագծի առանձին մասերը կատարելու համար: Ես վարձում եմ մի շարք կապալառուների և տալիս եմ իրենց առաջադրանքների ժամանակացույցը: Նախագիծը պատրաստ է սկսելու համար:

Եթե բոլոր կապալառուներն անեն ճիշտ այն, ինչ ես խնդրում եմ, այդ հսկայածավալ նախագիծը սահուն կերպով կկառուցվի և անխափան կգործի: Սակայն ի՞նչ կլինի, եթե կապալառուներից մի քանիսն առաջնահերթ չհամարեն այդ նախագիծը: Ի՞նչ, եթե նրանք ընդունեն այդ առաջադրանքը, սակայն շինարարության համար նախատեսված ժամանակահատվածում օգտագործեն իրենց հմտությունները՝ այլ աշխատանքներ կատարելու համար: Ի՞նչ կլինի, եթե նրանք գնան ձկնորսության, գոլֆ խաղալու կամ հաճախեն սպորտային միջոցառումների այնքան հաճախ, որ աշխատանքն անտեսվի: Ի՞նչ կլինի, եթե մյուսները ծույլ գտնվեն և լրջորեն չվերաբերվեն իրենց գործին: Եթե ես լիովին կախված լինեմ այդպիսի կապալառուներից, նախագիծը չի կատարվի ըստ ժամանակացույցի: Կարելի է ասել, որ այն այդպես էլ չի ավարտվի:

Կապալառուներն իրենք են որոշում, թե ինչպես վարվեն իրենց ժամանակի և տաղանդների հետ: Այնուամենայնիվ, որպես քաղաքաշինության կոմիտեի նախագահ, ես չեմ հանդուրժելու լուրջ հետաձ-

գումներ կամ նախագծի անավարտ մնալու տարբերակը: Փոխարենը, ես բերելու եմ այլ կապալառուների՝ աշխատանքը կատարելու համար:

Ի՞նչ կլինի արդյունքում: Սկզբնական կապալառուները վարձատրություն չեն ստանա՝ այն իմաստով, որ չեն լինի հրաշալի թիմի անդամ, որը կառուցեց այդ գեղեցիկ համալիրը: Նրանք չեն կարողանա ցույց տալ իրենց երեխաներին, թոռներին և ընկերներին իրենց կատարած աշխատանքը քաղաքի այդ գեղեցիկ կենտրոնական հատվածում: Նրանց երեխաները չեն կարողանա պատմել մարդկանց, թե ինչ աշխատանքի մեջ են ներգրավված եղել իրենց ծնողները: Նրանք նույնպես կկորցնեն իրենց վարձատրությունը՝ այն իմաստով, որ չեն վճարվի իրենց առաջադրանքի համար:

Դուք կարող եք տեսնել, որ նույն սկզբունքն օգտագործվում է ամբողջ Աստվածաշնչում՝ որպես օրինակ: Աստված ունի մեծ ծրագիր՝ Իր թագավորությունը կառուցելու համար: Այնուամենայնիվ, պատմության ընթացքում Աստված հարկադրված է եղել գործել այնպիսի մարդկանց հետ, որոնք չեն կատարել Իր ցանկությունները: Այնպես որ, Նա հաճախակի ստիպված է եղել փոփոխել Իր սկզբնական ծրագիրը: Ես պարզապես օգտագործում եմ մարդկային հասկացություններ. Աստված գիտի վերջը սկզբից, քանի որ Նա սահմանափակված չէ ժամանակով: Ուստի, ծրագրի «փոփոխությունը» անակնկալ չէր Նրա համար: Նա նախապես գիտեր Իրեն ծառայող մարդկանց որոշումների մասին և արդեն պատրաստվել էր նրանց փոխարինելուն:

Ես կբերեմ մի քանի օրինակ այս մասին այն բազմաթիվ օրինակներից, որոնք կան Սուրբ գրքում: Այսպես պատահեց Աբրահամի հայր Թարայի հետ (վերջերս մեր կրտսեր որդին՝ Ա՛րդենը, հիշեցրեց ինձ այս ճշմարտության մասին): Շատերս գիտենք, որ Աբրահամը ծնվել և մեծացել էր քաղդեացիների Ուր քաղաքում, մինչև որ Աստված կանչեց նրան գնալ Քանանի երկիր: Ոչ այնքան հայտնի է հետևյալ փաստը. եթե ուշադրություն դարձնեք նրա հորը՝ Թարային, դուք կբացահայտեք, որ, ամենայն հավանականությամբ, սկզբում հենց նա էր կանչված եղել այդ առաջադրանքի համար: Գրված է.

> «Եվ Թարան առավ իր որդի Աբրամին և իր թոռանը՝ Առանի որդի Ղովտին, և իր որդի Աբրամի կին՝ իր հարս Սարային, և նրանց հետ քաղդեացիների Ուր քաղաքից դուրս եկավ՝ *Քանանի երկիր գնալու համար:* Եվ եկան մինչև Խառան և *այնտեղ բնակվեցին:* Եվ Թարայի օրերը 205 տարի եղան: Եվ Թարան Խառանում մեռավ» (Ծննդոց 11.31,32):

Կա երկու բան, որ պետք է հաշվի առնենք: Առաջինը՝ ինչո՞ւ որևէ մեկը առանց որևէ պատճառի պետք է տեղափոխեր իր ամբողջ ընտանիքն Ուրից և անցներ ավելի քան հազար կիլոմետր, և այն էլ՝ դեպի Քանանի երկիր: Ուղտերով ճանապարհորդելը դանդաղ և ծանր է: Կանանց և երեխաների հետ դա, հավանաբար, տևեց մի քանի ամիս: Հազիվ թե Թարան կարող էր առցանց դիտել Քանանի լուսանկարները և կարդալ հոդվածներ այն մասին, որ Քանանը հրաշալի երկիր է՝ ապրելու և աշխատելու համար: Նա չիմացավ այդ մասին սոցիալական ցանցերի գրառումներից: Այս հստակ և հեռավոր տեղափոխությունը պետք է ինչ-որ պատճառ ունենար:

Երկրորդը՝ եթե նա գնում էր Քանան, ինչո՞ւ բնակվեց Խառանում: Ինչո՞ւ նա չավարտեց իր ճանապարհը և չհասավ իր նպատակավայրը: Հնարավո՞ր է, որ Թարան իր ճանապարհը չավարտելու գայթակղություն ունեցավ: Հնարավո՞ր է, որ նա ուներ խանգարող ցանկություններ, որ նա բախվել էր դժվարությունների, որ նրա ընտանիքի անդամներից մեկը հոգնել էր ճանապարհորդելուց կամ՝ որ կային այլ շեղող հանգամանքներ: Հնարավո՞ր է, որ նա տեսավ ավելի շատ հնարավորություններ Խառանում և չցանկացավ ռիսկի դիմել՝ կորցնելով դրանք պարզապես Աստծուց ստացած մի խոսքի պատճառով:

Հաշվի առնելով սա՝ կարո՞ղ ենք եզրակացնել, որ Թարան Աստծո առաջին ընտրյալն էր՝ «շատ ազգերի հայր» լինելու համար: Կարելի՞ է ասել, որ սկզբնապես հենց նա պետք է լիներ «հավատքի հայրը», թեև այժմ այդ տիտղոսը պատկանում է Աբրահամին (կարդացե՛ք Հռոմեացիների 4.16,17):

Թարան որոշեց չգնալ մինչև վերջ. նա բնակվեց Խառանում: Ես համոզված եմ՝ եթե նա մնար իր ընթացքի մեջ, այսօր մենք կկարդայինք նրա արկածների և Աստծո հետ կնքած ուխտի մասին: Ես համոզված եմ, որ Իսրայելի ժողովուրդը կհամարեր նրան իրենց հայրը, և որ Հիսուսին կանվանեին «Թարայի զավակը», ոչ թե «Աբրահամի զավակը» (կարդացե՛ք Գաղատացիների 3.16):

Աստծո մեծ ծրագրի փոփոխության ևս մեկ օրինակ էր դատավոր և քահանայապետ Հեղին: Նա և նրա ժառանգները կարգված էին որպես քահանաներ, որոնք պետք է մոտենային Աստծուն՝ ժողովրդի համար: Այնուամենայնիվ, Հեղիի մոտ ուղարկված մի մարգարե հայտարարեց.

> «Տերը՝ Իսրայելի Աստված, ասում է. «Ես խոստացա, որ քո ճյուղը Ղևիի ցեղից միշտ քահանայություն է անելու Իմ առջև: Բայց Ես կպատվեմ նրանց, ովքեր պատվում են Ինձ, և Ես կա-

> նարգեմ նրանց, ովքեր անարգում են Ինձ: Գալիս է ժամանակը, երբ Ես վերջ կդնեմ քո ընտանիքին, և այն այլևս քահանայություն չի անի Իմ առջև»» (Ա Թագավորաց 2.30,31, NLT):

Հեղիի անհնազանդությունն ազդեց և՛ իր, և՛ իր ժառանգների վրա: Եթե Հեղին պատվով վարվեր Տիրոջ առջև, նրա ցեղը կպահպաներ քահանայությունը:

Եվս մեկ օրինակ կարելի է համարել Իսրայելի բոլոր թագավորներին: Առաջինը Դավթի որդի Սողոմոնն էր: Աստված ասաց նրան. «Քանի որ դու չպահեցիր Իմ ուխտը և անհնազանդ գտնվեցիր Իմ պատվերներին, Ես անշուշտ կպատռեմ թագավորությունը քեզնից և կտամ այն քո ծառաներից մեկին» (Գ Թագավորաց 11.11, NLT): Եթե Սողոմոնը հավատարիմ մնար, նրա թագավորությունը երբեք չէր վերցվի իր որդի Ռոբովամից: Թագավորության մեծ մասը տրվեց Հերոբովամին, սակայն հետագայում նա նույնպես հավատարիմ չեղավ: Աստված ասաց նրան.

> «Ես առաջխաղացում տվեցի քեզ հասարակ մարդկանց շարքերից և դարձրի Իմ ժողովուրդ Իսրայելի իշխանը: Ես պատռեցի թագավորությունը Դավթի ընտանիքից և տվեցի այն քեզ: Բայց դու չեղար Իմ ծառա Դավթի պես, որը հնազանդվում էր Իմ պատվերներին և հետևում էր Ինձ իր ամբողջ սրտով և մշտապես անում էր այն, ինչ Ես ցանկանում էի... Եվ քանի որ դու դարձրիր քո մեջքը դեպի Ինձ, Ես աղետ կբերեմ քո դինաստիայի վրա» (Գ Թագավորաց 14.7-10, NLT):

Հերոբովամը մնայուն դինաստիա կունենար, եթե չչարաշահեր իր դիրքը և պարգևները անձնական շահի համար, այլ օգտագործեր դրանք Աստծո թագավորության շահի համար: Նմանատիպ ուղերձ ստացավ Իսրայելի Բաասա թագավորը (կարդացե՛ք Գ Թագավորաց 16.1-7), ինչպես նաև նրանք, որոնց թագավորություն էր վստահվել:

Իմ ասելիքը հետևյալն է. հաճախ մեր անհավատարմությունն Աստծո կանչին՝ ազդում է ոչ միայն մեզ վրա, այլև մեր սերունդների վրա: Թարայի դեպքում դա տեղի չունեցավ, սակայն շատերի դեպքում այդպես էր:

Մենք տեսնում ենք նմանատիպ իրավիճակ նաև մարգարեների կյանքում: Եղիսեն ծառայեց Եղիային և ստացավ նրա օծության կրկնակի չափը: Բայց տարիներ անց Եղիսեի ծառա Գեհեզին, որը պետք է իր հերթին ընդուներ մարգարեական պարգևը, դադարեց կենտրոնա-

նալ կարևորի վրա և զրկվեց իր կոչումից: Նա բորոտ դարձավ և թողեց այն ծառայությունը, որի համար սկզբնապես կանչվել էր (կարդացե՛ք Դ Թագավորաց 5.20-27): Նրա տեղը զբաղեցրեց նոր ծառա (որի անունը նշված չէ)՝ Եղիսեին օգնելու համար:

Նոր կտակարանում սա տեղի ունեցավ Իսկարիովտացի Հուդայի հետ: Քանի որ նա չարաշահեց իր կոչումը և իրեն վստահված պարգևները, նա պետք է փոխարինվեր: Պետրոսն ասաց Վերնատանը հավաքված աշակերտներին (այս մասին գրված է Սաղմոսների գրքում). «Թող մեկ այլ մարդ զբաղեցնի նրա պաշտոնը»: Այնպես որ, այժմ մենք պետք է ընտրենք Հուդային փոխարինող մարդու (կարդացե՛ք Գործք 1.20,21, NLT):

Որքա՜ն ցավալի է, և որքա՜ն ողբերգական է: Մեզ կարող է սթափեցնել միտքն այն մարդկանց մասին, որոնք զղջալու են, քանի որ արժանի կերպով չտնօրինեցին իրենց կոչումը և պարգևները:

Վերադառնանք դրական կողմին. դուք, թանկագի՛ն ընթերցող, ծնվել եք նպատակով՝ հատուկ նպատակի համար: Ձեր կյանքը մեծ արժեք ունի հավիտենականը կառուցելու մեջ: Եվ դա պարզապես հասարակ տղամարդու կամ կնոջ կամքը չէ, այլ որոշված է անձամբ Աստծո կողմից:

## ԴՈՒՔ ԵՔ ՈՐՈՇՈՒՄ ՁԵՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Այն, ինչ կասեմ, կարող է հանկարծակիի բերել ձեզ: *Ձեր արդյունավետությունը որոշում է ոչ թե Աստված, այլ դուք:* Այս պնդումը կարող է աներկյուղ թվալ, եթե դուք հավատում եք, որ ձեր կյանքի բոլոր ձեռքբերումները միմիայն Աստծո գերիշխանության արդյունքն են: Այնուամենայնիվ, ես հավաստիացնում եմ, որ այս պնդումը ո՛չ աներկյուղ է, ո՛չ էլ որևէ չափով փոքրացնում է Աստծո գերիշխանությունը: Այն վկայում է, որ Նա վստահում է մեզ և ցանկանում է, որ Իր որդիները և դուստրերը գործադրեն այն ազատ կամքը, որը Ինքը տվել է մեզ:

Կրկին կարդանք այն սուրբգրային հատվածը, որով սկսեցինք այս գլուխը.

> «Իմաստությունը *կբազմապատկի քո օրերը* և կավելացնի տարիներ քո կյանքին: Եթե դու իմաստուն դառնաս, դու ես օգուտ ստանալու դրանից» (Առակաց 9.10-12, NLT):

Այս ճշմարտությունն այնքա՜ն խրախուսական և ազդեցիկ է: Ի՞նչ է նշանակում *«կբազմապատկի քո օրերը»:* Դա չի կարող նշանակել կյանքի տևողությունը երկարացնելը, քանի որ *«և կավելացնի տարիներ քո կյանքին»* արտահայտությունն արդեն իսկ խոսում է այդ մասին:

Միակ իմաստը, որը դա կարող է ունենալ, ձեր արդյունավետությունն ամեն օր ավելացնելն է: Այլ կերպ ասած, դուք կստանաք ավելին ամեն օրվանից, քան նա, ով չունի Աստծո իմաստությունը:

Ամենայն հավանականությամբ, դուք լսել եք այս ասացվածքը. «Եթե կացինը բութ է, և մարդը չի սրում սայրը, նա պետք է ավելի շատ ուժ գործադրի, բայց իմաստությունը հաջողություն է բերում» (Ժողովող 10.10, NKJV): Այն իմաստության մասին է: Դուք արդյունավետ չեք լինի բութ կացնով (իմաստության պակասի դեպքում): Հակառակը նույնպես ճշմարիտ է. դուք կկարողանաք ավելի շատ ծառեր կտրել սրած կացնով (իմաստությամբ ապրելով): Դուք կբազմապատկեք ձեր արդյունավետությունը՝ օգտագործելով նույն ուժը:

Աստծո իմաստությունն անչափ կարևոր է: Ավելի ուշ այս գրքում ես կպատմեմ մի պատմություն իմ ընկերներից մեկի մասին, որը տասնամյակներ շարունակ անարդյունավետ էր՝ որպես հավատացյալ, բայց, ի վերջո, հոգնեց իր լեթարգիկ վիճակից: Առաջինը, ինչ նա արեց, վեց ամիս Աստվածաշունչը ջանասիրաբար ընթերցելն էր: Դրա շնորհիվ նա իմաստություն ստացավ՝ ավելի արդյունավետ դառնալու համար, և դուք կզարմանաք, երբ կարդաք նրա կյանքի պատմությունը:

Աստվածաշունչն ասում է ոչ միայն իմ ընկերոջը, այլև բոլորիս. «Իմաստություն ստանալը ամենակարևոր բանն է, որ կարող ես անել» (Առակաց 4.7, GNT): Ինձ դուր է գալիս այս պնդումը: Հենց որ հավատաք այս խոսքերին, դուք կտրամադրեք ձեր ժամանակը և ուժերը իմաստություն ստանալուն: Բայց Առակաց 9.11,12-ի կարևորագույն ճշմարտությունը հետևյալն է. «Հենց որ իմաստություն ստանաք, *դուք եք օգուտ ստանալու դրանից»:*

Աստծո իմաստությունը, որով կիսվում եմ այս գրքում, ստացել եմ տարիներ շարունակ փնտրելու, որոնելու և լսելու արդյունքում, և ուղեկցվել է թե՛ դրական, թե՛ բացասական փորձառություններով: Բայց, ինչպես կտեսնեք, ոչ միայն ես, այլև շատերը, որոնց հետ շփվելու արտոնություն եմ ունեցել, վարվել են իմաստությամբ և անասելի պտուղ են բերել: Ես միայն կարող եմ հույս ունենալ, որ կարճ ժամանակ անց դուք կստանաք այն, ինչի համար ինձնից պահանջվեցին տարիներ, և որ դուք շատ ավելի հեռու կգնաք այս իմաստությամբ, քան ես գնացի: Սա մեր Թագավորության գործն է, որում բոլորս մեկ ենք. այնպես որ, եթե դուք օգուտ ստանաք, ես նույնպես օգուտ կստանամ: Եթե դուք գնաք ավելի հեռու, քան ես, դա օգուտ կբերի նաև ինձ, քանի որ բոլորս մեկ ենք: Բոլորս գործում ենք հանուն մեկ ընդհանուր նպատակի և մեկ Թագավորի փառքի:

## ԳԱՂՏՆԻՔ

Անցնենք հաջորդ գլխին հետևյալ հարցով: Դուք կցանկանայի՞ք իմանալ մի գաղտնիք, որի մասին շատերն անտեղյակ են, և որի շնորհիվ ձեր կարողությունները կընդլայնվեն՝ գերազանցելով այն, ինչ երբևէ վերապրել եք:

Կարծում եմ՝ այո՛: Եվ բանն այն է, որ նման գաղտնիք իրականում կա: Եվ շուտով կբացահայտենք այդ ծածուկ ճշմարտությունը:

## ՄՏՈՐԵՔ

1. Համաձայն Եփեսացիների 2.10-ի, մինչև ձեր ծնվելը Աստված ծրագրել է այն ամենը, ինչ պետք է կատարեք ձեր կյանքում: Դուք ցանկացե՞լ եք իմանալ այդ ծրագրերը: Ի՞նչն է խոչընդոտել, որ բացահայտեք դրանք:

2. Դուք ծնվել եք նպատակով՝ հատուկ նպատակի համար: Մտածելով Սթենի պատմության մասին, ինչպե՞ս եք դիտարկում ձեր պարգևները և կարողությունները: Դուք համարո՞ւմ եք, որ դրանք կարևոր են Աստծո թագավորությունը կառուցելու համար, թե՝ ինչպես և Սթենը, դուք էլ չեք տեսնում ընդհանուր պատկերը:

3. Աստծո կամքը կատարելը զորացնում է մեզ: Արդյո՞ք այն, ինչ դուք անում եք հիմա, զորացնում է ձեզ: Դուք սիրո՞ւմ եք ձեր ներկա աշխատանքը: Եթե ոչ, ինչո՞ւ բավականություն չեք զգում:

*«Ուրեմն, քանի որ մենք ունենք տարբեր պարգևներ՝ ըստ այն շնորհքի, որը տրվել է մեզ, եկեք գործածենք դրանք»:*

– Հռոմեացիների 12.6, NKJV

2

# Փոխանցված կարողություններ

Ես Ջիմ անունով մի ընկեր ունեմ, որը 18 տարի շարունակ բարձր դասարանների աղջիկների բասկետբոլի թիմի մարզիչ է եղել: Ամբողջ այդ ընթացքում նա չէր կարողանում հաղթել նահանգի առաջնությունում: Ամեն տարի նրա թիմը կա՛մ պարտվում էր շրջանային եզրափակիչ խաղերում, կա՛մ, հասնելով նահանգային մրցաշարին, պարտվում էր առաջին իսկ փուլում:

Ջիմը պատմում էր ինձ.

- Ես հուսալքված էի և պատրաստ էի հանձնվել, բայց մոտավորապես այդ ժամանակ բացահայտեցի Աստծո շնորհքի զորությունը:

Ջիմը հստակ որոշում կայացրեց, որ այլևս չէր վարելու մարզումներն իր ուժերով, ինչպես որ արել էր տասնութ տարի շարունակ, այլ լիովին ապավինելու էր *Աստծո շնորհքին:* Նա հարցրեց Տիրոջը, թե ինչ ինքը պետք է անի, և Աստված պատասխանեց. «Փոխի՛ր մարզումների ձևը: Իննսուն րոպե մարզվելու փոխարեն, առաջին քառասունհինգ րոպեն մնացեք հանդերձարանում՝ Աստվածաշունչ կարդացեք, կիսվեք միմյանց հետ և աղոթեք, իսկ հաջորդ քառասունհինգ րոպեն գնացեք մարզվելու»:

Ջիմը պատմում էր ինձ.

- Ջո՛ն, դա հակարդյունավետ էր թվում: Մենք պետք է աշխատեինք մեր հմտությունների և խաղային մարտավարությունների վրա. ինձ պետք էր մեր մարզումների իննսուն րոպեից յուրաքանչյուրը: Բայց ես գիտեի, որ լսել էի Աստծուց:

Նա շարունակեց.

- Ես ներկայացրի իմ նոր մարտավարությունն աղջիկներին: Նրանք

մտածեցին, որ դա մի փոքր կրոնական է, և որ դա անմիտ գաղափար է: Մի քանիսը նույնիսկ հիասթափվեցին, երբ առաջին անգամ լսեցին դա, բայց այն բանից հետո, երբ ես ավելի մանրամասն պատմեցի իմ որոշման մասին, նրանք համաձայնեցին:

Ժպիտը դեմքին՝ նա ասաց.

- Այդ տարի մենք առաջին անգամ հաղթեցինք նահանգի բասկետբոլի առաջնությունում: Ասես դա բավական չէր, հաջորդ տարի կրկին հաղթեցինք:

Նա շարունակեց պատմել երկրորդ առաջնության մասին.

- Դա անհավատալի էր, քանի որ մենք վրիպեցինք բոլոր երկու միավորանոց հարվածները վերջին խաղում: Մենք չպետք է հաղթեինք այդքան վրիպելուց հետո: Սակայն վիճակագրությունը վերանայելուց հետո հասկացանք, որ ռեկորդ էինք սահմանել այդ խաղում՝ երեք միավորանոց հարվածներով: Երեք միավորանոց հարվածները լրացրին բոլոր երկու միավորանոց վրիպումները՝ մեզ հաղթական հաշիվ տալով:

## ԶՈՐՈՒԹՅՈՒՆ

Ջիմն աստվածային իմաստություն ստացավ՝ նույն իմաստությունը, որը բացահայտեց Պողոս առաքյալը, և որը, ըստ վիճակագրության, անտեսված է 21-րդ դարի եկեղեցու ավելի քան 90 տոկոսի կողմից: Այն հետևյալն է. աստվածաշնչյան *շնորհքը* ոչ միայն Աստծո փրկության պարգևն է, այլև Նրա *զորությունը*՝ մեր կյանքի համար: Կարդացե՛ք այն, ինչ գրում է Պողոսը, բայց մտապահեք, որ սա ուղիղ մեջբերում է Աստծո բերանից. *«Իմ շնորհքն* այն ամենն է, ինչ քեզ պետք է, որովհետև *Իմ զորությունն* առավելագույնն է, երբ դու *թույլ* ես» (Բ Կորնթացիների 12.9, GNT):

Այս խոսքում չկան հարցական կամ անորոշ հատվածներ: Աստված ուղղակիորեն ասում է, որ *Իր շնորհքն Իր զորությունն* է: *«Թույլ»* բառն այս խոսքում նշանակում է «անկարող»: Տերը հայտնում է Պողոսին, և նույնպես՝ ձեզ և ինձ. «Իմ զորությունը (շնորհքը) լավագույնս գործում է այն իրավիճակներում, որոնք վեր են ձեր բնական կարողությունից»:

Ջիմը ջանասիրաբար աշխատել էր տասնութ տարի՝ ամբողջ ուժերով փորձելով հասցնել իր թիմի աղջիկներին նահանգի առաջնությանը, և ի՞նչ տեղի ունեցավ արդյունքում: Ոչինչ՝ բացի տասնութ տարի տևող ձախողումներից: Այնուամենայնիվ, արժեր անցնել անհաջողություններով և բազմաթիվ հիասթափություններով՝ հանուն այն իմաստության, որը Ջիմն ի վերջո բացահայտեց. *Աստծո շնորհքը զորացնում է մեզ՝ մեր բնական կարողությունը գերազանցելու համար:*

Մեկ այլ նամակում Պողոսը մի համարձակ պնդում է անում. «Ես աշխատեցի ավելի շատ, քան մյուս առաքյալներից որևէ մեկը»: Մի՞թե նա իսկապես նման բան է գրել: Մտածեք, թե ում նկատի ունի. Պետրոսին, Հակոբոսին, Հովհաննեսին, Բառնաբասին, Ապողոսին և մի շարք այլ ակնառու ծառայողների: Սա մի փոքր ամբարտավան է թվում: Այնուամենայնիվ, եթե կարդաք նրա պնդման շարունակությունը, դուք կհասկանաք, որ այդպես չէ.

> «Ես աշխատեցի ավելի շատ, քան մյուս առաքյալներից որևէ մեկը, թեև իրականում դա իմ աշխատանքը չէր, այլ Աստծո շնորհքն էր գործում ինձանում» (Ա Կորնթացիների 15.10, GNT):

Պողոսը պարծենում էր Աստծո զորությամբ, ոչ թե իր կարողությամբ. այնպես որ, նրա խոսքերում չկար պարծանք իր մասին: Նա ապավինում էր շնորհքին՝ իր աստվածային առաքելությունը կատարելու համար: Տարիներ տևող հիասթափություններից և, ի վերջո, լուսավորում ստանալուց հետո Ջիմն ապավինում է Աստծո զորությանը (շնորհքին) իր մարզչական աշխատանքի մեջ, որպեսզի գերազանցի իր կարողությունները: Նա սկսել է կիրառել այս իմաստությունն իր կյանքի բոլոր բնագավառներում. նրա կացինը սրվել է:

Մտապահելով սա՝ վերադառնանք մեր անհատական առաքելությանը: Կրկին, Աստծո Խոսքը հայտնում է. «Որովհետև Նրա ստեղծվածն ենք՝ Քրիստոս Հիսուսով հաստատված բարի գործերի համար, որոնց համար Աստված առաջուց պատրաստեց մեզ (կամ՝ որոնք Աստված առաջուց պատրաստեց մեզ համար), որ նրանցում վարվենք» (Եփեսացիների 2.10): Ինքը՝ Աստված, պատրաստել է ձեր առաջադրանքը մինչև ձեր ծնվելը: Եվ այդ հատուկ կոչումն այն է, ինչը կտա ձեզ ճշմարիտ բավականություն, որը չի կարող տալ ոչ մի այլ աշխատանք կամ զբաղմունք: Այն ձեր նպատակն է և ուշագրավ է իր մեծությամբ: Իրականում, կա մի առանցքային ճշմարտություն այն կատարելու վերաբերյալ, որը պետք է իմանաք.

*Այն կոչումը, որն Աստված պատրաստել է ձեզ համար,*
*վեր է ձեր բնական կարողությունից:*

Ես շատ պարզ կբացատրեմ սա: Անհնար է, որ կարողանանք կատարել մեր աստվածային հանձնարարականը մեր կարողությամբ: Որտեղի՞ց գիտեմ այս մասին: Քանի որ Աստված աներկբա հայտարարում է, որ Նա չի տա Իր փառքը ոչ ոքի (կարդացե՛ք Եսայի 48.11): Եթե մեզնից որևէ մեկը կարողանար կատարել իր աստվածային կոչումն իր

կարողությամբ, Աստված ստիպված կլիներ կիսվել Իր փառքով մեզ հետ, իսկ Նա չի անելու դա: Աստված միտումնավոր այնպես է արել, որ ձեր կոչումը լինի վեր ձեր բնական կարողությունից, որպեսզի դուք ստիպված լինեք ապավինել Իր *շնորհքին*՝ այն կատարելու համար:

## ՀԱՏՈՒԿ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաջորդը՝ մենք պետք է հարցնենք, թե արդյո՞ք կան շնորհքի հատուկ ընդունակություններ կամ պարգևներ: Այլ կերպ ասած, ինչպես որ շնորհքը զորացնում է մեզ, որպեսզի ապրենք՝ գերազանցելով մեր բնական կարողությունները, կա՞ն արդյոք Աստծուց տրված եզակի պարգևներ, որոնք ճիշտ նույն կերպով սպառազինում են մեզ՝ մեր հատուկ առաքելությունը կատարելու համար:

Թույլ տվեք պատասխանել մի քանի օրինակով: Ռոջեր Ֆեդերերը երբեք չէր դառնա աշխարհի մեծագույն թենիսիստներից մեկը, եթե չունենար թենիսի ձեռնաթիակ և գնդակներ: Որևէ քաղաքում գտնվող փայտամշակման լավագույն մասնագետի տաղանդը չէր բացահայտվի, եթե նա չունենար գործիքներ: Դուք երբեք չէիք իմանա Միքելանջելոյի մասին, եթե նա չունենար հատիչ, վրձին և ներկեր: Արդյո՞ք սա վերաբերում է նաև մեր աստվածային կոչումներին:

Երկու կարճ պատմություն կօգնի մեզ պատասխանել այս հարցին: Երբ նոր էի ծառայության մեջ, ես ծանոթացա մի բացառիկ փառաբանության և երկրպագության առաջնորդի հետ: Նա փառաբանության առաջնորդ էր եղել 1900-ական թվականների կեսերին ծառայող մի հանրահայտ ավետարանչի ծառայության մեջ: Այդ ավետարանիչը մահացել էր 1970-ականներին, այնուհետև սկսել էր իր ծառայությունը:

Նա հաճախ էր լինում մեր եկեղեցում 1980-ական թվականներին, և շատ անգամներ ես պարզապես ակնածանքով նայում և լսում էի նրան. նա շնորհքով օժտված մարդ էր: Իմ իմացած երաժիշտներից քչերն էին նրա պես դաշնամուր նվագում, և թվում էր՝ նա անում էր դա առանց որևէ ջանք գործադրելու: Մի քանի րոպեում նա կարող էր դրդել 3.500 մարդու ոտքի ելնել, երգել ու պարել: Երբ նա փառաբանում էր Աստծուն, մթնոլորտն ամբողջությամբ փոխվում էր՝ լիցքավորվելով Աստծո ներկայությամբ:

Վերջին մի քանի անգամները, երբ նա այցելում էր մեզ՝ ծառայելու համար, ես նրան ուղեկցելու արտոնություն ունեի: Երբ ես նրա հետ էի, հարցեր էի տալիս, քանի որ ցանկանում էի իմանալ նրա աստվածատուր կարողությունների մասին: Ես պարզեցի, որ նրա մայրը, որն աստվածապաշտ և նվիրյալ կին էր, ամեն օր, ժամեր շարունակ աղոթում էր: Նա ասաց.

- Ջո՛ն, երբ ես մորս որովայնում էի, մեկ օր մի տղամարդ (նրա մայրը համոզված էր, որ դա հրեշտակ էր) եկավ մեր տուն: Այդ մարդը, որին մայրս երբեք չէր տեսել, ասել է. «Քո որդին առաջնորդելու է բազմությունների Աստծո ներկայության մեջ և հմտորեն դաշնամուր է նվագելու՝ սկսած մանկությունից»:

Նրա պատմության շարունակությունն ապշեցրեց ինձ, և ես չեմ կարող մոռանալ այն: Մի անգամ, երբ նա դեռ փոքր երեխա էր, նստել էր իր ծնողների դաշնամուրի մոտ և գերազանց նվագել էր՝ առանց նախկինում որևէ դաս սովորելու կամ փորձ անելու: Նա նվագում էր ոչ թե «Շան վալս», այլ բավականին բարդ հատված, որը կարող էին նվագել միայն դաշնամուրի բաժնի փորձառու ուսանողները: Եվ, իհարկե, նա անում էր դա առանց նոտաների:

Այդ օրվանից նա հմտորեն նվագում էր՝ առանց նույնիսկ մեկ անգամ նոտա կարդալու: Նա նվագում էր բոլոր երաժշտությունները լսողությամբ: Նա կարող էր լսել որևէ երաժշտություն և մի քանի վայրկյան անց նվագել:

Նրա ծառայությունը սկսվեց փոքր տարիքից. նա նվագում էր իր հարազատ քաղաքի եկեղեցու հավաքույթներին: Ի վերջո, նրա պարգևը դուռ բացեց նրա համար, որպեսզի նա նվագեր այդ հանրահայտ ավետարանչի ծառայության մեջ:

Ակնհայտ է, որ նա ուներ պարգև՝ աստվածային կարողություն:

Եվս մեկ քաջ հայտնի օժտված անձնավորություն՝ Ակիանե Կրամարիկը, առանց որևէ նկարչական դասերի, չորս տարեկանում սկսեց բացառիկ կերպով նկարել: Վեց տարեկանում նա պատկերեց բարդ առարկաներ, ինչպես և իր եզակի տեսիլքները: Ութ տարեկանում նա պատկերեց այժմ հայտնի դարձած «Խաղաղության Իշխանը» կտավը: Այդ դիմանկարի օրինակը կախված է գրասենյակիս պատին՝ իմ սեղանի ետևում:

Ակնհայտ է, որ նա ունի պարգև՝ աստվածային կարողություն:

Ինչո՞ւ են միայն ոմանք ստանում պարգևներ: Եվ արդյո՞ք իրականում այդպես է:

Մենք պետք է տանք հետևյալ հարցը: Աստծո զավակներից ոմա՞նք, շատե՞րը, թե՞ բոլորն են ստանում պարգևներ: Կրկին կարդանք այս գլխի բացման խոսքը՝ «Նոր կենդանի թարգմանությունից»:

> «Իր *շնորհքով* Աստված տվել է մեզ տարբեր *պարգևներ*՝ որոշակի գործեր արդյունավետ կատարելու համար» (Հռոմեացիների 12.6, NLT):

Մենք տեսնում ենք երկու անչափ կարևոր բառ այս մեկ աստվածաշնչյան խոսքում: Առաջինը, որը մենք արդեն քննարկել ենք՝ *շնորհքը*, հունարեն *«խարիս»* բառն է: Եթե ավելացնենք *«մա»* տառերը *«խարիս»*-ին, կստանանք ևս մեկ հունարեն բառ՝ *«խարիզմա»,* որը մեր խոսքում նշված «պարգևներ» բառն է: Այժմ կխոսենք այս բառի մասին:

Տարիներ շարունակ, ուսումնասիրելով հունարեն բառարանները, և այն, թե ինչ համատեքստերում է օգտագործվել *«խարիզմա»* բառը Նոր կտակարանում, ես կազմել եմ այս բառի սահմանումը.

*Խարիզմա* - շնորհքի հատուկ ընդունակություն կամ պարգև, որը զորացնում է մարդուն՝ տալով հատուկ կարողություն:

Խոսքն աստվածային կարողության մասին է, որը վստահվում է մարդուն և մշտապես գերազանցում է հասարակ բնական կարողությունը: Որոշ պարգևներ ակնհայտորեն գերբնական են: Մյուսները սովորական մարդկային կարողություն են թվում, բայց իրականում գերբնական են: Որոշ պարգևներ տրվում են ի ծնե, իսկ մյուսները տրվում են կյանքի որոշակի պահին՝ Տիրոջ Խոսքով:

## ԳՐԵԼՈՒ ԽԱՐԻԶՄԱ

Թույլ տվեք սկսել *խարիզմայի* մեր ուսումնասիրությունն իմ կյանքի օրինակներով (ես համառոտ գրել եմ այս անձնական պատմություններն իմ նախորդ գրքերից մեկում, որը կոչվում է *«Հավիտենությամբ շարժվողները»*):

Իմ կյանքի *խարիզմաներից* մեկը գրելն է: Եթե դուք տարիներ շարունակ չեք հետևում մեր ծառայությանը, հավանաբար չգիտեք, որ իմ առաջադիմությունն անգլերենից, գրավոր խոսքից և օտար լեզվից դպրոցում շատ ցածր էր: Երբեմն ես մտածում եմ, որ իմ անգլերենի ուսուցիչները տեղափոխում էին ինձ հաջորդ դասարան, միայն՝ որպեսզի ստիպված չլինեին դիմանալ ինձ ևս մեկ տարի:

Երբ դպրոցում մեզ հանձնարարում էին մեկ-երկու էջանոց շարադրություն գրել, ինձնից ժամեր էին պահանջվում այդ արագ կատարվող առաջադրանքների համար: Ես մեկ-երկու նախադասություն էի գրում, մի քանի րոպե նայում էի գրածիս և շարունակ տհաճություն էի զգում այն պատճառով, թե որքան անվարժ և անիմաստ էր դա թվում: Ես ճմրթում էի թուղթը և նորից էի սկսում: Կրկին ու կրկին անում էի նույն բանը՝ ծախսելով շատ թուղթ, ժամանակ և մտավոր ուժեր: Հիշում եմ դեպքեր, երբ մեկ ժամ գրելուց հետո դեռ չէի կարողանում երկու պարբերություն կազմել:

Եթե դուք կասկածում եք իմ ինքնագնահատականի մեջ, կասեմ ձեզ

իմ Ստանդարտավորված թեստի գնահատականը: Ինչպես գիտեք, այս գնահատականը պարտադիր է շատ համալսարաններ և ինստիտուտներ ընդունվելու համար: Այդ ժամանակ, երբ ես անցա այն, հիմնական երկու քննությունները *մաթեմատիկան* և *խոսակցական անգլերենն* էին: *Խոսակցական անգլերենը*, ըստ էության, անգլերենի քննություն էր, որի ժամանակ ստուգվում էին ընթերցանության և գրելու հմտությունները: Ամենաբարձր հնարավոր գնահատականը 800 միավորն էր: Իմ միավորը *խոսակցական անգլերենից* 370 էր (այո, դուք ճիշտ կարդացիք): Եթե նայեք տոկոսային հարաբերությանը, դա սարսափելի էր. ընդամենը 42 տոկոս, ինչն «անբավարար» է համարվում՝ համաձայն գնահատականների սանդղակի մեծ մասի: Վերջին երեսունից ավելի տարիներին իմ բոլոր ճանապարհորդությունների ընթացքում ես հանդիպել եմ միայն մեկ մարդու, որն ավելի ցածր գնահատական էր ստացել Ստանդարտավորված թեստի *խոսակցական անգլերենի* քննությունից:

Եկեք առաջ գնանք դեպի այն ժամանակը, երբ ես արդեն երեսունն անց էի: 1991 թվականի մի ամառային առավոտ, հեռավոր ամայի վայրում աղոթելիս՝ Աստված խոսեց ինձ հետ. «Որդի՛ս, Ես ցանկանում եմ, որ դու գրես»:

Ես ծիծաղեցի իմ ներսում. «Աստվա՛ծ, Դու այնքան որդիներ ու դուստրեր ունես այս երկրի վրա, որ միգուցե շփոթում ես մեզ: Հազիվ թե Դու ցանկանաս, որ ես գրեմ. կարող ես հարցնել իմ ավագ դպրոցի անգլերենի ուսուցիչներին»:

Ես չստացա ոչ մի պատասխան: Պարզապես լռություն:

Ես համարեցի, որ լռությունը համաձայնության նշան է: Ես համոզեցի ինձ, որ ամեն ինչ ավարտվեց, քանի որ Նա չառարկեց իմ ասածը: Բայց իմ սրտում ես գիտեի, որ այդպես չէր:

Տասն ամիս անց ինձ այցելեցին երկու կանայք երկու տարբեր նահանգներից՝ երկու շաբաթվա տարբերությամբ, և ասացին նույն բանը. «Ջոն Բիվե՛ր, եթե դու չգրես այն, ինչ Աստված տալիս է քեզ, Նա կտա այդ ուղերձները մեկ այլ մարդու, իսկ դու պատասխանատվության կկանչվես դրա համար»:

Երբ երկրորդ կինը՝ Տեխաս նահանգից, ասաց ինձ ճիշտ այն, ինչ ասել էր առաջին կինը՝ Ֆլորիդա նահանգից, Աստծո սուրբ երկյուղն իջավ ինձ վրա, և ես գործի անցա: Դեռևս 1992 թվականն էր, և չկային «iPad»-ներ, միայն թուղթ ու գրիչ: Այնպես որ, ես վերցրի նոթատետրի մի թերթ և թավ տառերով գրեցի էջի սկզբում. *«ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»,* իսկ հետո՝ հետևյալը.

*«Հա՛յր, ես չեմ կարող գրել: Այնպես որ, որպեսզի հնազանդվեմ Քեզ, ես Քո շնորհքի կարիքն ունեմ: Եթե ես գրելու եմ, իմ խնդրանքն է, որ ամեն բառ ոգեշնչված լինի Քո Հոգով և հեղեղված լինի Քո օծությամբ: Ես խնդրում եմ, որ դա փոխի տղամարդկանց, կանանց, երեխաների, եկեղեցիներ, քաղաքներ և երկրներ: Ես նախապես երդվում եմ, որ կտամ Քեզ ամբողջ պատիվը, գովասանքը, փառքը և գոհությունը: Ես կնքում եմ այս պայմանագիրը (ուխտը) Քեզ հետ, Հիսուսի զորավոր անունով:*

*Քո որդի և ծառա՝ Ջոն Բիվեր»:*

Այդ օրվանից անցել է գրեթե երեսուն տարի: Ներկայումս գրել եմ ավելի քան 20 գիրք, որոնք տպագրվել են մի քանի տասնյակ միլիոն օրինակով: Դրանց մեծ մասը հայտնվել է թե՛ ԱՄՆ-ի, թե՛ միջազգային ընդհանուր և քրիստոնեական հանրաճանաչ գրքերի ցուցակում: Դրանք թարգմանված են ավելի քան հարյուր լեզուներով և ընթերցվում են աշխարհով մեկ, իսկ մի քանի երկրներում դրանք ամենից շատ հրատարակվող գրքերն են թե՛ աշխարհիկ, թե՛ քրիստոնեական կարգերում:

Ես նախկինում չեմ *լսել*, չեմ *կարդացել* և չեմ *հորինել* իմ գրած գրեթե յուրաքանչյուր գրքի բովանդակության 20-30 տոկոսը: Ես ստացել եմ այն ստեղնաշարով տեքստը մուտքագրելու ժամանակ: Հիշում եմ դեպքեր, երբ գտնվել եմ իմ տան աշխատասենյակում կամ ինչ-որ հյուրանոցային համարում և խիստ ոգեշնչված եմ եղել այն բանով, ինչ գրել եմ: Մի քանի անգամ ես ոգևորված վեր եմ ցատկել՝ բացականչելով. «Սա պարզապես հրաշալի՜ է»:

Միգուցե հարցնեք. «Ինչպե՞ս կարող էիր ասել դա: Դա հպարտություն է»:

Իմ պատասխանը հետևյալն է: Ես գիտեմ, թե որտեղից է այդ նյութը, և այն *ինձնից չէ:* Ես լիովին հավատում եմ, որ իմ անունը գրված է այդ գրքերի վրա, որովհետև ես առաջին մարդն եմ երկրի վրա, որը կարդացել է դրանք: Ես գիտեմ, որ այդ նյութը Սուրբ Հոգուց է: Իմ ասածը շատ չի տարբերվում Պողոս առաքյալի խոսքերից, որը մի փոքր ամբարտավան էր թվում՝ գրելով. «Ես ավելի քրտնաջան աշխատեցի, քան մյուս առաքյալներից որևէ մեկը»: Միգուցե, թվում է, թե այս խոսքերը պատկանում են մրցակցական, եսակենտրոն և ինքնահավան մարդու: Այնուամենայնիվ, մենք գիտենք Սուրբ գրքից, որ Պողոսը պարծենում էր Աստծո շնորհքի պարգևով, ոչ թե իր կարողությամբ:

Անձամբ ես համոզված եմ, որ երբ Աստված խոսեց ինձ հետ այդ առավոտ, գրելու *խարիզման տրվեց* ինձ: Բայց այն *գործադրվեց* իմ կյանքում, երբ ես որոշում կայացրի հնազանդվել դրան: Կան մարդիկ,

որոնք կվիճարկեն այս պնդումը, և թույլ տվեք անմիջապես ասել, որ սա այնքան էլ կարևոր չէ բանավեճի առարկա դառնալու համար: Ես հասկանում եմ, որ իմ համոզմունքներն այս մասին կարող են սխալ լինել. այնպես որ, թույլ տվեք ներկայացնել այն առարկությունը, որը ոմանք կարող են անել:

Ոմանք կառարկեն, որ այդ պարգևը տրվել էր ինձ 1979 թվականին՝ այն պահին, երբ ես վերստին ծնվեցի: Ես չեմ կարող պատասխանել այս տարբերակին՝ հիմնվելով իմ փորձառության վրա, քանի որ ես չեմ փորձել ոչինչ գրել 1979 թվականից մինչև 1992 թվականը, երբ գրեցի իմ պայմանագիրը: Վստահաբար կարող եմ ասել մեկ բան. ես չեմ ծնվել այդ պարգևով՝ նման այն դաշնակահարին, որի մասին քիչ առաջ պատմեցի: Այնուամենայնիվ, այդ պատմությունը ցույց է տալիս, որ որոշ պարգևներ տրվում են մարդուն մինչև ծնվելը: Օրինակ, մենք գիտենք Սուրբ գրքից, որ Հովհաննես Մկրտիչը լցվեց Աստծո Հոգով (Նրանով, Ով պարգևներ է տալիս) իր մոր որովայնից, քանի որ նա ճանաչեց Մարիամի որովայնում գտնվող կենդանի Քրիստոսին, երբ դեռ իր մայր Եղիսաբեթի որովայնում էր (կարդացե՛ք Ղուկաս 1.41): Երեսուն տարի անց Հովհաննեսի ներսում գտնվող նույն պարգևն էր, որ ճանաչեց Հիսուսին (բոլորից առաջ), երբ Նա եկավ՝ մկրտվելու համար (կարդացե՛ք Հովհաննես 1.29):

Այնուամենայնիվ, որոշ պարգևներ տրվում են ավելի ուշ: Կիսի որդի Սավուղը չսկսեց իր կյանքը մարգարեանալով: Դա տեղի չունեցավ, քանի դեռ նա չէր օծվել Սամուելի կողմից երիտասարդ տարիքում՝ որպես Իսրայելի առաջին թագավոր: Սամուելն ասաց, որ որոշ ժամանակ անց Սավուղը տեսնելու էր մի խումբ մարդկանց, որոնք երաժշտական գործիքներ էին նվագելու և մարգարեանալու էին: Ես կմեջբերեմ Սամուելի բառերը. «Այդ ժամանակ Տիրոջ Հոգին զորավոր կերպով կգա քեզ վրա, և դու կմարգարեանաս նրանց հետ: Դու կփոխվես՝ դառնալով այլ մարդ» (Ա Թագավորաց 10.6, NLT):

Դիտարկելով այս երկու վկայությունները Սուրբ գրքից՝ մենք հստակ տեսնում ենք, որ որոշ պարգևներ տրվում են անմիջապես մոր որովայնից, իսկ մյուսները՝ հետագայում:

## ՔԱՐՈԶԵԼՈՒ ԽԱՐԻԶՄԱ

Իմ կյանքի ևս մեկ *խարիզման* հրապարակային խոսքն է: Իմ պատմությունն այս պարգևի մասին կօգնի մեզ ավելի լավ հասկանալ այս թեման:

Առաջին դեպքը, երբ կինս՝ Լիզան, լսեց, թե ինչպես էի քարոզում

Աստծո Խոսքը՝ ծառայողական ձևաչափով, շատ հիշարժան էր: Մեղմ ասած, դա ահռելի ձախողում էր, և ես չեմ չափազանցնում: Նա խորը քնեց առաջին հինգ րոպեում և շարունակ քնում և արթնանում էր իմ քարոզի ընթացքում: Այդ ուղերձն անտանելի էր: Նրա լավագույն ընկերուհին՝ Էմին, որը նստած էր Լիզայի կողքին, այնքա՛ն խորն էր քնել, որ ես տեսնում էի, որ նրա լայն բացված բերանից թուք էր ծորում, մինչ նա երազների աշխարհում էր: Անկեղծ ասած, ես անպետք հրապարակային խոսնակ էի:

Այդ ժամանակ ծառայում էի իմ տեղական եկեղեցում՝ որպես իմ հովվի և նրա կնոջ օգնական (մեր եկեղեցին շատ ազդեցիկ էր Միացյալ Նահանգներում և ուներ ավելի քան չորս հարյուր մարդուց բաղկացած վճարվող աշխատակազմ): Իմ աշխատանքն էր հոգ տանել իմ հովվի ընտանիքի կարիքների մասին, ինչպես նաև՝ բոլոր ծառայողների, որոնք հյուրընկալվում էին մեր եկեղեցում: Իմ պարտականություններն Աստծո թագավորության մեջ հստակ էին. դա ոչ թե խոսքի պարգևն էր, այլ կուլիսներում ծառայելը (ես ավելին կխոսեմ այս մասին հետագա գլուխներից մեկում):

Այնուամենայնիվ, ես փորձում էի սկսել իմ ծառայությունը, քանի որ Աստված ցույց էր տվել ինձ, որ պետք է քարոզեմ Իր Խոսքն ազգերին: Իմ սխալն այն էր, որ ես անում էի դա իմ ուժերով: Եվ դեռ գտնվում էի այն փուլում, երբ հիմնականում այլ մարդու ծառայության մեջ էի և պետք է «օտար բանի մեջ հավատարիմ» լինեի (կարդացե՛ք Ղուկաս 16.12): Ես օգտագործում էի իմ ամբողջ ազատ ժամանակը՝ ուղերձներս պատրաստելու, փաթեթավորելու և վաճառելու համար (շատ ավելի լավ կլիներ, եթե տրամադրեի այդ ժամանակը՝ ծառայելու համար իմ կնոջը և լինելու ավելի լավ ամուսին նրա համար, բայց երբեմն մենք ստիպված ենք լինում սովորել մեր սխալներից):

Կարճ ասած, ես ծնում էի «Իսմայելի ծառայություն»: Ինչո՞ւ եմ այդպես անվանում այն: Աստվածաշնչում գրված է իմ արարքի զուգահեռի մասին: Աստված խոսեց Աբրամի (Աբրահամի) հետ, երբ նա 75 տարեկան էր՝ նրան որդի խոստանալով և ասելով, որ այդ որդու միջոցով նա ի վերջո շատ ազգերի հայր է դառնալու: Այդ խոստումից տասը տարի անց նա դեռ երեխա չուներ և արդեն ութսունհինգ տարեկան էր: Այնպես որ, Աբրահամը և նրա կին Սառան ծրագիր կազմեցին, որպեսզի «օգնեին» Աստծուն կատարել Իր խոստումը: Այդ ունայն մարդկային փորձից ծնվեց Իսմայելը: Ուստի ես անվանում եմ նման տեսակի նախաձեռնությունը «Իսմայելի ծառայություն»:

Դժվար է հավատալ, բայց որոշ մարդիկ նվիրատվություններ էին

տալիս ինձ: Ես վաճառում էի իմ նյութերը, որպեսզի կատարեի իմ ինքնահռչակ առաքելությունը, որը կոչվում էր «Բիվերի ծառայություն»: Մեր կարգախոսն էր. «Հասնել աշխարհին Նրա զարմանալի լույսով»: Հիմա, գրելով այս տողերը, ես ծիծաղում եմ իմ անմտության և անհասունության վրա: Մեր Իսմայելի առաջին քարոզաշարը, որը բաղկացած էր չորս լսաժապավենից, պարունակում էր այն ուղերձը, որի ընթացքում քնել էին կինս և նրա լավագույն ընկերուհին: Քանի՜սն էին քնել այնքան խորը, որ նրանց բերանից թուք էր ծորացել, երբ լսում էին այդ լսաժապավենները: Ես սարսուռ եմ զգում՝ մտածելով այդ մասին:

Հավատում եք, թե ոչ, ամեն ինչ է՛լ ավելի վատթարացավ: Այդ ժամանակ իմ հերոսը հանրահայտ ավետարանիչ Թի էլ Օսբորնն էր, որն այժմ Երկնքում է: Նա և կինը իրենց կյանքի ընթացքում փրկության են առաջնորդել ավելի քան հիսուն միլիոն մարդու: Ես ցանկանում էի քարոզել նրա պես: Ժամերով լսում էի նրա ուղերձները՝ ընդօրինակելով նրա ձայնի առոգանությունը, սովորելով նրա ուսմունքները, ազդեցիկ արտահայտությունները և նույնիսկ կատակները: Ես ոչ միայն ձանձրալի քարոզիչ էի, այլև մեկ այլ մարդու սարսափելի պատճենը:

Թի էլը քարոզում էր մեծ վարպետությամբ: Երբ նա քարոզում էր մեր եկեղեցում, մարդիկ որսում էին նրա յուրաքանչյուր բառը: Մեկ անգամ նա պատմում էր, թե ինչպես էր Աստված գործել իրենց բազմամարդ ավետարանչական հավաքույթներից մեկի ժամանակ Աֆրիկայում: Պատմելու ընթացքում նա այնքա՜ն ոգեշնչվեց տեղի ունեցած ականատեսի հրաշքներից, որ խանդավառությամբ բացականչեց.

- «Վա՜ու»:

Նա դադարեց խոսել. եկեղեցին լարեց ամբողջ ուշադրությունը: Իսկ նա, ձեռքը թափ տալով, պարզապես ասաց.

- Հետաքրքիր բառ է. եթե հակառակ կարդաս, լինում է նույնը՝ «վա՜ու»[1]:

Բոլորը ծիծաղեցին. այդ կատակը ստացվեց նրան հատուկ կերպով:

Իմ անլրջության և միամտության պատճառով ես ընդօրինակեցի դա և սկսեցի մշտապես «վա՜ու» ասել: Ես ասում էի այդ բառն այնպես, ինչպես Թի էլը՝ այդ անգամ: Միակ խնդիրն այն էր, որ ոչ ոք չէր ծիծաղում, բայց իհարկե, ես չէի հասկանում դա:

Կրկին ու կրկին ես բացահայտ անհաջողության էի մատնվում՝ ձգտելով ինչ-որ բան փոխել: Ի վերջո որոշեցի վերջ տալ իմ փորձերին: Եվ տեղի ունեցավ մի զարմանալի փոփոխություն: Ես կրկին

---

1 *թարգմանչի նշում.* անգլերենում «վաու» («wow») բառը դարձգիր է. կարդացվում է նույն ձևով թե՛ աջից, թե՛ ձախից

սկսեցի հաճույքով կատարել այն ծառայությունը, որում գտնվում էի: Ես սկսեցի հատկացնել իմ ազատ ժամանակն ընտանիքիս և ընկերներիս: Այժմ, երբ իմ պայքարը ետևում էր, կյանքը դարձավ լիարժեք, ծաղկուն և առատ: Գտնելով ճշմարիտ բավականություն, ես հասկացա, որ իմ բոլոր ջանքերը զուր էին, և հեշտորեն վերջ տվեցի «Բիվերի ծառայությանը»: Ես գիտեի, որ մեկ օր Աստված իրականացնելու էր այն, ինչ խոստացել էր, բայց դա տեղի չէր ունենալու իմ նախաձեռնությամբ:

Կարող եք կռահել, թե ինչ տեղի ունեցավ, երբ հայտնվեցի խաղաղության և անդորրի մեջ. մի քանի ամիս անց եկավ Աստծո առաջխաղացումը: Ինձ առաջարկեցին դառնալ ԱՄՆ-ում ամենաարագ աճող եկեղեցիներից մեկի երիտասարդական ծառայության հովիվը:

Ես երբեք չեմ մոռանա առաջին կիրակին: Մեր եկեղեցու հովիվը հայտնի էր աշխարհով մեկ: Այդ ժամանակ ամեն կիրակի մարդիկ ավելի քան մեկ ժամ հերթ էին կանգնում կիզիչ արևի տակ, որպեսզի նստեին դահլիճի առջևի շարքերում, որը լեփ-լեցուն էր լինում ամեն ծառայությանը: Մեր ծառայություններին մշտապես հաճախում էին հյուրեր ԱՄՆ-ի այլ նահանգներից և այլ երկրներից:

Ծառայությունը բուռն ընթացքի մեջ էր: Երկրպագությունը պարզապես հոյակապ էր: Հովիվը մոտեցավ ամբիոնին և գրեթե անմիջապես տեղեկացրեց եկեղեցուն նոր երիտասարդական հովվի մասին, այսինքն՝ իմ մասին: Այնուհետև, ի զարմանս ինձ, նա խնդրեց ինձ մոտենալ և մի քանի րոպեով խոսք ուղղել կիրակի առավոտյան հավաքված բազմությանը:

Ինչպես ես իմացա այդ ծառայությունից հետո, այդ պահին կինս խուճապի մատնվեց, և, հավանաբար, ես էլ խուճապի կմատնվեի, եթե մտածելու ժամանակ ունենայի: Դա պաշեցուցի՜չ էր: Ինձ խնդրեցին խոսք ուղղել 2.800 մարդու: Լիզան սարսափով էր մտածում դրա հետևանքների մասին. հաշվի առնելով նախորդ դեպքերը՝ նա գիտեր, թե ինչ էր լինելու: Ինչպե՞ս մենք կկարողանայինք վերականգնվել այդ մոտալուտ աղետից: Երևի թե այդ եկեղեցական շենքում գտնվող մարդկանց մեծ մասը վերջին անգամ էր լսում ինձ, քանի որ, անկասկած, դրանից հետո ինձ այլևս չէին խնդրի քարոզել գլխավոր եկեղեցական ծառայությանը: Բոլոր այդ վախերը ծանրացել էին նրա վրա, մինչ ես մոտենում էի ամբիոնին: Ծառայությունից հետո Լիզան պատմեց ինձ, որ անհանգստացած աղոթում էր, որ ես հանկարծ չնմանակեի Թի էլ Օսբորնին, հատկապես չանեի իմ սովորական դարձած «անհարմար» կատակը «վա՜ու» բառը հակառակ կարդալու վերաբերյալ:

Հենց որ մոտեցա ամբիոնին, մեր ավագ հովիվը փոխանցեց ինձ բարձրախոսը: Վաթսուն վայրկյան անց ամբողջ եկեղեցին ոտքի էր. բո-

լորը ցնծում էին, ծափահարում էին և ոգեշնչված գոչում էին իմ խոսքերի պատճառով: Ես խոսեցի չորսից հինգ րոպե, և այդ ընթացքում 2.800 մարդուց բաղկացած ամբողջ լսարանը ոտքի վրա մնաց: Ապա փոխանցեցի բարձրախոսն իմ հովվին և վերադարձա իմ տեղը: Հաջորդ հինգ րոպեն ես ցնցվում էի ադրենալինից կամ Աստծո ներկայությունից, կամ, հավանաբար, երկուսից էլ:

Կինս ապշել էր՝ չհավատալով կատարվածին: Նա ասաց ինձ ծառայությունից հետո.

- Ջո՛ն, ես մտածում էի, թե *ով է մտել ամուսնուս մարմնի մեջ:*

Մենք ապրում էինք Տեխաս նահանգում, երբ ես նոր զբաղեցնում էի իմ առաջին ծառայողական դիրքը, բայց մեր նոր եկեղեցին Ֆլորիդա նահանգում էր: Տարիներ շարունակ կինս այսպես էր ներկայացնում տեղի ունեցածը այն մարդկանց, որոնք հետաքրքրվում էին մեզանով. «Ջոնն այլ մարդ դարձավ այն պահին, երբ մենք հատեցինք Ֆլորիդայի սահմանը»: Նման մի պնդում գրված է Սավուղի մասին՝ այն պահին, երբ Աստծո պարգևը եկավ նրա կյանքում (կարդացե՛ք Ա Թագավորաց 10.6):

Այդ ժամանակվանից ի վեր ես քարոզել եմ, սովորեցրել եմ և խոսել եմ լսարանների առջև և մեծ մասամբ արել եմ դա հեշտությամբ (ես կխոսեմ իմ դժվարին ժամանակների մասին հաջորդ գլուխներից մեկում): Ես այլևս ջանք չէի թափում դրա համար: Չկար այն լարվածությունը, որը զգում էի իմ իսմայելական օրերին: Տարբերությունն իմ Իսմայելի և Իսահակի փուլերի արդյունավետության միջև այնքան մեծ էր, որքան գիշերն ու ցերեկը:

Եկեք առաջ գնանք ութից տասը տարով՝ Ֆլորիդայում այդ առաջին կիրակիից հետո: Այդ ժամանակ «Մեսինջեր ինտերնեյշնլ»-ն արդեն կայացած ծառայություն էր: Մենք մաքրում էինք մեր ավտոտնակը գարնան սկզբին: Տուփերն ու տաշտերը դասավորելիս գտանք իմ լսաժապավենների հիմնօրինակները, որտեղ այն քարոզն էր, երբ Լիզան և նրա լավագույն ընկերուհին քնել էին ընթացքում: Առանց վարանելու՝ ես շրջվեցի, որպեսզի այն նետեի աղբարկղը: Հանկարծ լսեցի Սուրբ Հոգուն. «Որդի՛ս, դեն մի՛ նետիր այդ հիմնօրինակը»:

Ես արագորեն ընդդիմացա. «Ինչո՞ւ ոչ: Այն սարսափելի է. ոչ ոք այլևս չպետք է լսի այս ուղերձը: Այն պետք է ոչնչացվի»:

Ես կրկին լսեցի. «Մի՛ արա դա»:

Լիովին գիտակցելով, որ լսում էի Աստծուն, ես հակադարձեցի. «Ինչո՞ւ»:

Տերը շատ պարզ խոսեց իմ սրտում. «Սա պաշտպանություն է քեզ համար»:

«Պաշտպանությո՞ւն»:

Այդ պահին ես իմաստություն ստացա. «Որդի՛ս, ուզում եմ, որ միշտ հիշես, թե որքան սարսափելի քարոզիչ ես դու՝ առանց Ինձ»:

Ամեն տարի ես ավելի եմ գիտակցում այս «պաշտպանության» գործոնը: Նախորդ երեք տասնամյակներում այս պարգևը գործել է ազդեցիկ կերպով և առատ պտուղ է տվել: Անթիվ իրավիճակներում ես ականատես եմ եղել մթնոլորտի փոփոխության, փառաբանության պոռթկման՝ հայտնությունների շնորհիվ, բազմաթիվ փրկված կյանքերի և մեծաթիվ հրաշքների դրսևորման: Շատերը վկայել են իրենց կյանքերի կամ եկեղեցիների մեկընդմիշտ փոխվելու մասին: Ունենալով այս պտուղը՝ հեշտ կլիներ մտածել, որ ես որևէ կապ ունեմ դրա հետ, բայց կարող եմ անկեղծորեն ասել Պողոս առաքյալի հետ. «Սակայն դա ոչ թե ես էի, այլ՝ Աստված, որ Իր շնորհքով գործում էր իմ միջոցով» (Ա Կորնթացիների 15.10, NLT): Այս տարիների ընթացքում ես չեմ մոռացել, թե որքան անարդյունավետ էի առանց Աստծո *խարիզմայի:*

## ԴՈՒՔ ՈՒՆԵ՞Ք ՊԱՐԳԵՎՆԵՐ

Ես դիտարկեցի երկուսը այն պարգևներից, որոնք Աստված տվել է ինձ՝ մարդկանց ծառայելու և կառուցելու համար: Ձեզ ծանո՞թ են այն պայքարները, որոնք կային իմ կյանքում: Միգուցե դուք չեք դիմել նման ծայրահեղ միջոցների՝ ձեր կյանքի *խարիզման* բացահայտելու համար: Կամ, միգուցե, կարդալով այս պատմությունները, դուք է՛լ ավելի եք հուսահատվում՝ մտածելով. *«Ես չունեմ պարգևներ»:* Ես հավաստիացնում եմ ձեզ, որ դուք ունեք պարգևներ, և դա ակնհայտ կդառնա հաջորդ երկու գլուխներում:

Ես խոստացա պատասխանել հետևյալ հարցին. «Աստծո զավակներից ոմա՞նք, շատե՞րը, թե՞ բոլորն են ստանում պարգևներ»: Իմ պատասխանն է՝ բոլորը: Եվ շուտով կապացուցեմ դա ձեզ Աստծո Խոսքից: Ես ոչ միայն հանգամանորեն կդիտարկեմ այս հարցը, այլև մինչև այս գրքի ավարտը դուք հաստատ կիմանաք, թե ինչպես բացահայտել, զարգացնել և գործածել ձեր *խարիզման*՝ բազմապատկելով ձեր արդյունավետությունը Աստծո թագավորությունը կառուցելու մեջ:

## ՄՏՈՐԵՔ

1. Աստվածաշնչյան շնորհքը ոչ միայն Աստծո փրկության պարգևն է, այլև Նրա զորությունը մեր կյանքի համար: Ինչպե՞ս եք դուք դիտարկել Աստծո շնորհքը: Ինչպե՞ս փոխվեց ձեր պատկերացումը շնորհքի մասին այս գլուխը կարդալուց հետո:

2. Այն կոչումը, որն Աստված պատրաստել է ձեզ համար, վեր է ձեր բնական կարողությունից: Ինչո՞ւ է Աստված այդպես արել: Ինչպե՞ս դուք կարող եք ստանալ Աստծո զորացնող շնորհքը, որն առատորեն հասանելի է ձեզ:

3. Աստծո զավակներից ոմա՞նք, շատե՞րը, թե՞ բոլորն են ստանում պարգևներ: Ի՞նչ պարգևներ և կարողություններ եք դուք ստացել: Կարո՞ղ եք ասել, թե ինչ կերպով են այդ պարգևներն օգուտ տալիս մարդկանց:

*«Անկեղծ եղեք ինքներդ ձեզ գնահատելու մեջ»:*

– Հռոմեացիների 12.3, NLT

3

# Անկեղծորե՛ն գնահատեք ձեզ

Ես պատմեցի, թե ինչպես էի պայքարում իմ կյանքի *խարիզման* բացահայտելու և դրանում գործելու համար: Այժմ ցանկանում եմ հակիրճ անդրադառնալ այն բաներին, որոնցում ես օժտված *չեմ:*

Սպառիչ ցուցակ կազմելն անհնարին կլիներ. կան չափազանց շատ տաղանդներ, որոնցով ես օժտված չեմ: Առաջինն այս ցուցակում երգելը և երաժշտական գործիքներ նվագելն է: Ամեն անգամ, երբ ես տանն եմ, կինս և երեխաներս քաղաքավարի, բայց հաստատակամ խնդրում են ինձ երգել մտքումս:

Ավագ դպրոցում ես երգել եմ միայն մեկ անգամ՝ մարզադահլիճի տղաների հանդերձարանում, երբ ցնցուղ էինք ընդունում թեթև աթլետիկայի մարզումներից հետո: Արձագանքը շատ խիստ էր. տղաներից մի քանիսը գրեթե միաձայն բղավեցին ինձ վրա, որպեսզի լռեմ. ևս մեկը շամպունի շիշ նետեց իմ կողմը:

Իմ ծնողները դաշնամուրի դասերի էին տանում Բիվերների ընտանիքի բոլոր երեխաներին: Իմ ուսուցչուհին արհեստավարժ դաշնակահարուհի էր և բավականին հայտնի էր մեր քաղաքում: Դաշնամուրի դասեր տալն այդ կնոջ մասնագիտությունն էր, և նա շատ հաջողակ էր դրանում: Բայց չորս տարի տևող ծանր պարապմունքներից հետո նա մոտեցավ ծնողներիս և աղաչեց, որ այլևս ինձ չուղարկեն դաշնամուրի դասերի: Ամեն ինչ այդ աստիճան վատ էր:

Որոշ ժամանակ անց ես մտածեցի, որ ինձ մոտ չստացվեց հենց դաշնամուր նվագելը, և մի քանի տարուց փորձեցի այլ գործիք սովորել: Դասական կիթառ գնելուց հետո մենք գտանք մի հայտնի ուսուցչի:

Նա համբերատար էր և հանգամանորեն աշխատում էր ինձ հետ. ես ներդնում էի բոլոր ուժերս, ջանասիրաբար կատարում էի առաջադրանքները, բայց դժվարանում էի: Ես սովորեցի ևս մեկուկես տարի, մինչև որ խոստովանեցի, որ պարզապես չունեմ երաժշտական ունակություններ:

Ի՞նչ կատարվեց դրանից հետո: Կարող եմ ասել, որ տարիների ընթացքում այդպես էլ ոչինչ չփոխվեց: Այս ոլորտը բոլորովին նման չէր իմ՝ գրելու մասին պատմությանը: Երաժշտական ունակություններն այդպես էլ հանկարծակի չբացահայտվեցին իմ կյանքում:

## ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏԱԿԱՆ

Ես կարող եմ շարունակ թվարկել այն ոլորտները, որոնցում օժտված չեմ, բայց դուք հասկացաք, թե ինչ նկատի ունեմ: Կարելի է ասել, որ բոլորս գիտենք, թե ինչը մեզ մոտ լավ չի ստացվում: Երբեմն կուզեի, որ մեր պարգևները որոշելը նույնքան հեշտ լիներ, որքան մատնանշելը այն, ինչում մենք օժտված չենք:

Մտապահելով սա՝ կարդանք ավելին Պողոսի խոսքերից.

> «Այն արտոնությամբ և իշխանությամբ, որ Աստված տվել է ինձ, ես տալիս եմ յուրաքանչյուրիդ այս *զգուշացումը.* մի՛ մտածեք, որ դուք ավելի լավն եք, քան իրականում կաք: Անկեղծ եղեք ձեր ինքնագնահատականի մեջ՝ չափելով ձեզ այն հավատքով, որն Աստված տվել է մեզ: Ինչպես որ մեր մարմիններն ունեն շատ մասեր, և յուրաքանչյուր մասը հատուկ գործառույթ ունի, նույնպես էլ՝ Քրիստոսի մարմինը: Մենք մեկ մարմնի շատ մասեր ենք, և բոլորս պատկանում ենք իրար: Իր շնորհքով, Աստված տվել է մեզ տարբեր պարգևներ՝ որոշակի գործեր արդյունավետ կատարելու համար» (Հռոմեացիների 12.3-6, NLT):

Պողոսը սկսում է՝ ասելով, որ այն, ինչի մասին ինքը գրելու է, *զգուշացում* է: Թույլ տվեք առանձնացնել և շեշտադրել նրա զգուշացումը. «Մի՛ մտածեք, որ դուք ավելի լավն եք, քան իրականում կաք: Անկեղծ եղեք ձեր ինքնագնահատականի մեջ»: Այս խոսքը պատվիրում է մեզ անկեղծորեն գնահատել ինքներս մեզ: Ո՞ր հարցում: Այն պարգևների, որոնք Աստված տվել է ձեզ *այս պահին:*

Ինչո՞ւ ես օգտագործեցի *«այս պահին»* արտահայտությունը: Շատ պարզ պատճառով: Մտածեք այն աստվածաշնչյան օրինակի մասին, որ ես խոսեցի ավելի վաղ: Սավուղի անկեղծ գնահատականը, մինչև Սամուելին հանդիպելը, այսպիսին կլիներ. «Ես չեմ կարող մարգարեա-

նալ»: Այս գնահատականը ճիշտ էր այդ պահին: Այնուամենայնիվ, այն բանից հետո, երբ նա հանդիպեց Սամուելին, և Աստծո պարգևը եկավ նրա կյանքում, նրա անկեղծ գնահատականը փոխվեց. «Այժմ ես կարող եմ մարգարեանալ»:

Երանի՜ ես ավելի ուշադիր կարդայի այս խոսքը, երբ փորձում էի ծնել իմ Իսմայելի ծառայությունը: Եթե ես անկեղծ լինեի, կհասկանայի, որ *այդ ժամանակ* չէի տիրապետում հրապարակային խոսքին, սակայն օժտված էի իմ հովվին ծառայելու պարգևով: Իմ բնական կարողությամբ ես փորձում էի ծնունդ տալ մի բանի, *ինչը պետք է տեղի ունենար*, ինչն ավելի վաղ հստակ ասվել էր ինձ, հայտնվել էր աղոթքի մեջ, և ինչի մասին ես մարգարեություններ էի ստացել առաջնորդներից: *Այդ պահը* դեռ չէր եկել, և ակնհայտ էր, որ եթե ես պարզապես ուշադրություն դարձնեի այս աստվածաշնչյան պատվերին և անկեղծորեն գնահատեի ինձ՝ խոստովանելով, որ դեռ պատրաստ չէի, ես կխնայեի շատ ժամանակ, միջոցներ և ուժեր: Ես նույնպես ավելի արդյունավետ կլինեի այն բանում, ինչում օժտված էի *այդ ժամանակ:*

Պողոսը հստակ խոսում է զանազան պարգևների մասին. «Ինչպես որ մեր մարմիններն ունեն շատ մասեր, և յուրաքանչյուր մասը հատուկ գործառույթ ունի, նույնպես էլ՝ Քրիստոսի մարմինը» (Հռոմեացիներ 12.4, NLT): Այս պնդումը պարզ է և շատ բան է բացահայտում, եթե նայեք ձեր մարմնին: Մտածե՛ք այս մասին. մեր մատները կարող են անել այն, ինչ մեր քիթը չի կարող: Մեր քիթը կարող է անել այն, ինչ մեր ականջները չեն կարող: Մեր ականջները կարող են անել այն, ինչ մեր ստամոքսը չի կարող: Մեր ստամոքսը կարող է անել այն, ինչ մեր լյարդը չի կարող, և այլն: Այսպիսով, սա նշանակում է հետևյալը.

*Երջանիկ և օրհնված է այն մարդը, ով գիտի*
*իր պարգևները և գործում է դրանցով:*
*Դժբախտ և ճնշված է այն մարդը,*
*ով փորձում է գործել այլ մարդու պարգևներով:*

Մի՞թե տարօրինակ չէր լինի, եթե մի առավոտ դուք արթնանայիք, և ձեր բութ մատն ասեր. «Հերի՛ք է: Բերա՛ն, դու արդեն քանի տարի է՝ խոսում ես: Այսօր ե՛ս եմ խոսելու»: Դա անհեթեթություն է. բութ մատը չունի խոսելու կարողություն, որը հատուկ է բերանին: Այնուամենայնիվ, բութ մատն ունի այնպիսի եզակի կարողություններ, ինչպիսիք չունի բերանը: Պատկերացրեք, որ բերանն ասեր. «Այսօր ե՛ս եմ ուզում աշխատել համակարգչով»: Կրկին, դա անհեթեթ է:

Հաջորդ կարևոր հարցը հետևյալն է: Ինչո՞ւ ենք մենք այդքան շեշ-

տադրում «ամբիոնի պարգևները»: Ինչո՞ւ ենք մենք դիտարկում ծառայողներին, որոնք քարոզում են, և երկրպագության առաջնորդներին, որոնք վարում են փառաբանությունը եկեղեցում՝ որպես կարևորագույն պարգևները կրողների: Պողոսը գրում է Կորնթոսի եկեղեցուն այս մասին. «Մարմնի որոշ մասեր, որոնք, թվում է, ամենատկարն են և պակաս կարևոր են, իրականում, ամենից անհրաժեշտն են» (Ա Կորնթացիների 12.22, NLT):

Թույլ տվեք մի օրինակ բերել: Դուք երբևէ նկատե՞լ եք, որ ոտքերն ուշադրություն են գրավում: Մարդիկ, օրինակ, ասում են. «Որքա՜ն գեղեցիկ են այս կնոջ ոտքերը», կամ «Այս տղամարդու ոտքերն ուժեղ և մկանուտ են»:

Ես հիշում եմ մի դեպք, երբ դեռահաս էի: Հայրս, որը շատ պահպանողական, կարգապահ և հանդարտ մարդ էր, արեց այնպիսի բան, ինչը լիովին խորթ էր իր բնավորությանը: Նա գրեթե երբեք չէր պահանջում ուշադրություն իր հանդեպ: Բայց մեկ անգամ ասաց.

- Որդի՛ս, դու շատ ուժեղ ոտքեր ունես:

Ես զարմացած հառեցի հայացքս նրան՝ առանց պատասխանելու, և ժպտացի՝ մտածելով, թե ինչ նկատի ուներ: Նա շարունակեց.

- Գիտե՞ս ինչու: Իմ ոտքերը նույնպես ուժեղ են. դու ժառանգել ես քո ոտքերն ինձնից:

Ես չգիտեի՝ ծիծաղից ընկնեի հատակի՞ն նրա ասածի պատճառով, թե՞ համաձայնեի նրա հետ, քանի որ նրա անսովոր վարքը լիովին անսպասելի էր ինձ համար: Ես պարզապես ծիծաղեցի և ասացի.

- Հայրի՛կ, շնորհակալություն՝ ինձ ուժեղ ոտքեր տալու համար:

Ճիշտ է, որ ոտքերն ուշադրություն են գրավում: Բայց դուք մտածե՞լ եք այն մասին, որ մարդիկ կարող են ապրել առանց ոտքերի: Ես ճանաչում եմ մի մարդու, որը կորցրել է մեկ ոտքն ավտովթարի պատճառով, բայց շարունակում է ապրել բնականոն կյանքով:

Այլ բան է լյարդը: Ոչ ոք չի կարող ապրել առանց լյարդի: Այն անչափ կարևոր է՝ շատ ավելի կարևոր, քան ոտքը: Սակայն դուք երբևէ լսե՞լ եք, որ ինչ-որ մեկն ասի. «Քո լյարդը տպավորիչ է. այն հոյակապ տեսք ունի»: Հազիվ թե նման բան լինի:

Այնպես որ, կրկին կարդացեք Պողոսի խոսքերը. «Մարմնի որոշ մասեր, որոնք, թվում է, ամենատկարն են և պակաս կարևոր են, իրականում, ամենից անհրաժեշտն են»:

Ուզում եմ կրկին հարցնել. ինչո՞ւ ենք մենք այդքան շեշտադրում «ամբիոնի պարգևները»: Դրանք մարմնի տեսանելի և անհրաժեշտ մասերն են, սակայն, համաձայն Աստծո Խոսքի, դրանք ամենակարևորը չեն:

Իմ ընկեր Սթենի (որի մասին ես խոսեցի առաջին գլխում) պարգևներն են՝ գործարար աշխարհում մարդկանց հետ կապ հաստատելը, գումար վաստակելը և բաշխելը: Նրա պարգևը պակաս կարևոր է թվում, քան «ամբիոնի պարգևները». սա մեր եկեղեցական մշակույթի անխոս համոզմունքն է: Ինչպիսի՞ պատկերացում է ունեցել եկեղեցին: «Ընտրյալներն ամբիոնի ետևում գտնվող մարդիկ են. նրանք են, որ իրական կոչում ունեն»:

Մտածե՛ք այս մասին: Երբ ինչ-որ մեկն ասում է. «Այսինչ մարդու կյանքում կոչում կա», բոլորը անմիջապես ենթադրում են, որ այդ անձնավորությունը լինելու է հովիվ, երկրպագության առաջնորդ, երիտասարդական ծառայության հովիվ, քրիստոնյա գրող, միսիոներ և այլն: Լսելով այս խոսքերը, քչերն են մտածում. «Այդ անձնավորությունը կանչված է բժշկության ոլորտում և բացահայտում է քաղցկեղը բուժելու նոր միջոցներ», «Նա կառավարության մեջ է և ընդունում է օրենքներ, որոնք պաշտպանում են Աստծո թագավորության առաջխաղացումը», «Նա աշխատում է կրթական բնագավառում և սերմանում է Աստծո գիտելիքը և իմաստությունը երիտասարդ մտքերում», կամ «Նա կանչված է գործարար ոլորտում՝ հասնելու այնտեղ գտնվող կորսված մարդկանց և ֆինանսավորելու Աստծո թագավորության կառուցումը»:

Պարգևների մասին այս մտածելակերպի հետևանքներն ակնհայտ են. Սթենը եղել է եկեղեցում տարիներ շարունակ՝ չհասկանալով, որ ինքը նույնքան «կանչված» է, որքան ես: Թեև նրա՝ Աստծուց տրված կարողությունները գործում էին, սակայն դրանք նույնքան կարևոր չէին համարվում այն անխոս համոզմունքի պատճառով, որ «եկեղեցական» պարգևներն ավելի կարևոր են, քան մյուսները: Այս պատկերացումը պետք է փոխվի: Բոլորս ենք կանչված, և մենք ունենք եզակի պարգևներ, որոնք անհրաժեշտ են Աստծո թագավորության մեջ մեր առաջադրանքը կատարելու համար:

Ահա այն հատվածը, որում Պողոսը խոսեց այս մասին Կորնթոսի եկեղեցու հետ.

> «Մեր մարմիններն ունեն շատ մասեր, և Աստված դրել է յուրաքանչյուր մասը ճիշտ այնտեղ, որտեղ ցանկանում է: Որքա՜ն տարօրինակ կլիներ մարմինը, եթե այն ունենար միայն մեկ մաս: Այո, կան շատ մասեր, բայց միայն մեկ մարմին: Աչքը չի կարող ասել ձեռքին. «Դու ինձ պետք չես»: Գլուխը չի կարող ասել ոտքերին. «Դուք ինձ պետք չեք»: Իրականում, մարմնի որոշ մասեր, որոնք, թվում է, ամենատկարն են և պակաս կարևոր են, փաստորեն, ամենից անհրաժեշտն են: Եվ այն մա-

> սերը, որոնք պակաս պատվավոր ենք համարում, մենք հագցնում ենք մեծագույն խնամքով: Այսինքն, խնամքով պաշտպանում ենք այն մասերը, որոնք չպետք է տեսնվեն, այնինչ ավելի պատվավոր անդամները չունեն այս հատուկ հոգատարության կարիքը: Աստված այսպես է միավորել մարմինը, որպեսզի հավելյալ պատիվ և հոգատարություն տրվի այն մասերին, որոնք ավելի պակաս պատիվ ունեն: Սա ձևավորում է ներդաշնակություն անդամների միջև, որպեսզի բոլոր անդամները հոգ տանեն միմյանց համար» (Ա Կորնթացիների 12.18-25, NLT):

Միգուցե մենք պատվում ենք եկեղեցու հետ առնչվող պարգևներն ավելի, քան մյուսները, քանի որ սահմանափակում ենք Պողոսի խոսքերը եկեղեցական միջավայրով: Ակնհայտ է, որ նման միջավայրում քարոզելու և սովորեցնելու պարգևներն ավելի պահանջված են: Բայց Աստծո թագավորության աշխատանքը կատարվում է ամենուր, և սա ևս մեկ կարծրատիպ է, որը պետք է արմատապես փոխվի: Հունարենում «եկեղեցի» բառը «էկլեսիա»-ն է, որը նշանակում է «կանչվածներ»: Հունարեն բառարանի սահմանումն այսպիսին է. «Կանչված մարդիկ կամ նրանք, ովքեր կանչված են կամ հավաքված են ազատ պետության հասարակական հարցերով, ազատ քաղաքացիների մարմին՝ միասին կանչված մունետիկի կողմից»[1]:

Արդյո՞ք մենք եկեղեցի ենք միայն՝ երբ կանչված ենք շենքի ներսում: Արդյո՞ք մենք եկեղեցի ենք միայն՝ երբ միասին հավաքվում ենք աղոթելու, երկրպագելու, քարոզելու կամ ծառայելու համար: Այս կարծրատիպի պատճառով մարդիկ այլ կերպ են վարվում նման միջավայրում և վերադառնում են այլ վարքի հասարակության մեջ: Մենք ենք եկեղեցին, և մենք օժտված ենք Աստծո թագավորությունը կառուցելու պարգևներով, որտեղ էլ լինենք՝ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր և տարին 365 օր:

Վերջերս հանդիպեցի մի միլիարդատիրոջ: Նա անցկացնում էր մի ճանապարհորդություն, որն անվանել էր «Աստվածային շրջագայություն»: Նա իր թիմի հետ ինքնաթիռով գնում էր տարբեր քաղաքներ և հաճախում էր եկեղեցիներ ու համաժողովների՝ մի շարք ծառայողների հանդիպելու համար: Նրա նպատակն էր, որ ծառայության հինգ պարգևները սրեին և ավելի սպառազինեին իրեն իր գործի մեջ: Իմ հանդիպումը նրա հետ նախապես ծրագրված էր լավ ընկերներիցս մեկի կողմից: Այն տեղի ունեցավ Դալլաս քաղաքում՝ մի համաժողովի

---

1 Զոդհիաթես, Սփիրոս. «Բառերի ուսումնասիրության ամբողջական բառարան. Նոր կտակարան» (Չատանուգա, Տենեսի, «AMG Publishers», 2000):

ընթացքում, որին ես քարոզում էի: Մեր երեք ժամ տևող ճաշը հրաշալի էր, և ես գնացի այդտեղից՝ զգալով, որ ստացա ավելին, քան նա:

Նա պատմեց, որ իր գործունեության սկզբում բախվում էր մեծ դժվարությունների գործարար աշխարհում, բայց եկավ մի օր, երբ նրա աչքերը բացվեցին: Նրա լուսավորումը սկսվեց այն հարցով, թե ինչո՞ւ է Աստծո թագավորությունը դրսևորվում միայն եկեղեցիներում կամ համաժողովներին. ինչո՞ւ ոչ՝ ամենուր: Նա գիտեր, որ կանչված էր գործարար ոլորտում, բայց ինչո՞ւ էր նա վարվում այնտեղ այնպես, ինչպես անհավատները: Ոչինչ չէր տարբերում նրան այս աշխարհից:

Նա վճռեց, որ «վարվելու էր Աստծո հետ» գործարար ոլորտում և լսելու էր Սուրբ Հոգու ձայնը այնպես, ինչպես ամբիոնի մոտ կանգնող ծառայողը: Ըստ էության, նա բախվեց իր կոչման հարցին և որոշեց, որ նույնքան կանչված է Աստծուց, որքան ցանկացած հովիվ: Դրանից հետո նա բացահայտեց իր՝ Աստծուց տրված պարգևները և որոշեց նպատակաուղղված վարվել դրանցում: Նա լսում էր Աստծո ձայնը Նրա հետ անցկացրած լուռ ժամերին, ինչպես նաև գործարար հանդիպումների ժամանակ: Եվ, իհարկե, Աստված տալիս էր նրան գիտության և իմաստության խոսքեր իր գործի մեջ:

Արդյունքներն ակնհայտ էին. այսօր նա չունի դժվարություններ: Նա պատմեց Աստծուց ստացած հատուկ խոսքերի մասին, որոնք հաճախ անկարևոր էին թվում: Այնուամենայնիվ, նա որոշում էր կայացրել հնազանդվել, թեև Աստծուց ստացած հրահանգները հակառակ էին թվում գործարարության մեջ ընդունված իմաստությանը և անհարմարավետ էին: Նա պատմեց, որ բախվում էր վիճարկումների, զարմանքի, մտահոգությունների և նույնիսկ ընդդիմության և՛ իր հաճախորդների, և՛ իր թիմի անդամների կողմից: Բայց Աստծուց ստացած խոսքերին անսասան հնազանդվելու պտուղը միլիարդավոր դոլարներ էին: Ես զմայլվել էի որոշ պատմություններով, որոնք նա պատմեց:

## ԱՇԱԿԵՐՏԵԼ ԱԶԳԵՐԸ

Ի՞նչ կկատարվի, եթե մենք կարողանանք փոխել պարգևների մասին այս պատկերացումը ժամանակակից եկեղեցում: Ի՞նչ տեղի կունենա, եթե մենք հասկանալի կերպով բացատրենք նրանց, ովքեր լսում են մեր ուղերձները, որ յուրաքանչյուր անձ *կանչված է*, *օժտված է* և *արժեքավոր է* Աստծո թագավորությունը կառուցելու համար: Այն, որ յուրաքանչյուրը կսկսի գործել Բիլլի Գրեհեմի, Օրալ Ռոբերտսի, Մայր Թերեզայի և Պողոս առաքյալի նպատակաուղղվածությամբ և եռանդով: Ես նկատեցի այդ նպատակաուղղվածությունը և եռանդն այդ միլիար-

դատիրոջ մեջ մեր հանդիպման ժամանակ: Նա գիտեր, թե որն էր իր առաքելությունը և ինչպիսի պարգևներ էր Աստված տվել իրեն՝ այն կատարելու համար:

Մենք պետք է ունենանք այս մտածելակերպը՝ ազգերն աշակերտելու համար: Մի փոքր ավելի խոսենք ազգերն աշակերտելու մասին: Հիսուսը չի ասում. «Աշակերտե՛ք եկեղեցի հաճախողներին»: Նա պատվիրում է մեզ. «Աշակերտե՛ք *ազգերը»* (կարդացե՛ք Մատթեոս 28.19): Հունարենում «ազգեր» բառը *«էթնոս»*-ն է, որի սահմանումն է «մարդկանցից բաղկացած մարմին՝ միավորված ազգակցական կապով, մշակույթով և ընդհանուր ավանդույթներով»[1]: Անկասկած, այս սահմանումը վերաբերում է իրական ազգերին, ցեղերին, նաև տարածքային և էթնիկական խմբերին: Այնուամենայնիվ, այն նույնպես ընդգրկում է ընդհանուր զբաղմունք ունեցող մարդկանց, օրինակ՝ հեծանվորդներին, դերասաններին, բժիշկներին, գործարարներին, օդաչուներին, իրավաբաններին, տնային տնտեսուհիներին, պետական աշխատողներին, մարզիկներին և մարդկանց անթիվ այլ խմբերի: Մենք պետք է աշակերտենք կյանքի տարբեր ոլորտներում գտնվող տղամարդկանց և կանանց:

Բայց եկեք մեկ քայլ առաջ գնանք: Հիսուսը չի ասում. «Աշակերտե՛ք մարդկանց ազգերի մեջ»: Նա ասում է. «Աշակերտե՛ք ազգերը»: Կարևոր է որսալ այս տարբերությունը. մենք պետք է փոխենք կյանքի տարբեր ոլորտների գործունեությունը Աստծո Խոսքով: Իհարկե, դա տեղի է ունենում, նախևառաջ, այդ ոլորտներում գտնվող մարդկանց հասնելով: Այնուամենայնիվ, Նրա ասածն ավելի խորն է: Մենք պետք է մկրտենք (ընկղմենք) ոչ միայն մարդկանց, այլև նրանց գործելաոճը Հոր, Որդու և Սուրբ Հոգու ճանապարհների մեջ: Որպես օրինակ, կարելի է աջակցել գործարար ոլորտում գտնվող մարդկանց, որպեսզի նրանց մտածելակերպը փոխվի, ինչպես որ դա կատարվեց այդ միլիարդատիրոջ կյանքում: Սա պարզապես սառցալեռան գագաթն է:

Մտածե՛ք Զաքեոսի մասին: Նա *գլխավոր* հարկահավաքն էր, անկասկած՝ լավագույններից մեկը տարածաշրջանում: Ըստ էության, նա այդ տարածքի մաֆիայի պարագլուխն էր: Ամենայն հավանականությամբ, մարդիկ ատում էին նրան, քանի որ նա անում էր այն, ինչ հարկահավաքների մեծ մասը՝ օգտագործում էր իր դիրքն անձնական շահի համար: Կարելի է ենթադրել, որ նա թալանում էր քաղաքացիներին, փող էր շորթում նրանցից, խաբում էր, վախեցնում էր և ճնշում էր նրանց: Նա տխրահռչակ, բայց ազդեցիկ մարդ էր, և նրա բոլոր ենթակաները պետք է որ հետևեին նրա օրինակին:

Ես ականատես եմ եղել նման երևույթի մի քանի երկրներում, որտեղ ճանապարհորդել եմ: Երկրի ղեկավարը կաշառակեր էր, և նա պահանջում էր իր պաշտոնյաներից վճարել իրեն՝ իրենց պաշտոնները պահպանելու համար: Եվ նրա բոլոր ենթականերն անում էին նույնը: Նույնիսկ օդանավակայանում գտնվող իմիգրացիոն ծառայության ներկայացուցչին պետք էր կաշառք տալ, այլապես նա չէր հաստատի ձեր փաստաթղթերը՝ երկրից մեկնելու համար:

Վերադառնալով Զաքեոսին՝ Հիսուսը կանչեց նրան անունով և հետաքրքիր է, որ միայն ասաց նրան. «Զաքեո՛ս... շո՛ւտ արա, իջի՛ր: Այսօր Ես հյուր եմ լինելու քո տանը»:

Զաքեոսը կանգնեց Տիրոջ առջև և պատասխանեց. «Ես կտամ իմ հարստության կեսն աղքատներին, Տե՛ր, և եթե խաբել եմ մարդկանց հարկեր վերցնելիս, քառապատիկ ավելի կվերադարձնեմ նրանց» (Ղուկաս 19.5-8, NLT):

Ի՞նչ տեղի ունեցավ այդ տարածաշրջանի հարկահավաքման ոլորտում: Գլխավոր պաշտոնյայի գործունեության խավար, աշխարհիկ մեթոդները փոխարինվել էին Աստծո թագավորության մեթոդներով: Այժմ գործարարության և կառավարման այդ երկրային ոլորտի վերահսկողությունը շատ ավելի էր համապատասխանում երկնային օրենքներին: Հասարակության մեջ փոփոխություն տեղի ունեցավ: Այս փոփոխությունը տեղի չունեցավ եկեղեցական հավաքույթի ժամանակ, և ո՛չ էլ՝ երբ Հիսուսը քարոզում էր որևէ համաժողովի ընթացքում՝ համոզելով Զաքեոսին դառնալ Իր հետևորդը: Դա տեղի ունեցավ քաղաքի կենտրոնում: Զաքեոսը հանդիպեց Հիսուսին, և նրա գործելաոճը հանկարծակի փոխվեց: Սա պետք է տեղի ունենա ամեն անգամ, երբ մարդիկ հանդիպում են մեզ՝ մեր ազգերի մեջ (այն ազդեցության շրջանակներում, որոնցում մենք կանչված ենք), քանի որ նույն Հիսուսն ապրում է մեզանում:

Ներկայումս ես աշխատանք եմ տանում «Ռեգբիի ազգային լիգայի» մի նախկին խաղացողի հետ, որի էջերը սոցիալական ցանցերում մեծ ազդեցություն ունեն բազմաթիվ բոդիբիլդերների վրա: Նա այնպես է հրահանգում այդ բոդիբիլդերներին, որ Երկնքի թագավորության մշակույթը մուտք է գործում այդ ազգի (*«էթնոսի»* խմբի) մեջ, անկախ այն բանից՝ նրա հետևորդներն ընդունե՞լ են Հիսուսին որպես իրենց Տեր, թե՞ ոչ: Նրա հաղորդակցման ձևն այդ մարդկանց հետ ցուցադրում է Աստծո թագավորության ճանապարհները և մեթոդները:

Մեր պարգևները նախատեսված չեն միայն սրբերի հավաքույթի համար, թեև դա ճիշտ է և կարևոր. ես ոչ մի դեպքում չեմ ցանկանում

նվազեցնել մեր հավաքույթների դերը: Իմ մտադրությունն է ընդլայնել Աստծո պարգևների գործածության մեր տեսադաշտը: Եթե մենք կանչված ենք եկեղեցուց դուրս, ինչը վերաբերում է հավատացյալների մեծ մասին, մենք կանչված ենք վարվելու գերբնական զորությամբ մեր ազդեցության շրջանակում՝ մեր *«էթնոսի»* խմբում:

Եթե դուք տարբերակում եք դնում աշխարհիկի և սուրբի միջև, այդ մտածելակերպը պետք է փոխվի: Երբ դուք ինչ-որ տեղ եք մտնում, որտեղ էլ դա լինի՝ այն հիվանդասենյակը, որտեղ դուք վիրաբույժ կամ բուժքույր եք, դասասենյակը, որտեղ ուսուցիչ եք, գործարանը, որտեղ մեքենավար եք, և այլն, դուք օժտված եք, որ բերեք սրբությունն այդ մթնոլորտի մեջ և աշակերտեք այն Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով: Այլ կերպ ասած, ձեր կյանքում կա Աստվածության աջակցությունը և իշխանությունը՝ իջեցնելու համար Երկինքն այս երկրի վրա, ինչպես որ արեց Հիսուսը Զաքեոսի և այլ մարդկանց կյանքերում: Դուք կանչված եք բազմապատկելու Աստծո թագավորության գործելակերպը՝ տարածելով այն ձեր ազդեցության շրջանակում:

Մի՞թե սա ավելի արկածային չի դարձնում աշխատանքի կամ դասի գնալը:

## ՄՏՈՐԵՔ

1. Աստվածաշունչը զգուշացնում է, որ անկեղծորեն գնահատենք ինքներս մեզ: Մեր գնահատումը պետք է լինի ըստ այն պարգևների, որոնք մենք ունենք *այս պահին:* Ես պատմեցի ձեզ պատմությունն այն մասին, որ ժամանակից շուտ փորձում էի ծառայություն սկսել: Ինչպե՞ս դուք կարող եք խուսափել նույն սխալը գործելուց: Ինչի՞ համար եք դուք օծված ձեր կյանքի այս փուլում:

2. Երջանիկ և օրհնված է այն մարդը, ով գիտի իր պարգևները և գործում է դրանցով: Դժբախտ և ճնշված է այն մարդը, ով փորձում է գործել այլ մարդու պարգևներով: Դուք երբևէ ունեցե՞լ եք գայթակղություն՝ ձգտելու որևէ պարգևի, որի համար կանչված չեք: Եթե այո, ինչո՞ւ:

3. Մեր պարգևները նախատեսված չեն միայն սրբերի հավաքույթի համար, այլև այն շրջանակի, որտեղ ազդեցություն ունենք: Դուք կարո՞ղ եք դիտարկել ձեր առօրյան՝ որպես Աստծո թագավորությունը կառուցելու կարևոր մաս: Ի՞նչ կերպերով կարող եք օգտագործել ձեր մասնագիտական պարգևները Աստծո թագավորության համար:

*«Թող ամեն մարդ այսպես համարի մեզ՝ ինչպես Քրիստոսի պաշտոնյաներ և Աստծո խորհուրդների տնտեսներ»:*

– Ա Կորնթացիների 4.1

# 4

# Տնտեսներ

Մենք ուսումնասիրեցինք *«շնորհք»* և *«պարգև»* բառերը. այժմ կխոսենք *«տնտեսություն»* բառի մասին: Այս բառի մասին պատկերացում կազմելուց հետո մենք կարող ենք միավորել այս երեք բառերն Աստվածաշնչից, որպեսզի պարզորեն հասկանանք, թե ինչպես բացահայտենք մեր կյանքի առաքելությունը:

> «Մերիամ-Վեբսթեր» բառարանը սահմանում է *«տնտեսությունը»* որպես «որևէ մեկի խնամքին վստահված որևէ բանի հոգատար և պատասխանատու տնօրինում»: Աստվածաշնչյան բանալի բառերի հունարեն սահմանումներն ուսումնասիրելը խոհեմ քայլ է, քանի որ թարգմանությունը հաճախ չի փոխանցում բնագրային բառի ճշգրիտ իմաստը: Այնուամենայնիվ, սա չի վերաբերում *տնտեսությանը*, որի սահմանումները հունարենով և մեր լեզվով գրեթե նույնական են: Վերոնշյալ խոսքում *«տնտես»* բառը հունարեն *«օյկոնոմոս»* բառն է, որի սահմանումը հետևյալն է. «նա, ով ունի իշխանություն և պատասխանատվություն ինչ-որ բանի համար. նա, ով ղեկավարում է. նա, ով պատասխանատու է. կառավարիչ»:[2]

Գոյություն ունի տնտեսության երեք կողմ, որոնք բխում են այս երկու սահմանումներից: Տնտեսը՝

- Հսկում է այն, ինչը պատկանում է մեկ այլ մարդու:
- Իշխանություն ունի կառավարելու այն, ինչը վստահվել է իրեն:
- Պատասխանատու է. նա հաշիվ է տալու սեփականատիրոջը:

Աստված ստեղծել է ամեն ինչ, և ամեն ինչ Նրանն է: Սաղմոս 24.1-ը հայտնում է. «Տիրոջն է երկիրը և նրա լիությունը»: Սա նշանակում է, որ մենք ամբողջ երկրային տիրույթի տնտեսներն ենք: Մենք պետք է

տնօրինենք երկիրը՝ հողը, ջուրը, օդը, բնական պաշարները, կենդանիներին, ծկներին և թռչուններին: Մենք պետք է հոգ տանենք նաև մարդկանց մասին՝ հոգևորապես, զգացմունքորեն, մտավորապես և ֆիզիկապես: Այս ամենը կատարելու համար անհրաժեշտ է աստվածահաճո և օգտակար գիտելիք, իմաստություն և հասկացողություն: Ես կարող էի շարունակել, բայց, ըստ էության, մենք պատասխանատու ենք ամեն ինչի համար այս երկրում՝ թե՛ տեսանելի, թե՛ անտեսանելի:

Բայց տեսնենք, թե ինչ իմաստով է Պողոսն օգտագործում *«տնտեսություն»* բառն իր պնդման մեջ: Նա գրում է «Աստծո խորհուրդների տնտեսներ» լինելու մասին: «Նոր կենդանի թարգմանության» մեջ գրված է, որ մենք *«նշանակվել* ենք Աստծո խորհուրդները բացատրելու համար»: Պողոսի կյանքի պարգևներից *(խարիզմաներից)* մեկը հայտնությունն էր, ինչը նշանակում է բացատրել խորհուրդները՝ ծածուկ ճշմարտությունները, որոնք դեռ հայտնված չեն: Այդ իսկ պատճառով, այն *տնտեսությունը,* որի մասին նա խոսում է, չի վերաբերում փողը, ժամանակը կամ բնական ռեսուրսները տնօրինելուն (թեև այդ ամենն անհրաժեշտ է տնտեսել), այլ վերաբերում է իր կյանքի պարգևը (խարիզման) տնօրինելուն: Արդյո՞ք սա վերաբերում է նաև մեզ:

Պետրոսը գրում է. «Ինչպես որ յուրաքանչյուրը *պարգև* է ընդունել, ծառայեք մեկդ մյուսին՝ որպես Աստծո բազմապիսի *շնորհքի* բարի *տնտեսներ»* (Ա Պետրոս 4.10, NKJV): Այս խոսքի մեջ կան մեր կողմից ընդգծված բոլոր բառերը (պարգև՝ *«խարիզմա»,* շնորհք՝ *«խարիս»,* և տնտեսներ՝ *«օյկոնոմոս»*): Պետրոսը՝ նույն կերպով, ինչպես և Պողոսը, տեղեկացնում է, որ մենք պետք է տնտեսենք մեզ վստահված *խարիզման:* Այս պնդումը շատ բան է հայտնում. այնպես որ, մենք պետք է ուշադրությամբ ուսումնասիրենք այն:

Ուշադրություն դարձրեք, որ Պետրոսի խոսքով, «յուրաքանչյուրը» պարգև է ընդունել: Ամենասկզբից կարևոր է նշել, որ նա չասաց՝ «յուրաքանչյուր ծառայող», «յուրաքանչյուր հովիվ», «յուրաքանչյուր փառաբանության ավագ» կամ խոսքի ծառայությանը վերաբերող ցանկացած պարգև, այլ՝ «յուրաքանչյուրը»: Եթե դուք վերստին ծնված եք, դուք ունեք պարգև կամ պարգևներ, որոնք փոխանցվել և վստահվել են ձեզ: Սա Աստվածաշնչի պատասխանն է այն հարցին, որի մասին խոսեցինք երկու գլուխ առաջ: *Դուք ունեք պարգև կամ պարգևներ, և, որպես կրկնողություն, դրանք շնորհքի հատուկ ընդունակություններ են, որոնք զորացնում են մարդուն՝ տալով հատուկ կարողություն:*

Ձեր պարգևների կարևորությունը ցույց տալու համար դիտարկենք Պողոսի վերաբերմունքը: Նա լրջորեն էր վերաբերվում իր տնտեսութ-

յանը, իսկ ավելի ճիշտ՝ խիստ լրջորեն: Մի քանի գլուխ անց, Կորնթացիներին ուղղված իր նամակում նա գրում է.

> «Որովհետև եթե Ավետարանը քարոզեմ, դա ինձ պարծանք չէ, որովհետև դա հարկ է դրված ինձ վրա: Եվ *վա՜յ է ինձ*, եթե Ավետարանը չքարոզեմ: Որովհետև եթե հոժար կամքով անեմ այս, վարձք ունեմ, իսկ եթե ակամա՝ *տնտեսությունը հանձնված է* ինձ» (Ա Կորնթացիների 9.16,17):

Իմ ուշադրությունն անմիջապես գրավեց *«վա՜յ է ինձ»* արտահայտությունը: Այն խիստ է՝ ավելի խիստ, քան շատերս կարող ենք հասկանալ: Հունարենում *«վայ»* բառը *«օուայ»*-ն է, որի սահմանումն է «աղետ, զարհուրանք»[1]: Եվս մեկ բառարան ավելացնում է այլ իմաստ՝ «տրտմության կամ վրդովմունքի բացականչություն»[2]: Այս բառի օգտագործման յուրաքանչյուր դեպքը Նոր կտակարանում ենթադրում է շատ լուրջ և սարսափելի դատաստան, որը սպասում է նրանց, ում այն վերագրվում է: Երբ Պողոսը գրում է՝ «վա՜յ ինձ», դա նման է իր վրա անեծք կանչելուն: Այս պնդումը պետք է անմիջապես գրավի մեր ուշադրությունը: Աստծուց մեզ տրված պարգևներն անտեսելը ծանր արարք է:

Պողոսը գիտեր, որ Աստված մեծ արժեք ունեցող բան էր վստահել իրեն: Սթափեցնող ճշմարտությունն այն է, որ եթե նա պատշաճ կերպով չտնտեսեր իր պարգևը, ուրիշները չէին օգտվի դրանից, և նույնիսկ վնաս կկրեին՝ չստանալով այն, ինչ Աստված նախատեսել էր նրանց համար: Պողոսը գիտեր, որ իր պարգևն իր համար չէր. այն տրված էր այլ մարդկանց *համար*՝ իր *միջոցով:* Այլ կերպ ասած, նա ուներ այն, ինչ Աստված ցանկանում էր տալ այլ մարդկանց, և հենց սա է պատճառը, որ նա «վա՜յ» կանչեց իր վրա՝ իր տնտեսությունն անտեսելու դեպքում:

Վերագրենք սա ձեզ և ինձ: Մենք պետք է ընդգծենք երկու հետաքրքիր միտք: Առաջինը՝ Պողոսի պարգևը «նկատելի» էր: Հիշեք՝ Աստված վճռեց, որ ոչ ակնհայտ պարգևները պետք է արժանանան ավելի մեծ պատվի, քան ակնհայտ պարգևները: Եթե Պողոսն իր նկատելի պարգևին վերաբերվում էր այսպիսի լրջությամբ, մենք չպետք է արժեզրկենք այն պարգևը, որն Աստված դրել է մեր կյանքում, հատկապես եթե այն ոչ նկատելի է:

Երկրորդ եզրակացությունն է՛լ ավելի կարևոր է: Այն պարգևները, որոնք Աստված տվել է ձեզ, ձեզ համար չեն. դրանք նախատեսված են այլ մարդկանց *համար,* ովքեր պետք է օգուտ ստանան ձեր *միջո-*

*ցով:* Իմ գրելու պարգևն ինձ համար չէ, այլ՝ ձեզ համար: Իմ քարոզելու պարգևն ինձ համար չէ, այլ նրանց, ում ես խոսք եմ ուղղում: Իմ առաջնորդելու պարգևն ինձ համար չէ, այլ նրանց, ում ես առաջնորդում եմ, և այլն:

## ՄԵՆՔ ԵՆՔ ՈՐՈՇՈՒՄ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՕԳՏԱԳՈՐԾԵՆՔ ՄԵՐ ՊԱՐԳԵՎԸ

Մենք կարող ենք արդյունավետ կերպով օգտագործել մեր պարգևները կամ չարաշահել դրանք. ընտրողը մենք ենք: Պարգևը կարող է գործել, նույնիսկ եթե այն չի օգտագործվում իր սկզբնական աստվածային նպատակի՝ Աստծո թագավորությունը կառուցելու համար: Ադոլֆ Հիտլերն օժտված առաջնորդ էր, և նա կարող էր առաջնորդել իր երկիրն այնպես, որ օգուտ բերեր միլիոնավոր գերմանացիների, հրեաների, ռուսների, ֆրանսիացիների, բրիտանացիների և այլոց: Արդյո՞ք նա օգտագործեց այդ պարգևն Աստծո փառքի համար, թե՞ իր և իր հավանությանն արժանացած մարդկանց: Կարո՞ղ ենք ասել, որ նա օգտագործեց իր պարգևը կործանման համար, որ հրեաները և անթիվ այլ ազգեր թալանվեցին, զրկվեցին, տանջահար արվեցին և ենթարկվեցին մահապատժի՝ առանց որևէ պատճառի: Այս հարցերի պատասխանները չունեն քննարկման կարիք. դրանք ակնհայտ են:

Ադոլֆ Հիտլերի տնտեսության արդյունքն ակնհայտ է, բայց թույլ տվեք խոսել ևս երկու շատ հայտնի մարդկանց մասին, որոնց տնտեսության արդյունքը միգուցե այդքան ակնհայտ չէ: Առաջինը Ուիթնի Հյուսթոնն է՝ երգչուհի, որն ուներ ամենահրաշալի ձայնը, որ երբևէ լսել եմ: Աստծո հպումն ակնհայտ էր նրա կյանքում: Երբ Ուիթնին երգում էր, նրան լսողները խորապես հուզվում էին: Նրա ձայնը եթերային էր. այն կարծես հրեշտակային լիներ և շատ ազդեցիկ էր:

Երկրորդը Ֆրեդի Մերկուրին է՝ «Քուին» ռոք-խմբի վոկալիստը: Նա կարող էր ազդել ամբողջ մարզադաշտերի վրա իր երգահանության և երգեցողության պարգևներով: Նրա կարողությունը վեր էր սովորականից, և ոմանք նույնիսկ պնդում են, որ այն գերբնական էր: Նա կարող էր դրդել մի ամբողջ բազմության հետևել իր առաջնորդությանը գրեթե ցանկացած իրավիճակում: Նրա մահվանից տարիներ անց շատերը դեռևս երգում են նրա երգերը:

Արդյո՞ք Ուիթնին և Ֆրեդին արդյունավետ տնօրինեցին իրենց պարգևները: Անկասկած, շատերը կպնդեն, որ այդպես է: Բայց եկեք դիտարկենք այս հարցը Հիսուսի խոսքերի ներքո.

> «Իմաստությունն արդարացի է համարվում իր *արդյունքներով»* (Մատթեոս 11.19, NLT),

և կրկին.

> «Իմաստությունն արդարացի է համարվում *այն մարդկանց կյանքով, որոնք հետևում են դրան»* (Ղուկաս 7.35, NLT):

Դիտարկենք այս երկու զարմանալի կատարողների պտուղը՝ նրանց տնտեսության թե՛ կարճատև, թե՛ երկարատև արդյունքները: Արդյո՞ք Ուիթնին օգտագործում էր իր պարգևը՝ մարդկանց Աստծո ներկայության մեջ տանելու համար: Արդյո՞ք նրան լսողներն աստվածապաշտ էին դառնում՝ նրան լսելուց հետո: Նրա երգերն ամրացնո՞ւմ էին ամուսնական ուխտերը, թե՞ դժգոհություն էին առաջացնում՝ անիրատեսական ռոմանտիկ սպասումներ ստեղծելով: Արդյո՞ք Ֆրեդին օգտագործում էր իր պարգևը՝ իր լսարաններն արդարության առաջնորդելու համար: Արդյո՞ք նա հորդորում էր մարդկանց պատվել իրենց Արարչին: Ինչպե՞ս Ուիթնին և Ֆրեդին հեռացան այս երկրից: Նրանց ժառանգությունը մնայո՞ւն է, թե՞ անցողիկ: Այն կմնա՞ հավիտյան, թե՞ կկործանվի այս աշխարհի հետ:

Հիսուսը խորհուրդ է տալիս, որ քննենք մարդու կյանքի արդյունքը, և ես թույլ կտամ, որ ինքներդ որոշեք Ուիթնիի և Ֆրեդիի տնտեսության արդյունքները: Այնուամենայնիվ, վերջնական քննության ժամանակը գալու է մեր Արարչի ներկայության մեջ: Յուրաքանչյուրը հաշիվ կտա Դատաստանի ժամանակ:

Ես հասկանում եմ, որ եթե դուք Ուիթնիի կամ Ֆրեդիի երկրպագուներից եք, միգուցե ձեզ դուր չգան այս դատողությունները: Այնուամենայնիվ, թույլ տվեք տալ մի հարց, որն ավելի շատ լույս կսփռի այն բանի վրա, թե ինչպես կգնահատվի նրանց տնտեսությունը Դատաստանի ժամանակ: Եկեք դիտարկենք նրանց ժառանգությունը տասը միլիոն տարվա հեռանկարով: Ի՞նչ կարող են ասել Ուիթնին և Ֆրեդին՝ անդրադառնալով այն բանին, թե ինչպես են իրենք տնօրինել Աստծուց իրենց տրված պարգևները: Քննությունը հավիտենական հեռանկարով կարող է փոխել ձեր սկզբնական կարծիքը:

Ամեն ինչ կյանքում կախված է հեռանկարից: Եթե մենք դիտարկենք կյանքն 80 տարվա զտիչով, կտեսնենք ամեն ինչ որոշակի կերպով: Այնուամենայնիվ, եթե նայենք կյանքին հավիտենական հեռանկարով, ամեն ինչ այլ կթվա:

Պատկերացրեք հետևյալը: Ձեզ հրավիրում են ընթրիքի մի կաֆետերիայում: Դուք վճարում եք որոշված գումարը և կարող եք ուտել՝

ինչ ցանկանաք: Սեղաններից մեկի վրա միայն համեղ աղանդեր է: Եթե նայեք այդ սեղանին մեկօրյա հեռանկարով, ի՞նչ կանեք: Ամենայն հավանականությամբ, դուք կուտեք բոլոր համեղ պատառները: Ի՞նչ կկատարվի, եթե նայեք այդ սեղանին մեկ տարվա հեռանկարով: Հավանաբար, դուք կուտեք մեկը, կամ էլ ոչ մի հատ: Ինչո՞ւ: Դուք չեք ցանկանա, որ ձեր ստամոքսը ցավի հաջորդ առավոտյան, չեք ցանկանա, որ ձեր մարմնի ճարպն ավելանա չորս կիլոգրամով մինչև հաջորդ շաբաթ, և չեք ցանկանա վնասել ձեր առողջությունը՝ երկարաժամկետ տեսանկյունից:

Դիտարկելով Ուիթնիի և Ֆրեդիի պտուղը հավիտենական հեռանկարով, ակնհայտ է, թե որքանով կարելի է իմաստուն համարել նրանց տնտեսությունը:

Մեզ համար լիովին անվտանգ է խոսել Ադոլֆ Հիտլերի կամ, նույնիսկ, Ֆրեդի Մերկուրիի և Ուիթնի Հյուսթոնի մասին: Բայց գոյություն ունի սթափեցնող իրականություն. դուք և ես նույնպես հաշիվ ենք տալու մեզ վստահված պարգևների համար, երբ կանգնենք Դատավորի առջև: Մեր պարգևները կդիտարկվեն հավիտենական, ոչ թե 80 տարվա հեռանկարով: Մեր պարգևները կստուգվեն Աստծո հավիտենական Խոսքի լույսի ներքո, որը հանձնարարում է մեզ կառուցել Նրա թագավորությունը: Արդյո՞ք մեր ժառանգությունը մնայուն կլինի, թե՞ այն կանցնի այս աշխարհի համակարգի հետ:

## ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Թույլ տվեք կրկնել այն, ինչի մասին խոսեցինք առաջին գլխում: Դուք կարող եք տնօրինել ձեր պարգևը հետևյալ երեք ձևերով.

- Դուք կարող եք օգտագործել այն՝ կառուցելու համար Աստծո թագավորությունը:
- Դուք կարող եք օգտագործել այն՝ կառուցելու համար ձեր կյանքը:
- Դուք կարող եք ընդհանրապես անտեսել այն:

Կարևոր է խոսել երկրորդ կետի մասին, որը կարող է խաբուսիկ լինել: Շատերն են կարծում, թե իրենք կառուցում են այլ մարդկանց, նույնիսկ՝ հանուն Աստծո թագավորության, սակայն նրանք անում են դա անձնական շահի համար:

Ես անգիտակցաբար հայտնվել էի այս ծուղակում: Տարիներ առաջ՝ իմ ծառայության սկզբում, մշտապես բարի և հաճելի խոսքեր էի ասում բոլորին մեր թիմում, եկեղեցում և նրանց, ում ճանաչում էի: Ես հաճո-

յախոսում էի մարդկանց նույնիսկ այն դեպքում, երբ իմ խոսքերը ճիշտ չէին: Ես լսում էի, որ մարդիկ բարի և սիրող էին համարում ինձ: Այդ գնահատականն է՛լ ավելի էր խրախուսում իմ վարքը:

Մեկ անգամ աղոթքի ժամանակ Աստված ասաց ինձ. «Մարդիկ ասում են, որ դու սիրող, հոգատար և բարի անձնավորություն ես, այնպես չէ՞»:

Այլ դեպքում ես կընդունեի Նրա ասածը որպես հաստատություն, բայց այն, թե ինչպես Սուրբ Հոգին խոսեց, ցույց էր տալիս, որ Նա այլ բան նկատի ուներ: Այնպես որ, ես զգուշորեն պատասխանեցի. «Այո՛, ասում են»:

Նա անմիջապես պատասխանեց. «Գիտե՞ս, թե ինչու ես դու միայն հաճելի բաներ ասում մարդկանց»:

Ես առավել զգուշորեն պատասխանեցի. «Ինչո՞ւ»:

«Որովհետև դու վախենում ես, որ կմերժվես նրանցից, - ասաց Նա: - Այդ դեպքում, ո՞վ է քո սիրո կենտրոնում՝ դո՞ւ, թե՞ նրանք»:

Հասկանալով, որ իմ շարժառիթները լիովին բացահայտվել էին, ես ընդունեցի, որ Նա ճիշտ էր:

Նա շարունակեց. «Եթե դու իսկապես սիրեիր մարդկանց, կասեիր նրանց ճշմարտությունը, նույնիսկ եթե նրանք մերժեին քեզ»:

Այս շտկումն ուղղված էր մարդկանց հանդեպ իմ վերաբերմունքին: Բայց ես պետք է տամ հետևյալ հարցը՝ կապված մեր թեմայի հետ: Կարո՞ղ ենք մենք չարաշահել Աստծո պարգևը նման կերպով: Այլ կերպ ասած, մարդկանց կարող է թվալ, թե մենք օգտագործում ենք մեր պարգևը՝ Աստծո թագավորությունը կառուցելու համար, բայց իրականում այն օգտագործվում է եսակենտրոն շարժառիթներով: Պատասխանը, իհարկե, դրական է, և ես ևս մեկ անգամ կբերեմ օրինակ իմ կյանքից, այնուհետև կհաստատեմ այն սուրբգրային օրինակներով:

Սովորաբար ես անմիջապես խոսք չեմ ստանում Տիրոջից այն մասին, թե ինչ պետք է քարոզեմ որևէ համաժողովի կամ եկեղեցական ծառայության ընթացքում, բայց մշտապես բաց եմ պահում իմ սիրտը՝ Սուրբ Հոգու առաջնորդության համար: Այնուամենայնիվ, կար մի դեպք, երբ ես հստակորեն խոսք ունեի Տիրոջից մինչև քարոզելը:

ԱՄՆ-ի Միջին Արևմուտքում ես պետք է ծառայեի մի համաժողովում: Երբ արթնացա իմ հյուրանոցային համարում այն օրը, երբ պետք է քարոզեի, հստակորեն լսեցի Սուրբ Հոգուն. «Ես ցանկանում եմ, որ համաժողովի այսօրվա ծառայությանը քարոզես *«Սատանայի խայծը»* թեմայով»: (Ես գրել եմ այդ գիրքը 1994 թվականին. այն՝ վիրավորանքները հաղթահարելու և մեզ ցավ պատճառող մարդկանց ի սրտե ներելու մասին է):

Ամբողջ օրը ես պայքարեցի Նրա ասած խոսքերի հետ: «Սատանայի խայծը» ուղերձն արդեն մի քանի տարի էր լայն տարածում ուներ: Այդ գիրքը հանրաճանաչ էր դարձել: Շատ երկար ժամանակ էր, որ ես քարոզում էի այդ ուղերձը ամբողջ ԱՄՆ-ով, և շատերն արդեն լսել էին այն: Ինձ համար է՛լ ավելի դժվար էր հետևել Սուրբ Հոգու առաջնորդությանը, քանի որ ես աշխատում էի նոր գրքի վրա: Երբ դուք ամիսներ շարունակ գրի եք առնում որոշակի ճշմարտություններ, դրանք ավելի ուժգին և թարմ են ձեր սրտում: Եվ, ամենակարևորը, իրականում ես չէի ցանկանում քարոզել ավելի հին ուղերձը, բայց ստացա հստակ պատվեր Սուրբ Հոգուց:

Այդ երեկո, համաժողովի դահլիճ հասնելուն պես, ինձ ասացին, որ մարդիկ եկել էին հեռվից՝ ինձ լսելու համար: Մարմնովս սարսուռ անցավ. ես մտածեցի, որ այդ մարդիկ, հավանաբար, լսելու են կրկնվող ուղերձ, և հնարավոր է, որ նրանք արդեն կարդացել են «Սատանայի խայծը» գիրքը:

Մտնելով դահլիճ՝ ես նկատեցի, որ մթնոլորտը լի էր ոգևորությամբ: Մարդկանց սպասումն ակնհայտ էր: Առավոտյան ստացած խոսքին հետևելն ավելի դժվար թվաց ինձ: Ես ասես չէի ցանկանում հուսախաբ անել մարդկանց: Տեղի տվեցի ճնշմանը և որոշեցի քարոզել իմ «թարմ» ուղերձը, և ինձ դուր եկավ իմ քարոզը: Այն ազդեցիկ էր, և մարդիկ արձագանքեցին խանդավառությամբ: Մի քանիսը նույնիսկ ոտքի ելան՝ հաստատելով իմ գլխավոր մտքերը: Թվում էր՝ ես «անպատիժ մնացի», կամ, միգուցե, չէի լսել Աստծուց այդ առավոտյան: Ինչևէ, ես ուրախ էի: Հավաքույթից հետո բոլորը ծառայողների սենյակում ոգեշնչված էին և շնորհակալ էին ինձնից այդ ուղերձի համար:

Սովորաբար այն քաղաքից, որտեղ քարոզում եմ, ես հեռանում եմ բավականության և ուրախության զգացումով, ասես Աստված ժպտում է իմ սրտում: Հաջորդ առավոտյան ես բոլորովին այլ կերպ էի զգում ինձ: Ես արթնացա ծանրության զգացումով. կարծես ուժ չունեի և նույնիսկ պայքարում էի ընկճվածության հետ: Եվ անմիջապես հասկացա պատճառը. ես չէի հնազանդվել Աստծուն: Այդ առավոտ ծնկի եկա, ապաշխարեցի, ներում խնդրեցի և աղաչեցի, որ Հիսուսի արյունը մաքրեր ինձ:

Այնուամենայնիվ, թեթևություն չզգացի: Ես կրեցի այդ ծանրությունը և տրտմությունը ամբողջ օրը՝ հյուրանոցում եղած ժամանակ, օդանավակայան գնալու ճանապարհին, օդանավակայանում ուշացած թռիչքին սպասելիս և դեպի Արևմտյան Ափ ճանապարհորդության ընթացքում: Տրտմությունը, ծանրությունը և ընկճվածությունը գրեթե անտանելի էին: Ի վերջո, երբ ինքնաթիռը պատրաստվում էր վայրէջք

կատարել Սան Դիեգոյում, այդ ամենը վերցվեց ինձնից:

«Հա՛յր, - հարցրի, - ես ապաշխարեցի և ներում խնդրեցի այս առավոտ: Ինչո՞ւ Դու չվերականգնեցիր իմ ուրախությունը, խաղաղությունը և գոհունակությունը մինչև այս պահը»:

Եվ լսեցի Տիրոջ ձայնը. «Ես թույլ տվեցի քեզ կրել քո անհնազանդության ծանրությունը, որպեսզի հասկանաս, թե որքան լուրջ էր այն: Անցած երեկո ծառայությանը ներկա էր մի հովիվ, որը պետք է լսեր «Սատանայի խայծը»՝ այն ուղերձը, որը Ես վստահել էի քեզ: Նրա անձնական կյանքը և ծառայությունը վճռորոշ փուլում են: Դու չհնազանդվեցիր Ինձ, իսկ անհնազանդությունը հետևանքներ ունի: Այն ծանրությունը, որը զգացիր, զգուշացում է, որ թույլ չտաս, որպեսզի դա կրկնվի: Այժմ դու նոր քաղաքում ես. հնազանդվի՛ր Ինձ»:

Վերհիշելով նախորդ երեկոն՝ ես կարող էի ասել, որ թե՛ ներկաները, թե՛ համաժողովի թիմը և կազմակերպիչն ուրախ էին: Ինձ կրկին հրավիրեցին այդտեղ, և հետագայում ես նույնիսկ լսեցի վկայություններ՝ կապված այդ ծառայության հետ: Ակնհայտ է, որ Աստծո պարգևը գործեց իմ միջոցով այդ երեկո, թեև այն չէր գործածվում համաձայն աստվածային նպատակի:

Միգուցե հարցնեք. «Դուք համոզվա՞ծ եք, որ նման բան կարող է տեղի ունենալ»: Եկեք դիտարկենք մի քանի պատմություն Սուրբ գրքից աստվածային պարգևը չարաշահելու մասին: Սկսենք Մովսեսից: Նա կանչված էր առաջնորդելու Իսրայելը դեպի Խոստման երկիր և օժտված էր ակնառու հրաշքներ գործելու կարողությամբ՝ իր առաքելությունը կատարելու համար:

Մեկ անգամ Աստված պատվիրեց Մովսեսին խոսել ժայռին, որպեսզի ջուր դուրս գար, և մարդիկ խմեին: Բայց Մովսեսը հարվածեց ժայռին՝ բարկության պատճառով, այսինքն՝ նա ուղղակիորեն անհնազանդ գտնվեց աստվածային առաջնորդությանը: Ջուրը, միևնույն է, առատությամբ եկավ՝ այնպես, որ միլիոնավոր մարդիկ անապատում խմեցին: Դա ևս մեկ տպավորիչ հրաշք էր Մովսեսի ցուցակում: Այնուամենայնիվ, որոշ ժամանակ անց՝ երբ «համաժողովն» ավարտվեց, Մովսեսը կանչվեց հաշվետվության՝ իր պարգևն Աստծո առաջնորդությամբ չգործածելու համար: Այդ չարաշահման պատճառով նրան թույլ չտրվեց մտնել Խոստման երկիր: Սթափեցնող է, երբ մտածում եք այդ մասին:

Հաջորդ օրինակը Բաղաամն է: Նա մարգարեացավ Իսրայելի համար, և նրա խոսքերը գրված են Աստվածաշնչում մինչև օրս: Ինչպիսի՛ մեծ վկայություն. ձեր մարգարեությունը՝ Աստծո հավիտենական Խոսքում: Բայց այս պատմության մեջ կա ավելին: Աստված հատուկ

պատվիրել էր նրան չգնալ, այսինքն՝ չանել այն, ինչ նրանից ուզում էին: Այնուամենայնիվ, Բաղաամին վստահված պարգևը գործեց, թեև Աստված պարզ ասել էր նրան. «Դու չպետք է գնաս նրանց հետ» (Թվոց 22.12, NKJV): Կրկին, պարգևը գործեց՝ սկզբնական աստվածային նպատակից դուրս:

Որպես հետևություն՝ Աստված չի մանրակառավարում Իր կողմից մեզ վստահված պարգևները: Եթե նա այդ կերպով վերահսկեր, մենք *տնտեսներ* չէինք կոչվի, քանի որ տնտեսն ունի իշխանություն՝ տնօրինելու այն, ինչ վստահված է իրեն՝ առանց անմիջական վերահսկողության: Այս պնդման սուրբգրային օրինակը Հիսուսի առակն է անիրավ տնտեսի մասին.

> «Մի հարուստ մարդ կար, որ մի տնտես ուներ: Եվ նրանից գանգատ եղավ նրան, իբր թե նա վատնում է նրա ստացվածքը: Եվ նրան կանչեց և ասաց. «Սա ի՞նչ է, որ ես լսում եմ քեզնից: Տո՛ւր քո տնտեսության համարը, որովհետև այլևս չես կարող տնտես լինել»» (Ղուկաս 16.1,2):

Քանի որ տնտեսությունն ավելի տարածված էր աստվածաշնչյան օրերում, քան այսօր, մենք հեշտորեն կարող ենք չնկատել մի կարևոր բան այս պատմության մեջ: Ուշադրություն դարձրեք, որ որոշ ժամանակ այդ հարուստը տեղյակ չէր կատարվածից. նա չէր հետևում իր տնտեսի գործերին ամեն օր: Անհրաժեշտ եղավ, որ մեկ այլ մարդ զգուշացներ նրան, որպեսզի նա ուշադրություն դարձներ արդեն երկար ժամանակ տևող թյուր կառավարմանը:

Մենք կրկին տեսնում ենք սա Հովսեփի պատմության մեջ՝ Ծննդոց գրքում: Հայտնվելով Եգիպտոսում՝ սկզբում նա ստրուկ էր Պետափրեսի տանը, բայց հետագայում առաջխաղացում ունեցավ՝ լիովին դառնալով նրա տան *տնտեսը:* Գրված է. «Եվ նա իր ամբողջ ունեցածը Հովսեփի ձեռքին թողեց և նրա մոտ եղած մեկ բանից տեղեկություն չուներ՝ բացի իր կերած հացից» (Ծննդոց 39.6): Պետափրեսը չէր մանրակառավարում կամ վերահսկում Հովսեփի աշխատանքը: Նա վստահել էր տնտեսությունը Հովսեփին:

Աստծո պարգևները տրվում են մեզ նման կերպով: Պետրոս առաքյալը պատվիրում է մեզ լինել Աստծուց մեզ տրված բազմապիսի շնորհքի՝ *խարիզմայի* բարի տնտեսներ:

# ՈՉ ԱԿՆՀԱՅՏ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ

Եկեք շարունակենք: Նախ վերհիշենք Պետրոսի խոսքերը. «Ինչպես որ յուրաքանչյուրը պարգև է ընդունել, *ծառայեք* մեկդ մյուսին՝ որպես Աստծո բազմապիսի շնորհքի բարի տնտեսներ»: Որպես տնտեսներ, մեզնից սպասվում է, որ *ծառայենք* կամ օգտագործենք մեր պարգևները: Կրկին, դրանք մեզ համար չեն, այլ՝ մեզ շրջապատող մարդկանց: *«Ծառայել»* բառը հունարենում *«դիակոնե՛ո»* բառն է, որը նշանակում է «ծառայել, սպասարկել՝ գործն ավարտին հասցնելու շեշտադրումով»[3]: Մենք պետք է մշտապես պատրաստ լինենք ծառայել մեր պարգևներով: Մեր պարգևները ձրիաբար են տրվել մեզ, և մենք պետք է պատրաստակամորեն օգտագործենք դրանք՝ այլ մարդկանց կյանքերը կառուցելու համար:

Մենք պետք է «ծառայենք միմյանց *մեզ վստահված պարգևներով*՝ որպես Աստծո *բազմապիսի* շնորհքի բարի տնտեսներ»: «Բազմապիսի» բառն այս խոսքում նշանակում է «տարբեր տեսակների»[4]: Կպահանջվեն չափազանց շատ էջեր՝ թվարկելու համար այն բազմապիսի պարգևները, որոնք Աստված տվել է Իր ժողովրդին: Իրականում, երևի թե, անհնար է նման ցուցակ կազմել: Որոշ պարգևների կապն Աստծո թագավորությունը կառուցելու հետ՝ ակնհայտ է: Այնուամենայնիվ, բազմաթիվ այլ պարգևների կապը շատ ավելի դժվար է նկատել: Ահա մի օրինակ:

Վերջերս լսեցի մի հայտնի հովվի, ով պատմում էր իր ամենամյա համաժողովից առաջ տեղի ունեցած մի հետաքրքիր խոսակցության մասին: Այդ ամենամյա միջոցառումը շատ հայտնի է, և շատերն են մասնակցում դրան: Երբ նրա թիմը պատրաստում էր լսարանը, այդ հովիվը տեսավ, որ մի բժիշկ, որն իր եկեղեցու անդամ է, տեղեկագրեր էր շարում նստարաններին՝ համաժողովի մասնակիցների համար:

Այդ հովիվը մոտեցավ բժշկին և ներողություն խնդրեց.

- Բժի՛շկ, դուք չպե՛տք է անեք սա: Մեր օգնականները և կամավորները կկատարեն այս աշխատանքը:

Այդ հովվի խոսքերով, այդ բժիշկը խիստ, բայց քաղաքավարի ձևով հակադարձեց նրան.

- Ամեն տարի ես արձակուրդ եմ վերցնում իմ աշխատանքից, որպեսզի մասնակցեմ այս համաժողովին: Սա իմ ամենաթանկ շաբաթն է տարվա մեջ, որովհետև ես ինչ-որ բան եմ անում՝ Աստծո թագավորությունը կառուցելու համար:

Լսելով այդ հովվի պատմությունը, ով իմ ընկերն է, ես տրտմեցի այդ բժշկի համար: Հասկացա, որ նա չէր տեսնում ընդհանուր պատկերը և չէր պատկերացնում իր պարգևի արժեքը՝ Աստծո թագավորությունը

կառուցելու մեջ: Կրկին, որոշ պարգևներ անմիջականորեն կապակցված են Աստծո թագավորությունը կառուցելու հետ, իսկ մյուսները՝ ոչ անմիջական, սակայն դրանցից ոչ մեկն անկարևոր չէ:

Այդ բժիշկը մտածում էր նույն կերպով, ինչ Սթենը՝ առաջին գլխում: Ի՞նչ կլիներ, եթե չլինեին բժիշկներ, և մարդիկ, որոնք կանչված են կառուցելու Աստծո թագավորությունն այլ բնագավառներում, հիվանդանային: Շատերը վաղաժամ կմահանային՝ առանց բժշկական օգնության:

Ահա մի հորինված օրինակ, որը ցույց կտա այս կապը: Մի բժիշկ օգտագործում է իր պարգևը՝ օգնելով վերականգնել մի տնային տնտեսուհու առողջությունը: Արդյունքում, քանի որ այդ կինն այլևս անօգնական անկողնային հիվանդ չէ և վաղաժամ չի մահանալու, նա գերազանց օգտագործում է իր պարգևը, որն աստվածապաշտ երեխաներ դաստիարակելն է: Նրա երեխաներից մեկն օժտված է նորարարության բնագավառում, և նրա մայրը խրախուսում է դա: Այդ երեխան՝ նրա աղջիկը, բարձրագույն կրթություն է ստանում համակարգչային ծրագրային ապահովման ոլորտում և սկսում է աշխատել ծրագրային ապահովում ստեղծող մի ընկերությունում:

Արդեն հասուն տարիքում, երբ նա լիովին գործում է իր պարգևով, այդ աղջիկը պատրաստում է հաղորդակցման նոր միջոց, որը շատ ավելի արդյունավետ է, քան այն ամենը, ինչ գոյություն ունի շուկայում: Սակայն նրա նորամուծությունը չի կարող տարածվել՝ առանց գովազդային բաժնում աշխատող իր գործընկերոջ: Այդ երիտասարդն օգտագործում է իր պարգևը, որպեսզի տեղեկացնի գնորդներին և սպառողներին այդ նոր ծրագրային փաթեթի հնարավորությունների մասին:

Գնորդներից մեկը՝ մի տաղանդավոր գործարարի պատկանող ընկերություն, ձեռք է բերում այդ ծրագրային ապահովումը: Այն ունի վաճառքի թիմ, և այդ թիմի անդամներից մեկն օգտագործում է իր պարգևը՝ վաճառելու համար այդ ծրագրային փաթեթը մի ծառայության, որը կանչված է աշակերտելու բոլոր ազգերի մարդկանց:

Այդ ծառայության մեջ կա շնորհքով օժտված մի ծրագրավորող, որը տեսնում է այդ ծրագրի հնարավորությունները և առաջարկում է ձեռք բերել այն: Նա միացնում է այն իրենց գործող համակարգին:

Դրա շնորհիվ այդ ծառայությունը կարողանում է ավելի արդյունավետ կերպով ազդեցություն թողնել աշխարհով մեկ գտնվող հովիվների և առաջնորդների վրա: Որպես արդյունք, բազմաթիվ տղամարդիկ և կանայք փրկության են գալիս և աշակերտություն են ստանում այդ հաղորդակցման ծրագրային փաթեթի միջոցով:

Դատաստանի գահի առջև Հիսուսը այդ տնային տնտեսուհուն բու-

ժող բժշկին ցույց կտա տարբեր ազգերի բազմաթիվ մարդկանց, որոնց նա հասել է: Մենք գրեթե կարող ենք պատկերացնել, թե ինչ տեղի կունենա: Այդ բժիշկը կվիճարկի դա. «Ո՛չ, հնարավոր չէ, որ դա ես արած լինեմ: Ես երբեք չեմ գնացել այդ ազգերը»:

Հիսուսը ցույց կտա նրան, որ, քանի որ ինքը հավատարիմ է եղել իր կյանքում եղած պարգևով, այն առաջացրել է շղթայական ռեակցիա, որի արդյունքում փրկվել են անթիվ մարդիկ և հաստատվել են ամբողջ աշխարհում գտնվող բազմաթիվ հավատացյալներ: Ամենայն հավանականությամբ, Հիսուսը կասի այդ բժշկին. «Դու պատրաստակամորեն աշխատում էիր որպես բժիշկ, ասես գործում էիր Տիրոջ համար, ոչ թե մարդկանց, և քո պտուղն ակնհայտ է: Շատերը կրեցին երկնքի ազդեցությունը՝ քո հնազանդության պատճառով: Կեցցե՛ս, բարի և հավատարիմ ծառա»:

Միգուցե հարցնեք. *«Արդյո՞ք Աստվածաշունչը սատարում է այս գաղափարը»:* Կարդացե՛ք այս խոսքը.

> «Լավագույնս կատարե՛ք այն աշխատանքը, որ ունեք: Աշխատե՛ք այնպես, ասես անում եք դա Տիրոջ համար, ոչ թե մարդկանց: Հիշե՛ք, որ դուք կստանաք ձեր վարձատրությունը Տիրոջից» (Կողոսացիների 3.23,24, NCV):

Սիա պարզապես մի տարբերակ: Գոյություն ունեն նման կապերի կամ շղթայական ռեակցիաների անթիվ հավանականություններ:

Վերադառնանք այն պատմությանը, որը պատմեց իմ հովիվ ընկերը: Ի՞նչ տեղի կունենար, եթե այդ բժիշկը հոգներ տարվա մեջ միայն մեկ շաբաթ բավականություն զգալուց (իհարկե, նա գոհ չէր այն պատճառով, որ չէր գիտակցում իր պարգևի կարևորությունը): Ամենայն հավանականությամբ, նա կհեռանար բժշկությունից՝ փորձելով բավականություն զգալ տարվա մեջ 52 շաբաթ: Ենթադրենք, նա կընդունվեր աշխատանքի իր եկեղեցում՝ որպես ուսուցիչ և աշակերտական դասերի դասընթացներ պատրաստող: Ի՞նչ տեղի կունենար Դատաստանի գահի առջև: Մի՞թե նա նույնքան վարձատրություն կստանար: Չէ՞ որ նա թողել էր այն պարգևը, որը վստահվել էր իրեն:

Ցավոք, ես հաճախ եմ տեսել թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց, որոնք, թեև մեծ դժվարությամբ էին աշխատում լրիվ դրույքով ծառայողական պաշտոններում, բայց չէին հրաժարվում դրանցից, քանի որ չէին գիտակցում, որ իրենց պարգևները պետք է ծաղկունք ապրեն եկեղեցական միջավայրից դուրս գտնվող ոլորտներում:

Անհրաժեշտ է ունենալ գիտելիք, հոգևոր զգայունություն և հասունություն՝ Աստծո թագավորության ոչ ակնհայտ ծառայողական դիրքե-

րը տեսնելու համար:

Ճշմարտությունն այն է, որ ձեր պարգևը՝ առողջապահության, կրթության, կառավարման, սպորտի, գործարարության, արվեստի, մեդիայի, տնային տնտեսության կամ ցանկացած այլ ոլորտում, կապ ունի Աստծո թագավորությունը կառուցելու հետ: Գլխավոր Ճարտարապետն այդպես է ծրագրել ամեն ինչ:

Շատ հնարավոր է, որ մենք չտեսնենք մեր հնազանդությունից բխող հաջողությունը, մինչև Հիսուսի Դատաստանի գահի առջև կանգնելը: Ինչպես Պողոսը գրում է. «Նույնը վերաբերում է բարի գործերին. նույնիսկ եթե սկզբում դրանք հայտնի չեն, վերջում կիմացվեն և հայտնի կդառնան» (Ա Տիմոթեոս 5.25, TPT):

Այնպես որ, անկախ այն բանից, ձեր պարգևն ակնհայտ է, թե ոչ, դուք ստացել եք հետևյալ պատվերը. «Ամեն մեկը, ինչպես Աստված կանչեց նրան, այնպես գնա» (Ա Կորնթացիների 7.17):

## ՇԱՐԺԱՌԻԹՆ ԱՆՉԱՓ ԿԱՐԵՎՈՐ Է

Վերադառնանք Պողոսի խոսքերին, որոնք մենք օգտագործում ենք որպես նմուշ մեր տնտեսության համար:

> «Որովհետև դա հարկ է դրված ինձ վրա: Եվ վա՜յ է ինձ, եթե Ավետարանը չքարոզեմ: Որովհետև եթե *հոժար կամքով* անեմ այս, *վարձք* ունեմ» (Ա Կորնթացիների 9.16,17):

Հաջորդ ճշմարտությունը, որը պետք է ընդգծել, այն է, որ մեր «վարձատրությունը» անմիջապես կապված է մեր «հոժարության» կամ, ավելի ընդհանուր իմաստով, մեր «վերաբերմունքի» հետ: Պարզ ասած, եթե մեր վերաբերմունքն *անձնազոհ* է, մենք վարձատրություն կստանանք. եթե մեր վերաբերմունքը *եսակենտրոն* է, մենք վարձատրություն չենք ստանա:

*Անձնազոհ* և *եսակենտրոն* շարժառիթները կարող են այնքան շատ դրսևորումներ ունենալ, որ անկարելի է թվարկել: Եկեք անենք ընդամենը մի քանի համեմատություն: *Անձնազոհ* վերաբերմունքը կարող է լինել այսպիսին. *«Ինչպիսի՜ արտոնություն է մարդկանց ծառայելը՝ ինձ վստահված կարողություններով»: Եսակենտրոն* շարժառիթը կարող է ասել հետևյալը. *«Ի՞նչ շահ կարող եմ ստանալ իմ կարողությունից»:* Ըստ էության, առաջինն ասում է. *«Ի՞նչ կարող եմ անել քեզ համար»,* իսկ երկրորդը՝ *«Ի՞նչ կստանամ դրանից»:*

Անձնազոհ վերաբերմունքը կարող է լինել այսպիսին. *«Ես կանեմ*

*լավագույնը՝ անկախ այն բանից, թե ինչ կստանամ դրա համար»,* իսկ եսակենտրոն շարժառիթն այսպիսին է. *«Ինչո՞ւ ես պետք է մանրակրկիտ աշխատանք կատարեմ, եթե շատ բան չեմ ստանալու դրանից»:*

Եվս մեկ անձնազոհ շարժառիթ. *«Ես պետք է շարունակեմ գործել. կան այնքա՜ն մարդիկ, որոնց կյանքում պետք է ազդեցություն թողնել»:* Իսկ եսակենտրոն շարժառիթը կլինի այսպիսին. *«Ես հաջողության եմ հասել և արդեն կարող եմ հանգստանալ»:*

Պողոսը գրում է *վերաբերմունքի* կամ *շարժառիթի* կարևորության մասին. «Թող ամեն մարդ այսպես համարի մեզ, ինչպես Քրիստոսի պաշտոնյաներ և... *տնտեսներ»,* և շարունակում է անմիջապես այս խոսքերից հետո.

> «Ինչ վերաբերում է ինձ, շատ քիչ կարևորություն ունի, թե ինչպես կարող եմ գնահատվել ձեր կամ ցանկացած մարդկային իշխանության կողմից: Ես նույնիսկ չեմ վստահում իմ դատողությանը այս հարցում: Իմ խիղճը մաքուր է, բայց դա չի ապացուցում, որ ես ճիշտ եմ: Ինքը Տերն է, որ կքննի ինձ և կորոշի: Այնպես որ, մի՛ դատեք ոչ ոքի մասին ժամանակից շուտ՝ մինչև Տիրոջ վերադարձը, որովհետև Նա լույսի մեջ կբերի մեր *ամենախավար գաղտնիքները* և կհայտնի մեր *անձնական շարժառիթները:* Այդ ժամանակ Աստված կտա յուրաքանչյուրին իրեն արժանի *գովեստը»* (Ա Կորնթացիների 4.3-5, NLT):

Պողոսը մտահոգված չէր իր ընկերների, քննադատների կամ ցանկացած այլ ինքնակոչ իշխանության գնահատականով և նույնիսկ իր սեփական կարծիքով: Այս գնահատականներն անիմաստ են այն բանի համեմատ, ինչին բոլորս ի վերջո կհանդիպենք՝ աստվածային քննության: Կարևորն այն է, թե ինչպես *Հիսուսը* կգնահատի մեր տնտեսությունը:

Վստահ եղեք, որ մեր հնազանդ *գործերը* կարևոր են լինելու Դատաստանի ժամանակ: Հիսուսը պարզորեն պնդում է. «Ահա շուտով գալիս եմ, և Իմ վարձքն՝ Ինձ հետ, որ ամեն մեկին հատուցեմ՝ ինչպես իր գործը կլինի» (Հայտնություն 22.12): Դատաստանը տեղի չի ունենա «կա՛մ մեկը, կա՛մ մյուսը» սկզբունքով, այլ՝ «և՛ մեկը, և՛ մյուսը» սկզբունքով: Ե՛վ շարժառիթները, և՛ գործերը կքննվեն Դատաստանի ժամանակ:

Ոմանք կարող են մտածել, որ այս հատվածում Պողոսը խոսում է անհավատների դատաստանի մասին, այսինքն՝ Մեծ սպիտակ գահի ատյանի մասին, որի ժամանակ անհավատները, որոնք չեն ընդունել Հիսուս Քրիստոսի փրկարար շնորհքը, հաշիվ են տալու իրենց մեղքերի

համար: Խոսքը միանշանակ այդ մասին չէ, քանի որ Մեծ սպիտակ գահի ատյանի առջև ոչ ոք «գովեստ» չի ստանալու Աստծուց, ինչպես որ Պողոսը գրում է այս հատվածում:

Կարևոր է պահպանել այս խոսքերի համատեքստը: Պողոսը խոսում է *տնտեսության* մասին, և կասկած չկա, թե ում նա նկատի ունի: Դատաստանի ժամանակ ի հայտ կգան մեր «ամենախավար գաղտնիքները» և «անձնական շարժառիթները» մեր պարգևները տնօրինելու մեջ: Սա լրջորեն գրավում է իմ ուշադրությունը:

Թույլ տվեք պարզ բացատրել սա իմ նախորդ պատմության օրինակով, երբ չհնազանդվեցի Տիրոջը այն բանում, ինչ պետք է քարոզեի: Հավանաբար, այդ հավաքույթին մասնակցող մարդիկ մինչև օրս հավատացել են, որ ես հնազանդ եմ եղել Աստծուն, երբ քարոզել եմ իմ «թարմ» ուղերձը, սակայն ես անհնազանդ էի: Շատ հնարավոր է, որ Դատաստանի ժամանակ նրանք կիմանան իմ անհնազանդության մասին, որովհետև Հիսուսը հայտարարում է.

> «Գալիս է ժամանակը, երբ այն ամենը, ինչ ծածկված է, կհայտնվի, և ամեն գաղտնի բան կիմացվի բոլորին: Այն ամենը, ինչ դուք ասել եք խավարում [մեր ծածուկ շարժառիթները և գաղտնիքները], կլսվի լույսում, և այն ամենը, ինչ դուք շշնջացել եք փակ դռների ետևում, կազդարարվի կտուրներից՝ ի լուր բոլորին» (Ղուկաս 12.2,3, NLT, քառակուսի փակագծերի բացատրությունն իմն է):

Շատ հնարավոր է, որ Դատաստանի գահի մոտ ես կանչվեմ՝ ներողություն խնդրելու այդ համաժողովը կազմակերպող հովվից և մյուսներից, որոնք չստացան «Սատանայի խայծը» գրքի ուղերձն այդ երեկո:

## Ի՞ՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ

Մենք հիմնավորեցինք, թե որքան կարևոր է հասկանալ տնտես լինելու դերը: Այժմ կարևորագույն հարցը հետևյալն է. «Ի՞նչ է սպասվում մեզնից»: Այլ կերպ ասած, ի՞նչ արդյունքների է Հիսուսը նայելու Դատաստանի ժամանակ, երբ քննի, թե ինչպես ենք տնօրինել Իր կողմից մեզ վստահված պարգևները: Կարո՞ղ ենք արդյոք իմանալ այդ մասին: Իհարկե, քանի որ Հիսուսը հայտարարեց, որ մենք դատվելու ենք «Դատաստանի օրը այն ճշմարտությամբ, որը Նա խոսել է» (Հովհաննես 12.48, NLT):

Մենք կսկսենք այս բացահայտող և ոգեշնչող ուսումնասիրությունը հաջորդ գլխից, որը հենց այս գրքի գլխավոր նպատակն է:

## ՄՏՈՐԵՔ

1. Մինչև այս գլուխը կարդալը դուք դիտարկո՞ւմ էիք ձեզ որպես տնտես: Ինչու՝ այո, և ինչու՝ ոչ:

2. Այն պարգևները, որոնք Աստված տվել է ձեզ, ձեզ համար չեն. դրանք ձեր միջոցով պետք է տրվեն այլ մարդկանց: Այլ կերպ ասած, դուք կրում եք այն, ինչ Աստված ցանկանում է, որ ստանան այլ մարդիկ: Հասկանալով սա՝ ինչո՞ւ է կարևոր, որ հավատարմորեն տնտեսեք ձեր պարգևները: Ի՞նչ կարող է տեղի ունենալ, եթե անտեսեք ձեր տնտեսությունը:

3. Ցանկացած պահին դուք կարող եք որոշում կայացնել տնօրինել ձեր պարգևները հետևյալ երեք ձևով. դուք կարող եք օգտագործել դրանք՝ կառուցելու համար Աստծո թագավորությունը: Դուք կարող եք օգտագործել դրանք՝ կառուցելու համար ձեր կյանքը: Դուք կարող եք անտեսել դրանք, այսինքն՝ բոլորովին չօգտագործել: Ինչպե՞ս եք օգտագործում ձեր պարգևները: Ի՞նչ փոփոխություններ պետք է անեք Աստծուց ձեզ տրված պարգևները տնօրինելու մեջ:

*«Թող ամեն մարդ այսպես համարի մեզ՝
ինչպես Քրիստոսի պաշտոնյաներ և Աստծո
խորհուրդների տնտեսներ: Արդ տնտեսների մեջ
այն է պահանջվում, որ մեկը
հավատարիմ գտնվի»:*

– Ա Կորնթացիների 4.1,2

# 5

# Հավատարմություն

Պողոս առաքյալն իրեն և Ապողոսին անվանում է Հիսուս Քրիստոսի *ծառաներ* և իրենց վստահված պարգևների *տնտեսներ:* Նախորդ գլխում իմացանք, որ տնտես լինելը չի վերաբերում միայն այս երկու մեծ սրբերին, և ո՛չ էլ միայն եկեղեցական առաջնորդներին, այլ յուրաքանչյուր հավատացյալի: Մենք նույնպես Հիսուս Քրիստոսի ծառաներն ենք, և գլխավոր միջոցը, որով կատարում ենք այս դերը, մեզ վստահված պարգևների բարի տնտեսներ լինելն է:

Այժմ ուշադրություն դարձնենք, թե ինչ է պահանջվում տնտեսից: Վերևում բերված խոսքում նշված է ընդամենը մեկ հատկանիշ՝ *հավատարմություն:* Մինչև շարունակելը, մտորենք այն մասին, որ այստեղ թվարկված չէ երկու, երեք կամ ավելի հատկանիշներ: Պողոսը կարող էր ասել, որ տնտեսից պահանջվում է, որ նա ուրախություն ցուցաբերի, ուժեղ լինի, վարպետորեն տիրապետի Աստվածաշնչին, գթասիրտ լինի կամ ունենա ցանկացած այլ աստվածահաճո հատկանիշ: Իհարկե, ես նկատի չունեմ, որ բոլոր այս հատկանիշները կարևոր չեն: Այնուամենայնիվ, շեշտում եմ, որ թվարկված է ընդամենը մեկ *պահանջվող* հատկանիշ: Այնպես որ, անչափ կարևոր է կենտրոնանալ այս առաքինության վրա, եթե մեր նպատակն է լինել բարի տնտեսներ և մեկ օր լսել մեր Տիրոջից «Կեցցե՛ս» բառը:

## ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Ես արտոնություն եմ ունեցել քարոզելու աշխարհով մեկ գտնվող առաջնորդական թիմերի (ոչ միայն ծառայողական թիմերի, թեև մեծ մասամբ քարոզել եմ հենց ծառայողական թիմերին), որոնց թվում էին կորպորատիվ, կառավարական, գործարար, կրթական և սպորտային թիմեր: Մի քանի անգամ խնդրել եմ այդ թիմերի անդամներին սահմա-

նել *հավատարմությունը* մեկ բառով: Որպես առաջնորդներ, նրանք սովորաբար պատրաստակամորեն խոսում էին: Գրեթե ամենուր նմանատիպ սահմանումներ լսելուց հետո ես որոշեցի կազմել ամենատարածված պատասխանների ցուցակը.

- կայուն
- հետևողական
- հուսալի
- վստահելի
- անձնվեր
- նվիրված
- անխարդախ
- արժանահավատ
- ճշմարտացի
- վճռական
- հնազանդ

Եղել են այլ սահմանումներ, բայց այս բառերն ամենից հաճախ հանդիպողներն են: Ավելի կարևոր է այն, որ բոլոր այս պատասխանները համահունչ են բացատրական և հոմանիշների բառարաններին:

Այնուամենայնիվ, կա մի կարևոր բառ, որը նույնիսկ մեկ անգամ ես չեմ լսել որևէ միջոցառման ժամանակ, և դա «բազմապատկում» բառն է:

Դուք կարող եք անմիջապես մտածել. *«Բազմապատկո՞ւմ: Այս բառը հավատարմության սահմանումը չէ»:* Դուք կարող եք նաև վիճարկել իմ լեզվական գիտելիքները, ինչպես իմ անգլերենի դպրոցական ուսուցիչները: Այնուամենայնիվ, ես հավաստիացնում եմ, որ մինչև այս գլխի ավարտը դուք ոչ միայն կհամաձայնեք ինձ հետ, այլև, ամենայն հավանականությամբ, կհամարեք այս բառը հավատարմության ամենակարևոր սահմանումը:

## ՏԱՂԱՆԴՆԵՐԻ ԱՌԱԿԸ

Բազմապատկման գաղափարը ներկայացնելու համար կարդանք Հիսուսի առակը տաղանդների մասին: Խնդրում եմ, որ ուշադրությամբ կարդաք այս առակը, նույնիսկ եթե նախկինում բազմաթիվ անգամներ կարդացել եք:

> «Երկնքի թագավորությունը կարելի է նկարագրել երկար ճանապարհ գնացող մի մարդու պատմությամբ: Նա կանչեց իր բոլոր ծառաներին և իր փողն ամբողջությամբ վստահեց նրանց իր բացակայության ընթացքում» (Մատթեոս 25.14, NLT):

Առաջինը՝ այս պատմությունն առակ է, այսինքն՝ այն խորհրդանշական է, ոչ թե բառացի: Նշանակում է՝ մենք պետք է մեկնենք այն աստվածաշնչյան գիտելիքի լույսի ներքո կամ համաձայն Աստծո Խոսքի ամբողջական խորհրդի: Երկար ճանապարհի գնացող մարդը խորհրդանշում է Հիսուսին: Տնտեսը խորհրդանշում է Նրա ծառաներից յուրաքանչյուրին, այսինքն՝ ձեզ և ինձ:

Երկրորդը՝ ուշադրություն դարձրեք, որ նրա ճանապարհը երկար է, ինչը հաստատվում է երկու փաստով: Նախ, գրեթե երկու հազար տարի է անցել, ինչ Հիսուսը պատասխանատվություն է տվել մեզ, որ կառուցենք Իր թագավորությունը, որի համար Ինքը մահացել է: Եվ ակնհայտ է, որ Նա դեռ չի վերադարձել, բայց նույնիսկ մինչև օրս պատմականորեն արդեն իսկ երկար ժամանակ է անցել:

Երրորդը՝ այս առակը ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ տնտեսությունը չի մանրակառավարվում: Այս առակում նկարագրված մարդը հեռանում էր. նա չէր վերադառնալու ամեն ամիս, որպեսզի ստուգեր իր տնտեսների գործունեությունը: Համաձայն այս առակի, նա չէր ստուգելու նրանց աշխատանքը մինչև վերադառնալը:

Շարունակենք Նրա պատմությունը.

> «Նա տվեց հինգ պարկ արծաթ մեկին, երկու պարկ արծաթ մյուսին և մեկ պարկ արծաթ վերջինին՝ բաժանելով այն նրանց կարողությունների չափով: Դրանից հետո նա ճանապարհ ընկավ» (Մատթեոս 25.15, NLT):

Այս պատմության մեջ նրանց փող վստահվեց: Աստվածաշնչի թարգմանությունների մեծ մասն օգտագործում է *«տաղանդ»* բառը, որը հունարեն *«տա՛լանտոն»* բառի ամենաճշգրիտ թարգմանությունն է: Տաղանդը կշռի չափ է, որը հիմնականում օգտագործվում է ոսկու և արծաթի համար: Մեկ տաղանդը մոտավորապես հավասար է 34 կիլոգրամի: Մասնագետների մեծ մասը գնահատում է մեկ տաղանդ արծաթը 18.000 ԱՄՆ դոլարով (այս արժեքը կարող է տատանվել, բայց ոչ էականորեն): Բոլոր մասնագետները համաձայն են այն մտքին, որ ըստ Նոր կտակարանի՝ տաղանդը գումարի մեծ չափ է: Երեսունչորս կիլոգրամ արծաթը մանրադրամ չէ:

Ելնելով իմ ներկա պատկերացումից, չեմ կարծում, որ այս առակի մեկնության մեջ կարևոր է գումարի ճշգրիտ չափը: Այնուամենայնիվ, մենք կարող ենք վստահաբար եզրակացնել, որ մեկ տաղանդը խորհրդանշում էր զգալի պատասխանատվություն:

Չեմ կարծում, որ Հիսուսը խոսում էր փողի մասին, թեև սկզբունքո-

րեն սա կարելի է վերագրել փողին: Իր առակների մեջ Հիսուսը հաճախ օգտագործում որպես օրինակ հենց այն, ինչ նկատի ունի: Ցորենը խորհրդանշում է աստվածապաշտ մարդկանց, որոմները՝ չար մարդկանց, սերմերը՝ խոսքերը, փշերը՝ այս կյանքի հոգսերը, հունձքը՝ այս աշխարհի ավարտը, հնձվորները՝ հրեշտակներին, և այսպես շարունակ: Ընդհանուր առմամբ դիտարկելով Նոր կտակարանը, գրեթե ակնհայտ է դառնում, որ տաղանդները խորհրդանշում են *խարիզման* կամ մեզ վստահված պարգևները:

Այս պատմության ևս մեկ կարևոր փաստերից է այն, որ բոլոր ծառաները չստացան նույն չափը: Մի փոքր ուշ ավելի մանրամասն կխոսենք այս մասին, սակայն հենց այս պատճառով է, որ ես արդեն մի քանի անգամ «պարգևներ» եմ անվանել այն, ինչը վստահվել է մեզ: Ոմանք ստանում են մեկ պարգև, մյուսները՝ երկուսը, իսկ ուրիշները՝ ավելին:

Տարբեր չափերը նույնպես կարող են խորհրդանշել մեր պարգևների ազդեցության չափը: Եկեք ազնիվ լինենք. կան մարդիկ, որոնց պարգևներն ավելի ազդեցիկ են, քան մյուսներինը: Շատերն ունեն երգելու պարգև, որը ոգեշնչում է նրանց լսողներին: Բայց բոլոր երգիչները չունեն տաղանդի նույն մակարդակը, ինչ Սելին Դիոնը և Անդրեա Բոչելլին: Ճիշտ կլինի ասել, որ յուրաքանչյուր տաղանդ ներկայացնում է որոշակի պարգև, ինչպես նաև այդ պարգևի որոշակի չափ: Եկեք շարունակենք.

> «Այն ծառան, որը հինգ պարկ արծաթ ստացավ, սկսեց ներդնել այդ փողը և վաստակեց ևս հինգը: Այն ծառան, որը երկու պարկ արծաթ ստացավ, նույնպես գործի անցավ և վաստակեց ևս երկուսը: Բայց այն ծառան, որը մեկ պարկ արծաթ ստացավ, փոս փորեց հողի մեջ և թաքցրեց իր տիրոջ փողը» (Մատթեոս 25.16-18, NLT):

Թույլ տվեք անհատականացնել այս պատմությունը՝ տալով անուններ մեր ծառաներին: Առաջին ծառային անվանենք Էլիսոն, երկրորդին՝ Ռոբերտ, իսկ երրորդին՝ Լերի: Էլիսոնը սկսեց հինգով և *բազմապատկեց* այն, ինչ տրվել էր իրեն՝ արդյունքում ունենալով տասը: Ռոբերտը *բազմապատկեց* իր երկուսը և արդյունքում ունեցավ չորսը: Լերին չբազմապատկեց այն, ինչ վստահվել էր իրեն, այլ *պահպանեց* դա: Եկեք պատկերենք նրանց արդյունքները:

Էլիսոն. 5 x 2 = 10

Ռոբերտ. 2 x 2 = 4

Լերի. 1 = 1

Շարունակելով այս պատմությունը՝ ես կանվանեմ այս ծառաներին իմ կողմից տրված անուններով:

# ԴԱՏԱՍՏԱՆԸ

Կրկին, անչափ կարևոր է նշել, որ Հիսուսն այս առակում շեշտադրում է *«երկար»* բառը: Այս պատմությունը սկսվում է երկարատև ճանապարհորդության նկարագրությամբ, և կրկին, Նա ասում է. *«Երկար ժամանակ* անց նրանց տերը վերադարձավ իր ճանապարհորդությունից և կանչեց նրանց, որպեսզի *հաշիվ տային*, թե ինչպես էին օգտագործել իր փողը» (Մատթեոս 25.19, NLT): Տնտեսից պահանջվող հաշիվը խորհրդանշում է այն դատաստանը, որին ենթակա է լինելու մեզնից յուրաքանչյուրը՝ այն բանի համար, թե ինչպես ենք օգտագործել մեզ վստահված պարգևները: Նախ՝ կարդանք էլիսոնի դատաստանի մասին.

> *«Էլիսոնը*, որին նա վստահել էր հինգ պարկ արծաթը, առաջ եկավ ևս հինգով և ասաց. «Տե՛ր, դու տվեցիր ինձ հինգ պարկ արծաթ՝ ներդնելու համար, և ես վաստակեցի ևս հինգը»»:

Լսե՛ք նրա տիրոջ դատավճիռը.

> «Տերը սկսեց գովել նրան. «Կեցցե՛ս, իմ բարի և հավատարիմ ծառա: *Դու հավատարիմ եղար* այս փոքր գումարը տնօրինելու մեջ. այնպես որ, այժմ ես ավելի մեծ բաներ կվստահեմ քեզ: Ե՛կ տոնենք միասին»» (Մատթեոս 25.20,21, NLT):

Մենք չպետք է բաց թողնենք այն խիստ կարևոր պնդումը, որն արեց տնտեսների տերը. «Դու հավատարիմ եղար»: Դուք կարող եք ներկայացնել նրա պատասխանը՝ ինչպես ցանկանաք, բայց այն չունի այլ մեկնություն. Հիսուսն ուղղակիորեն վերագրում է նրա *հավատարմությունը բազմապատկելուն:* Կրկին ուշադրությամբ կարդացեք տնտեսների տիրոջ խոսքերը. նա չանդրադարձավ էլիսոնի որևէ արարքի: Նա նույնպես չասաց, որ էլիսոնը կայուն, հուսալի, անձնվեր կամ ճշմարտացի էր, և չօգտագործեց «հավատարիմ» բառի այլ մեկբառանի սահմանում: Սխալ մի՛ հասկացեք ինձ. այս ամենը հավատարմությունը նկարագրող հրաշալի հատկանիշներ են, բայց դրանք չեն նշվում և չեն շեշտադրվում այստեղ: Բացի այդ՝ նա չմատնանշեց նրա տնտեսության հետ առնչվող ցանկացած այլ առաքինություն, գործողություն կամ արդյունք, այլ միայն ասաց, որ էլիսոնը բազմապատկել էր: Այսպիսով, նա ուղղակիորեն կապակցեց *հավատարմությունը բազմապատկման* հետ:

Նույնը վերաբերում է Ռոբերտին: Ուշադրությամբ կարդացեք նրա դատաստանի մասին.

> *«Ռոբերտը,* որը ստացել էր երկու պարկ արծաթը, առաջ եկավ և ասաց. «Տե՛ր, Դու տվեցիր ինձ երկու պարկ արծաթ՝ ներդնելու համար, և ես վաստակել եմ ևս երկուսը»»:

Կրկին, լսեք նրա տիրոջ նույն դատավճիռը.

> «Տերն ասաց. «Կեցցե՛ս, իմ բարի և հավատարիմ ծառա: *Դու հավատարիմ եղար* այս փոքր գումարը տնօրինելու մեջ. այնպես որ, այժմ ես ավելի մեծ բաներ կվստահեմ քեզ: Ե՛կ տոնենք միասին»» (Մատթեոս 25.22,23, NLT):

Եվս մեկ անգամ, Հիսուսն ուղղակիորեն նույնացնում է նրա *հավատարմությունը բազմապատկելու հետ:* Այստեղ նշված չէ ուրիշ ոչինչ՝ ոչ մի գործողություն, առաքինություն կամ արդյունք: Հիսուսը չի ցանկանում, որ տնտեսների տիրոջ շեշտադրումը թուլացվի: Կարելի է անել միայն մեկ եզրակացություն. Ռոբերտը բազմապատկեց այն, ինչը վստահվել էր իրեն, և դա հավատարմություն համարվեց:

Նույնպես, Ռոբերտը ստացավ ճիշտ նույն գովեստը, ինչ Էլիսոնը՝ բառ առ բառ: Սա ցույց է տալիս, որ Դատաստանի օրը մեր բազմապատկումը գնահատվելու է ըստ մեր կատարած աշխատանքի: Հիսուսը հավասարապես գոհ կլինի մեզնից՝ անկախ մեր պարգևների թվից և մեծությունից: Կարևոր է լինելու մեկ բան. արդյո՞ք մենք բազմապատկել ենք այն, ինչ ստացել ենք:

Որպես օրինակ, որևէ տնային տնտեսուհի, որը բազմապատկել է իր արդյունավետությունը, կստանա նույն գովեստը, ինչ որևէ գործարար, որը բազմապատկել է իր գործը և Աստծո թագավորության համար արվող նվիրատվությունները:

Այժմ ուղղենք մեր ուշադրությունը Լերիին.

> «Դրանից հետո եկավ *Լերին*՝ արծաթի մեկ պարկով, և ասաց. «Տե՛ր, ես գիտեի, որ դու խստասիրտ մարդ ես. դու հնձում ես այն բերքը, որը չես ցանել, և հավաքում ես այն բերքը, որը չես աճեցրել: Ես վախեցա, որ կկորցնեի քո փողը, և թաքցրի այն հողի մեջ: Ահա քո փողը, ես վերադարձնում եմ այն»» (Մատթեոս 25.24,25, NLT):

Մինչև Լերիի դատաստանի մասին խոսելը, մատնանշենք որոշ կարևոր փաստեր: Լերին չբազմապատկեց այն, ինչ տրվել էր իրեն. նա պահպանեց իրեն վստահված տաղանդը: Նույնպես, ուշադրություն դարձրեք, թե ինչու նա չարեց դա: Առաջինը՝ նա չգիտեր իր տիրոջ բնավորությունը և սխալմամբ մտածում էր, որ իր տերը խստասիրտ

մարդ էր: Տարիներ շարունակ, ծառայելով աշխարհի տարբեր մասերում ապրող և հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներ հանդիսացող մարդկանց, նկատել եմ, որ պտղաբեր լինելու գլխավոր խոչընդոտը՝ Աստծո բնավորությունը չճանաչելն է (ավելի մանրամասն կխոսեմ այս մասին հետագա գլուխներից մեկում):

Երբ մենք սխալ պատկերացում ունենք Աստծո մասին, հաճախ մեզանում առաջանում է այն, ինչը խոչընդոտում է բազմապատկումը՝ *վախը:* Վախը, ամաչկոտությունը կամ երկչոտությունն անգործունյա են դարձնում Աստծո պարգևները մեր կյանքում: Սա այնքան կարևոր է, որ անկարելի է չափից շատ շեշտադրել: Ես անձամբ գիտեմ այս մասին, քանի որ տարիներ շարունակ կրել եմ վախի ազդեցությունը (այս մասին նույնպես ավելի մանրամասն կխոսեմ հաջորդ գլուխներից մեկում):

Իսկ հիմա տեսնենք Լերիի դատավճիռը.

> «Բայց տերը պատասխանեց. *«Չա՛ր* և *ծո՛ւյլ* ծառա»» (Մատթեոս 25.26, NLT):

Ինչպիսի՜ խիստ պատասխան: Մինչև շարունակելը ուսումնասիրենք այս պնդումը: Հիշեք՝ երեքն էլ *ծառաներ* էին, ոչ միայն Էլիսոնը և Ռոբերտը, այլև՝ Լերին. նրանք *կողմնակի մարդիկ* չէին: Եվ նրանց աշխատանքը գնահատողը նրանց *տերն* էր: Լերին չի լսում «Կեցցե՛ս, բարի և հավատարիմ ծառա» բառերը, ինչպես մյուս երկուսը: Փոխարենը, նա լսում է. «Չա՛ր և ծո՛ւյլ ծառա»: Անկասկած, սա խիստ և ուշագրավ արտահայտություն է: Այս առակում Հիսուսը չի խոսում փրկության մասին. Նա խոսում է այն դատաստանի մասին, որում մենք հաշիվ ենք տալու մեր պարգևները տնօրինելու համար. կա՛մ վարձատրվելու ենք մեր աշխատանքի համար, կա՛մ վնաս ենք կրելու:

Ուշադրությամբ դիտարկենք տնտեսների տիրոջ խիստ բառերը: Մենք կսկսենք ավելի թեթև բառից: Հունարենում «ծույլ» բառը *«օկներո՛ս»*-ն է, որի սահմանումն է «ձգձգել, դանդաղաշարժ, դանդաղկոտ, անփութաջան, ծույլ»[5]: Եվս մեկ բառարան սահմանում է այս բառը որպես «խուսափել կամ վարանել որևէ արժանի գործի մասնակցելուց՝ հավանաբար, ջանասիրության պակասի պատճառով»[6]:

Իմ ընկեր Ռիկ Ռենները, որը հունարենի մասնագետ է, ասում է հետևյալը *«օկներո՛ս»*-ի մասին. «Այն կրում է գաղափար այնպիսի անձնավորության մասին, որն անգործ, անաշխույժ, մելամաղձոտ, անհաղորդ, անտարբեր և գաղջ վերաբերմունք ունի կյանքի նկատմամբ»: Այս երեք աղբյուրների շնորհիվ, այս հունարեն բառի սահմանումն ընդլայնում է մեր մտահորիզոնը և ավելի պարզ պատկերացում է տալիս մեզ:

Եթե դուք վախկոտ եք, կվարանեք կամ զերծ կմնաք այնպիսի գործից, որը պետք է արվի և կարող է արվել: Եթե ջանասեր չեք, դուք չեք ունենա ձեր առաջադրանքն ավարտին հասցնելու ձգտում: Եթե դուք անտարբեր և անհաղորդ եք, նույնիսկ չեք մտահոգվի այն աստիճան, որ սկսեք ինչ-որ բան անել: Այս հունարեն բառն ընդգրկում է բոլոր այս իմաստները, սակայն երրորդ ծառան խոստովանեց. «Ես վախեցա»: Նրա կյանքում կարող էին դրսևորվել նաև ծուլության մյուս կողմերը, սակայն գլխավոր գործոնը նրա դեպքում վարանելն էր՝ վախի պատճառով:

Դուք երբևէ զգացե՞լ եք ինչ-որ բան անելու մղում, որը պարզապես չեք կարողացել փարատել ձեզնից, հատկապես՝ աղոթքի մեջ, բայց չափազանց երկար ժամանակ ոչինչ չեք ձեռնարկել՝ ձախողվելու վախի պատճառով, իսկ հետո տեսել եք, որ մեկ այլ մարդ անում է դա: Դուք մտածել եք. *«Ես էի ստացել այդ գաղափարը, և ես պետք է անեի դա»:* Ահա թե ինչ է ասում Հիսուսն այդ ծառայի մասին: Նա վարանում ու վարանում էր, ոչ թե մեկ կամ երկու անգամ, այլ՝ իր տնտեսության ամբողջ ընթացքում: Մեկ-երկու անգամ վարանելն ընդունելի է, քանի որ սովորաբար մենք հասունանում ենք նման վիճակից՝ հաղթահարելով այն: Բայց եթե շարունակենք վարանել երկար ժամանակ, դա սովորություն կդառնա, և մենք բոլորովին կդադարենք գործել՝ անպտուղ տնտեսներ դառնալով:

Երբ Տերն առաջին անգամ խնդրեց ինձ գրել, ես տասն ամիս վարանում էի: Վախենում էի գրել: Ես շարունակ ձախողվել էի դպրոցում: Համալսարանում իմ կուրսեցիներից մեկը քննադատել էր գրելուս կարողությունը բոլորի առջև: Մի առաջադրանքի ընթացքում մենք պետք է կարդայինք մեկս մյուսի գրավոր աշխատանքները, և նա ցուցադրաբար իր անհավանությունը հայտնեց մեր պրոֆեսորին իմ աշխատանքի մասին: Ես միակ ուսանողն էի, որը քննադատության արժանացավ այլ ուսանողի կողմից:

Իմ գրելու վախն ամուր հիմքեր ուներ. սարսափելի արդյունքներ Ստանդարտավորված և Ամերիկյան համալսարանական թեստերից, բացասական արձագանքներ բազմաթիվ ուսուցիչներից, ցածր գնահատականներ և քննադատող համակուրսեցի. իմ անցյալն իմ կողմից չէր: Այդ ամենը միայն հաստատում էր իմ կասկածները: Գիրք գրելը շատ ժամանակ էր պահանջում, իսկ ժամանակը վճռորոշ էր: Այն կսահմանափակեր իմ մյուս գործերը, որոնց նպատակը մեր երիտասարդ ծառայությունը մեծացնելն էր: Ես պետք է մի կողմ դնեի այդ ճնշող վախերը և մտահոգությունները, որպեսզի հնազանդվեի Նրա ցուցմանը:

Ի՞նչ կպատահեր, եթե ես չափից երկար վարանեի և չհնազանդվեի: Դրա հետևանքը կլիներ ճիշտ այն, ինչ Աստված խոսել էր այն երկու կանանց միջոցով, որոնց ես ավելի վաղ հիշատակեցի: Նա կտար այդ տաղանդը մեկ այլ անձնավորության՝ մի «էլիսոնի», որը կկատարեր այդ առաքելությունը: Նա կստանար իմ առաջադրանքը: Իսկ որտե՞ղ կլինեի ես այսօր: Հնարավո՞ր է, որ իմ կյանքի ավարտին ես «ծույլ» կոչվեի Դատաստանի գահի առջև:

Ես չէի հասկանում, որ իմ կոչումը պահված էր գրելու մեջ: Եթե մինչև 30 տարեկանը դուք ասեիք ինձ. «Ջո՛ն, Աստված կուղարկի քեզ դեպի ազգերը՝ քո գրքերի միջոցով», ես այնպե՛ս կծիծաղեի ձեզ վրա, որ դուք ստիպված կլինեիք հեռանալ: Ես կասեի ձեզ՝ դուք խելագարվե՛լ եք: Ես նույնիսկ չեմ կարողանում երեք էջանոց աշխատանք գրել: Բայց այսօր իմ գրքերը հանրահայտ են Ամերիկայում և աշխարհով մեկ. դրանք թարգմանված են ավելի քան 100 լեզուներով և տպագրված են մի քանի տասնյակ միլիոն օրինակով: Ի՞նչ կլիներ, եթե ես չհնազանդվեի: Ի՞նչ կլիներ, եթե ես թույլ տայի, որ վախը ետ պահեր ինձ: Մարմնովս սարսուռ է անցնում, երբ մտածում եմ, թե որքա՜ն բան կկորցնեի:

Այժմ խոսենք ավելի ծանր բառի մասին, որը տերն ասաց երրորդ ծառային: *«Չար»* բառը կարող է չափազանց խիստ թվալ, բայց Հիսուսը երբեք անփութորեն չի օգտագործում բառերը: Հունարենում *«չար»* բառը *«պոնէրո՛ս»*-ն է, որի սահմանումն է «ունենալ լուրջ թերություն և, որպես հետևանք, անպետք դառնալ»[7]:

Այս սահմանումը համապատասխանում է այն բանին, թե ինչպես էր Լերին տնօրինել իր պարգևը: Սա նույնն է, ինչ Պողոսի «վա՜յ է ինձ» խոսքերը, եթե նա անհավատարիմ լիներ իր կյանքի պարգևին, որն Աստված տվել էր իրեն: Լերիի թյուր կարծիքն իր տիրոջ բնավորության մասին լուրջ թերություն էր, որի պատճառով նրանում վախ ծնվեց: Նա անպետք դարձավ իրեն վստահված պարգևը գործածելու համար: Այս պնդումները շատ խիստ են. այնուամենայնիվ, եթե համեմատեք Պողոսի խոսքերը՝ իր պարգևը չօգտագործելու հավանականության մասին, և Լերիի վարքը, դրանք համապատասխանում են:

Թույլ տվեք հստակ նշել, որ սա չի վերաբերում մեր փրկությանը, այլ այն բանին, թե ինչպես ենք մենք տնօրինում մեզ վստահված պարգևները: Աստծո կարծիքը հետևյալն է.

*Բազմապատկողները բարի և հավատարիմ են:*
*Պարզապես պահպանողները լուրջ թերություն*
*ունեն, անպետք են և ծույլ են:*

Հնարավո՞ր է, որ մեր կարծիքը հավատարմության մասին լիարժեք չէ: Մտածե՛ք հետևյալ օրինակի մասին: Պատկերացրեք մի գործարարի, որն ապրում է ընդլայնվող տնտեսություն ունեցող շրջանում: Նրա գործը՝ մի փոքր խանութ, որը ժառանգել է իր հորից, եկամտաբեր է, սակայն չի աճում: Նա ունեցել է հնարավորություններ բացելու իր խանութի նոր մասնաճյուղերը քաղաքի տարբեր մասերում, սակայն, չնայած իր ձեռնարկատիրական պարգևին, որոշել էր «հարմարավետ կյանք» վարել:

Այժմ կդիտարկեմ այս օրինակը մեր առակի լույսի ներքո: Համեմատելով այն Լերիի դատաստանի հետ՝ երկու կարևոր հարց տանք: Կարելի՞ է ասել, որ այս գործարարը պետք է օգտագործեր իր պարգևը, որպեսզի նոր խանութներ բացեր և մուտք գործեր այլ շուկաներ՝ Աստծո թագավորությունը կառուցելու համար: Մի՞թե նրա հարմարավետ ապրելու ցանկությունը նույնը չէ, ինչ անհավատարիմ ծառայի «պահպանելու» դիրքորոշումը:

Արդյո՞ք մենք օգտագործել ենք հավատարմության նույն չափանիշները, որոնք օգտագործում է Հիսուսը: Թեև այդ գործարարն ապահով կյանք ուներ, մենք պետք է տանք հետևյալ ամփոփիչ հարցը. «Նա բազմապատկո՞ւմ է, թե՞ պահպանում է իր պարգևները»: Եկեք անկեղծ լինենք մեր գնահատման մեջ: Արդյո՞ք մենք դիտարկում ենք հավատարմությունը միայն հուսալիության տեսանկյունից, բայց ոչ՝ վերարտադրման, կայունության տեսանկյունից, բայց ոչ՝ ընդլայնման, և հետևողականության տեսանկյունից, բայց ոչ՝ կրկնապատկման: Արդյո՞ք մենք անտեսել ենք հավատարիմ լինելու ամբողջական իմաստը՝ բազմապատկել այն պարգևները, որոնք ստացել ենք:

Երբ Աստված ստեղծեց մարդուն այս երկրի վրա՝ որպես տղամարդ և կին, Նրա առաջին պատվիրանը հետևյալն էր. «Աճե՛ք և շատացե՛ք» (Ծննդոց 1.28): Իհարկե, Նա նկատի ուներ, որ մենք երեխաներ ունենայինք և բնակեցնեինք ամբողջ երկիրը: Բայց նույնպես և ավելի լայն առումով, այս պատվիրանը նշանակում է. *«Մենք պետք է բազմապատկած վերադարձնենք Աստծուն այն ամենը, ինչ Նա հանձնում է մեր խնամքին»:* Մենք պետք է «բազմանանք»՝ բազմապատկման միջոցով: Տաղանդների առակում Հիսուսը հատկապես վերագրում է Ծննդոց գրքի այս սկզբնական պատվերը մեզ վստահված պարգևներին:

## ՈՉ ՁԵՐ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Դուք անհարմարավե՞տ եք զգում ձեզ: Միգուցե՝ այո, բայց հիշեք՝ ձեզ պետք է միայն Աստծո շնորհքը: Ձեզնից չի պահանջվում գործել

ձեր ուժերով, այլ՝ Աստծո *խարիսով* կամ *խարիզմայով:* Ես չեմ գրել այս ուղերձը ձեզ հուսահատեցնելու համար, այլ արթնացնելու ձեր գիտակցությունը Աստծուց ձեզ տրված ներուժի համար և ցույց տալու, թե ինչպես ավելացնեք ձեր հավատքը Աստծո շնորհքի և ձեզ տրված պարգևների հանդեպ: Ես մտադիր չեմ դնել ձեզ վրա չափազանց ծանր բեռ, որը չեք կարողանա բարձրացնել: Պողոսը երեք անգամ աղաղակեց Աստծուն՝ իր բեռը թեթևացնելու համար, բայց ահա թե ինչ պատասխանեց Տերը.

> ««Իմ շնորհքն այն ամենն է, ինչ անհրաժեշտ է քեզ: Իմ զորությունը լավագույնս գործում է տկարության մեջ»: Այնպես որ, այժմ ես ուրախությամբ պարծենում եմ իմ տկարություններով, որպեսզի Քրիստոսի զորությունը գործի ինձանով: Ահա թե ինչու են իմ տկարությունները *հաճելի* ինձ» (Բ Կորնթացիների 12.9,10, NLT):

Հունարենում օգտագործված *«տկարություն»* բառի իմաստներից մեկը «սահմանափակումներն» են: Դուք և ես միակ մարդիկ չենք, որոնք երբեմն ծանրաբեռնված են զգում իրենց: Սահմանափակումներ ունենում ենք բոլորս. նույնիսկ Պողոս առաքյալը սահմանափակումներ ուներ: Այս խոսքի անմիջական համատեքստում նա խոսում էր այն հակառակության, ընդդիմության և նույնիսկ ֆիզիկական հալածանքների մասին, որոնց ինքը բախվում էր ամեն քաղաքում (կարդացե՛ք 11-րդ գլուխը): Այնուամենայնիվ, այս ճշմարտությունը նույնպես վերաբերում է այն սահմանափակումներին կամ անհնարին հանգամանքներին, որոնց բախվում ենք մենք, երբ թվում է՝ մեր առաջադրանքն անկարելի է կատարել: Թեև մեր հանգամանքներն, անկասկած, հեշտ չեն, այս փաստը պետք է դրդի մեզ է՛լ ավելի վճռականորեն ապավինել Նրա զորությանը: Փոխարենը *լսելու* ձեր մտքում ճչացող սահմանափակումների մասին, *դավանե՛ք* Աստծո խոստումները: Միգուցե մենք չափից շա՞տ ենք լսում մեր մտքերին, այնինչ, դրա փոխարեն, պետք է ինքներս խոսենք մեզ հետ:

Երեք անգամ Պողոսը խնդրեց Աստծուն միջամտել, և ամեն անգամ Աստված հիշեցրեց Պողոսին *խարիսի* մասին: Երրորդ հիշեցումից հետո Պողոսը հասկացավ: Նա գիտակցեց, որ իր ճնշումները պետք է դրդեին իրեն է՛լ ավելի հավատալ Աստծո շնորհքին և պարգևներին, որոնք իր կյանքում էին: Ահա թե ինչու նրա շեշտադրումը փոխվեց: Նա դադարեց ասել. «Աստվա՛ծ, վերցրո՛ւ սա», և սկսեց ասել. «Իմ սահմանափակումները *հաճելի* են ինձ»: Մի՞թե նա իսկապես օգտագործեց «հաճելի»

բառը: Այո՛: Նա հասկացավ հետևյալը. որքան անհնարին էին թվում իր առջև ծառացած մարտահրավերները, այնքան ազդեցիկ կերպով էր Աստծո զորությունը դրսևորվելու իր կյանքում, *եթե ինքը հավատար:*

Կա մի կարևոր ճշմարտություն. *այն շնորհքը, որի կարիքը մենք ունենք բազմապատկման համար, կարելի է ստանալ միայն հավատքի միջոցով:* Պողոսը գրում է. «Մենք մուտք ունենք *հավատքով* այս շնորհքի մեջ» (Հռոմեացիների 5.2, NKJV): Պատկերացրեք սա հետևյալ կերպով. հավատքն այն խողովակն է, որով այն շնորհքը, որն անհրաժեշտ է մեզ բազմապատկման համար, հասնում է մեր սրտին: Երբ մենք լսում ենք այս ուղերձը, մեր հավատքը կամ խողովակը պետք է լայնանա, ոչ թե նեղանա: Բայց ինքներդ եք որոշում դա: Գրված է.

> *«Նրանց օգուտ չբերեց* ավետիքի քարոզության խոսքը, որովհետև չխառնվեց հավատքի հետ լսողների մեջ: Բայց մենք՝ հավատացյալներս, *մտնում ենք այն հանգստի մեջ»* (Եբրայեցիների 4.2,3, NKJV):

Մի՛ կարդացեք այս գիրքը՝ *առանց օգուտ ստանալու*. այն, ինչ կարդում եք, խառնե՛ք հավատքի հետ: Աստծուց եկած նույն Խոսքը երկու տարբեր արդյունք տվեց Իսրայելի զավակների համար: Այն *օգտակար* եղավ Մովսեսի, Հեսուի և Քաղեբի համար. նրանք զորացան, քանի որ ընդունեցին այն: Բայց նույն Խոսքն *անօգուտ* եղավ մնացած բոլոր իսրայելցիների համար, քանի որ նրանք մերժեցին այն: Ահա և տարբերությունը հավատքի և անհավատության միջև:

Հավատացե՛ք, որ Աստված սպառազինել է ձեզ, որպեսզի մեծապես գերազանցեք ձեր կարողությունները: Նա չի տվել ձեզ ուժ և զորություն ստանալու այլ տարբերակ՝ Իր շնորհքին ապավինելուց բացի: Երբ ապավինեք Նրա շնորհքին, դուք *մուտք կգործեք ճշմարիտ հանգստի մեջ.* դուք կդադարեք ապավինել ձեր ջանքերին և այլևս չեք պայքարի՝ արդյունքներ ստանալու համար: Ի՞նչ է նշանակում այս *հանգիստը:* Այն նշանակում է համագործակցել Աստծո կարողության հետ՝ ձեր առաքելությունը կատարելու համար: Երբ մուտք գործեք այս հանգստի մեջ, Աստված կառաջնորդի ձեզ դեպի բազմապատկում:

Սա այն պատճառներից մեկն էր, որ Դավիթը կոչվում էր «մարդ՝ Աստծո սրտի համեմատ»: Նա ապավինում էր Աստծո զորությանը, ոչ թե իր ուժերին: Նա շարունակ հռչակում էր. «Տերն է իմ կյանքի զորությունը» (Սաղմոս 27.1): Իր կատարած բոլոր գործերում կար մեկ ընդհանուր հայտարար. նա ապավինում էր Աստծո կարողությանը, որը գործում էր իրենում և իր միջոցով: Ահա թե ինչու է Պողոսը գրում իր

հոգևոր որդի Տիմոթեոսին, որը պայքարում էր վախի և երկչոտության հետ. «Արդ դո՛ւ, իմ որդյա՛կ, *զորացի՛ր այն շնորհքով*, որ Քրիստոս Հիսուսում է» (Բ Տիմոթեոս 2.1):

Ահա թե ինչու այս գրքի երկրորդ և երրորդ գլուխները նվիրեցի *«խարիս»* և *«խարիզմա»* հասկացությունները մեզանում ամուր հաստատելուն, մինչև քննարկելը Հիսուսի առակը տաղանդների մասին: Միտքն այն մասին, որ մենք պետք է կատարենք մեր տնտեսությունը մեր ուժերով, կարող է ճնշող և վհատեցնող լինել:

Խնդրում եմ, երբեք մի՛ մոռացեք. ձեր կոչումն ավելին է, քան ձեր բնական կարողությունը: Միգուցե հենց այս պատճառով է Աստվածաշունչն ասում.

> «Հենց ձեր կոչմանը մտիկ արեք, եղբայրնե՛ր, որ ոչ թե շատ իմաստուններ մարմնի կողմից, և ոչ թե շատ զորավորներ, և ոչ թե շատ ազնվականներ: Այլ այս աշխարհի հիմարներին Աստված ընտրեց, որ ամաչեցնի իմաստուններին, և աշխարհի տկարներին Աստված ընտրեց, որ ամաչեցնի զորավորներին: Եվ աշխարհի անտոհմներին և անարգվածներին Աստված ընտրեց, և ոչինչներին, որ մի բան լինողներին ոչնչացնի: Որպեսզի ոչ մի մարմին չպարծենա Նրա առջև» (Ա Կորնթացիների 1.26-29):

Ինչո՞ւ է այսպես: Ինչո՞ւ են կանչվածների մեջ քիչ իմաստունները, զորավորները և ազնվականները: Հնարավո՞ր է, որ բնականորեն օժտված մարդիկ հեշտորեն են «հաջողության հասնում» իրենց ուժերով: Իրականում, նրանք անմիտ են: Նրանք համեմատում են իրենց այլ մարդկանց հետ և համարում են, որ հաղթել են, փոխարենը տեսնեն իրենց այն կոչման լույսի ներքո, որը ստացել են իրենց Արարչից:

Պողոսն այլ էր: Թեև իր ժամանակակիցների համեմատ նա իմաստուն և ազնվական էր՝ մինչև փրկվելը, եկավ մի պահ, երբ նա «աղբ» համարեց իր բոլոր բնական ունակությունները, որպեսզի ստանար Քրիստոսի զորությունը: Նա այդպես վարվող սակավաթիվ մարդկանցից մեկն էր. նա հասկացել էր, որ թեև բնականորեն ինքը շատերից ավելի իմաստուն էր, բայց անմիտ էր՝ Աստծո իմաստության համեմատ (կարդացե՛ք Փիլիպեցիների 3.4-11):

## ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱ՞Ն, ԹԵ՞ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ

Շարունակենք ուսումնասիրել Հիսուսի առակը: Միգուցե այդպես չթվա, բայց դուք կտեսնեք, որ շարունակությունն ավելի ազդեցիկ կամ ցնցող է:

> «Եվ նա հրամայեց. «Վերցրե՛ք փողն այս ծառայից և տվե՛ք տասը պարկ արծաթ ունեցողին»» (Մատթեոս 25.28, NLT):

Սպասե՛ք: Մենք ճի՞շտ կարդացինք: Փաստորեն, նա պատվիրեց, որ այդ մեկ պարկ արծաթը (տաղանդը) վերցվեր Լերիից և տրվեր Էլիսոնին: Կրկին պատկերենք նրանց արդյունքները:

Էլիսոն. 5 x 2 = 10 + 1 (Լերիից) = 11

Լերի. 1 - 1 (Էլիսոնին) = 0

Էլիսոնն ունեցավ տասնմեկ տաղանդ, իսկ Լերին՝ զրո:

Մի առավոտ, աղոթքի ժամանակ ես ցնցվեցի այն բանից, ինչ լսեցի իմ սրտում: Թույլ տվեք պատմել այդ մասին: Իրականում, որոշ ժամանակ էր չէի մտածել տաղանդների առակի մասին: Այդ առավոտ լսեցի, թե ինչպես Աստծո Հոգին ասաց. «Որդի՛ս, Ես ավելի կապիտալիստական եմ, քան սոցիալիստական՝ Իմ մտածելակերպով»:

*Ի՞նչ*: Ես կասկածանքով վերաբերվեցի Նրա խոսքերին, բայց բավականին երկար էի վարվել Աստծո հետ՝ հասկանալու համար, թե երբ է Նա հայտնում մեզ այն, ինչ մենք չգիտենք: Հաճախ դա հակառակ է թվում կրոնական կամ սովորական մտածելակերպին, իսկ երբեմն դա նույնիսկ անհեթեթ է թվում: Այս անգամ, երբ լսեցի Նրան, դա անհեթեթ թվաց ինձ: Ես իմաստություն խնդրեցի, քանի որ ինձ թվում էր, թե գոնե Աստված ավելի շատ վարվում է սոցիալիստական ձևով:

Այդ առավոտ Նա առաջնորդեց ինձ դեպի այս առակը և ցույց տվեց, որ եթե Իր մտածելակերպը սոցիալիստական լիներ, այս առակը կպատմվեր այլ կերպով: Պատմությունը կսկսվեր այսպես. երեք ծառաներն էլ կստանային տաղանդների նույն քանակը.

Էլիսոն. 3

Ռոբերտ. 3

Լերի. 3

Էլիսոնը և Ռոբերտը հավատարիմ կլինեին (կբազմապատկեին), իսկ Լերին, անպետք և ծույլ լինելու պատճառով, կվարվեր իրեն հատուկ կերպով: Արդյունքը կլիներ հետևյալը.

Էլիսոն. 3 x 2 = 6

Ռոբերտ. 3 x 2 = 6

Լերի. 3 = 3

Ենթադրական սոցիալիստական Աստված կաներ հետևյալը.

Էլիսոն. 6 - 1 = 5

Ռոբերտ. 6 - 1 = 5

Լերի. 3 + 1 (Էլիսոնից)

+ 1 (Ռոբերտից) = 5

Վերջում բոլորը հինգ տաղանդ կունենային: Բայց այդպես տեղի չունեցավ: Աստված վերցրեց մի պարկ արծաթը Լերիից և տվեց տասը պարկ ունեցողին: Ինչո՞ւ: Հիսուսը բացատրում է.

> «Նրանց, ովքեր արդյունավետ կերպով են օգտագործում *(բազմապատկում են)* այն, ինչ տրվել է իրենց, *կտրվի ավելին*, և նրանք *առատություն* կունենան: Բայց նրանցից, ովքեր ոչինչ չեն անում *(պահպանում են)*, կվերցվի նույնիսկ այն փոքրը, որը նրանք ունեն» (Մատթեոս 25.29, NLT):

Ես նկատի չունեմ, որ Աստված կապիտալիստ է: Ո՛չ, ո՛չ մի դեպքում: Պարզապես այս մասնավոր դեպքում կապիտալիզմն ավելի համապատասխան է Նրա մտածելակերպին և գործելակերպին, քան սոցիալիզմը: Մեր 21-րդ դարի երիտասարդներին Ամերիկայում և այլ երկրներում սերվել է սոցիալիստական մտածելակերպ: Սոցիալիզմն աստվածահաճո և օգտակար չէ. իրականում, այն ուղղակիորեն հակառակվում է Աստծո իմաստությանը: Այն հակաքրիստոսի հոգի է՝ թաքնված համընդհանուր բարօրության դիմակի տակ, որը ցանկանում է վարձատրել ծուլությունը և պատժել աշխատասիրությունը, հաջողությունը և առատությունը:

Աստված վարձատրում է բազմապատկողներին ավելիով, և Նա դեմ չէ, որ նրանք առատություն ունենան: Կրկին, Հիսուսն ասում է. «Նրանք *առատություն* կունենան»: Աստված ցանկանում է, որ մենք առատություն ունենանք, *եթե սրտանց ձգտում ենք կառուցել Իր թագավորությունը և օգտագործել մեր առատությունն այլ մարդկանց համար:*

Հավանաբար, դուք լսած կլինեք հետևյալ պնդումը. *«Աստված դեմ չէ առատությանը. Նա դեմ է, երբ առատությունն իշխում է մեր կյանքում»:* Այս պնդումը շատ ճիշտ է: Այն մարդիկ, որոնց սիրտը վառվում է Աստծո ցանկություններով, գոհ չեն լինի՝ ունեցվածք կուտակելով: Նրանք գոհ կլինեն, երբ վարվեն Աստծո հետ և օգտագործեն այն առատությունը, որը Նա տալիս է իրենց՝ Իր թագավորությունը կառուցելու համար: Նրանք ընկալում են առատությունը ընդամենը որպես գործիք՝ մարդկանց կյանքերը կառուցելու համար: Եվ, անկասկած, եթե մենք իմաստուն ենք, չենք սիրահարվի մեր գործիքներին:

Մի պահ կանգ առնենք և շեշտադրենք մի կարևոր ճշմարտություն. մենք պետք է հոգանք աղքատների մասին՝ այն մարդկանց, որոնք անկարող են աշխատել, և նրանց, որոնց սկզբնական օգնություն է պետք: Պողոսը գրում է. «Սերը զորացնում է մեզ, որ կատարյալ դարձնենք

Օծյալի օրենքը՝ հոգալով մեկս մյուսի նեղությունների մասին: Եթե դուք կարծում եք, թե չափազանց կարևոր եք, որ կռանաք՝ մեկ ուրիշին օգնելու համար, դուք ապրում եք խաբեության մեջ» (Գաղատացիների 6.2,3, TPT):

Երբ Առաջին եկեղեցու առաջնորդները հանդիպեցին, նրանք պարզեցին, որ իրենց առաջադրանքները տարբեր էին, և նույնիսկ անհամաձայնություններ ունեցան որոշ աննշան հարցերում: Այնուամենայնիվ, նրանք միանշանակ կերպով համաձայնեցին, որ պարտավոր էին օգնել նեղության մեջ գտնվողներին:

> «Նրանք պարզապես մեկ բան խնդրեցին ինձնից՝ որ ես հիշեի աղքատներին և կարիքավորներին, որը այն բեռն է, որն արդեն կրում էի իմ սրտում» (Գաղատացիների 2.10, TPT):

Այնուամենայնիվ, կարևոր է որոշել՝ մարդը *կարիքավո՞ր* է, թե՞ *ծույլ* է: Համաձայն սոցիալիստական մոտեցման, ծույլերը և աղքատները պետք է հավասարապես օգնություն ստանան: Եթե մենք օգնություն տրամադրենք «ծույլերին», մենք միայն կավելացնենք նրանց կախվածությունը մեզնից: Մեր նպատակն է մշտապես առաջնորդել մարդկանց դեպի Աստծուց իրենց տրված պարգևները, որպեսզի նրանք նույնպես կարողանան բարգավաճել և կառուցել Աստծո թագավորությունը:

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒՄ

Ինչևէ, կարևորն այն է, որ մեզ վստահվել են պարգևներ, և մենք պետք է օգտագործենք դրանք՝ բազմապատկելու համար: Եթե դուք սիրում եք Աստծուն, ջերմեռանդորեն կցանկանաք օգտագործել ձեր պարգևները Նրա փառքի համար: Իմ գլխավոր մտադրությունն է արթնացնել ձեր ներսի ցանկությունը և ներուժը: Դուք ստեղծվել եք նպատակով՝ հատուկ նպատակի համար: Եվ դուք ունեք անհրաժեշտ ունակություններ, որպեսզի բազմապատկեք այն, ինչ տրվել է ձեզ՝ մեր Թագավորի փառքի համար: Սա ամենակարևոր եզրակացությունն է այս գլխից:

Այժմ, հասկանալով տաղանդների առակը, մենք պատրաստ ենք անցում կատարել գործնական հարցերին: Ինչպե՞ս կարելի է կիրառել այն: Ինչպե՞ս են այս սկզբունքները գործում մեր առօրյա կյանքում:

Մենք կխոսենք այս մասին հաջորդ գլխում:

## ՄՏՈՐԵՔ

1. Գոյություն ունի միայն մեկ հատկանիշ, որը հստակ նկարագրում է տնտեսին՝ հավատարմությունը: Ի՞նչ պատկերացում ունեիք հավատարմության մասին: Ինչպե՞ս փոխվեց ձեր պատկերացումը այս գլուխը կարդալուց հետո:

2. Հավիտենական բազմապատկումը ձեռք չի բերվում մեր ուժերով: Այն Աստծո շնորհիքի հետ համագործակցելու արդյունք է: Արդյո՞ք դուք փորձում եք բազմապատկել ձեր պարգևները ձեր ուժերով: Ի՞նչ կերպով կարող եք բազմապատկել դրանք ոչ թե պայքարի, այլ հանգստի դիրքից:

3. Աստված դեմ չէ առատությանը. Նա դեմ է, երբ առատությունն իշխում է մեր կյանքում: Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Աստված կարևորում, որ բազմապատկեք ձեր պարգևները: Ի՞նչ կերպով ձեր պարգևները բազմապատկելը կարող է ավելի մեծ չափով պատվել Աստծուն և ազդեցություն թողնել այլ մարդկանց կյանքերում:

# X

*«Նա, ով հավատարմությամբ և ազնվությամբ տնօրինում է այն փոքրը, որը տրվել է իրեն, առաջխաղացում կստանա, և նրան կվստահեն ավելի մեծ պարտականություններ»:*

– Ղուկաս 16.10, TPT

# 6

# Աշխատասիրություն և բազմապատկում

Համաձայն Հիսուսի խոսքերի, եթե մենք ազնվորեն ապրենք, լինենք կայուն, հուսալի, վստահելի, առաքինի և աշխատասեր, և բազմապատկենք այն, ինչ ներկայումս տնտեսում ենք, մեզ վստահված պարտականությունները կավելանան: Պարզ ասած, *երբ ազնվորեն բազմապատկենք մեր ունեցածը, Աստված կվստահի մեզ ավելին:* Նա առաջխաղացում կտա մեզ: Սա Նրա թագավորության օրենքներից է:

Ստուգե՛ք ձեր վերաբերմունքը: Դուք ունե՞ք բազմապատկող մտածելակերպ, թե՞ ձեր մտածելակերպն ավելի շուտ պահպանող է: Հնարավո՞ր է, որ դուք կանգ եք առել այն բանից հետո, երբ հասել եք հաջողության այնպիսի մակարդակի, որը համարում եք ավելի բարձր, քան մարդկանց մեծամասնության ձեռքբերումները, ավելի լավ, քան ձեր ծնողների կյանքը, կամ էլ համարում եք բավարար՝ հարմարավետ կյանք վարելու համար:

Անկեղծ եղեք ձեր գնահատման մեջ: Եթե դուք ավելի շուտ եղել եք պահպանող, քան բազմապատկող, կա հրաշալի լուր. դուք դեռ ապրում եք այս աշխարհում և ժամանակ ունեք, որ փոխվեք, բազմապատկեք և ավելի շատ պարտականություններ ստանաք:

## ԵՐԿՈՒ ՏԱՐԲԵՐ ԱՐԴՅՈՒՆՔ

Նույնիսկ մանկության տարիներին ինձ համար դժվար չէր պատկերացում կազմել այս երկու հակադրվող մտածելակերպերի՝ պահպանելու և բազմապատկելու մասին: Իմ երկու պապերն այս տարբեր մոտեցումների օրինակներն էին ինձ համար: Նրանցից մեկը թոշակի

անցավ 65 տարեկանում և սկսեց նստակյաց կյանք վարել: Ամեն տարի նա այցելում էր մեզ երկու շաբաթով, և ամեն օր ես տեսնում էի, որ նա գործնականորեն ոչինչ չէր անում: Նա նստում էր մեր տան ետևի բակի մեծ կաղնու տակ և ծխամորճ էր ծխում: Նույնը տեղի էր ունենում, երբ մենք էինք այցելում նրան: Ցավոք, կյանքի վերջին տարիներին նա կարծես գոյատևում էր՝ ապրելու փոխարեն:

Մյուս պապս թոշակի անցավ 62 տարեկանում և սկսեց այն, ինչը կարելի է անվանել իր երկրորդ կյանքը: Արդեն 60-ն անց, նա ընդունվեց «Ռատջերս համալսարան» և սկսեց գյուղատնտեսություն ուսումնասիրել: Հաջորդ երկու տասնամյակում գրեց երկու գիրք, կառուցեց և մշակեց մեծ պարտեզ, կենդանիներ պահեց, օգնեց տներ կառուցել Ֆլորիդայի լողափերում՝ ստեղծելով հարմարավետ բնակարաններ տարեցների համար, ինչպես նաև գործուն մասնակցություն ունեցավ բազմաթիվ գործարար և համայնքային նախագծերում: Նա մշտապես օգնում էր կարիքի մեջ գտնվող մարդկանց:

Երբ նա այցելում էր մեզ, կամ երբ մենք էինք այցելում նրան, դա շատ սպասված իրադարձություն էր մեզ համար: Նա ծրագրում էր ծկնորսական ճանապարհորդություններ, օրեր՝ զվարճալիքների այգիներում, և ուղևորություններ դեպի Նյու Յորք Սիթի: Նա խաղեր էր խաղում մեզ հետ, տանում էր մեզ հարևանների տները, օգնում էր տեղական գործարարներին իրենց խանութներում և ամեն երեկո համեղ կերակուրներ էր պատրաստում մեզ համար: Մյուս պապս նույնիսկ խոհանոցում չէր օգնում:

Իմ պապերից մեկը մահացավ 75 տարեկանում, իսկ մյուսը՝ 91 տարեկանում: Կարո՞ղ եք կռահել, թե ով ավելի երկար ապրեց: Այո, նա, ով տեսիլք ուներ և բազմապատկում էր: Ահա մի հետաքրքիր փաստ. նա փրկություն ստացավ միայն 89 տարեկանում: Սակայն նույնիսկ մինչ այդ նա ապրում էր Աստծո սկզբունքներով՝ համաձայն Նրա թագավորության օրենքների, և առատորեն օրհնված էր:

Մինչև որ ես արտոնություն ունեցա առաջնորդելու նրան դեպի Հիսուսը, պապս հալածում էր ինձ իմ համոզմունքների համար: Նա ծաղրում էր իմ հավատքը գրեթե ամեն անգամ, երբ մենք շփվում էինք: Նրան ավետարանելու բազմաթիվ փորձերից հետո, երբ պապս ի վերջո ասաց, որ ուզում է ընդունել Հիսուսին որպես Տեր, ես գրեթե ընկա կանգնածս տեղից: Դա հրաշալի օր էր:

Այդ զրույցից մեկ ամիս անց կրկին այցելեցի նրան: Նա նոր էր տեղափոխվել Դեյտոնա լողափում գտնվող իր բնակարանից Օրմոնդ լողափի տարեցների հատուկ խնամքի կենտրոն: Մեր տնից մինչև այդ

կենտրոնը մեքենայով ընդամենը մեկ ժամվա ճանապարհ էր: Այդ անգամ նա ասաց ինձ.

- Ջո՛ն, ուզո՞ւմ ես իմանալ իմ առաջադրանքը. այն, թե ինչ պետք է անեմ այս երկրի վրա:

Ես զարմացա, որ նրա տարիքի նոր փրկված մարդն այդպես էր մտածում: Բայց իմ զարմանքն արտահայտելու փոխարեն, ես պարզապես պատասխանեցի.

- Այո՛, պապի՛կ, ո՞րն է քո առաջադրանքը:

Նա ժպտաց և ասաց.

- Սուրբ Հոգին ասաց ինձ, որ ես այստեղ եմ, որպեսզի պատմեմ բոլոր այս մարդկանց Հիսուս Քրիստոսի մասին (այդ համալիրում կար մի քանի հարյուր տարեց):

Երկու տարի անց իմ մայրը և նրա եղբայրը տեղափոխեցին նրան Օկլահոմա՝ իր միակ որդուն ավելի մոտ լինելու համար: Մեկ շաբաթ անց նա ամբողջ գիշեր արթուն մնաց՝ իր նոր դայակին պատմելով կյանքի պատմությունը: Եվ վաղ առավոտյան՝ մինչև արևածագը, նա ասաց այդ կնոջը. «Տուն գնալու ժամանակն է: Ասա՛ որդուս, որ խնջույք կազմակերպի ինձ համար»: Այդ խոսքերից հետո նա հեռացավ իր մարմնից և միացավ երկնային ընտանիքին:

Մայրս մտահոգվել էր. նրան հանգիստ չէր տալիս այն միտքը, որ իրենք չափազանց մեծ ճնշման էին ենթարկել նրան Ֆլորիդայից Օկլահոմա տեղափոխելիս: Երբ նա ասաց դա, ես արագորեն հավաստիացրի, որ իրենք որևէ վնաս չէին հասցրել նրան.

- Մայրի՛կ, երբ պապիկն 89 տարեկան էր, նա ասաց ինձ, որ Աստված ցույց է տվել իրեն, որ ինքն ապրելու է ևս երկու տարի՝ Օրմոնդ լողափում իր առաջադրանքը կատարելու համար: Արդեն մեկ շաբաթ է նա Օկլահոմայում է. նա կատարել է իր առաջադրանքը:

Մայրս և՛ մխիթարվեց, և՛ զարմացավ:

Թեև պապս փրկված չէր, նրա կյանքում դրսևորվում էին աշխատասիրության և հավատարմության աստվածային սկզբունքները: Տեսնելով իմ երկու պապերի կյանքերի տարբերությունը, նույնիսկ մինչև հավատացյալ դառնալը, ես վճռել էի, որ պետք է ապրեմ այն պապի նման, որը բազմապատկեց իր ունեցածը և մինչև վերջին շունչը ապրեց նպատակաուղղված:

Բայց թույլ տվեք անկեղծ լինել: Շատ հաճախ ես գայթակղություն եմ ունեցել ընտրելու անհոգ կյանքը: Անհրաժեշտ է վերահսկել մեր մտքերը, որպեսզի չտրվենք «պահպանող» կենսառճին, քանի որ այն շատ ավելի հեշտ է:

Բազմապատկումը չի արտահայտվի ծույլ, վարանող, անհոգ և անտարբեր շարժառիթների դեպքում: Պողոս առաքյալը պատվիրում է մեզ. «Ոչ մի դեպքում ծույլ մի՛ եղեք, այլ *քրտնաջան աշխատեք* և *խանդավառությամբ* ծառայեք Տիրոջը» (Հռոմեացիների 12.11, NLT):

Նախևառաջ, գիտակցեք, որ սա պատվիրան է, ոչ թե առաջարկ: Ուշադրություն դարձրեք «քրտնաջան աշխատեք» արտահայտությանը: Սա առաջին հատկանիշներից մեկն է, որը պետք է ցուցաբերեք՝ բազմապատկում ունենալու համար: Դուք պետք է ոչ միայն *քրտնաջան աշխատեք*, այլև *խանդավառությամբ* կատարեք ձեր գործը: Սխալ մի՛ հասկացեք ինձ. բազմապատկման երեք կարևոր գործոններն են հավատքը, տեսիլքը և հարատևությունը: Սակայն դրանք անօգուտ են՝ առանց թևքերը վեր քաշելու և քրտնաջան աշխատելու:

Լիզան և ես քրտնաջան աշխատել ենք գրեթե մեր հավատացյալ դարձած օրվանից: Սա դրված է մեր ներսում, և Աստված տալիս է այս հատկանիշը յուրաքանչյուր հավատացյալի: Մեր խանդավառությունը պայմանավորված չէր արտաքին հանգամանքներով, այլ՝ խորը ձգտումով, որը բխում էր երկու աղբյուրից՝ մեր անշեղ սիրուց Հիսուսի հանդեպ և մեր անշեղ սիրուց Նրա ժողովրդի հանդեպ: Այս ձգտումը հիմնված է հաստատուն և ի սրտե որոշման վրա, ոչ թե զգացմունքների, և այն բորբոքում է Նրա թագավորությունը կառուցելու կրակոտ ցանկությունը մեր ներսում: Սա անչափ կարևոր է, քանի որ դուք միշտ չէ, որ զգացմունքային ոգեշնչում կունենաք: Իրականում, կլինեն ժամանակներ, երբ ընդհանրապես ոչինչ չեք զգա:

*«Խանդավառություն»* բառի հունարեն արմատական բառը *«էնթեոս»*-ն է, որը նշանակում է «Աստված՝ ներսում»[8]: Մեր աշխատասիրությունը պետք է բխի Նրա ներբնակվող ներկայությունից, ոչ թե զգացմունքներից կամ արտաքին հանգամանքներից:

## ԲԱԶՄԱՊԱՏԿԵՔ ՈՒՐԻՇԻՆԸ

Մեր ամուսնությունից հետո Լիզան և ես հաճախում էինք մի եկեղեցի Տեխաս նահանգի Դալլաս քաղաքում: Այն ԱՄՆ-ի ամենահայտնի եկեղեցիներից էր և ուներ մի քանի հարյուրի հասնող աշխատակազմ: Որպես կամավորներ, մենք մշտապես պատրաստ էինք անել այն, ինչ անհրաժեշտ էր: Ես սկսեցի ծառայել կարգ ու կանոնի ծառայության մեջ և դարձա կամավոր բանտերի ծառայությունում: Ծառայում էի կալանավայրերում, այցելում էի ծերանոցներ, օգնում էի համաժողովների ընթացքում, փոքր առաջադրանքներ էի կատարում եկեղեցու աշխատակիցների համար և նույնիսկ թենիսի դասեր էի տալիս մեր հովվի երեխաներին: Ես

երբեք «ոչ» չէի ասում ցանկացած տեսակի ծառայությանը, ինչ էլ դա լիներ, և այդ ամենի հետ մեկտեղ աշխատում էի շաբաթը 40 ժամ «Ռոքվել Ինտերնեյշնլ» ընկերությունում՝ որպես ինժեներ:

Ի վերջո, տեսնելով իմ եռանդը ծառայության մեջ, մեր գլխավոր հովվի կինը (որը նույնպես եկեղեցու գործադիր տնօրենն էր) հարցրեց ինձ՝ արդյո՞ք կցանկանամ միանալ եկեղեցու աշխատակազմին՝ լրիվ դրույքով: Մեր պաշտոնական հարցազրույցի ժամանակ նա ասաց.

- Ջո՛ն, չեմ կարծում, որ մենք կարող ենք պատշաճ կերպով վարձատրել քեզ:

- Միևնույն է՝ ես համաձայն եմ, - պատասխանեցի:

Ինձ չէր հետաքրքրում, թե որքան կվարձատրեին ինձ: Ես պատրաստ էի ցանկացած աշխատանքի՝ ցանկացած աշխատավարձով: Այդ հարցազրույցից հետո նա առաջարկեց ինձ գործադիր թիմի օգնականի պաշտոնը: Կարիք չկար, որ Լիզան և ես ջանասիրաբար աղոթեինք դրա համար, քանի որ մենք գիտեինք, որ դա Աստծո կամքն էր: Ես ընդունեցի այդ առաջարկը՝ տարեկան 18.000 դոլար աշխատավարձով, ինչը եկամուտների զգալի կրճատում էր մեզ համար, սակայն մենք առաջխաղացում համարեցինք դա: Լիզան և ես գիտեինք, որ մեզ անհրաժեշտ էր լինելու գերբնական մատակարարում՝ այդ նոր աշխատավարձով ապրելու համար, բայց դա չէր մտահոգում մեզ: Մենք քայլ արեցինք, քանի որ ի սրտե հավատում էինք, որ դա մեր կյանքի կոչումն էր:

Այդ պաշտոնում ես իմ հովիվների, նրանց ընտանիքի և հյուրերի օգնականն էի: Ես կատարում էի իմ աշխատանքը երեք գլխավոր շարժառիթով: Առաջինը՝ ծառայել նրանց այնպես, ասես ծառայում էի Հիսուսին: Երկրորդը՝ մշտապես առաջ նայել՝ հասկանալով, թե ինչ կարիք ունեն, և լրացնել դրանք, մինչև ինձ կխնդրեին դրա համար: Վերջինը՝ որևէ առաջադրանք ստանալիս ոչ մի դեպքում չվերադառնալ և չասել, որ այն կատարելը անհնարին է: Ես միշտ միջոցներ էի գտնում, որպեսզի անեի դա աղոթքով, ստեղծարարությամբ և քրտնաջան աշխատանքով: Եվ եթե ինչ-որ բան չէր ստացվում (ինչը հազվադեպ էր պատահում), ես մշտապես առաջարկում էի լավագույն այլընտրանքային լուծումը, և հաճախ այն նույնիսկ ավելի նպաստավոր էր, քան իմ ստացած սկզբնական առաջադրանքը:

Լիզան և ես չունեինք երեխաներ այդ պաշտոնը զբաղեցնելու ընթացքում: Մեր աշխատանքային շաբաթը վեցօրյա էր և սովորաբար բաղկացած էր 50-70 ժամից: Երկուսս էլ համոզված էինք, որ կարևոր էր հնարավորինս հեռացնել ցանկացած ճնշում մեր հովիվների կյանքից: Մենք ցանկանում էինք, որ նրանք լիովին ուղղեին իրենց ուշադրությունը եկեղեցին առաջնորդելուն:

Ես կարող եմ պատմել շատ պատմություններ, որոնք ցույց էին տալիս մեր շարժառիթները, բայց կներկայացնեմ միայն մեկը: Իմ հովիվը հյուր ուներ, որը մի հանգուցյալ հանրահայտ ավետարանչի թիմի անդամ էր եղել: Նա ցանկանում էր ավելին իմանալ այդ հանգուցյալ ավետարանչի մասին և զրուցեց իր հյուրի հետ մինչև ուշ գիշեր: Հեռախոսս զանգեց գիշերվա ժամը 1:00-ին: Զանգողն իմ հովիվն էր, որը խնդրեց ինձ գնալ իր տուն (ինչը մեքենայով 25 րոպեի ճանապարհ էր մեր բնակարանից) և հյուրանոց տանել իր հյուրին:

- Արդեն գալիս եմ, - անվարան պատասխանեցի:

Ես գնացի նրա տուն, սպասեցի, մինչև որ նրանք հրաժեշտ տային միմյանց, և հյուրին ուղեկցեցի հյուրանոց: Ես պառկեցի քնելու գիշերվա ժամը 2:00-ից բավականին ուշ:

Իմ հովիվը չգիտեր, որ ես դեռ պետք է օդանավակայան գնայի, որպեսզի դիմավորեի ևս մեկ հյուրի, որը քարոզելու էր մեր եկեղեցում հաջորդ երեկոյան: Նա ժամանելու էր գիշերային թռիչքով Հավայան կղզիներից, որի վայրէջքն առավոտյան 5:40-ին էր: Ես ստիպված էի արթնանալ առավոտյան 4:30-ին, որպեսզի դիմավորեի նրան: Այդպես էլ չասացի իմ հովվին, որ այդ գիշեր նույնիսկ երեք ժամ չէի քնել: Ես վճռել էի հոգալ նրանց ցանկացած կարիքը և մշտապես հիշեցնում էի ինքս ինձ, որ ծառայելն արտոնություն է:

Չորս տարի իմ հովվին և նրա կնոջը որպես օգնական ծառայելուց հետո, մեկ անգամ, երբ մենակ էի նրանց հետ, ասացի.

- Ես աղոթում և խնդրում եմ Աստծուն, որ այն մարդը, ով զբաղեցնելու է իմ պաշտոնը, կրկնակի լավ աշխատի, քան ես:

Ես ցանկանում էի հեռանալ ճիշտ կերպով, և ցանկանում էի, որ իմ պաշտոնն է՛լ ավելի արդյունավետ դառնար:

- Դա հնարավոր չէ, - պատասխանեցին նրանք: - Դու հրաշալի ես կատարել քո աշխատանքը:

Այդ հավանությունը խրախուսեց ինձ: Նրանց խոսքերի շնորհիվ իմ ամբողջ քրտնաջան աշխատանքը հեշտ թվաց, սակայն ես ցանկանում էի առաջխաղացում ստանալ: Ի վերջո, նրանք երկու մարդ նշանակեցին իմ պաշտոնին: Իմ հովիվը օրհնությամբ բաց թողեց մեզ՝ ծառայելու Ֆլորիդայում գտնվող մեկ այլ շատ հայտնի եկեղեցում որպես երիտասարդական ծառայության հովիվ, ինչի մասին ես հիշատակեցի երկրորդ գլխում:

Երբ զբաղեցրի իմ պաշտոնը Ֆլորիդայում, ես հիասթափություն էի զգում, քանի որ մենք չէինք հասնում ավելի շատ դեռահասների: Ես երիտասարդական ծառայության հովիվ էի 1980-ական թվականների կեսերին, երբ մեր միակ տեսողական հաղորդակցման միջոցը հեռուստատե-

սությունն էր: Չկային համակարգիչներ, պլանշետներ և սմարթֆոններ: Հոսքային հեռարձակումը դեռ չէր հորինվել: Պարզ ասած, հեռուստատեսությունը լավագույն միջոցն էր՝ մարդկանց հասնելու համար:

Որոշակի ուսումնասիրություն կատարելուց հետո իմացա, որ կենտրոնական Ֆլորիդայի ամենամեծ հեռուստակայաններից մեկն ազատ եթերաժամ ուներ շաբաթ երեկոյան ժամը 22:00-ին: Ես հարցում կատարեցի այդ երեսունրոպեանոց եթերաժամի արժեքի մասին. դա բավականին մեծ գումար էր:

Ես մոտեցա մեր ավագ հովվին և հարցրի՝ արդյո՞ք մենք կարող էինք գնել այդ եթերաժամը երիտասարդական ավետարանչական ծրագրի համար:

- Ո՛չ, դա չի համապատասխանում եկեղեցու բյուջեին, - պատասխանեց նա:

Ես հարցրի նրան.

- Դուք դեմ չե՞ք լինի, եթե առաջարկենք մեր ծառայության դեռահասներին և երիտասարդներին ամսական նվիրատվություններ կատարել, որպեսզի վճարենք այդ հաղորդման համար:

- Իհարկե, եթե նրանք կարող են թույլ տալ դա իրենց, - պատասխանեց նա:

Կարծում եմ՝ նա չէր հավատում, որ երիտասարդներին կհաջողվեր դա:

Երիտասարդական հավաքույթին ես պատմեցի կորսվածներին հասնելու իմ տեսիլքը: Այդ ժամանակ բազմաթիվ երիտասարդներ հեռուստացույց էին դիտում շաբաթ օրերին՝ ուշ երեկոյան: Այդ հաղորդման ընթացքում մենք քարոզելու էինք Աստծո Խոսքը, ապա հեռուստադիտողներին հրավիրելու էինք եկեղեցի և երիտասարդական ծառայության: Ես կոչ արեցի մեր ծառայության երիտասարդներին, որպեսզի այդ նպատակի համար նվիրատվություններ կատարեն իրենց գրպանից, դպրոցից հետո կատարած աշխատանքներից կամ ոչ մշտական աշխատանքներից: Հաշվարկելով ֆինանսական խոստումները՝ ես և երիտասարդական ծառայության իմ օգնականը զարմացանք. ստացված գումարը բավական էր՝ այդ հեռուստաեթերը գնելու համար:

Իմ ավագ հովիվն է՛լ ավելի զարմացավ: Նա թույլ տվեց մեզ սկսել այդ հաղորդումը, որը կոչվում էր «Կրակոտ երիտասարդություն»: Մենք կատարում էինք վճարումներն ամեն ամիս, և ոգեշնչողն այն էր, որ բազմաթիվ եկեղեցի չհաճախող երիտասարդներ սկսեցին հաճախել մեր երիտասարդական ծառայություններին և ընդունեցին Հիսուսին: Ավելի քան 20 տարի անց ինձ մոտեցել են մարդիկ և պատմել, որ 1980-ական

թվականներին նրանք դիտում էին «Կրակոտ երիտասարդություն» հաղորդումը, և որ այն մեծ ազդեցություն է թողել իրենց կյանքում:

Երբ ես թողեցի երիտասարդական ծառայության հովվի դիրքը, մենք բաժանեցինք այդ ծառայությունը երեք մասի: Այն ծառայությունը, որը սկսեցինք առաջնորդել, հանձնվեց երեք ծառայողի: Կրկին, Աստծո շնորհքը, հնազանդությունը և քրտնաջան աշխատանքը բազմապատկում բերին:

Հիսուսն ասում է.

> «Եվ եթե օտար բանի մեջ հավատարիմ չեղաք, ձերն ո՞վ կտա ձեզ» (Ղուկաս 16.12):

Եկեք վերաձևակերպենք Նրա խոսքը՝ համաձայն տաղանդների մասին առակի.

> «Եթե դուք չեք բազմապատկել ուրիշինը, ո՞վ կտա ձեզ ձերը՝ բազմապատկելու համար»:

Այդ եկեղեցու ավագ հովիվն էր, որ հռչակեց Աստծո ծրագիրը Լիզայի և ինձ համար, և դա «Մեսինջեր ինտերնեյշնլ» ծառայության ստեղծումն էր: Նա առաջինն էր, որ տվեց այդ գաղափարը, ոչ թե մենք: Սկսելով իմ աշխատանքը՝ որպես երիտասարդական ծառայության հովիվ, ես ասել էի. «Հովի՛վ, ես կմնամ այստեղ, մինչև որ Հիսուսը վերադառնա, կամ մինչև որ Աստված ցույց տա և՛ քեզ, և՛ ինձ, որ մենք պետք է գնանք»: Եթե Աստված աղոթքի մեջ ցույց չտար նրան մեր հաջորդ ծառայողական դիրքը, ես համոզված չեմ՝ արդյո՞ք ազատ կզգայի ինձ՝ հեռանալով այդ եկեղեցուց: Մինչև օրս ես հավատում եմ, որ հենց դա էր պատճառը, որ Աստված առաջինը նրան ցույց տվեց այդ ծառայությունը:

## «ՄԵՍԻՆՋԵՐ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ»-Ի ԾՆՈՒՆԴԸ

Ֆլորիդայում գտնվող այդ եկեղեցուց հեռանալուց կարճ ժամանակ անց մենք ծառայում էինք Հարավային Կարոլինա նահանգի Կոլումբիա քաղաքում: Վաղ առավոտ էր, ես մեկուսի մի վայր էի գտել՝ աղոթելու համար: Աստված խոսեց ինձ հետ. «Որդի՛ս, դու մեծ հունձք կստանաս այն հավատարմության սերմերից, որոնք ցանում էիր վերջին յոթ տարում՝ այլ մարդկանց ծառայություններում լինելու ժամանակ: Դա կսկսվի անմիջապես և կշարունակվի գալիք տարիների ընթացքում»:

Այժմ, ետ նայելով, երկյուղածություն եմ զգում այդ հունձքի պատճառով:

Այն բանից հետո, երբ մենք ուղարկվեցինք մեր եկեղեցուց՝

«Մեսինջեր ինտերնեյշնլ» ծառայությանը ծնունդ տալու համար, աշխատասիրությունը կրկին մեր բազմապատկման բանալի գործոնն էր: Լիզան և ես անցկացնում էինք շատ երեկոներ՝ կատարելով տարբեր աշխատանքներ, օրինակ՝ լսաժապավեններ էինք կրկնօրինակում, պիտակներ էինք պատրաստում և քարոզաշարեր էինք կազմում: Մեր ընկերներից մի քանիսը պարբերաբար այցելում էին մեզ, որպեսզի դրոշմանիշներ փակցնեին ծրարների վրա՝ մեր տեղեկագրերը փոստով ուղարկելու համար, կամ օգնեին այլ հարցերում: Լիզան և ես նամակներ էինք գրում, չեկեր էինք մուտքագրում մեր բանկային հաշվին, ֆինանսական հաշվետվություններ էինք կազմում և կատարում էինք ամբողջ անհրաժեշտ փաստաթղթային շրջանառությունը: Մենք կատարում էինք համակարգչային աշխատանքներ, աշխատում էինք փոստի հետ և իրականացնում մեր աշխատանքային նյութերի մատակարարումը, և սա ընդամենը մի քանիսն էր մեր պարտականություններից: Մենք սկսում էինք աշխատել առավոտյան աղոթքից հետո և հաճախ աշխատում էինք մինչև երեկոյան ժամը 9:00-ը կամ մինչև գիշեր:

Մենք աշխատում էինք ուրախությամբ և արտոնություն էինք համարում դա: Մեր շարժառիթը բխում էր մեր ներսից և հարատևում էր՝ անցնելով անթիվ հիասթափություններով և չորության ժամանակահատվածներով: Ես համոզված եմ, որ մենք ուժ ունեինք՝ չվհատվելու համար, քանի որ ամեն առավոտ ժամանակ էինք տրամադրում աղոթքին:

Մենք վեր ու վար էինք անում Արևմտյան ափի գլխավոր «I-95» մայրուղով՝ մեր «Հոնդա Սիվիկ» մեքենայով: Մեր երկու փոքր տղաները ետևի նստարանին էին՝ մանկական նստատեղերով: Մենք քարոզում էինք 80-100 անդամ ունեցող փոքր եկեղեցիներում: Մեր առաջին հավաքույթը մի եկեղեցում էր, որը հավաքվում էր թաղման բյուրոյի շենքում. ինչպիսի՜ հրապուրիչ սկիզբ:

Մենք վաճառում էինք մեր լսաժապավենները և օգտագործում էինք հասույթը՝ ծառայությունն ընդլայնելու համար: Մենք որոշում էինք կայացրել, որ այդ միջոցները մեր աշխատավարձի համար չէին. կարևոր էր մեծացնել և բազմապատկել «Մեսինջեր»-ը: Կային ժամանակներ, երբ մենք ստանում էինք մեզ անհրաժեշտ անձնական միջոցները ճիշտ այն օրը, երբ դրանք պետք էին մեզ: Մեր «լսաժապավենների վաճառքի» հաշվին կային միջոցներ, բայց մենք որոշում էինք կայացրել չօգտագործել դրանք:

Մեկուկես տարի տևող քրտնաջան աշխատանքից հետո էր, որ ես խոսք ստացա Աստծուց գրելու մասին: Ես խիստ մտահոգվում էի, որ պարզապես չէի ունենա բավականաչափ ժամանակ օրվա ընթացքում և՛ գրելու, և՛ մեր բազմաթիվ այլ պարտականությունները կատարելու

համար: Նման որոշում կայացնելը ռիսկային էր թվում, բայց մենք կայացրինք այն: Պահանջվեց շատ ժամանակ՝ իմ առաջին գիրքը գրելու համար: Թեև ես չէի ակնկալում, մի քանի երիտասարդներ կամավորական հիմունքներով սկսեցին օգնել մեզ և կատարել այն երկրորդական առաջադրանքները, որոնք խլելու էին գիրք գրելու իմ ժամանակը: Նրանք ստանձնեցին նույն դերը, ինչ մենք, երբ աշխատում էինք մեր հովիվների համար Դալլասում: Նրանք տեսան այն կարիքը, որը կար մեր կյանքում, և օգնության եկան, թեև մենք չէինք խնդրել նրանց դրա համար:

Ես ավարտեցի «Հաղթանակ անապատում» գրքի ձեռագիրը մեկ տարի տևող քրտնաջան և երբեմն հուսահատեցնող աշխատանքից հետո: Ես հասկացա մի կարևոր սկզբունք. *մենք պետք է աճենք մեր կյանքի շնորհի (պարգևների) մեջ:* Մեզնից շատերը չեն ունենում «աներևակայելի» արդյունքներ սկզբում: Պետրոսը գրում է. «Աճե՛ք մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի շնորհքով» (Բ Պետրոս 3.18): Այժմ իմ գրելու կարողությունը շատ ավելի զարգացած է, քան երբ ես գրում էի իմ առաջին գիրքը:

Լիզան և ես ներկայացրինք այդ ձեռագիրը մի շատ հայտնի խմբագրի: Ես սաստիկ զարմանք ապրեցի, երբ նա կոպտորեն քննադատեց այն և ասաց, որ ես չափազանց երիտասարդ և անփորձ եմ՝ Քրիստոսի մարմնին նման ուղերձ տալու համար:

Այդ մերժվածության հարվածից հետո Լիզան և ես անմիջապես սկսեցինք այլ խմբագիր փնտրել: Մենք գտանք մի խմբագրի, և նա փչացրեց ամբողջ ձեռագիրը: Լիզան և ես հուսահատվեցինք, երբ ետ ստացանք այն: Նա կորցրել էր իմ ձայնը և գրքի բովանդակության ազդեցությունը: Եվ ամենավատն այն է, որ այն գրեթե անիմաստ էր դարձել: Պարզ ասած, նա աղավաղել էր այն: Ի՞նչ էինք մենք անելու այդ հերթական հարվածից հետո: Արդեն մեկ տարուց ավելի ժամանակ էր անցել:

Մենք չհանձնվեցինք: Գտանք ևս մեկ խմբագրի, և խմբագրված տարբերակն ընթերցելուց հետո նա համաձայնեց, որ սկզբնական ձեռագիրն աղավաղվել էր:

- Ջո՛ն և Լի՛զա, - ասաց այդ կինը, - որպես կանոն, չարժե շտկել անփութորեն կատարված աշխատանքը: Անտեսե՛ք այդ խմբագրին վճարված գումարի կորուստը և կրկին սկսեք:

Այդ կինն առաջարկեց, որ Լիզան խմբագրեր սկզբնական ձեռագիրը, իսկ հետո ուղարկեր իրեն:

Մենք հետևեցինք այդ խմբագրի խորհրդին, և Լիզան ժամեր անցկացրեց սկզբնական ձեռագրի վրա՝ բարելավելով այդ ուղերձի ընթեռնելիությունը: Այդ նոր խմբագիրը վերցրեց Լիզայի խմբագրած տար-

բերակը և գործի անցավ: Նա զարմանալի աշխատանք կատարեց, և մենք զգացինք, որ վերջապես փայլուն ձեռագիր ունենք:

Ես ներկայացրի այն երկու հայտնի հրատարակությունների: Նրանցից մեկն այդպես էլ չկապվեց մեզ հետ, բայց մյուսը պատասխանեց: Ինձ տեղեկացրին, որ իմ գիրքը չափազանց «քարոզչական» է, և քանի որ ես հայտնի ծառայող չէի, նրանք չէին հրատարակելու գիրքը: Ես փորձեցի ներկայացնել այն մի քանի ոչ այնքան հայտնի հրատարակիչների, բայց նրանցից ոչ մեկը չհետաքրքրվեց:

Կարո՞ղ եք պատկերացնել իմ հիասթափությունը: Ավելի քան մեկ տարի տևող աշխատանքից և ժամանակից հետո թվում էր՝ մենք փակուղում էինք: Ես շփոթված էի, սակայն չէի ցանկանում հանձնվել:

Ինքնահրատարակությունը գրեթե չլսված բան էր այդ ժամանակ: Ոչ մի հաջողված հեղինակ չէր զբաղվել դրանով, բայց իմ ընկերներից մեկն առաջարկեց ինձ փորձել դա: Մենք իմացանք, որ անհրաժեշտ էր 12.000 դոլար, որպեսզի տպագրեինք մի քանի հազար գիրք՝ չհաշված ձևավորման և շարվածքի ծախսերը, իսկ մենք արդեն վճարել էինք երկու խմբագիրների:

Դա շատ խոշոր գումար էր մեզ համար: «Մեսինջեր ինտերնեյշնլ»-ի ընդհանուր եկամուտը 1990 թվականին 40.000 դոլար էր: Մենք սկսում էինք մեր ծառայության երրորդ տարին, և մեր շահույթը չէր ավելացել առաջին տարվա համեմատ: Հիշում եմ, թե որքան էի ուրախացել ծառայության երկրորդ տարվա ավարտին, երբ գնեցինք մեր առաջին համակարգիչը, որն արժեր ընդամենը մի քանի հարյուր դոլար: Նման պայմաններում 12.000 դոլարն անհնարին էր թվում: Մեզ հրաշք էր պետք՝ այդ գումարը ստանալու համար:

Մենք ծանոթացանք մի կնոջ հետ, ով համակարգչային շարվածքի մասնագետ էր մի փոքր հրատարակչությունում, որը հրատարակում էր գրքեր բացօթյա սպորտային խաղերի մասին: Նա լսել էր, որ ես խոսում էի գրելու մասին, և մոտեցավ Լիզային՝ առաջարկելով անվճար ձևավորում և շարվածք կատարել մեր գրքի տպագրման համար: Մենք այնքա՜ն ուրախ էինք, որ ստիպված չէինք վճարել հազարավոր դոլարներ այդ ծառայության համար:

Աստված հրաշքով մատակարարեց մնացած գումարը, որն անհրաժեշտ էր ինքնահրատարակման համար, և մենք տպագրեցինք *«Հաղթանակ անապատում»* գրքի առաջին հինգ հազար օրինակը (որը ներկայումս վերանվանվել է և կոչվում է *«Աստվա՛ծ, որտե՞ղ ես»):* Մեր սկզբնական ոգևորությունը երկար չտևեց, քանի որ հասկացանք, որ չունեինք սպառման ուղիներ: Վաճառքի գործակալները և գրախանութ-

ները ոչինչ չգիտեին մեր մասին, և այդ օրերում նման ընկերությունները գնումներ էին կատարում միայն հայտնի հրատարակչություններից: Ոչ ոք չէր հետաքրքրվում ինքնահրատարակված գրքով:

Մենք սկսեցինք վաճառել մեր գիրքը լսաժապավենների հավաքածուների հետ՝ մեր վաճառքի սեղանիկի վրա, այնտեղ, որտեղ ծառայում էինք: Երբ ես քարոզում էի անապատի մասին, մենք վաճառում էինք բոլոր բերած օրինակները: Մարդկանց դուր էր գալիս այդ ուղերձը, բայց գրքի տարածումը սահմանափակվում էր դրանով:

Աղոթքի մեջ Աստված խոսեց ինձ հետ ևս մեկ գիրք գրելու մասին. այնպես որ, ես տրամադրեցի ևս ինը ամիս՝ գրելով *«Կանչողի ձայնը»* գիրքը: Կրկին, ոչ մի հրատարակիչ չհետաքրքրվեց դրանով, և կրկին, մենք ինքնահրատարակեցինք այն 1993 թվականին: Այժմ մեր վաճառքի սեղանիկին կար երկու գիրք, որոնք հասանելի չէին գրախանութներում:

## ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԲԱՑ ԴՈՒՌ

Մեկ տարի անց իմ ընկերներից մեկը զանգեց ինձ և հրավիրեց ճաշի.

- Ուզում եմ, որ ծանոթանաս իմ ընկերոջ հետ, - ասաց նա:

Ես ընդունեցի նրա հրավերը: Իմացա, որ նրա ընկերն այն հրատարակչության նոր տնօրենն է, որը մի քանի տարի առաջ մերժել էր ինձ: Ճաշկերույթը լավ անցավ, և նա հետաքրքրվեց Լիզայի և իմ գործունեությամբ:

- Ի՞նչ ուղերձ եք դուք հիմա քարոզում, - հարցրեց նա:

Ես սկսեցի կիսվել այն թեմայով, որն ուժգնորեն վառվում էր իմ սրտում: Այդ ուղերձը վիրավորանքները հաղթահարելու և մեզ ցավ պատճառած մարդկանց ներելու կարևորության մասին էր: Նա շարունակեց հարցեր տալ, և ես պատմեցի ավելին այդ ուղերձի մասին: Տասնհինգ րոպե անց նա ասաց.

- Ջո՛ն, գիտեք, մենք չենք կարող հրատարակել այս ուղերձը, քանի որ տպագրում ենք տարեկան միայն 22-24 գիրք՝ գրված հայտնի հեղինակների և ծառայողների կողմից:

Ես զարմացած նայեցի նրան և ասացի.

- Ես չէի փորձում համոզել ձեզ, որ հրատարակեք իմ ուղերձը. դուք ինքներդ հարցրիք, թե ինչի մասին եմ հիմա քարոզում:

Նա հասկացավ ինձ և ծիծաղեց.

- Իհա՛րկե, ճիշտ է. շարունակե՛ք:

Ես շարունակեցի կիսվել նրա հետ: Տասնհինգ րոպե անց նա կրկին ընդհատեց ինձ.

- Կարո՞ղ եք ուղարկել ինձ դրա ձեռագիրը երեք ամսվա ընթացքում:

Ես զարմացած պատասխանեցի.

- Կարծեմ՝ դուք ասացիք, որ չեք կարող հրատարակել իմ գիրքը:

- Ես մտափոխվեցի, - պատասխանեց նա: - Այս ուղերձը պետք է տարածվի աշխարհով մեկ:

Այդ հրատարակչությունը լույս ընծայեց *«Սատանայի խայծը»* գիրքը 1994 թվականի հունիսին: Ես անչափ ոգևորված էի: Աստված բացեց մի դուռ, որը ինքս չէի կարող բացել: Ես դրականորեն էի տրամադրված՝ կարծելով, որ այն անմիջապես հանրահայտ կդառնա և լավ կվաճառվի: Սակայն առաջին յոթ ամսում դա տեղի չունեցավ: Ամիսներ շարունակ ես վաճառքի հուսալքող թվեր էի ստանում հրատարակչից: Հավատում էի իմ սրտում, որ այդ ուղերձը նախատեսված էր բազմությունների համար, և նույնիսկ՝ ազգերի: Ես հրաժարվում էի հուսալքվել, բայց բոլոր փաստերը ցույց էին տալիս, որ ինձ հիասթափության ևս մեկ հարված էր սպասում:

Մի քանի ամիս անց ինձ զանգեց այդ հրատարակչի մարկետինգային թիմի անդամներից մեկը և ասաց.

- Ջո՛ն, մի միջազգային շոու ցանկանում է հյուրընկալել ձեզ իր հաղորդմանը 1995 թվականի հունվարի 16-ին: Նրանք կտրամադրեն ձեզ 20 րոպե, բայց հիմնականում ցանկանում են խոսել ձեր, Լիզայի, ձեր չորս որդիների և ձեր շրջիկ ծառայության մասին: Այնուամենայնիվ, նրանք թույլ կտան ձեզ հիշատակել ձեր գիրքը: Սա սկիզբ է, այսպես ասած, նման է դուռը մի փոքր բացելուն: Դուք ցանկանո՞ւմ եք, որ մենք ընդունենք այդ հրավերը ձեզ համար:

- Իհարկե՝ այո՛:

Ես գնացի այդ հաղորդմանը, և այն վարում էր մի շատ հայտնի ամուսնական զույգ: Ինձ ողջունելուց անմիջապես հետո ամուսինը վերցրեց *«Սատանայի խայծը»* գիրքը և հարցրեց.

- Ի՞նչն է սատանայի խայծը: Ինչի՞ մասին է այս ուղերձը:

Ես զարմացա, որ առաջին հերթին նա խոսեց գրքի մասին, ոչ թե իմ ընտանիքի, բայց անմիջապես սկսեցի ներկայացնել գրքի ուղերձը: Թվում էր՝ ամեն ինչ այդ ստուդիայում կանգ առավ: Ինձ պատվիրել էին ուշադրությամբ հետևել նկարահանման կազմակերպչին՝ մի կնոջ, որը ցուցանակներ էր պահելու իր ձեռքում՝ ցույց տալով հարցազրույցի մնացած ժամանակը: Նրանք շեշտեցին, որ ինձ հատկացվելու էր ընդամենը 20 րոպե: Կազմակերպիչը ոչ մի ցուցանակ չպահեց: Հաղորդավարները կլանված էին իմ խոսքով. նրանք չընդհատեցին, չմիջամտեցին և ընդհանրապես ոչինչ չասացին: Այդ զույգը և ես կորցրինք ժամանակի զգացողությունը և հետագայում պարզեցինք, որ ես խոսել էի 40 րոպե՝ առանց դադարի:

Հաղորդավարը խորապես ազդվել էր այդ ուղերձից: Նա անցկացնում էր ամենամեծ համաժողովներից մեկն ԱՄՆ-ում: Առաջին բաներից մեկը, ինչ նա արեց, ուղիղ եթերում ինձ հրավիրելն էր, որ քարոզեի այդ թեմայով իրենց համաժողովին:

Երկու օր անց հրատարակիչը տեղեկացրեց ինձ, որ *«Սատանայի խայծը»* գրքերը սպառվել են Միացյալ Նահանգների բոլոր գրախանութներում, և իրենք ևս 20.000 օրինակի նախապատվեր ունեն:

- Ջո՛ն, մենք երբեք նման բան չենք տեսել, - ասաց նա, - և այդ շոուի հաղորդավարներն ասացին, որ երբեք նման արձագանք չէին ստացել:

Իմ սրտում ես գիտեի, որ դա Աստծո ծրագիրն էր: Այդ դեպքը հաստատեց, որ այդ գրքի ուղերձն Աստծուց էր:

*«Սատանայի խայծն»* ի վերջո դարձավ միջազգային հանրաճանաչ գիրք, որը վերջին 25 տարում հայտնվել է տարբեր հանրաճանաչ գրքերի ցուցակներում: Այս գիրքը գրելու պահին *«Սատանայի խայծի»* տարածումը հասնում է երկու միլիոն օրինակի՝ տպագիր, էլեկտրոնային և աուդիո տարբերակներով: Հետաքրքիր է վերհիշել, թե ինչպես ամեն ինչ տեղի ունեցավ: Այն հրատարակչությունը, որը մերժել էր ինձ՝ որպես հեղինակի, այժմ *«Սատանայի խայծը»* համարում է իր բոլոր ժամանակների լավագույն վաճառվող գրքերից մեկը: Անկասկած, Աստված հումորի զգացում ունի:

Եթե ես չհնազանդվեի և չգրեի, այդ ուղերձը չէր զորացնի բազմաթիվ մարդկանց: Գրելը բազմապատկում բերեց այդ ուղերձին, քանի որ *«Սատանայի խայծը»* գիրքը հասնում է հոծ բազմությունների, որոնց ես երբեք չէի կարողանա անձամբ քարոզել:

Իրականում, այս աներևակայելի բազմապատկումը չսկսվեց այդ գիրքը գրելուց: Այն սկսվեց շատ ավելի վաղ, երբ մենք անցնում էինք մեր ընթացքը՝ հաղթահարելով բազում հարվածներ: Ես քրտնաջան աշխատում էի, որպեսզի ազատեի իմ առաջին հովվին ամեն տեսակի ճնշումներից, և որպեսզի բազմապատկեի մեր եկեղեցու ազդեցությունը՝ երիտասարդական հովվի պաշտոնում: Դա շարունակվեց «Մեսինջեր ինտերնեյշնլ»-ի միջոցով, երբ մենք աշխատում էինք ամեն օր՝ առավոտից երեկո, և երբ հնազանդվեցինք Աստծո պատվերին՝ գրքեր գրելու և հրատարակելու մասին:

Ես կարծում էի, որ «Սատանայի խայծը» ուղերձի բազմապատկման ընթացքը հաստատված էր, որ այն բնականորեն տարածվելու էր գրքերի վաճառքի միջոցով, նաև իմ կողմից քարոզվելով աշխարհով մեկ՝ համաժողովներում և եկեղեցիներում: Ես սխալվում էի. Աստված պատրաստվում էր վստահել ինձ ավելին:

## ՄՏՈՐԵՔ

1. Դուք ունե՞ք բազմապատկող մտածելակերպ, թե՞ ձեր մտածելակերպն ավելի շուտ պահպանող է: Դուք գերադասում եք հարմարավետ կյա՞նք՝ առանց առաջխաղացման, թե՞ շարունակ մարտահրավերներ եք նետում ինքներդ ձեզ:

2. Բազմապատկումը տեղի չի ունենա, եթե ծույլ և անգործ եք: Մենք պետք է ոչ միայն քրտնաջան աշխատենք, այլև խանդավառությամբ կատարենք մեր գործը: Դուք համարո՞ւմ եք ձեզ քրտնաջան աշխատող: Դուք խանդավառվա՞ծ եք ձեր աշխատանքով, թե՞ կանգ եք առել, երբ հասել եք հաջողության այնպիսի մակարդակի, որը համարել եք բավարար կամ ավելի բարձր մյուսների ձեռքբերումներից:

3. Երբ սկսեցի գրել, ես վերապրեցի հիասթափություն, մերժվածություն և վհատություն: Սակայն ճեղքումը եկավ այն ժամանակ, երբ ես հնազանդ մնացի այն բանին, ինչ Աստված պատվիրել էր ինձ: Ինչպե՞ս եք դուք աճում այն շնորհքով, որը ձեր կյանքում է: Արդյո՞ք իմ պատմությունը խրախուսում է ձեզ, որ առաջ գնաք՝ հաղթահարելով հիասթափությունը և հուսալքությունը:

*«Նրա օրհնությամբ նրանք մեծապես*
*բազմապատկվում են»:*

– Սաղմոս 107.38, ESV

# 7

# Մեծ բազմապատկում

Հաճախ Աստված օգտագործելու է հիասթափությունը և դժգոհությունը՝ որպես խթանիչ կա՛մ սկզբնական բազմապատկման, կա՛մ բազմապատկման հաջորդ փուլի համար: Մենք տեսնում ենք օրինակ այս մասին Աբրամի (Աբրահամի) կյանքում: Աստված հայտնվեց նրան, երբ նա 75 տարեկան էր, և տեսիլքով խոսեց նրա հետ.

> «Մի՛ վախեցիր, Աբրա՛մ, որովհետև Ես կպաշտպանեմ քեզ, և *քո վարձատրությունը մեծ կլինի»* (Ծննդոց 15.1, NLT):

Ուսումնասիրենք այս խոսքը: Ամենակարող Աստված ստեղծել է այս աշխարհը, և այն լիովին պատկանում է Նրան՝ իր ահռելի պաշարներով: Նա մշտապես եղել է, և Նրա գոյությունը երբեք չի ավարտվի: Ոչ մի էակ չի կարող նույնիսկ աննշան կերպով համեմատվել Նրա մեծության հետ: Այնպես չէ, որ Նա կյանք ունի. Նա *Ինքն է* կյանքը: Ամբողջ մնայուն գիտելիքը, իմաստությունը, գանձերը և հաճույքները Նրանում են: Չկա ոչ մի արժեքավոր բան՝ Նրանից դուրս:

Եվ այս զարմանալի էակը հայտնում է, որ Ինքը *կպաշտպանի* Աբրամին և *մեծ վարձատրություն* կտա նրան: Եկեք խոսենք և՛ *պաշտպանության*, և՛ *մեծ վարձատրության* մասին:

Սկսենք *պաշտպանությունից:* Պատկերացրեք, որ Միացյալ Նահանգների նախագահը հատկացներ երկրի բոլոր զինված ուժերը՝ ձեզ *պաշտպանելու* համար: Բոլոր գեներալները տեղեկացնում են իրենց ենթակա սպաներին, որ դուք գերակա անձ եք, և անհրաժեշտ է անել ամեն ինչ՝ ձեր անվտանգությունն ապահովելու համար: Անհրաժեշտության դեպքում նրանք ձեր շուրջը կտեղակայեն բոլոր զինվորներին՝ իրենց զարգացած զինատեսակների ամբողջ բազմազանությամբ:

Սա գրեթե աներևակայելի է, բայց եթե նման բան տեղի ունենար, համոզված եմ, որ դուք շատ ապահով և անվտանգ կզգայիք ձեզ: Բայց սա նսեմանում է այն բանի համեմատ, որ Ամենակարող Աստված է ասում. «Ես *կպաշտպանեմ* քեզ»:

Իսկ *մեծ վարձատրությո՞ւնը:* Եթե ձեր հարևանն ասեր. «Ես *մեծ* վարձատրություն եմ տալու քեզ», նրա խոսքերը շատ բարի և առատաբուխ կլինեին, սակայն հնարավոր է, որ նա շատ բան չունենար ձեզ տալու համար: Եթե Միացյալ Նահանգների ամենահարուստ մարդն ասեր նույնը, դուք շատ ավելի կոգեշնչվեիք: Բայց այս երկու տարբերակն էլ չի նկարագրում այն, ինչ գրված է այստեղ: Նա, Ում պատկանում է ամեն ինչ այս մոլորակի վրա և տիեզերքում, վարձատրությո՛ւն է առաջարկում ձեզ: Անկեղծ ասած, այս խոստման անսահմանությունը դժվար է պատկերացնել: Սակայն մենք դեռ լիովին չենք ներկայացրել այս խոսքը:

Մյուս աներևակայելի իրողությունն այն է, որ Արարիչը չուղարկեց ավետաբերի. Նա Ինքը եկավ: Ամենակարող Աստված տվեց այս աներևակայելի խոստումները երես առ երես: Պատկերացնո՞ւմ եք դրա վեհությունը: Ինչպե՞ս մենք կարձագանքեինք դրան: Մի՞թե բառերը կարող էին արտահայտել այն ոգևորությունը, ուրախությունը, երջանկությունը և երկյուղածությունը, որը յուրաքանչյուրս կզգար: Բայց Աբրամի արձագանքը նույնիսկ մոտ չէր այդ զգացմունքներին: Նա այնքան էլ ոգեշնչված չէր. իրականում, նա հիասթափվա՛ծ էր:

> «Բայց Աբրամը պատասխանեց. «Ո՛վ Գերիշխան Տեր, ի՞նչ օգուտ ինձ Քո բոլոր օրհնություններից, եթե ես նույնիսկ մեկ որդի չունեմ» (Ծննդոց 15.2, NLT):

Դուք զգացի՞ք դժգոհությունը նրա պատասխանի մեջ: Զարմանալի՛ է: Բայց հնարավո՞ր է, որ Աբրամի խանդավառության պակասն իրականում դրական երևույթ էր: Ի՞նչ կլիներ, եթե Աբրամն ասեր. «Զարմանալի՛ է: Պետք է տոնե՛լ սա». արդյո՞ք այս պատմությունն այլ կերպ կավարտվեր: Կարելի է տալ ավելի դիպուկ հարց. Աստված կհայտնվե՞ր Աբրամին, եթե նրա արձագանքն այդպիսին լիներ: Չեմ կարծում, և թույլ տվեք բացատրել իմ պատասխանը:

Մի պահ թողնենք Աբրամի պատմությունը, որպեսզի պարզաբանեմ, թե ինչ նկատի ունեմ: Շատ տարիներ անց, երբ իսրայելցիները թափառում էին անապատում, նրանց դժգոհությունը բխում էր անձնական անհարմարավետությունից և, ցավոք, այն զրկեց նրանց իրենց կոչումից: Այնուամենայնիվ, Պողոս առաքյալը ներկայացրեց իր աստվածահաճո վերաբերմունքը՝ գրելով.

> «Ես սովորել եմ, թե ինչպես գոհ լինել, ինչ էլ որ ունենամ: Ես գիտեմ, թե ինչպես ապրել գրեթե ոչնչով և ամեն ինչով: Ես սովորել եմ ամեն իրավիճակում ապրելու գաղտնիքը՝ թե՛ լիքը ստամոքսով, թե՛ դատարկ, առատությամբ էլ, սակավությամբ էլ» (Փիլիպեցիների 4.11,12, NLT):

Ե՛վ Պողոսի, և՛ Աբրամի մեջ Աստված գտավ մարդկանց, որոնք պատրաստ էին նեղություններ կրել և մտածել ոչ միայն իրենց մասին: Նրանց դժգոհությունը չէր բխում անձնական ձգտումներից, այլ ավելի շուտ կենտրոնացած էր այլ մարդկանց վրա:

Հիշե՛ք հետևյալ սկզբունքը. եթե դժգոհության պատճառն իմ անձնական կարիքն է, այն հաճելի չէ Աստծուն: Սակայն եթե դժգոհության պատճառն այլ մարդկանց կարիքները և Աստծո թագավորությունը կառուցելն է, այն հաճելի է Աստծուն: Աբրամի հիասթափությունն այսպիսին էր, և ինչպե՞ս Աստված վարվեց նրա հետ: Աստված լայնացրեց նրա տեսիլքը: Նա ցույց տվեց նրան երկնքի աստղերը և ծովափի ավազը՝ խոստանալով, որ նրա վարձատրությունը կազդեր ավելի շատ մարդկանց վրա, քան ինքը կարող էր հաշվել: Աբրամի վերաբերմունքը դրդեց Աստծուն հայտարարել. «Եվ Ես Իմ ու քո մեջտեղը Իմ ուխտը կդնեմ, և *քեզ խիստ շատ կշատացնեմ»* (Ծննդոց 17.2):

Ի՞նչ կլիներ, եթե Աբրամը գոհ լիներ այն բանով, որ իր կյանքը զարմանալիորեն օրհնված էր: Արդյո՞ք 75 տարեկան հասակում նա կունենար թեկուզ մեկ պատճառ հավատալու, որ երեխա էր ունենալու: *Նրա դժգոհությունը դարձավ խթանիչ՝ բազմապատկման համար:*

Ես սովորել եմ, որ դժգոհությունը չպետք է անտեսել. այն ցատկահարթակ է դեպի ավելի մեծ արդյունավետություն: Լավոդիկեի եկեղեցին զուրկ էր այս հատկանիշից: Հիսուսը խստորեն հանդիմանեց նրանց իրենց վերաբերմունքի համար, որը հետևյալն էր. «Ես... ոչ մի բանի կարոտ չեմ» (Հայտնություն 3.17): Նրանք չէին հիասթափվում, երբ մարդիկ չէին ընդունում Ավետարանը, քանի որ նրանք եսակենտրոն էին և հարմարավետ կյանք էին վարում իրենց առատության մեջ: Որպես արդյունք, նրանք չէին ձգտում բազմապատկման:

Այսպիսի գայթակղության հետ էր բախվել Սթենը: Ես նույնպես ժամանակ առ ժամանակ պայքարում եմ դրա հետ և ստիպված եմ լինում հեռացնել դա ինձնից: Իրականում, գրեթե բոլորս կամ շատերս ենք պայքարում դրա հետ:

Որքան ավելի եմ ծառայում Աստծուն, այնքան ավելի եմ հասկանում, որ ճշմարիտ հավատացյալի իրական պտուղներից մեկը այլ մարդկանց կյանքում Աստծո արքայությունը բերելու խորը ձգտումն

է: Մեր փրկության պահին մենք փոխվում ենք՝ դառնալով բոլորովին այլ անձնավորություն: Վերածնվելով՝ մարդկանց ծառայելու ուժգին ձգտում ենք ունենում: Հիսուսը պնդում է.

> *«Հագնված* եղեք *ծառայության համար* և *վառ* պահեք ձեր *լամպերը»* (Ղուկաս 12.35):

Այս պատվերը մեր Տիրոջից ցույց է տալիս այն դիրքորոշումը, որը հավատացյալները պետք է պահպանեն. *ծառայություն* և ծառայելու *ձգտում:* Ես օգտագործեցի *«պահպանել»* բառը, քանի որ այն արդեն մեր նոր բնության մասն է: Հաճախ այն անտեսվում է, քանի որ մենք վախենում ենք ընկնել «գործերով փրկվելու» մեջ՝ ի հակադրություն այն բանի, որ փրկությունը ձրիաբար տրվող պարգև է: Այնուամենայնիվ, ծառայելը բոլորովին կապ չունի գործերով փրկվելու հետ. այն մեր հոգուն հատուկ ցանկություն է: Ինչո՞ւ ենք մենք անտեսում և ճնշում մեր նոր կյանքի այս լուրջ բնագավառը: Հնարավո՞ր է, որ քրիստոնեությունը վերաիմաստավորելու ժամանակակից ձգտումն ավելի սպառողական է դարձնում մեր հավատքը, և դրանով մենք խրախուսում ենք ծուլությունը, որը հատուկ է մարդու անկում ապրած բնությանը:

Ինչո՞ւ Հիսուսն ասաց. «Հագնված եղեք ծառայության համար»: Ինչո՞ւ է Նա համեմատում հագուստը ծառայության հետ: Հայտնություն գիրքն օգնում է մեզ պատասխանել այս հարցին.

> ««Եկեք ուրախանանք և ցնծանք, և եկեք պատիվ տանք Նրան: Որովհետև ժամանակը եկել է Գառան հարսանեկան խնջույքի համար, և Նրա հարսնացուն *պատրաստել է իրեն:* Նրան տրվել է նրբագույն մաքուր սպիտակ բեհեզ՝ հագնելու համար»: Որովհետև նուրբ բեհեզը խորհրդանշում է Աստծո սուրբ ժողովրդի *բարի գործերը»* (Հայտնություն 19.7,8, NLT):

Առաջինը՝ մենք տեսնում ենք, որ ոչ թե Աստված է պատրաստել հարսնացուին, այլ հարսնացուն է պատրաստել իրեն: Երկրորդն այն է, թե ինչպես է նա պատրաստել իրեն: Յուրաքանչյուր հարսնացու երկար ժամանակ է հատկացնում՝ ընտրելու համար իր հարսանեկան զգեստը: Դա նրա գործերի ցուցակի ամենակարևոր կետերից մեկն է այդ նշանավոր օրվա համար: Մեր Արևմուտքի մշակույթում հարսնացուն բավականին ժամանակ է անցկացնում իր զգեստը *փնտրելու և ձեռք բերելու* համար: Աստծո թագավորության մեջ մենք՝ որպես Քրիստոսի հարսնացու, բավականին ժամանակ ենք տրամադրում մեր հանդերձը *պատրաստելուն:* Մեր հանդերձը նուրբ բեհեզից է, որը, համաձայն վե-

րը նշված աստվածաշնչյան հատվածի, մեր ծառայությունն է՝ Աստծո թագավորությունը կառուցելու համար: Նշանակում է՝ ծառայելը մեր հոգևոր ԴՆԹ-ի մեջ է: Հիսուսն ասում է. «Ինչպես Իմ Հայրն Ինձ ուղարկեց, Ես էլ ձեզ եմ ուղարկում» (Հովհաննես 20.21): Նա եկավ ծառայելու համար (Մարկոս 10.45), և մեր առաքելությունը նույնն է: Նա նույնպես պատասխանում է այն հարցին, թե ինչու է կարևոր ծառայելը. «Իմ կերակուրը նա է, որ Ինձ ուղարկողի կամքն անեմ և Նրա գործը կատարեմ» (Հովհաննես 4.34):

Մեր մարմինը երկար չի դիմանա առանց կերակուրի: Նմանապես, հավատացյալը, որը ծառայում է Աստծո թագավորությունը կառուցելու համար, երկար չի դիմանա առանց կերակուրի և, ի վերջո, կնահանջի: Եվ Հիսուսը շարունակում է խոսել այս մասին Ղուկաս 12-րդ գլխում: Սա է պատճառը, որ այս անկում ապրած աշխարհի ուժերը կանեն ամեն ինչ, որպեսզի մենք հարմարավետ և ինքնագոհ կյանք վարենք, փոխարենը ընդունենք այն դժգոհությունը, որն առաջնորդում է բազմապատկման:

Սիրելի՛ ընթերցող, մի՛ անտեսեք այն դժգոհությունը, որը բարձրանում է ձեր ներսում՝ ձեր ներկա ազդեցության մակարդակի պատճառով: Ամենից հաճախ Աստված է այդ կերպով բորբոքում ձեր հավատքը, որպեսզի հավատաք աստվածային բազմապատկմանը:

## ԻՄ ԴԺԳՈՀՈՒԹՅՈՒՆԸ

Այն բանից հետո, երբ «Սատանայի խայծը» գիրքը սկսեց տարածվել ոչ միայն Միացյալ Նահանգներում, այլև այլ երկրներում, դուք կարող եք մտածել, որ ես գոհացա: Սակայն դա տեղի չունեցավ: Ես սկսեցի պայքարել դժգոհության հետ՝ այլ մակարդակի վրա:

Այժմ ես քարոզում էի շատ ավելի մեծ եկեղեցիներում և համաժողովներում, բայց իմ հիասթափությունը բխում էր այն փաստից, որ ես չէի կարողանում փոխանցել մարդկանց իմ ամբողջական ուղերձը մեկ ծառայության ընթացքում: Ես տրամադրում եմ գրեթե 400 ժամ՝ մեկ գիրք գրելու համար, և այդ ընթացքում Սուրբ Հոգին այնքա՜ն բան է հայտնում ինձ: Այս ճշմարտությունները հայտնվում են այն մարդկանց, որոնց Աստված սիրում է՝ նրանց զորացնելու, ազատություն տալու և Իրեն մոտեցնելու համար:

Գրեթե բոլոր եկեղեցիներում և համաժողովներում խոսքի համար հատկացված ժամանակը 35-45 րոպե է: Այնպես որ, քարոզելով «Սատանայի խայծը» գրքի մասին, ես կարող էի ներկայացնել մեկ, լավագույն դեպքում՝ մեկուկես գլխի նյութ: Նշանակում է՝ այդ ուղերձի 90

տոկոսը չէր հասնի մարդկանց, եթե նրանք չգնեին և չկարդային գիրքը: Իսկ դա անելու էր միայն ներկաների մոտավորապես մեկ հինգերորդը:

Այդ հիասթափությունից դրդված, այդ գրքի հրատարակումից չորս կամ հինգ տարի անց մի գաղափար ծնվեց. ինչո՞ւ չստեղծել դասընթաց այդ գրքի հիման վրա: Ես կարող էի 20-30 րոպեանոց ուսումնական տեսանյութեր ձայնագրել և անդրադառնալ յուրաքանչյուր գլխի առանցքային ճշմարտություններին: Եվ մարդիկ՝ թե՛ փոքր խմբերում, թե՛ անհատապես, կարող էին ամբողջությամբ յուրացնել այդ ուղերձը՝ ոչ միայն ընթերցելով այն, այլև դիտելով և լսելով: Դա է՛լ ավելի արդյունավետ և հասանելի կդարձներ այդ ուղերձը: Մենք կարող էինք ստեղծել քննարկման հարցեր անհատների և փոքր խմբերի համար, ինչը հնարավորություն կտար Սուրբ Հոգուն խորապես հպվել մարդկանց և ավելի կիրառելի դարձնել այդ ուղերձը յուրաքանչյուրի համար:

Ես քննարկեցի դա մեր թիմի հետ: Մեր թիմի անդամներից մեկն առաջարկեց փնտրել որևէ կրթական ընկերություն, որը կստեղծեր սերտողության ձեռնարկ կամ աշխատանքային գիրք, ինչպես նաև ձեռնարկ փոքր խմբեր վարողների համար, որոնք լրացնելու էին այդ տասներկու տեսանյութերը: Այդ դասընթացը կարող էր օգտագործվել տարբեր պայմաններում:

Մենք գտանք այդպիսի նյութեր պատրաստող մի գերազանց ընկերություն, որը կատարում էր այդ աշխատանքն ավելի քան 2.500 հաճախորդների համար, որոնց թվում էր Միացյալ Նահանգների խոշորագույն ընկերություններից մի քանիսը: Հենց սկզբից մենք խնդրեցինք հետևյալը. «Ո՛չ մի թերացում աշխատանքի մեջ, ո՛չ մի փոխզիջում որակի հարցում, նաև խիստ նորարարական մոտեցում: Մեր նպատակն է՝ տարիներով առաջ անցնել ներկա չափանիշներից և՛ ոճով, և՛ մեթոդներով»: Որպես կողմնակի նշում, ես արտոնություն եմ ունեցել աստվածաշնչյան ուսումնասիրություն անցկացնելու մեր ԱՄՆ նախագահներից մեկի աշխատակազմի համար: Մտնելով Սպիտակ տուն՝ Արևմտյան թևից, ես ամենուր գերազանցություն էի տեսնում: Այդ օրը մտածեցի. *«Այս ամենը ներկայացնում է Միացյալ Նահանգների նախագահին. մենք «Մեսինջեր ինտերնեյշնլ»-ում ներկայացնում ենք տիեզերքի Թագավորին»:* Թեև մեր ծառայությունը շեշտադրել է գերազանցությունը հենց սկզբից, այդ փորձառությունից հետո մենք է՛լ ավելի վճռականորեն տրամադրվեցինք երբեք փոխզիջման չգնալ որակի հարցում և չունենալ ոչ մի թերացում մեր գործում:

Հենց որ մեր ամբողջական դասընթացը պատրաստ եղավ, մեր թիմի անդամներից երկուսի պարտականությունները վերաբաշխվեցին.

նրանք սկսեցին լրիվ դրույքով հեռախոսազանգեր կատարել (որը դեռ առաջնորդների հետ կապ հաստատելու լավագույն միջոցն էր վաղ 2000-ականներին): Նրանց հանձնարարվել էր կապ հաստատել յուրաքանչյուր եկեղեցու հետ, որտեղ մենք հյուրընկալվել էինք վերջին տասը տարում, և տեղեկացնել առաջնորդներին մեր դասընթացի մասին: Մեր սրտի ցանկությունն էր կանգնել հովիվների կողքին և օգնել աշակերտել իրենց եկեղեցու անդամներին՝ արդյունքում զորացնելով տեղական եկեղեցին: Այդ ժամանակ նման դասընթացներն այդքան էլ շատ չէին. այդ գաղափարը դեռ տարածված չէր:

Մենք այնքա՜ն ուրախացանք, երբ եկեղեցիների առաջնորդները հավանություն տվեցին մեր գաղափարին. նրանց արձագանքն աներևակայելի՜ էր: Կարճ ժամանակ անց եկեղեցիները սկսեցին գրել մեզ, որ իրենց հաճախելիությունն ավելանում է թե՛ փոքր խմբերում, թե՛ գլխավոր հավաքույթներին: Սկզբում մենք մտածում էինք, որ միայն հարյուրից պակաս անդամներ ունեցող եկեղեցիներն էին օգտագործելու այդ դասընթացն իրենց ծառայությունների ժամանակ: Այնուամենայնիվ, նույնիսկ մի քանի եկեղեցիներ, որոնց անդամների թիվը հասնում էր մի քանի հազարի, օգտագործում էին մեր տեսանյութերն իրենց կիրակնօրյա ծառայությունների ժամանակ: Եվ նրանք նույնպես աճում էին: Առաջնորդները գրում էին մեզ, որ իրենց եկեղեցիների անդամները խնդրում էին ցույց չտալ հաջորդ դասը, քանի որ շաբաթավերջին տոն էր լինում, և նրանք տանը չէին լինելու և ներկա չէին գտնվելու ծառայությանը: Մեզ գրում էին եկեղեցիներ, որոնք կրկնապատկվել էին և նույնիսկ՝ եռապատկվել:

Հովիվները պատմում էին իրենց հովիվ ընկերներին, թե ինչ էր տեղի ունենում իրենց եկեղեցիներում և փոքր խմբերում: Եվ արդեն հովիվներն էին զանգում մեզ՝ ցանկանալով ձեռք բերել մեր դասընթացը: Մի քանի տարվա ընթացքում մեզ միացան հազարավոր եկեղեցիներ՝ ավելի քան քսան հազար եկեղեցի Միացյալ Նահանգներում և ավելի քան հազար եկեղեցի Ավստրալիայում: Մեր եկեղեցական հարաբերությունների բաժինը մեծացավ՝ հասնելով յոթ լրիվ դրույքով աշխատող թիմի անդամի: Մեր գրասենյակը շարունակ վկայություններ էր ստանում փոխված կյանքերի, ընտանիքների և եկեղեցիների մասին:

Հաջորդ մի քանի տարիների ընթացքում մենք պատրաստեցինք դասընթացներ յուրաքանչյուր գրքի համար, որը մեր ծառայությունը թողարկել էր: Տասներկու տարվա ընթացքում մենք արդեն ունեինք ավելի քան տասը տարբեր դասընթացներ, որոնք օգտագործվում էին եկեղեցիներում՝ ամբողջ Միացյալ Նահանգներով և Ավստրալիայով:

Այս բազմապատկումն ուներ մի կողմ, որը մենք չէինք նախատեսել, բայց որի մասին իմացանք հետագայում: Անթիվ անհատներ, որոնք երբեք չէին գնել իմ գրքերից ոչ մեկը և չէին լսել իմ քարոզները, այժմ ստանում էին այդ ուղերձները: Նրանք գտնվում էին այն եկեղեցիներում կամ փոքր խմբերում, որոնց առաջնորդները որոշել էին դասավանդել նրանց մեր նյութերով:

## «ԴՈՒ ՀԱՎԱՏԱՐԻՄ ԵՂԱՐ»

Իհարկե, մենք լցված էինք գոհությամբ: Վաճառված գրքերի քանակը հասնում էր միլիոնների, իսկ դասընթացներինը՝ հարյուր հազարների: Բայց ես դեռ պայքարում էի դժգոհության հետ: Ես գիտեի՝ այդ ուղերձները Քրիստոսի մարմնի համար էին: Թեև դրանք արդեն իսկ մեծ պտուղ էին բերում, դեռևս կային բազմաթիվ հավատացյալներ, որոնց անհրաժեշտ էին դրանցում գտնվող ճշմարտությունները:

Ես խնդրում էի Աստծուն արտոնել ինձ, որ նվիրեի ավելի շատ գրքեր, քան մենք վաճառում էինք: Ես գիտեի, որ կային հովիվներ, առաջնորդներ և հավատացյալներ աշխարհով մեկ, որոնք չունեին փող և նույնիսկ՝ հնարավորություն, որպեսզի գրքեր գնեին: Կային միլիոնավոր ընդհատակյա եկեղեցիներ, որոնց երկրներում քրիստոնեական գրքերի վաճառքն արգելված էր: Կային բազմաթիվ հավատացյալներ այլ երկրներում, որոնք չունեին միջոցներ՝ գրքեր ներմուծելու համար:

Ինչպե՞ս մենք կարող էինք օգնել նրանց:

Ես գիտեի, թե որքան մեծ էր այդ կարիքը, սակայն թվում էր՝ այդ հովիվների և առաջնորդների հետ կապ հաստատելն անհնար էր: Այնուամենայնիվ, մենք պետք է ինչ-որ բան ձեռնարկեինք: Մենք սկսեցինք արձագանքել այն կարիքներին, որոնց հանդիպում էինք: Մենք ասացինք մեր միջազգային տնօրենին, որ եթե լինեին առաջնորդներ զարգացող երկրներից կամ այն երկրներից, որտեղ քրիստոնյաները հալածանքների են ենթարկվում (որոնք գրքեր կուզեին մեզնից), մենք կուղարկեինք նրանց անհրաժեշտ ամեն ինչ՝ որպես նվեր, կամ կկազմակերպեինք տպագրությունը նրանց երկրում և կվճարեինք դրա համար:

Իմ հիասթափությունն ավելանում էր, քանի որ մենք միայն աննշան աշխատանք էինք կատարում՝ նվիրելով տարեկան տասից քսան հազար գիրք: Այդ թիվը նման էր դույլի մեջ եղած կաթիլի՝ այն աշակերտական նյութերի քանակի համեմատ, որի կարիքը կար, սակայն մենք շարունակում էինք անել դա ամեն տարի՝ օգտագործելով մեզ ընձեռվող հնարավորությունները:

Դրանից հետո եկավ 2010 թվականի ուշագրավ օրը (մայիսի 31-ը):

Լիզան Անգլիայում էր. նա հրավիրված էր ծառայելու մի կանանց համաժողովում: Ես նոր էի գոլֆի մի ռաունդ ավարտել: Վերցրի Աստվածաշունչս և իջա մեր նկուղը, քանի որ Դանիելի գիրքը կարդալու մղում զգացի: Երբ կարդում էի երկրորդ գլուխը, հանկարծ Աստծո Հոգին լցրեց մեր նկուղը, և ես լսեցի այս խոսքերն իմ սրտում. «Որդի՛ս, դու *հավատարիմ* եղար անգլախոս աշխարհում: Այժմ Ես ցանկանում եմ, որ հասցնես քո ուղերձներն աշխարհով մեկ գտնվող յուրաքանչյուր հովվի և առաջնորդի»:

Աստծո ներկայությունը մնաց մի քանի րոպե: Երկյուղած և զարմացած՝ ես անշարժ մնացի այնտեղ, մինչև որ այն վերցվեց: Այդ օրը հասկացա, որ փոփոխություն էր տեղի ունեցել: Մենք այլևս ուղղակի չէինք օգտագործելու մեզ ընձեռվող հնարավորությունները. այժմ մենք աստվածային հանձնարարական ունեինք: Մենք նպատակաուղղված փնտրելու էինք հովիվների և առաջնորդների, որոնք կարիքի մեջ էին՝ անկախ նրանց ազգությունից, լեզվից և ֆինանսական կարողությունից:

Սուրբ Հոգու հետ այդ հանդիպման ընթացքում ակնառու էր այն, որ Նա օգտագործեց *«հավատարիմ»* բառը: Այդ ժամանակ ես չէի կապակցում «հավատարիմ» բառը բազմապատկման հետ. այս ճշմարտությունը դեռ չէր հայտնվել ինձ: Եթե ինձ հարցնեին, թե որն էր «հավատարիմ» բառի աստվածաշնչյան սահմանումը, *«բազմապատկում»* բառը ոչ մի դեպքում չէր լինի իմ պատասխանի մեջ: Այն, ինչ Սուրբ Հոգին ասաց ինձ մեր տան նկուղում, բացեց իմ սիրտն այս ճշմարտության համար: Ես գիտեի, որ լսել էի Աստծուց, բայց դեռ վիճարկում էի, թե ինչպես մեր ծառայությունը կարող էր նման վիթխարի առաջադրանք կատարել:

Մենք ունեինք մի վաղեմի ընկեր՝ Ռոբ Բիրկբեքը, որն աշխատում էր մի հայտնի ավետարանչի խոշոր միջազգային ծառայության մեջ: Ռոբն այդ ծառայության ավագ տնօրենն էր, և նրա պարտականությունների թվում էր տպագրել և տարածել այդ ավետարանչի գրքերը: Այնպես որ, Ռոբը մեծ կապեր ուներ հրատարակիչների և հովիվների հետ աշխարհի գրեթե յուրաքանչյուր երկրում: Վերջերս Ռոբը կորցրել էր իր աշխատանքը, քանի որ այդ ավետարանիչը թոշակի էր գնացել: Լիզան և ես առաջարկեցինք Ռոբին և նրա կնոջը՝ Վանեսային, միանալ մեր թիմին, քանի որ մեր ծառայության միջազգային տնօրենը հեռացել էր աշխատանքից: Մեզնից ոչ ոք չէր պատկերացնում այդ համագործակցության հետագա ազդեցությունը:

2011 թվականի հունվարն էր: Ռոբը և Վանեսան ներկա էին մեր ծառայության բաժինների ղեկավարների ժողովին մեր խորհրդակցություն-

ների սենյակում: Այդ ժողովի ընթացքում ես հարցրի.

- Քանի՞ գիրք ենք մենք նվիրել օտարերկրյա հովիվներին և առաջնորդներին անցած տարի:

Մեր թիմի անդամներից մեկը նայեց տարեվերջյան զեկույցը և պատասխանեց.

- Երեսունհինգ հազար գիրք:

Նա մտածեց, որ գոհացնող արձագանք կստանար, բայց կատարվեց ճիշտ հակառակը: Իմ հիասթափությունը պոռթկաց.

- Որքա՜ն աննշան թիվ:

Եվ հանկարծ իմ բերանից թռավ հետևյալը.

- Այս տարի մենք նվիրելու ենք 250.000 գիրք զարգացող երկրներում ապրող և հալածանք կրող հովիվներին և առաջնորդներին:

Ամբողջ սենյակում քար լռություն տիրեց: Հետագայում Լիզան ասաց ինձ, որ այդ պահին նա զգացել էր իր ստամոքսից վեր բարձրացող կերակուրի համը (նա անհավատալի հումորի զգացում ունի):

Մեր Գլխավոր գործառնական տնօրենը, որը մեր ավագ որդին է, առաջինն էր, որ խոսեց:

- Հայրի՛կ, - ասաց Էդիսոնը, - դու համոզվա՞ծ ես, որ ուզում ես այդքան շատ գիրք նվիրել:

- Այո՛, մենք կանե՛նք դա, - համոզվածությամբ պատասխանեցի:

Նա շարունակեց հարցեր տալ ինձ հաջորդ 20 րոպեների ընթացքում: Մենք խոսում էինք նրանց ներկայությամբ, ովքեր լուռ էին: Նա շատ հարգալից էր, բայց անդադար պնդում էր, որ իմ հրահանգը չափազանց ծանր էր: Վերջապես նա վհատված ասաց.

- Ես պարզապես չեմ ցանկանում անիրատեսական նպատակ տալ մեր թիմին:

Ես այլևս չէի պատրաստվում հանդուրժել դա: Եվ բռունցքով հարվածեցի սեղանին ու խստորեն հայտարարեցի.

- Ես ասացի՝ մենք բաժանելու ենք 250.000 գիրք այս տարի:

Սենյակում լռություն տիրեց: Շուտով ժողովն ավարտվեց, և բոլորս հեռացանք՝ անախորժ զգացումով:

Հաջորդ առավոտյան, երբ մենակ էինք, որդիս ասաց.

- Ես տհաճություն զգացի այն պատճառով, թե ինչպես դու խոսեցիր ինձ հետ:

Մենք արդեն հանդարտվել էինք և ցանկանում էինք հաշտվել:

- Որդի՛ս, դու գիտես, որ ես սիրում եմ մեր թիմի ներդրումը գործի մեջ, - պատասխանեցի: - Սովորաբար ես կշռադատում եմ յուրաքանչ-

յուրի առաջարկները՝ մինչև վերջնական որոշում կայացնելը: Սակայն երեկ ամեն ինչ այլ էր: Ես չհարցրի ձեզ. «Կարծում եք՝ մենք պե՞տք է նվիրենք 250.000 գիրք», կամ «Ձեր կարծիքով, քանի՞ գիրք պետք է նվիրենք հաջորդ տարի»: Ես տեղեկացրի ձեզ, որ մենք անելու ենք դա: Բայց դու քսան րոպե շարունակ վիճեցիր ինձ հետ:

Նա ընդունեց դա և համաձայնեց ինձ հետ, բայց ևս մեկ բան խնդրեց ինձնից, այս անգամ՝ խաղաղ կերպով.

- Հայրի՛կ, կարո՞ղ ես աղոթել սրա համար 24 ժամ: Եթե դրանից հետո դու դեռ համոզված լինես, որ մենք պետք է անենք դա, մեր թիմը կգործադրի բոլոր ջանքերը՝ դա կատարելու համար:

- Այո՛, ես կանեմ դա, - պատասխանեցի:

Անկեղծ ասած, ես շատ չաղոթեցի դրա համար: Կարճ աղոթք արեցի՝ իմ խոստումը պահելու համար, բայց նկուղում ունեցած իմ հանդիպումից հետո արդեն գիտեի, որ մենք պետք է անեինք դա:

Միգուցե հարցնեք. «Դուք զգո՞ւմ էիք անհանգստություն»: Կարող եք չկասկածել: Ես գրեթե սարսափում էի: Ես թույլ չէի տալիս ինձ շարունակ մտածել, թե որտեղից էին գալու ֆինանսները: Եթե թույլ տայի դա, շուտով կհամաձայնեի որդուս հետ և կիասցնեի գրքերի թիվն ավելի «ողջամիտ» թվի: Մեկ քառորդ միլիոն գիրքն անհնարին նպատակ էր թվում, բայց ես վճռել էի հետևել այն հրահանգին, որը ստացել էի: Ես գիտեի, որ կա՛մ մենք կստանայինք ստեղծարար ռազմավարություն, կա՛մ հրաշքով մատակարարում կգար: Որտեղի՞ց իմանայի, որ երկուսն էլ տեղի կունենար:

Երեք շաբաթ անց մի հյուրանոցում էի՝ Ֆլորիդայում, և նոր գիրք էի գրում: Մեր թիմը գիտի, որ չի կարելի զանգել ինձ առավոտյան ժամերին, քանի որ այդ ժամանակ ես գրում եմ. ինձ համար դա լավագույն ժամանակն է, երբ կարողանում եմ կենտրոնանալ: Իմ բջջային հեռախոսը զանգեց, և ես տեսա, որ զանգը մեր գրասենյակից է: Պատասխանեցի, քանի որ գիտեի, որ պետք է ինչ-որ հրատապ կամ կարևոր բան տեղի ունեցած լիներ: Ես զգացի, որ գրասենյակում ուրախության մթնոլորտ էր: Նույն մարդիկ, որոնք մասնակցում էին այդ լարված, առերեսողական հանդիպմանը երեք շաբաթ առաջ, այն սենյակում էին, որտեղից ես զանգ ստացա, և կարծես ուրախանում և ծիծաղում էին ինչ-որ բանի պատճառով:

Էդիսոնն ասաց.

- Հայրի՛կ, մենք պաշտոնապես չէինք հայտարարել մեր ֆինանսական գործընկերներին, որ պատրաստվում ենք 250.000 գիրք տարածել: Մեր թիմի անդամներից մեկը զրուցում էր իր ծանոթներից

մեկի հետ, և երբ այդ մարդն իմացավ մեր ծրագրի մասին, խոստացավ 300.000 դոլար նվիրաբերել այս նախագծին:

Մինչ այդ ամենամեծ նվիրատվությունը, որը մեր ծառայությունը ստացել էր, 50.000 դոլար էր եղել: Ես նույնպես միացա նրանց ուրախությանը: Բազմաթիվ բերկրալից և հիացական մեկնաբանություններից հետո բոլորին ասացի.

- Հիմա դուք հասկանո՞ւմ եք, թե ինչու էի ես այդքան հաստատակամ երեք շաբաթ առաջվա այդ հանդիպմանը:

Որդիս ծիծաղեց և արագորեն պատասխանեց.

- Հայրի՛կ, եթե դու ասես մեզ, որ մենք տարածելու ենք մեկ միլիոն գիրք, ես անվարան կմիանամ քեզ:

Մյուսներն ի սրտե համաձայնեցին:

Երբեք չեմ մոռանա այդ առավոտը: Ես ցած դրի հեռախոսը և այլևս չկարողացա գրել: Ես միայն կարող էի ետուառաջ քայլել իմ հյուրանոցային համարում՝ ասելով. «Շնորհակա՛լ եմ: Շնորհակա՛լ եմ: Շնորհակա՛լ եմ»: Ամբողջ այդ ընթացքում արցունքները հոսում էին աչքերիցս: Իմ սրտում ես միայն տեսնում էի հոգևոր քաղց ունեցող հովիվների և առաջնորդների, որոնք ստանում էին իրենց համար շատ անհրաժեշտ աշակերտական նյութեր:

Ես այնքա՛ն շնորհակալ եմ, որ Էդիսոնն անկեղծ գտնվեց և սկսեց հարցեր տալ ինձ: Ես ուրախ եմ, որ նա չթաքցրեց իր մտքերը, այլ արտահայտեց այն զգացմունքները, որոնք շատերն այդ սենյակում կիսում էին: Հավանաբար, նրանք լսում էին իրենց իսկ մտահոգություններն Էդիսոնի հարցերում, և բոլոր այդ մտքերին անհրաժեշտ էր ընդդիմանալ: Այդ պատմությունը դրդեց մեզ երես առ երես բախվել մեզ հակառակվող վախերի, և եթե մենք լսեինք դրանց, հավանաբար, կփոխեինք մեր ընթացքը և կմնայինք մեր հնարավորությունների սահմաններում: Մեր տեսիլքը կմարեր, և մենք այդքան մեծ, առատաձեռն նվիրատվություն չէինք ստանա: Միգուցե կնվիրեինք հիսուն հազար գիրք կամ այդպես էլ կմնայինք անորոշ վիճակում:

Մենք նպատակ դրեցինք. Սուրբ Հոգին լսեց այն և հպվեց այդ մարդու սրտին՝ այդ արտասովոր նվիրատվությունը կատարելու համար: Մեր թիմը բարձրացավ հավատքի նոր մակարդակի:

Այդ տարի Աստծո շնորհքով մենք կարողացանք նվիրել 271.700 գիրք 48 երկրներում գտնվող հովիվների և առաջնորդների: Այդ երկրների թվում էին Իրանը, Իրաքը, Սիրիան, Լիբանանը, Ուզբեկստանը, Ղազախստանը, Թուրքմենստանը, Խորվաթիան, Ալբանիան, Եգիպտոսը, Վիետնամը, Մյանման, Կամբոջան, Չինաստանը, Մոնղոլիան,

Թուրքիան, անթիվ կարիքավոր աֆրիկական պետություններ և այլն: Նախորդ տարիների ընթացքում մենք նվիրում էինք տասնյակ հազարավոր գրքեր. այժմ հասել ենք ավելի քան մեկ քառորդ միլիոնի: Մեր ծառայության ազդեցությունն աճեց ավելի քան ութ անգամ: Փա՜ռք Աստծուն, դա մեծ բազմապատկում է:

## ԱՎԵԼԻ ՄԵԾ ԴԺԳՈՀՈՒԹՅՈՒՆ

Կարո՞ղ էր արդյոք լինել ավելին:

Մեր ծառայության խորհրդի սենյակում՝ սաստիկ բախումից չորս ամիս անց՝ 2011 թվականի մայիսին, Ռոբը և ես գտնվում էինք Բեյրութում՝ Լիբանանում, որտեղ ծառայում էինք ամբողջ Մերձավոր Արևելքից եկած հովիվների և առաջնորդների: Հավաքույթների ընդմիջումներից մեկի ժամանակ Ռոբը մոտեցավ ինձ մի խնդրանքով.

- Այստեղ կա մի հովիվ Իրբիլից՝ Իրաքից, որը ցանկանում է կարճ զրուցել քեզ հետ: Կցանկանա՞ս հանդիպել նրան:

- Իհա՜րկե՝ այո:

Ռոբը կազմակերպեց մեր հանդիպումը հյուրանոցի նախասրահում: Այդ հովիվը երիտասարդ էր՝ մոտավորապես 35 տարեկան, և նրա աչքերը վառվում էին ավյունով և եռանդով: Ես տեսա, որ նա լրջորեն էր տրամադրված Աստծո թագավորությունը կառուցելու հարցում: Նա հագնված էր ծառայության համար, և նրա լամպն ուժգին լույս էր տալիս: Նա եկել էր Իրբիլից մեկ պատճառով՝ ուսմունքից և հավաքույթներից զորություն ստանալու համար: Ես անմիջապես կարող էի ասել, որ նա առաջադեմ և նորարար առաջնորդ էր, ով գիտակցում էր կորսվածների համար հասկանալի և հասանելի լինելու կարևորությունը:

Մեր զրույցը սկսվեց որպես թեթև և հաճելի քննարկում, բայց ի վերջո այն վերածվեց լուրջ խոսակցության: Նա ասաց.

- Հովի՜վ Բիվեր, ես հոգևոր հայր եմ համարում ձեզ: Կարդում եմ այն ամենը, ինչ դուք գրում եք (իմ գրքերից քչերն էին թարգմանված նրա լեզվով, բայց նա անգլերեն գիտեր): Ես նույնիսկ օգտագործում եմ իմ բանկային քարտը՝ ներբեռնելու համար ձեր նյութերը «Մեսինջեր ինտերնեյշնլ» կայքից...

Այդ պահին ներսումս ամեն ինչ կանգ առավ: Անկեղծ ասած, չեմ հիշում, թե ուրիշ ինչի մասին մենք խոսեցինք: Իմ միտքը գոչում էր. *«Ես նայում եմ մի հովվի Իրաքից՝ քայքայված և պատերազմից տուժած մի երկրից, և նա ստիպված է օգտագործել իր բանկային քարտը, որպեսզի նյութե՞ր վերցնի մեր կայքից»:* Ես անհամբեր սպասում էի, որ մենակ մնայի Տիրոջ հետ և ուղղեի նրան այդ ծանր կարիքը:

Նրան հրաժեշտ տալուց հետո անմիջապես գնացի իմ հյուրանոցային համարը և փակեցի դուռը: Ես այնքա՜ն հուսալքված էի, որ բացականչեցի.

- Աստվա՜ծ, Դու պետք է ցույց տաս ինձ, թե ինչպես հասցնենք այն ուղերձները, որոնք Դու վստահել ես մեզ, ամբողջ աշխարհում գտնվող հովիվներին և առաջնորդներին, որոնք ունեն դրանց կարիքը:

Ինձ բոլորովին չէր մտահոգում, թե ով էր գտնվում իմ կողքի համարում: Ես պետք է ստանայի մարտավարություն Երկնքից, որպեսզի հասկանայի, թե ինչպես կատարեի Նրա հանձնարարականը՝ հասցնել մեր նյութերն այդ առաջնորդներին:

Ոչ շատ օրեր անց, այդ եռանդուն աղոթքից հետո մի մարտավարական գաղափար ծնվեց, որը մեծապես բազմապատկելու էր մեր ծառայության ազդեցությունը և դարձնելու էր այն ավելի արդյունավետ՝ առանց մեծ լրացուցիչ աշխատանքի կամ ծախսերի:

Դա փայլուն միտք էր... և կարող էր լինել միայն Աստծո իմաստությունը: Դա այնքա՜ն պարզ էր, սակայն մենք չէինք մտածել այդ մասին: Շարունակե՛ք կարդալ:

## ՄՏՈՐԵՔ

1. Հիասթափությունը և դժգոհությունը հաճախ կարող են խթանիչ դառնալ՝ բորբոքելով մեր հավատքը բազմապատկման համար: Արդյո՞ք Աստված դրդում է ձեզ աճել ձեր կյանքի որոշակի բնագավառում: Եթե այո, ինչպե՞ս եք արձագանքում Նրա մղումներին:

2. Եթե դժգոհության պատճառը ձեր անձնական կարիքն է, այն հաճելի չէ Աստծուն: Սակայն եթե դժգոհության պատճառն այլ մարդկանց կարիքները և Աստծո թագավորությունը կառուցելն է, այն հաճելի է Նրան: Ո՞րն է ձեր դժգոհության պատճառը:

3. Մտածե՛ք 250.000 գիրք նվիրելու իմ պատմության մասին: Ինչո՞ւ է անհրաժեշտ հավատք ունենալ՝ Աստծո խոստումները ստանալու և բազմապատկման նոր մակարդակների հասնելու համար: Ինչո՞ւ է կարևոր, որ դուք հնազանդվեք Աստծուն, նույնիսկ եթե մյուսները համաձայն չեն ձեզ հետ:

*«Եթե չգիտեք ինչ անել, աղոթե՛ք Հորը:*
*Նա սիրում է օգնել»:*

– Հակոբոս 1.5, MSG

# 8

# Մարտավարական գաղափարներ

Ամեն տարի ավելի եմ համոզվում *ոգեշնչված մարտավարական գաղափարի* անասելի արժեքի մեջ: Հաճախ մենք սպասում ենք, որ Աստծո մատակարարումը կամ միջամտությունը տեղի ունենա առանց որևէ մարտավարական ծրագրի, սակայն, որպես կանոն, այդպես չի լինում: Աստված ոգեշնչված մարտավարական գաղափարներ է տալիս մեզ, և դրանք իրականանում են: Աստվածաշնչյան օրինակներն այս մասին չափազանց շատ են այստեղ թվարկելու համար, բայց նշենք մի քանիսը, որոնք սատարում են այս փաստը.

- *Մարտավարական գաղափար*՝ փայտի կտորը դառը ջրերի մեջ գցելու մասին, որ միլիոնավոր մարդիկ կարողանային ջուր խմել (կարդացե՛ք Ելից 15.22-25):
- Եվս մեկ *ոգեշնչված գաղափար.* ջուր տալ միլիոնավոր մարդկանց՝ ժայռին հարվածելով (կարդացե՛ք Ելից 17.5,6):
- Վեց օր ամուր քաղաքի շուրջը մեկ անգամ լուռ պտույտ տալու *մարտավարական գաղափարը:* Իսկ յոթերորդ օրը մեկ այլ *մարտավարական գաղափար*՝ պտույտ տալ քաղաքի շուրջը յոթ անգամ՝ փողեր հնչեցնելով և վերջում մեծ գոչյուն արձակելով: Այդ ամենի նպատակն էր՝ մուտք գործել այդ քաղաքը և գրավել (կարդացե՛ք Հեսու 6-րդ գլուխը):
- Մի քանի տասնյակ հազարանոց բանակի լավագույն զինվորներին որոշելու *մարտավարական գաղափար.* պատվիրել զինվորներին ջուր խմել աղբյուրից և առանձնացնել այն զինվորներին, ովքեր պահում էին իրենց հայացքը մարտի դաշտին, ի տարբե-

րություն այն զինվորների, ովքեր իջեցրել էին իրենց գլուխները (կարդացե՛ք Դատավորաց 7.4-6):

- Եվս մեկ *մարտավարական գաղափար*. չիրականացնել ճակատային գրոհ թշնամու վրա, այլ շրջանցել թշնամու բանակը՝ հայտնվելով նրա թիկունքում գտնվող անտառում, և սպասել՝ մինչև թթենիների վերևում համաքայլ գնացող ոտքերի ձայն լսելը, ինչը մարտի մեջ Տիրոջ օգնության ազդանշանն էր (կարդացե՛ք Բ Թագավորաց 5.22-25):
- Հերթական *մարտավարական գաղափարը*. սաստիկ սովի ժամանակ խնդրել այրի կնոջը և նրա որդուն՝ կերակրել մարգարեին իրենց ունեցած վերջին կերակուրով. հնազանդվելով՝ նրանք սովամահ չէին լինի՝ շատ այլ ընտանիքների պես (կարդացե՛ք Գ Թագավորաց 17.8-16):
- *Մարտավարական գաղափար*՝ հարցնել պարտքի մեջ գտնվող այրի կնոջը (ով կորցնելու էր իր երկու որդիներին), թե ինչ ունի իր տանը: Հաջորդ քայլն էր՝ կարգադրել նրան փոխ վերցնել դատարկ անոթներ՝ դրանք իր ունեցած մի փոքր ձիթապտղի յուղով լցնելու համար, իսկ հետո վաճառել յուղը՝ պարտքը մարելու համար (կարդացե՛ք Դ Թագավորաց 4.1-7):
- *Մեկ այլ մարտավարական գաղափար.* ուղարկել հիվանդություն ունեցող զինվորական սպային յոթ անգամ ընկղմվելու Հորդանան գետը, ինչի արդյունքում նա կատարելապես բժշկվեց (կարդացե՛ք Դ Թագավորաց 5.1-19):
- Փառաբանության և երկրպագության թիմը զորքից առաջ ուղարկելու *մարտավարական գաղափար*, որի արդյունքը բացառիկ հաղթանակ էր (կարդացե՛ք Բ Մնացորդաց 20.21-26):
- Թագավորի առատ սեղանից սնվելու փոխարեն բանջարեղեն ուտելու *մարտավարական գաղափար*՝ ավելի առողջ լինելու, ավելի լավ տեսք ունենալու և երկրի լավագույն երիտասարդներից ավելի ակնառու լինելու համար (կարդացե՛ք Դանիել 1.8-16):
- Ջրի սափորներն օգտագործելու *մարտավարական գաղափար*՝ լավագույն գինին ստանալու համար, որի նպատակն էր փրկել հարսանեկան խնջույքը (կարդացե՛ք Հովհաննես 2.6-10):
- Մի փոքր կերակուրը վերցնելու, օրհնելու, կտրելու և բաժանելու *մարտավարական գաղափար*, որի արդյունքում կերակրվեցին հազարավոր մարդիկ (կարդացե՛ք Մատթեոս 14.13-21):
- Գետնին թքելու, ցեխ պատրաստելու և այն կույր մարդու աչքե-

րին քսելու *մարտավարական գաղափար:* Հաջորդ քայլն էր՝ պատվիրել այդ կույր մարդուն գնալ և լվացվել՝ տեսողությունը վերականգնելու համար (կարդացե՛ք Հովհաննես 9.6,7):

- *Մարտավարական գաղափար* այն մասին, որ եթե մարդիկ ցանկանում էին փրկվել, չպետք է թողնեին խորտակվող նավը (կարդացե՛ք Գործք 27.21-44):

Յուրաքանչյուր դեպքում ոգեշնչված գաղափարները հանգեցնում էին աստվածային միջամտության: Դուք տեսնո՞ւմ եք այն ընդհանրությունը, որը կա բոլոր այս օրինակներում: Համաձայն այս մարտավարությունների, մարդիկ պետք է օգտագործեին այն, ինչ արդեն ունեին. նրանք պետք է օգտագործեին իրենց պատկանող որևէ բան կամ պետք է ինչ-որ բան այլ կերպ անեին: Յուրաքանչյուր դեպքում աստվածային մատակարարումը փաթեթավորված էր սովորականի մեջ: Այլ կերպ ասած, հրաշք ծնող գլխավոր տարրը կախարդական կերպով չէր հայտնվում:

Աստծո կողմից տրված մարտավարությունների բնույթը հաճախ հետևյալն է. *օգտագործել սովորական բաներ անսովոր կերպով՝ արտասովոր արդյունքներ ստանալու համար:* Այնպես որ, ոգեշնչված գաղափար ստանալն անչափ կարևոր է: Գրված է. «Իմաստություն ստանալն ամենակարևոր բանն է, որ կարող ես անել» (Առակաց 4.7, GNT): Աստվածային իմաստության ձևերից մեկը մարտավարական գաղափարն է, և բարի լուրն այն է, որ Աստված չի ծածկում մեզնից Իր իմաստությունը: Հակոբոս առաքյալը սովորեցնում է մեզ ինչ անել՝ անսովոր դժվարությունների բախվելիս.

> «Եթե դուք իմաստության [մարտավարական գաղափարի] կարիք ունեք, խնդրե՛ք մեր առատաձեռն Աստծուն, և Նա կտա ձեզ այն: Նա չի հանդիմանի ձեզ խնդրելու համար» (Հակոբոս 1.5, NLT, քառակուսի փակագծերի պարզաբանումն իմն է):

Նա իստակ կհայտնի Իր իմաստությունը. Նա չի պահի և չի ծածկի այն ձեզնից, քանի որ խոստացել է: Այնուամենայնիվ, կա երկու պայման, որոնք անհրաժեշտ է կատարել՝ ոգեշնչված մարտավարական գաղափար ստանալու համար:

> «Պարզապես համոզված եղեք, որ դուք խնդրում եք՝ զորացված *վստահ հավատքով*, առանց կասկածելու, որ կստանաք: Որովհետև երկմտողը նույն պահին հավատում է և հաջորդ պահին՝ կասկածում: *Անվճռական* լինելը դարձնում է ձեզ նման բուռն

> ծովերի, որոնք հողմակոծվում և տատանվում են քամուց: Մի պահ դուք վերևում եք, իսկ հաջորդ պահին՝ ներքևում: Երբ *տատանվող* և *անհաստատ* եք, դուք անկայուն եք դառնում: Կարո՞ղ եք արդյոք ակնկալել, որ որևէ բան կստանաք Տիրոջից, երբ այդպիսի վիճակում եք» (Հակոբոս 1.6-8, TPT):

Մենք պետք է խնդրենք *վստահ հավատքով*. մենք ոչ թե *հույս ունենք*, որ մարտավարական գաղափար կստանանք, այլ լիովին ակնկալում ենք դա: Նույնպես, պետք է ձգտում ունենանք մեր խնդրանքի համար. մենք պետք է *հուսահատորեն ցանկանանք այն:* Մեր խնդրանքը չպետք է բխի անտարբեր և անփույթ վերաբերմունքից, օրինակ. *«Եթե ես ստանամ դա, շատ լավ: Եթե՝ ոչ, խնդիր չկա»:* Գոյություն ունի հուսահատության և անսասան վճռականության զգացում՝ Աստծուց ստանալու համար:

*Մարտավարական գաղափարը* պարզև է Աստծուց և տրվելուն պես դուռ է բացում դեպի արդյունավետության այլ մակարդակ: Այն բազմապատկման զորություն է տալիս մեզ:

## ՈԳԵՇՆՉՎԱԾ ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐ

Անդրադառնամ Բեյրութի իմ հյուրանոցային համարին. ես չգնացի այնտեղ՝ լուռ աղոթելու. ես պարզապես չէի կարող այդպես աղոթել: Իմ միտքը փակուղու մեջ էր. չունեի ոչ մի գաղափար, սակայն գիտեի, որ ինձ վստահվել էր այդ կարիքավոր և հոգևոր քաղց ունեցող հովիվներին նյութեր մատակարարելը: Ես սովորաբար չեմ գոչում հյուրանոցային համարներում, բայց, անկեղծ ասած, այդ օրը իմ հոգը չէր, թե ով էր լսում ինձ: Դա հուսահատ կանչ էր *մարտավարություն* (իմաստություն) ստանալու համար, որպեսզի բազմապատկեինք մեր արդյունավետությունը:

Որոշ ժամանակ տևող եռանդուն աղոթքից հետո խաղաղությունը լցրեց իմ սիրտը: Ես գիտեի, որ իմ խնդրանքը լսվել էր, և թեթևություն վերապրելով՝ հավատացի, որ պատասխանը գալու է: Իմ սրտից գոհություն բարձրացավ, թեև դեռ չէի ստացել այդ *մարտավարական գաղափարը* կամ *ծրագիրը:*

Մի քանի օր անց մի միտք ծագեց. *«Մենք ծախսում ենք շատ ժամանակ, փող և ուժեր՝ տպագրելով և տարածելով այս գրքերը, բայց յուրաքանչյուր առաջնորդ ստանում է միայն մեկ նյութ: Ինչո՞ւ չանենք այն, ինչ սկսեցինք անել անգլերենով տարիներ առաջ: Ինչո՞ւ այդ առաջնորդների համար հասանելի չդարձնենք նաև ամբողջական դասընթացներ այլ լեզուներով: Մենք կավելացնե՛նք մեր ընդհանուր արդյունավետությունը»:*

Սակայն կար մի մեծ խոչընդոտ. ինչպե՞ս էինք տպագրելու և տա-

րածելու այդքան նյութեր: Նույնիսկ եթե մենք վճարեինք՝ դասընթացի բոլոր նյութերը տպագրելու համար, մեր նպատակային երկրների մեծ մասի տարածողները չէին կարողանա նման ծավալի և ծանրության նյութեր տեղափոխել, քանի որ մեր տարածումների մեծ մասը կատարվում է դժվարանցանելի ջունգլիներում, սարերում, անապատներում կամ ջրային ուղիների մոտակայքում: Այդ տարածքներում հաճախ չկան սալարկված ճանապարհներ: Բացի այդ, քրիստոնեությանը թշնամաբար տրամադրված երկրներում իշխանությունները հեշտությամբ կգտնեին տարածողներին և կառգրավեին բոլոր նյութերը:

Անընդմեջ աղոթքից և մտորումներից հետո առաջացավ մեկ այլ գաղափար՝ զետեղել ամբողջական դասընթացը DVD սկավառակի մեջ («միայն ընթերցվող» տվյալներով սկավառակ՝ համակարգիչների համար): Սակայն հարցեր ծնվեցին. արդյո՞ք տարբեր երկրներում ապրող հովիվները և առաջնորդներն օգտվում էին համակարգիչներից: Եթե այո, արդյո՞ք նրանց համակարգիչներն ունեին DVD սկավառակներ ընթերցելու հնարավորություն: Եվս մեկ հարց՝ բոլորովին այլ բնույթի. DVD սկավառակն ունե՞ր բավականաչափ տարողություն՝ ընդգրկելու համար ամբողջական դասընթացի բոլոր նյութերը:

Ես ցանկանում էի իմանալ այս ամենը և առաջինը հարցրի Ռոբին: Նա քաջատեղյակ էր մեր նպատակային երկրների տեխնիկական հնարավորությունների մասին, քանի որ եղել էր ավելի քան 160 երկրում: Ես հարցրի նրան.

- Արդյո՞ք աշխարհի գրեթե բոլոր երկրներում ապրող հովիվները և առաջնորդներն օգտվում են համակարգիչներից, նույնիսկ եթե նրանք աղքատ են:

- Մեծամասնությունը՝ այո. քչերն են, որ չունեն այդ հնարավորությունը:

- Նրանց համակարգիչներն ունե՞ն DVD սկավառակներ ընթերցելու հնարավորություն: Եվ եթե այո, որքա՞ն նյութեր կարող ենք զետեղել մեկ DVD սկավառակի մեջ:

Ռոբի դեմքը պայծառացավ.

- Այո՛, ունեն, և կարծում եմ, մեկ DVD սկավառակի մեջ կարող են զետեղել բավականին շատ նյութեր:

Ես առաջարկեցի ևս մեկ գաղափար.

- Կարո՞ղ ենք բարակ պատյանով DVD սկավառակ կցել գրքի ետևի կազմին:

- Այո՛, - խանդավառությամբ պատասխանեց նա:

- Որքա՞ն կարժենա յուրաքանչյուր գրքին մեկական սկավառակ կցելը:

Ռոբը հետաքրքրվեց և պատասխանեց մի քանի օրից.

- Ես հրաշալի լուր ունեմ: Հաշվի առնելով գիրքը տպագրելու և տարածելու միջին արժեքը՝ DVD սկավառակ կցելը կավելացնի այն ընդամենը հինգ տոկոսով:

Ես ոգևորվեցի, սակայն դեռ մի փոքր զուսպ էի, քանի որ չգիտեի, թե որքան նյութ է տեղավորվում մեկ սկավառակի մեջ:

- Իսկապես հրաշալի է այն, - ասաց Ռոբը, - որ մենք կարող ենք զետեղել սկավառակի մեջ ոչ միայն ամբողջական դասընթաց, այլև այդ դասընթացի գրքի աուդիո տարբերակը, երկու-երեք այլ գիրք, Նոր կտակարանը և այդ գրքի PDF ֆայլը (տպագրել ավելի շատ գրքեր, եթե տեղացի հովիվները միջոցներ ունենային):

Եթե զուսպ արտահայտվեմ, մենք շատ ուրախ և ոգևորված էինք:

Այդ քննարկումից ծագեց ևս մեկ *մարտավարական գաղափար:* Կրկին, դա կախված էր մեր նպատակային երկրների տեխնիկական հնարավորություններից: Ես հարցրի.

- Մեր նպատակային երկրների հովիվները և առաջնորդներն օգտվո՞ւմ են ինտերնետից:

- Գրեթե բոլոր երկրներում՝ այո՛, - պատասխանեց Ռոբը:

- Մենք կարող ենք ինտերնետային կայք պատրաստել և տեղադրել մեր բոլոր թարգմանված նյութերը: Այն կարելի է անվանել քրիստոնեական կայքին ոչ հատուկ կերպով, որպեսզի այն պետությունները, որոնք դեմ են աստվածաշնչյան ուսուցումներին, չարգելափակեն: Մենք կավելացնենք այդ կայքի հասցեն տարածվող գրքերի առջևի կազմի վրա: Կառաջարկենք հովիվներին և առաջնորդներին, որ խրախուսեն իրենց եկեղեցիների անդամներին անվճար ներբեռնել բոլոր նյութերն այդ կայքից, որպեսզի եկեղեցիները միասին ուսումնասիրեն դրանք:

Մենք նման էինք քաղցրավենիքի խանութում գտնվող երկու երեխայի. մենք չէինք կարողանում զսպել մեր ոգևորությունը և փոխանակում էինք նորանոր գաղափարներ, որոնք ամրապնդում էին այդ մարտավարությունը:

Կատարելով բոլոր անհրաժեշտ ուսումնասիրությունները և հաշվարկները՝ պարզեցինք, որ կարող ենք մեծ քանակով պատրաստել և տարածել այդ «առաջնորդական հավաքածուները»՝ յուրաքանչյուր օրինակը մոտավորապես չորս դոլարով: Ինչ վերաբերում էր ինտերնետային կայքին, մեր «Մեսինջերի» թիմն ուներ անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ՝ այն պատրաստելու համար:

Շուտով մեր թիմը գիտակցեց, որ շնորհիվ երկնքից եկած այդ գաղափարի, մենք հնարավորություն կունենանք սովորեցնելու, կրթելու և

զորացնելու ոչ թե պարզապես առանձին առաջնորդների, այլ ամբողջ եկեղեցական համայնքներ և փոքր խմբեր: Աշխարհով մեկ գտնվող բազմաթիվ փոքր գյուղերում կա միայն մեկ եկեղեցի: Նշանակում է՝ մենք կարող ենք զգալիորեն ազդել յուրաքանչյուր գյուղական համայնքի վրա ընդամենը մի քանի դոլարով: Ինչպիսի՜ շահութավոր ներդրում: Մի՞թե դա իրականում հնարավոր է:

Ես պատմեցի այդ տեսիլքը «Մեսինջերի» ծառայության բաժինների ղեկավարների հաջորդ ժողովին: Բոլորը որսացին իմ խանդավառությունը. ամբողջ թիմը լցվեց ուրախությամբ և ոգևորությամբ՝ այդ ծրագրի պատճառով: Ես խանդավառությամբ հայտարարեցի.

- Կարևոր չէ, թե որքան ժամանակ կպահանջվի՝ տա՞սը տարի, քսա՞ն տարի, թե՞ ավելին. այն նյութերով, որոնք Աստված վստահել է մեզ, մենք հասնելու ենք և օգնելու ենք յուրաքանչյուր առաջնորդի այս մոլորակի վրա:

Մեկ ամիս անց մի գործարար՝ Տեխասից, զանգեց մեր գրասենյակ: Նա խնդրեց 15 րոպեանոց հանդիպում Լիզայի և ինձ հետ: Նա և կինը ինքնաթիռով Կոլորադո եկան: Մեր հանդիպման ժամանակ նրա աչքերից արցունքներ հոսեցին: Լաց լինելով և հուզմունքից ցնցվելով՝ նա ասաց.

- Ես գիտեմ, թե ինչ աշխատանք եք դուք կատարում: Գիտեմ, որ ձեր նյութերով զորացնում եք հեռավոր երկրներում ապրող հովիվներին: Ես ուզում եմ մասնակցություն ունենալ դրանում:

Նա մի չեկ դրեց սեղանին: Ես գրեթե ընկա աթոռից. այն 750.000 դոլարի չեկ էր:

Հաջորդ մի քանի ամսում մենք վեբ-կայք պատրաստեցինք և ջանասիրաբար աշխատեցինք՝ տարբեր երկրներում և շրջաններում առաջնորդական հավաքածուների ծրագիրն իրականացնելու համար: Մենք կատարում էինք մեկանգամյա վճարում՝ նախատեսված գրքի և համապատասխան դասընթացի նյութերի թարգմանության համար, ինչպես նաև հավելյալ գրքերի թարգմանության համար, որոնք ընդգրկվելու էին DVD սկավառակի մեջ՝ յուրաքանչյուր լեզվով: Ռոբը վարձեց և համակարգեց լավագույն թարգմանչական թիմեր՝ բազմաթիվ լեզուների համար: Այդ երկու առատաձեռն նվիրատվությունները, որոնց գումարը մեկ միլիոն դոլարից մի փոքր ավելի էր, հոգացին անհրաժեշտ ծախսերն առաջին տարում:

# ԹԻՄ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԳԱՂԱՓԱՐԸ

Այժմ վերադառնանք 2011 թվականի հունվար՝ անմիջապես 250.000 գիրք բաժանելու որոշմանը հաջորդող օրերին: Այդ երկու խոշոր նվիրատվությունները դեռ չէին տրվել, և ես ուրախ եմ դրա համար, քանի որ միջոցների բացակայությունը դրդեց ինձ փնտրել Աստծուն ամեն առավոտ՝ մարտավարություն ստանալու համար: Մեզ անհրաժեշտ էր ծրագիր այն մասին, թե ինչպես ներկայացնենք մեր տեսիլքը նվիրատվություններ անելու պարգև ունեցող տղամարդկանց և կանանց, ովքեր կօգտագործեին իրենց պարգևը՝ այս վիթխարի նախաձեռնությանը աջակցելու համար, և ինչպես մեծ թիմ կազմել նրանցից: Շնորհիվ նման թիմի, մենք կկարողանայինք նյութեր տրամադրել աշխարհով մեկ գտնվող հովիվներին և առաջնորդներին՝ անկախ նրանց լեզվից, գտնվելու վայրից և ֆինանսական վիճակից:

Մի քանի օր տևող առավոտյան աղոթքներից հետո Սուրբ Հոգին շշնջաց իմ սրտում. «Որդի՛ս, դու քաջ հայտնի ես գոլֆի հանդեպ քո սիրով: Օգտագործի՛ր այն՝ միջոցներ հանգանակելու համար: Ես կբերեմ ճիշտ տղամարդկանց և կանանց՝ քո թիմին միանալու և այս առաքելությանն աջակցելու համար»: Ես անմիջապես մտածեցի, որ Կոլորադո Սփրինգսում է գտնվում Ամերիկայի լավագույն հյուրանոցներից մեկը՝ «Բրոուդմուրը», որն ունի երկու գոլֆի դաշտ՝ առաջնություններ անցկացնելու համար: Այնպես որ, իմ ծրագրով կիսվեցի Էդիսոնի և Լիզայի հետ:

Նրանք լսեցին ինձ, իսկ հետո հարցրին.

- Ե՞րբ ենք անելու դա:

- Եկեք անենք դա այս ամռանը, - պատասխանեցի ես:

Մենք մտահոգված էինք, որ միգուցե չունենայինք ժամանակ ամեն ինչ կազմակերպելու համար: Արդյո՞ք կլինեին բավականաչափ ազատ համարներ, ինչը կարող էր խնդիր լինել աշխարհի ամենաերկարակյաց հինգաստղանի և հինգադամանդե հյուրանոցում: Սովորաբար համարներն այդ հյուրանոցում պատվիրված են լինում տարիներ առաջ, իսկ մենք ընտրել էինք տարվա ամենապահանջված ժամանակը: Եվս մեկ մտահոգություն. ի՞նչ կլիներ, եթե մեր հնարավոր հյուրերն արդեն ծրագրեր ունենային ամառվա համար:

Որդիս զբաղվեց դրանով և մի քանի օրից տեղեկացրեց ինձ հետևյալը.

- Հայրի՛կ, այդ հյուրանոցը զբաղված է ամբողջ ամառվա ընթացքում՝ մեկ շաբաթվա բացառությամբ: Մենք կարող ենք պատվիրել մոտավորապես 100 համար, և այնպես է ստացվել, որ ամբողջ այդ շաբաթը դու և մայրիկը տանն եք:

- Ե՛կ պատվիրենք այդ համարները, - անվարան ասացի ես:

- Մենք պետք է պայմանագիր ստորագրենք, - զգուշացրեց նա, - և ֆինանսական պարտավորություն ստանձնենք: Կկարողանա՞նք զբաղեցնել բոլոր այդ համարները:

Եվ կրկին բերանիցս թռավ հետևյալը.

- Բոլոր համարները զբաղեցրած կլինեն:

Ես չէի ցանկանում շատ մտածել այդ մասին: Չէի ցանկանում հրաժարվել այդ ծրագրից՝ իմ դատողությունների պատճառով:

Ես գիտեի, որ կային բազմաթիվ եկեղեցիներ և գործարարներ Միացյալ Նահանգներում, որոնք սիրով կաջակցեին այս նախաձեռնությանը: Զանգեցի նրանց, ում հիշեցի, և գրեթե բոլորը մասնակցելու պատրաստակամություն հայտնեցին: Երկու ամսում մենք գրանցեցինք բավականաչափ զույգեր՝ մեր պատվիրած բոլոր համարները զբաղեցնելու համար:

Ծրագրելով այդ մրցույթը՝ մեր թիմը որոշեց, որ այն չէր լինելու միայն գոլֆի մրցույթ, այլ լիարժեք միջոցառում և հիշարժան իրադարձություն: Մենք վճռեցինք, որ ամեն ինչ արվելու էր գերազանցությամբ և նպատակաուղղվածությամբ, որպեսզի այդ ժամանակն անցներ հաճելի կերպով, հատկապես այն զույգերի համար, որոնք գոլֆ չեն խաղում: Լիզան կազմակերպելու էր հատուկ հանդիպումներ կանանց հետ: Ժամանման պահին մենք նվիրելու էինք յուրաքանչյուր զույգին գեղեցիկ զամբյուղներ՝ աղանդերով և նվերներով: Լինելու էին «Բրոուդմուրի» տպավորիչ ճաշկերույթները և հատուկ ժամանցային միջոցառումները, դասեր առաջնորդների համար և բարձրորակ մրցանակներ բոլոր մասնակիցների համար: Այդ ամենի նպատակն էր լինելու արտահայտել մեր երախտիքը՝ մեր թիմին միանալու համար:

Մեր առաջին «Մեսինջերի գավաթի» առաջնությունն անցկացվեց 2011 թվականի հունիսի վերջին: Մինչև միջոցառման սկիզբը ես զանգեցի պրոֆեսիոնալ մարզիկների և հայտնի երաժիշտների՝ խնդրելով նվիրաբերել ինքնագրված իրեր: Բացի այդ, որոշ ձեռնարկություններ նվիրաբերեցին արժեքավոր իրեր կամ ծառայություններ: Մենք աճուրդի հանեցինք բոլոր այդ նվիրատվությունները վերջին ճաշկերույթի ժամանակ: Մենք հանգանակեցինք 340.000 դոլարից մի փոքր ավելի մեր առաջին առաջնության ընթացքում, բայց այն կարծես լիարժեք չլիներ. մենք դեռ չէինք գտել լավագույն մարտավարությունը՝ մեր տեսիլքը փոխանցելու համար:

Այդ աշնանը մեր թիմի անդամներից մեկի մտքում մեկ այլ ոգեշնչված գաղափար ծնվեց: Մենք ծրագրում էինք մեր երկրորդ ամենամյա առաջնությունը 2012 թվականի ամռանը, և նա ասաց.

- Մենք աճուրդի ենք հանում ինքնագրված բեյսբոլի շապիկ, ռեգբիի սաղավարտ, կիթառ և այլն: Այդ առարկաներից յուրաքանչյուրի հասույթը բավական չէ նույնիսկ մեկ ազգի նյութերը ֆինանսավորելու համար: Եկեք այլևս իրեր աճուրդի չդնենք. եկեք աճուրդի դնենք ազգերը: Ազգի արժեքը շատ ավելի բարձր է:

Բոլորիս դուր եկավ այդ գաղափարը, բայց մեր թիմի անդամն ավելի կատարելագործեց այն և շարունակեց.

- Այս միջոցառմանը գալիս են ուժեղ մրցակցային բնավորություն ունեցող մարդիկ: Եկեք ստեղծենք առաջատարների ցուցատախտակ, որի վրա կարտացոլվեն մասնակիցների նվիրատվություններն ազգերի համար, և դրա հիման վրա այն հովանավորները, որոնք կկատարեն ամենամեծ նվիրատվությունները, կստանան ինքնագրված գնդակները, կիթառները և մյուս մրցանակները:

Նորանոր ստեղծարար գաղափարներ էին ծնվում: Մի պահ ես առարկեցի.

- Տանել չեմ կարողանում, երբ ձգձգում են աճուրդները: Լռության մի քանի րոպեն ամբողջ հավիտենություն է թվում: Եկեք ժամացույց տեղադրենք, որոշենք կարճ ժամանակահատված, օրինակ՝ 35 րոպե, և ասենք մեր մասնակիցներին, որ ժամանակը սպառվելուն պես աճուրդն ավարտվելու է: Եվ այն ազգը, որի նախագիծը չի ֆինանսավորվի, այդ տարի նյութեր չի ստանալու: Դա մեծ հրատապություն կառաջացնի:

Այժմ թույլ տվեք բացատրել, թե ինչ նկատի ունեմ *նախագիծ* ասելով: Այն բաղկացած է երկու մասից: Առաջինը առաջնորդական հավաքածուի բոլոր տպագիր, աուդիո և վիդեո բաղադրիչների թարգմանությունն է, որն արժե մոտավորապես 17.500 դոլար՝ յուրաքանչյուր լեզվի համար: Երկրորդը՝ գրքերը կամ առաջնորդական հավաքածուները տպագրելու և որևէ երկրում տարածելու արժեքն է: Յուրաքանչյուր երկրում կա մոտավորապես 500-40.000 առաջնորդ: Երկրների մեծ մասում առաջնորդների թիվը 5.000-10.000 է, և ծախսերը կազմում են 20.000-40.000 դոլար:

Հաջորդ ժողովների ժամանակ մեր թիմն առաջարկեց նորանոր գաղափարներ այն մասին, թե ինչպես ավելի լավ տպավորություններ փոխանցել մասնակիցներին, ինչպես ներկայացնել մեր տեսիլքը և ինչպես անցկացնել մեր երկրորդ միջոցառումը:

Այդ տարի աճուրդի ժամանակ մենք ականատես եղանք խոստացված նվիրատվությունների կրկնապատկման՝ նախորդ տարվա համեմատ: Մեր ժամացույցի որոշված ժամանակը դեռ չէր սպառվել, սակայն մեր՝ ավելի քան 50 նախագծերը լիովին ֆինանսավորվել էին:

Նվիրատվությունների թափն ավելի աճեց «Մեսինջերի գավաթի» երրորդ տարում. մենք հանգանակեցինք ավելի քան 1.3 միլիոն դոլար՝ ավելի շատ նախագծեր ֆինանսավորելու համար:

Ամեն տարի նյութերի պահանջարկն ավելանում էր: Ռոբի հետ կապ էին հաստատում մարդիկ տարբեր ազգերից՝ խնդրելով տրամադրել իրենց մեր նյութերը: Ի վերջո, մեր նախագծերի թիվն անցավ հարյուրը, և արդեն վեցերորդ «Մեսինջերի գավաթի» ժամանակ ունեինք 140 նախագիծ, որոնց համար հանգանակվեց ավելի քան 2 միլիոն դոլար: Իններորդ տարում հանգանակվեց գրեթե 3 միլիոն դոլար՝ մոտավորապես 200 նախագիծ ֆինանսավորելու համար:

Մինչև այս գրքի լույս տեսնելը, այսինքն՝ մինչև 2020 թվականի վերջին ամիսները, «Մեսինջերի գավաթի» թիմը, մոտավորապես 100 երկրում գտնվող հովիվների և առաջնորդների նվիրել է շուրջ 30 միլիոն նյութ՝ ավելի քան 120 լեզվով:

Այս ընթացքում մենք ոգեշնչվում էինք իմ հերոսներից մեկով՝ Էնդրյու Կարնեգիով: Նա ամենահայտնի բարերարներից է պատմության մեջ, որը նվիրաբերել է իր ունեցվածքի մեծ մասը: Համաձայն դոլարի այսօրվա արժեքի, նա տրամադրել է միլիարդավոր դոլարներ բարեգործությանը: Այդ գումարի զգալի մասն ուղղվել է հանրային գրադարաններ կառուցելուն: 1883-1918 թվականների ընթացքում նա կառուցել է ավելի քան 2.500 գրադարան, որոնց մեծ մասը գտնվում է ԱՄՆ-ի 47 նահանգներում:

Թույլ տվեք մի հետաքրքրական հարց տալ: Ո՞ր ժամանակահատվածում ԱՄՆ-ը վերածվեց համաշխարհային տերության: Դա տեղի ունեցավ 1883-1918 թվականներին՝ նույն ժամանակահատվածում, երբ Կարնեգին գրադարաններ էր կառուցում: Ես համոզված եմ՝ այն, որ նա հասանելի դարձրեց գիտելիքը հասարակությանը, նպաստեց Ամերիկայի կայացմանը՝ որպես համաշխարհային տերություն:

Այս սկզբունքը վերաբերում է նաև հոգևոր գիտելիքին: Աստված ասում է.

> «Իմ ժողովուրդը կործանվում է *գիտելիքի բացակայության* պատճառով» (Ովսե 4.6, NKJV):

> «Իմ ժողովուրդը *տգիտությունից* գերի է գնում» (Եսայի 5.13):

Տարիներ շարունակ մեր ծառայությունը ղեկավարելուց հետո ինձ համար ակնհայտ դարձավ, որ որևէ գյուղ կամ քաղաք վերափոխելու ամենից արդյունավետ միջոցն այնտեղ եկեղեցական շենք կառուցելը

չէ: Դա պարզապես պահում է տեղական առաջնորդներին կախվածության մեջ մեզնից: Մենք շատ ավելի արդյունավետ ենք, երբ տալիս ենք տեղացի առաջնորդներին հոգևոր գիտելիք, որը զորացնում է նրանց՝ իրենց գյուղերում կամ քաղաքներում ազդեցություն թողնելու համար: Այդ գիտելիքն օգնում է առաջացնել այն հավատքը, որն անհրաժեշտ է, որպեսզի եկեղեցին աճի և կատարի իր աշխատանքը, ինչը, անհրաժեշտության դեպքում, ընդգրկելու է նաև շենքերի կառուցում և այլ միջոցների ձեռքբերում:

Նյութեր տարածելու մեր մարտավարական նախաձեռնության դեպքում հրաշալին այն է, որ եկեղեցական շենքը մեզ համար կարող էր արժենալ տասնյակ հազարավոր դոլարներ, իսկ առաջնորդական հավաքածուն, որը պարունակում է մի քանի հարյուր դոլար արժողությամբ նյութեր, ընդամենը կազմում է դրա աննշան մասը:

Այս տասնամյակը, որի ընթացքում մենք առաջնորդական հավաքածուներ էինք բաժանում զարգացող երկրների եկեղեցուն, ամենահաճելին էր իմ քառասնամյա ծառայության մեջ: Ինձ դուր է գալիս լինել մի թիմի մաս, որտեղ մարդիկ միավորված են ազգերն աշակերտելու ձգտումով և տեսիլքով (կարդացե՛ք Մատթեոս 28.19,20): Մենք միասին շատ ավելի գերազանցեցինք այն, ինչ յուրաքանչյուրս կարող էր անել անհատապես: Մեր աշխատանքը մարմնավորում է հետևյալ խոսքը. «Եվ ձեզնից հինգը հարյուրին պիտի հալածի, և ձեզնից հարյուրը բյուրին պիտի հալածի» (Ղևտացիների 26.8):

(Այս խոսքը նկարագրում է բազմապատկման ևս մեկ կարևոր կողմ՝ միաբանությունը, որի մասին կխոսենք հետագա գլուխներից մեկում):

Մեր միաբանությունը կենտրոնացած է Հիսուսի հետևյալ խոսքերի վրա.

> «Երբ ճաշկերույթ կամ խնջույք կազմակերպես, - ասաց Նա, - մի՛ հրավիրիր քո ընկերներին, եղբայրներին, հարազատներին և հարուստ հարևաններին: Որովհետև նրանք էլ քեզ կհրավիրեն, և դա կլինի քո միակ վարձատրությունը: Փոխարենը, հրավիրի՛ր աղքատներին, խեղերին, կաղերին և կույրերին: Եվ արդարների հարության ժամանակ Աստված կվարձատրի քեզ այն մարդկանց հրավիրելու համար, որոնք *չէին կարող հատուցել քեզ»* (Ղուկաս 14.12-14, NLT):

Այն առաջնորդները, որոնց մենք նյութեր էինք տրամադրել, անպայման չէ, որ խեղված, կաղ և կույր լինեն. մենք վերցրել ենք այս խոսքերից այն, որ նրանք *չեն կարող հատուցել մեզ:* Եթե ես ծառայում

եմ որևէ եկեղեցում կամ համաժողովում Միացյալ Նահանգներում, ինձնից շնորհակալություն են հայտնում՝ «Մեսինջեր ինտերնեյշնլ»-ին հոնորար կամ զոհաբերություն տալով: Բազմաթիվ երկրներում ապրող առաջնորդները, որոնց կյանքերում մենք ներդրում ենք կատարել, չեն կարող անել դա: Մեր թիմի բոլոր անդամները՝ մեր գործունեությունը հովանավորող գործարարները և եկեղեցական առաջնորդները, ինչպես նաև մեր «Մեսինջերի» աշխատակազմը գիտակցում են, որ մենք մեծ արտոնություն ունենք. մենք տալիս ենք՝ առանց ակնկալելու որևէ հատուցում այն մարդկանցից, ում օգնել ենք:

Մի քանի տարի առաջ ես ուղևորվել էի Երևան՝ Հայաստան, որտեղ ամբողջ Մերձավոր Արևելքից հազարավոր առաջնորդներ էին եկել՝ համաժողովի մասնակցելու համար: Այդ ընթացքում մենք հանդիպում ունեցանք Իրանից, Աֆղանստանից, Սիրիայից և նման երկրներից եկած հովիվների հետ՝ առանձին լսարանում: Նկարահանումն արգելված էր. այդ մարդիկ չէին ցանկանում, որ իրենց տեսնեին: Աստծո ներկայությունն ուժգին էր, և ես շարունակ մտածում էի. *«Այս առաջնորդնե՛րը պետք է քարոզեն մեզ, ոչ թե Լիզան և ես՝ նրանց»:* Իմ խոսքի մեջ ես ասացի նրանց.

- Բոլորդ համարում եք, որ հերոսները Լիզան և ես ենք: Սակայն հերոսները ոչ թե Ջոն և Լիզա Բիվերներն են, այլ այն գործարարները և եկեղեցիները, որոնք միլիոնավոր դոլարներ են նվիրաբերել՝ ձեզ մեր նյութերով օրհնելու համար: Նրա՛նք են իրական հերոսները:

Եվ կարճ ժամանակ անց այդտեղ գտնվողներս չկարողացանք զսպել մեզ և լաց եղանք:

Այդ հանդիպումից հետո իրանցի հովիվներից մեկը հարցրեց.

- Ինչպե՞ս կարող են մարդիկ այդքան մեծ գումար նվիրաբերել նրանց, ում երբեք չեն տեսել:

Իմ պատասխանը չափազանց պարզ է թվում, բայց դա ճշմարտությունն է.

- Պատճառը Աստծո սերն է նրանց սրտերում:

Եվս մեկ անգամ արցունքները հոսեցին:

## ԱՎԵԼԻ ՄԵԾ ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒՄ

2019 թվականին մենք հասկացանք, որ մեր նյութերի տարածման վեբ-կայքը լիարժեք չէ: Այն արդյունավետ էր 2011 թվականին, երբ ստեղծեցինք, բայց այսօր այն անհարմար և սահմանափակ է: Օրինակ, սմարթֆոններով չափազանց դժվար է դրանից օգտվելը: Լիզան, մեր թիմի անդամներից շատերը և ես եղել ենք բազմաթիվ աղքատ և

անապահով երկրներում: Մենք չէինք կարող չնկատել, որ թեև մարդիկ ապրում էին վրաններում, հողաշեն տնակներում և փայտե հյուղակներում, նրանց մեծ մասն ինչ-որ տեսակի սմարթֆոն ուներ: Իրականում, նախատեսվում է, որ մինչև 2020 թվականի ավարտը սմարթֆոններ է ունենալու ավելի քան հինգ միլիարդ մարդ:

Անթիվ ճանապարհորդություններից հետո ակնհայտ դարձավ, որ շուտով, եթե ոչ արդեն հիմա, առցանց հաղորդակցության միջոցով հնարավոր կլինի հասնել յուրաքանչյուրին այս մոլորակի վրա: Ինչպես և մյուսները, ես զգացի, որ մենք հերթական «Հռոմեական ճանապարհի» պատմական ժամանակաշրջանում ենք:

Թույլ տվեք կարճ բացատրել: Սուրբ գիրքը հայտարարում է. «Բայց երբ որ ժամանակի լրումը եկավ, Աստված ուղարկեց Իր Որդուն» (Գաղատացիների 4.4): Ժամանակի լրումը վերաբերում է շատ բաների: Ժամանակի լրման կարևոր ցուցանիշներից մեկն այն է, որ Ավետարանը կհասնի ամբողջ հայտնի աշխարհին: Մ.թ.ա. 312 թվականից հռոմեացիները սկսեցին զարգացնել ցամաքային ճանապարհների և ծովային ուղիների ցանցեր, որոնք ծածկեցին այդ ժամանակվա ամբողջ հայտնի աշխարհը: Այն ժամանակ, երբ Հիսուսն ասաց՝ գնացե՛ք աշխարհով մեկ, այդ ճանապարհները լավ զարգացած էին, ինչը թույլ տվեց արագորեն տարածել Աստծո Խոսքը ամբողջ հայտնի աշխարհում:

Ես հավատում եմ, որ կրկին մոտենում է ժամանակի լրումը՝ Հիսուսի Երկրորդ գալուստի ճանապարհը պատրաստելու համար. ինտերնետը մեր օրերի «Հռոմեական ճանապարհն» է: Մենք ունենք կարողություն տարածելու Աստծո Խոսքը ամբողջ աշխարհում՝ բոլոր ազգերն աշակերտելու համար:

Գիտակցելով սա՝ մեր թիմը կրկին սկսեց աղոթել, երազել և մարտավարություն կառուցել: Ամիսներ տևող ուսումնասիրություններից հետո մենք սկսեցինք մի նախագիծ ԱՄՆ-ում գտնվող հավելվածներ և վեբ-կայքեր պատրաստող լավագույն ընկերություններից մեկի հետ: Մենք ստեղծեցինք աշակերտության համար նախատեսված հարթակ, որն արագագործ և բազմաֆունկցիոնալ է, և որից կարելի է հեշտորեն օգտվել թե՛ «iPhone» և «Android» սմարթֆոններով, թե՛ պլանշետներով և համակարգիչներով: Մեր նպատակն էր ստեղծել լավագույն հարթակը, որը հնարավոր է մերօրյա տեխնոլոգիաներով: Մենք ցանկանում էինք, որ եկեղեցական առաջնորդներն ամենուր, բայց մասնավորապես՝ անապահով երկրներում, ունենան լավագույնը: Ակնառու է այն, որ արդեն գրանցել ենք միլիոնավոր օգտատերերի՝ 227 երկրնե-

րից և տարածքներից, որոնք սովորում են մեր հարթակում հասանելի գրքերով, դասընթացներով և այլ աշակերտական նյութերով: Մնացել է ազդեցություն ունենանք միայն հաշված ազգերի մեջ՝ բոլոր ազգերին հասնելու համար:

Որոշ ժամանակ անց մենք սկսեցինք մտածել բազմապատկման լրացուցիչ միջոցների մասին: Մեր հարթակի արդյունավետությունը բարձրացնելու և ընդլայնելու համար որոշեցինք հրավիրել այլ ակնառու ուսուցիչների՝ իրենց եզակի և վերափոխող ուղերձներով: Այժմ առաջնորդներն աշխարհով մեկ կարող են օգտագործել իրենց համակարգիչները, պլանշետները կամ հեռախոսները, որպեսզի սովորեն և՛ անհատապես, և՛ փոքր խմբերում կամ եկեղեցիներում: Այս քայլը ոչ միայն կբազմապատկի մեր հարթակի արդյունավետությունը, այլև մեր ուսմունքները կդարձնի ավելի մնայուն, քան տպագրված գիրքը, և կհասնի գալիք սերունդներին[1]:

Ի՞նչ կլիներ, եթե Լիզան և ես որոշեինք չգրել: Կամ ի՞նչ կլիներ, եթե մենք բավարարվեինք հանրաճանաչ հեղինակներ լինելով և չսկսեինք դասընթացներ պատրաստել: Ի՞նչ կլիներ, եթե մեր թիմը բավական համարեր միայն անգլախոս աշխարհում անհատներին և եկեղեցիներին հասնելը: Ի՞նչ կլիներ, եթե մեր աշխատակազմը չցանկանար ներդնել իր ուժերը՝ Բրուուդմուրում ամբողջ Միացյալ Նահանգներից թիմ հավաքելու համար: Յուրաքանչյուր մակարդակ ուներ իր դժվարությունները, որոնք մեծապես ընդլայնեցին մեզ՝ ստիպելով ապավինել Աստծո շնորհքին: Գտնվելով յուրաքանչյուր մակարդակի վրա, շատ ավելի հեշտ կլիներ մնալ նույն տեղում, քան գնալ առաջ՝ մարդկանց ավելի արդյունավետ ծառայելու համար:

Երբ լսենք Աստծո Հոգուն, մենք քայլ առ քայլ կգնանք դեպի ավելի մեծ բազմապատկում: Նա ցույց չի տա ձեզ բոլոր քայլերը սկզբից, և նույնիսկ հաջորդ երկու կամ երեք քայլերը: Շատ ավելի հեշտ կլիներ, եթե հնարավոր լիներ նայել ապակե գնդի մեջ, երբ ես դեռ երեսունն անց էի, և տեսնել ամբողջ ճանապարհը, որով մեր թիմն արդեն անցել է այս երեսուն տարում: Այնուամենայնիվ, եթե դա հնարավոր լիներ, մենք այդքան եռանդուն կերպով չէինք պայքարի յուրաքանչյուր քայլի համար՝ աղոթելով և հետևելով Աստծո առաջնորդությանը: Նույնպես, մեզանում չէին ձևավորվի այն հավատքը և հաստատակամությունը, որոնք ձեռք բերեցինք հնազանդության յուրաքանչյուր քայլի հետ:

Բազմապատկումը մարդու գաղափարը չէ. այն Աստծո գաղա-

---

1 Որպեսզի ավելին իմանաք այս մասին, թե ինչպես կարող եք ներգրավվել այս գործի մեջ, այցելե՛ք www.MessengerX.com:

փարն է: Կրկին, այն Աստծո առաջին պատվերն էր մարդկությանը. «Ցանկացած պարգև, որը Ես կվստահեմ ձեզ, Իմ թագավորությունը բազմապատկելու համար է» (Ծննդոց 1.22-ի և Մատթեոս 25.14-29-ի իմ շրջասությունը): Թույլ տվեք կրկնել այս անչափ կարևոր ճշմարտությունը. բազմապատկումը չպետք է ճնշի ձեզ, քանի որ, ի վերջո, այն Նրա պարգևն է: Դուք միայն պետք է աղոթեք, լսեք, հավատաք և հնազանդվեք այն ամենին, ինչ Նա դնում է ձեր սրտում:

Նա Ինքը կառաջնորդի ձեզ բազմապատկման:

Միգուցե մտածեք. *«Իմ սիրտը վառվում է այն վկայությունից, որը դուք տվեցիք վերջին երեք գլուխներում: Բայց ես երիտասարդ մայր եմ, ուսանող եմ, պրոֆեսիոնալ մարզիկ եմ, աշխատող եմ. ինչպե՞ս կարող եմ բազմապատկել Աստծո թագավորությունը»:*

Մենք կխոսենք այս մասին հաջորդ գլխից:

## ՄՏՈՐԵՔ

1. Աստծո մատակարարումը կամ միջամտությունը, որին մենք սպասում ենք, հաճախ գալիս է մարտավարական գաղափարի տեսքով: Ձեր կյանքում եղե՞լ են իրավիճակներ, որոնք փոխվել են Աստծուց ոգեշնչված գաղափարի միջոցով:

2. Իմաստություն ստանալը ամենակարևոր բանն է, որ կարող եք անել: Ձեր կյանքի ո՞ր բնագավառում դուք իմաստության կարիք ունեք: Ինչպե՞ս պետք է մոտենաք Աստծուն՝ Նրա իմաստությունը ստանալու համար:

3. Մարտավարական գաղափարը պարգև է Աստծուց, որը կարող է տանել մեզ արդյունավետության նոր մակարդակ և տալ զորություն՝ բազմապատկման համար: Ի՞նչ քայլեր են պահանջվում ձեզնից մարտավարական գաղափար ստանալուց հետո:

# MessengerX

*Ձեր հավելվածը՝ ամենօրյա աշակերտության համար*



## Լիովին անվճար

Պարզապես ներբեռնե՛ք ձեր
շարժական սարքի վրա և օգտագործե՛ք:
Կամ օգտագործեք վեբ-տարբերակը
հետևյալ հասցեով.

**MessengerX.com**

## 110 + լեզուներ, որոնց թիվն ավելանում է

- Ակնթարթորեն դիտե՛ք թարգմանված նյութեր ավելի քան 110 լեզուներով:
- Եվ մենք շարունակ ավելացնում ենք նոր թարգմանված նյութեր:

# Դիտե՛ք: Կարդացե՛ք: Լսե՛ք:

Հետազոտե՛ք նյութերի ընդարձակ դարանը, որն ընդգրկում է դասընթացներ, էլեկտրոնային գրքեր, աուդիո գրքեր, կարճամետրաժ ֆիլմեր և ավելին, որոնք կարող եք դիտել, կարդալ և լսել:






## Ավելի շատ հնարավորություններ, որոնք ձեզ դուր կգան

- Պարզ և հեշտ գործիքներ, որոնք կօգնեն ձեզ կիսվել այս նյութերով:
- «Chromecast» և «AirPlay»՝ ձեր սիրելի սմարթ հեռուստացույցերով դիտելու համար:
- Պահպանե՛ք ձեր առաջադիմությունը ձեր բոլոր սարքերի վրա: Պահպանե՛ք ձեր նախընտրելի նյութերը ձեր գրադարանում՝ արագ մուտքի համար:
- Ներբեռնե՛ք նյութերը ձեր սարքի վրա՝ անցանց դիտելու համար:
- Խելացի որոնում և զտում՝ գտնելու համար հենց այն, ինչ փնտրում եք:




## Աճ ամենակարևոր բնագավառներում

Հետազոտե՛ք այնպիսի թեմաներ, ինչպիսիք են ընտանիքը, առողջ փոխհարաբերությունները, ձեր կյանքի նպատակը, ազատությունը պոռնոգրաֆիայից, ձեր հավատքը կառուցելը, Աստծո ձայնը լսելը, ձեր գործը ղեկավարելը և ավելին:

## Ձեր աճի ուղին

MessengerX-ի նպատակն է օգնել ձեզ, որ անեք հաջորդ քայլը ձեր կյանքում: Մենք ստեղծել ենք աշակերտական ուղի՝ ազդեցիկ գործիքներով, որոնք կօգնեն ձեզ մնալ այդ ուղու վրա:




**1** Ներբեռնե՛ք **MessengerX** հավելվածը «Apple Store»-ից և «Google Play»-ից:

**2** Ստեղծե՛ք հաշիվ և օգտվե՛ք հավելվածից ձեր լեզվով:

**3** Որոնե՛ք, կարդացե՛ք, դիտե՛ք, լսե՛ք և ներբեռնե՛ք ձեր նախընտրելի նյութերը և կիսվե՛ք դրանցով:

## Դարձե՛ք աշակերտ և աշակերտե՛ք

Լինելով **MessengerX**-ի մաս, դուք կօգնեք մեզ տրամադրել այս թարգմանված նյութերն աշխարհով մեկ գտնվող մարդկանց:

***Որովհետև յուրաքանչյուրն արժանի է իմանալու:***

MessengerX

Download on the App Store

GET IT ON Google Play

MessengerX.com

*«Իր շնորհքով, Աստված տվել է մեզ տարբեր պարգևներ (խարիզմա)՝ որոշակի գործեր արդյունավետ կատարելու համար: Այնպես որ, եթե Աստված տվել է ձեզ մարգարեանալու կարողություն, խոսեք այնքան հավատքով, որքան որ Աստված տվել է ձեզ: Եթե ձեր պարգևն այլ մարդկանց ծառայելն է, արդյունավետ ծառայեք նրանց: Եթե դուք ուսուցիչ եք, արդյունավետ սովորեցրեք: Եթե ձեր պարգևը մարդկանց խրախուսելն է, խրախուսող եղեք: Եթե այն բաշխելն է, բաշխեք առատաձեռնությամբ: Եթե Աստված տվել է ձեզ առաջնորդելու կարողություն, լրջորեն պատասխանատվություն ստանձնեք: Եվ եթե դուք այլ մարդկանց բարություն ցուցաբերելու պարգև ունեք, արեք դա ուրախությամբ»:*

– Հռոմեացիների 12.6-8, NLT

9

# Ներդրում

Պողոս առաքյալը թվարկում է այն բազմապիսի պարգևները, որոնք Աստված տվել է Իր ծառաներից յուրաքանչյուրին: Կրկին, ես չեմ հավատում, որ այս պարգևների ցուցակը սպառիչ է, բայց այն ընդգրկում է աստվածային կարողությունների լայն շրջանակ: Միգուցե դուք չհամաձայնեք ինձ հետ, սակայն թույլ տվեք բացատրել:

Պողոսի ցուցակում ես չեմ տեսնում երգելու, դատական գործ պաշտպանելու, վիրահատությամբ ուռուցքներ հեռացնելու, ոգեշնչված նկարներ պատկերելու, երաժշտական գործիքներ նվագելու և Աստծուց տրված այլ կարողություններ, որոնց մենք հանդիպում ենք ամեն օր: Ահա թե ինչու չեմ հավատում, որ այս պարգևների ցուցակը սպառիչ է: Եթե դուք, միևնույն է, համաձայն չեք ինձ հետ, ես հարգում եմ ձեր դիրքորոշումը. այս թեման չունի հետագա քննարկման կարիք, քանի որ այն մեր գրքի գլխավոր թեմաներից չէ:

Վերադառնալով Պողոսի խոսքերին, ինձ դուր է գալիս, որ «Նոր կենդանի թարգմանությունը» վերծանում է *«խարիզմա»* բառը որպես «որոշակի գործեր արդյունավետ կատարելու» կարողություն: Անկասկած, այս ձևակերպումը ցույց է տալիս այս գրքի գլխավոր շեշտադրումը: Անցած երեք գլուխները վկայում էին մարգարեանալու և սովորեցնելու պարգևների բազմապատկման մասին: Եկեք ուշադրություն դարձնենք մեկ այլ՝ *բաշխելու* պարգևի վրա:

## ՆԵՐԴՐՈՒՄ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ես մի ընկեր ունեմ Մայք անունով: Նա դարձավ հավատացյալ և սկսեց հետևել Հիսուս Քրիստոսին տասնմեկ տարեկանից: Սակայն կյանքի ընթացքում նա անարդյունավետ էր Աստծո թագավորությունը կա-

ռուցելու մեջ: Նրա դժգոհությունն այդ պատճառով շարունակ ավելանում էր: Ի վերջո, 35 տարեկանում նա արդեն հոգնել էր այն բանից, որ ինքը չի անում ոչինչ՝ հավիտենական ազդեցություն թողնելու համար: Հաճախ մարդիկ, որոնք հանգում են նման եզրակացության, փորձում են փոփոխություններ առաջացնել իրենց կյանքում՝ առանց գիտելիքի, իմաստության և հավատքի: Բարեբախտաբար, Մայքի մոտեցումն այլ էր: Նա որոշեց, որ տևական ազդեցություն թողնելու առաջին քայլն իր «ավազանը լցնելն» էր: Այնպես որ, հաջորդ վեց ամսում նա անգիր սովորեց երկու հազար խոսք Աստվածաշնչից:

Այդ վեցամսյա շրջանից կարճ ժամանակ անց որոշեց այցելել մի առաջնորդական համաժողով Արիզոնա նահանգի Ֆինիքս քաղաքում: Նա այնքա՜ն աղքատ էր, որ չէր կարող հյուրանոցային համար վարձել, և ստիպված էր տասնմեկ ուսանողի հետ տեղավորվել երեք սենյակ ունեցող բնակարանում:

Համաժողովի ընթացքում հայտարարվեց հատուկ զոհաբերություն: Համաժողովի առաջնորդը խրախուսեց մասնակիցներին աղոթել այն բանի համար, թե ինչ իրենք պետք է զոհաբերեին: Մայքը լսեց Տիրոջից հետևյալը. «Ուզում եմ, որ 200 դոլար զոհաբերես»:

«Աստվա՛ծ, դա իմ ունեցած ամբողջ գումարն է», - ընդդիմացավ Մայքը:

Տերը մեղմորեն պատասխանեց. «Ես չեմ խնդրում, որ տաս ավելին»:

Մայքը հնազանդվեց և զոհաբերեց իր ունեցած գումարն ամբողջությամբ: Դրանից հետո Աստված պատվիրեց Մայքին մինչև այդ տարվա ավարտը զոհաբերել ամսական 100 դոլար՝ բացի իր տասանորդից:

Շուտով Աստված սկսեց մարտավարական ծրագրեր տալ Մայքին, և նրա նոր գործը կայուն ձևով ընդլայնվեց: Հաջորդ տարի Մայքը զգաց, որ Աստծո թագավորությունը կառուցելու համար պետք է զոհաբերեր ամսական 400 դոլար՝ բացի իր տասանորդից:

Մեկ տարի անց նա արդեն զոհաբերում էր ամսական 1.000 դոլար՝ բացի իր տասանորդից: Հաջորդ տարի այդ գումարը հասավ 4.000 դոլարի՝ բացի իր տասանորդից, իսկ երկու տարի անց հասավ 10.000 դոլարի՝ բացի իր տասանորդից:

Այդ ժամանակ Մայքը խնդրեց Տիրոջը թագավորության համար 10 միլիոն դոլար զոհաբերելու կարողություն տալ իրեն: Թվում էր՝ նրա խնդրանքը մեծ էր, գրեթե անիրականանալի, բայց նա հաստատուն էր իր համոզվածության և խնդրանքի մեջ: Այնուամենայնիվ, այն, ինչ նա

լսեց իր սրտում, ցնցեց նրան. «Որդի՛ս, ինչո՞ւ ես սահմանափակում ինձ»: Մայքը հեռացրեց իր սահմանափակումները և սկսեց հավատալ ավելիի համար: Կարճ ժամանակ անց նրա զոհաբերություններն արագորեն ավելացան: Հաջորդ տարի նա զոհաբերում էր ամսական մոտավորապես 17.000 դոլար՝ բացի իր տասանորդից: Այդ գումարը հասավ ամսական 25.000-ի, իսկ հետո՝ 40.000-ի, և որոշ ժամանակ անց՝ 50.000-ի: Ի վերջո, Մայքը սկսեց զոհաբերել ամսական 100.000 դոլար՝ բացի իր տասանորդից՝ Աստծո թագավորությունը կառուցելու համար: Վերջին անգամ, երբ զրուցում էի նրա հետ, նա հասել էր ամսական 150.000 դոլարի զոհաբերության՝ բացի իր տասանորդից:

Մայքը շատ բարեկեցիկ կյանք է վարում, բայց ապրում է իր եկամտի մոտավորապես 10-15 տոկոսով: Այո՛, դուք ճիշտ կարդացիք. նա զոհաբերում է իր տարեկան եկամտի գրեթե 85-90 տոկոսը: Նա վերագրում է իր հաջողությունը Աստծո Խոսքը սովորելուն, աղոթքի մեջ Աստծո ձայնը լսելուն և թույլ է տալիս, որ իրենից հասուն քրիստոնյաներն աշակերտեն իրեն:

Խոսելով բազմապատկման մասին, անկարելի է անտեսել *բաշխելը*, քանի որ, որպես կանոն, այն բազմապատկման գլխավոր բաղադրիչն է: Բարի շարժառիթներ ունեցող բազմաթիվ հավատացյալներ այսպես են մտածում ֆինանսական *զոհաբերության* մասին. *«Ի՞նչ եմ ես կամենում տալ՝ հանուն այլ մարդկանց»:* Դա ազնիվ և բարեպաշտ մոտեցում է, բայց եթե նրանք միայն այդպես են դիտարկում զոհաբերությունը, ապա նրանց պատկերացումը լիարժեք չէ: Թույլ տվեք բացատրել:

Առաջինը՝ սա ճիշտ է. Աստված դրել է մարդկանց հանդեպ ունեցած Իր սերը մեր սրտերում, և այդ պատճառով, մեզանում անձնվիրաբար *բաշխելու* և *ծառայելու* ցանկություն կա: Այնուամենայնիվ, *իմաստուն* բաշխողը դիտարկում է զոհաբերությունը ոչ միայն որպես սիրո նվեր և ծառայություն, այլև որպես *ներդրում:* Ներդնելը նշանակում է ձեռնպահ մնալ որևէ միջոց սպառելուց՝ այն ավելացնելու համար: Հատկապես ֆինանսների դեպքում դա նշանակում է ներկա պահին չծախսել միջոցները, որպեսզի օգտագործեք դրանք՝ ավելացման համար:

Մի քանի տարի առաջ Լիզան և ես գտանք երկու հողատարածք: Մենք հասկացանք, որ դրանք վաճառվում էին ցածր գնով, և որ ժամանակի ընթացքում դրանց գինն ավելանալու էր: Մենք ունեինք կանխիկ գումար՝ երկուսն էլ գնելու համար, և որոշեցինք հրաժարվել մեր կանխիկ գումարն անձնական սպառման համար ծախսելուց՝ մեր ֆինանսներն ավելացնելու համար: Այդ հողատարածքների գինը բարձրացավ շատ ավելի, քան մենք ակնկալում էինք, և երկու տարի անց մեր ներդ-

րումը կրկնապատկվեց: Այժմ մենք կարող էինք ներդրում կատարել ավելի բարձր մակարդակի վրա:

Հիսուսն ասում է, որ ներդնելով Իր թագավորության մեջ, մենք *«բազմապատիկ* հատուցում կստանանք *այս կյանքում»* (Ղուկաս 18.29,30, NLT): Նա չի ասում *«հաջորդ* կյանքում», այլ՝ *«այս* կյանքում»: Լիզան և ես խանդավառվեցինք, քանի որ այդ հողատարածքների մեջ ներդրված գումարը կրկնապատկվեց: Այնուամենայնիվ, այն, ինչ Հիսուսը պնդում է, նույնիսկ մոտ չէ դրան. կա ահռելի տարբերություն *կրկնակիի* և *բազմապատիկի* միջև: Ինչպիսի՞ ներուժ ունի *բազմապատիկ* ավելացած ներդրումը: Մենք կարող ենք պատկերացում կազմել այս մասին Մայքի կյանքի օրինակով:

Պողոս առաքյալը համեմատում է մեր բաշխելը սերմեր ցանելու հետ: Կախված արտաքին պայմաններից, այն ցորենը, որը չի օգտագործվում սննդի մեջ, այլ ներդրվում է հողի մեջ, կարող է տալ մինչև հարյուրապատիկ արդյունք: Սա *բազմապատիկ* հատուցում է: Ահա թե ինչու է գրված. «Հոժարաբար տուր և ավելի հարուստ կդառնաս. ժլատ եղիր և կկորցնես ամեն ինչ» (Առակաց 11.24, NLT): Սողոմոնը, Հիսուսը և Պողոսը չէին շեշտադրի բաշխելու վերաբերյալ այս ճշմարտությունը, եթե կարիք չլիներ, որ հավատացյալները մտածեին առատության և բազմապատկման մասին:

Շատերը սիրո զոհաբերություն կհամարեն այն, որ Մայքը որոշել է ապրել իր եկամտի 10-15 տոկոսով: Այնուամենայնիվ, Մայքի պատկերացումն ավելի լայն է: Քանի որ նա լցված է Աստծո իմաստությամբ, քանի որ նա լուսավորել է իր անձը երկու հազար անգիր սովորած աստվածաշնչյան խոսքերով, նա դիտարկում է դա ոչ միայն որպես սիրո զոհաբերություն, այլև որպես ներդրում:

Նա դիտարկում է դա նույն կերպով, ինչպես Լիզան և ես դիտարկում էինք այդ երկու հողատարածքները: Նրա մոտեցումը կարելի է համեմատել հայտնի ռեստորան ունեցող մի ընտանիքի մարտավարության հետ: Փոխարենը ամբողջ եկամուտը սպառելը, այդ ընտանիքն առանձնացնում է եկամտի զգալի մասը, որպեսզի ձեռք բերի նոր շենքեր, վարձի նոր աշխատողների, գնի ավելի շատ կերակուր և անի այն, ինչ անհրաժեշտ է՝ իրենց գործը մեծացնելու համար: Ճիշտ վարվելու դեպքում նրանք կունենան հինգ ռեստորան, և նրանց եկամուտը կհնգապատկվի: Արդյունքում կկարողանան օրհնություն լինել ավելի շատ մարդկանց համար, քան՝ եթե նրանք ընդամենը մեկ ռեստորան ունենային:

Եթե Մայքը դիտարկեր իր զոհաբերությունները այլ կերպով, բայց

ոչ՝ որպես ներդրում, նա չէր սկսի հասկանալ բաշխելու այս ավելի խոր իմաստը: Տաղանդների առակը հենց այս մասին է: Կարդացե՛ք Հիսուսի խոսքերը. «Այն ծառան, որը հինգ պարկ արծաթ ստացավ, սկսեց ներդնել այդ փողը և վաստակեց ևս հինգը» (Մատթեոս 25.16, NLT): Նա օգտագործում է հենց *ներդնել* բառը՝ ցույց տալու համար, թե ինչպես այդ ծառան բազմապատկեց իր ստացածը:

## ԵՎՍ ՄԵԿ ԱՌԱԿ ԲԱԶՄԱՊԱՏԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Կարդանք ևս մեկ առակ, որը Հիսուսն օգտագործեց՝ բազմապատկումը նկարագրելու համար.

> «Բազմությունը լսում էր այն ամենը, ինչ Հիսուսն ասում էր: Եվ քանի որ Նա մոտենում էր Երուսաղեմին, մի պատմություն պատմեց նրանց՝ շտկելու համար այն տպավորությունը, թե Աստծո թագավորությունն անմիջապես սկսվելու է» (Ղուկաս 19.11, NLT):

Ինձ դուր է գալիս այս առակի ներածությունը: Մարդիկ սպասում էին, որ Հիսուսը հաստատելու էր թագավորությունը և ազատելու էր իրենց Հռոմի ճնշումից և իշխանությունից: Նա շտկեց նրանց մտածելակերպը՝ տալով իրատեսական պատկերացում. Նա ցանկանում էր, որ մենք կառուցենք Աստծո թագավորությունը Իր գնալուց հետո: Բայց ինչպե՞ս է դա կատարվելու: *Ներդրման* միջոցով: Լսե՛ք այս պատմությունը.

> «Մի ազնվական կանչվեց մի հեռավոր կայսրություն՝ թագավորական թագ ստանալու և վերադառնալու համար: Մինչև մեկնելը, նա կանչեց իր ծառաներից տասին և բաժանեց նրանց միջև տասը մնաս արծաթ՝ ասելով. *«Ներդրե՛ք* սա ինձ համար, մինչև իմ գալը»» (Ղուկաս 19.12,13, NLT):

Ինչպես և Մատթեոսի առակի մեջ, Նա պատվիրում է մեզ «ներդնել»: Մենք չպետք է ծույլ լինենք այն բանում, ինչը վստահված է մեզ, այլ պետք է *քրտնաջան* և *խելամտորեն* աշխատենք:

Թեև այս երկու առակները նույնն են թվում, այնուամենայնիվ, դրանք տարբեր են: Ուսումնասիրենք դրանց տարբերությունները: Առաջինը՝ Մատթեոսը խոսում է երեք ծառայի մասին, իսկ Ղուկասը՝ տասը ծառայի: Երկրորդը՝ Մատթեոսի պատմության մեջ ծառաների ստացած արծաթը տարբեր չափերի էր, իսկ այս առակում յուրաքանչյուրին տրվեց հավասար չափով՝ մեկ մնաս արծաթ: Երրորդը՝ Մատթեոսի պատմութ-

յան մեջ չափը ոչ թե մեկ մնաս էր, այլ 75 անգամ ավելի մեծ միավոր՝ մեկ տաղանդ: Համեմատելով այս երկու առակները, կարծում եմ, որ Մատթեոսի առակն այն պարգևների մասին է, որոնք չեն տրվում հավասարաչափ, իսկ Ղուկասի առակն այն ամենի մասին է, ինչը յուրաքանչյուր հավատացյալ ստացել է Աստծուց նույն չափով՝ հավատքը՝ որպես հիմք, Աստծո սերը, Աստծո Խոսքը, մեր ուխտի օրհնությունները և այլն: Այնուամենայնիվ, երկուսի հիմքում էլ ընկած են նույն սկզբունքները: Շարունակենք այս պատմությունը.

«Այն բանից հետո, երբ նա թագավորական թագ ստացավ, վերադարձավ և կանչեց այն ծառաներին, որոնց տվել էր փողը: Նա ցանկանում էր իմանալ, թե որքան էին նրանց շահույթները: Առաջին ծառան զեկուցեց. «Տե՛ր, ես *ներդրեցի* քո փողը և սկզբնական գումարից *տասն անգամ* ավելի աշխատեցի»:

«Կեցցե՛ս, - բացականչեց թագավորը: - Դու լավ ծառա ես: Դու *հավատարիմ* ես եղել այն փոքրի մեջ, որը վստահեցի քեզ. այնպես որ, որպես վարձատրություն, դու կլինես *տասը քաղաքի* կառավարիչ»» (Ղուկաս 19.15-17, NLT):

Մենք պետք է ընդգծենք մի քանի միտք: Առաջինը՝ այդ ծառան ներդրեց այն, ինչ տրվել էր իրեն: Երկրորդը՝ նա *քրտնաջան* և *խելամտորեն* աշխատեց, ինչի արդյունքը տասնապատիկ բազմապատկումն էր: *Խելամտորեն* աշխատելը նշանակում է վարվել Աստծո իմաստությամբ, իսկ դա տեղի է ունենում միայն Աստծո խորհուրդը լսելու դեպքում, ինչպես որ վարվում էր իմ ընկեր Մայքը: Երրորդը՝ կրկին, *բազմապատկումն* ուղղակիորեն վերագրվում է *հավատարմությանը:* Այստեղ նշված չէ ոչ մի գործողություն կամ առաքինություն, որովհետև Աստծո համար հավատարիմ լինելը նշանակում է բազմապատկել: Վերջինը, ծառայի հավիտենական վարձատրությունը համաչափ է իր բազմապատկմանը. առաջին ծառային վստահվեց տասը քաղաքի կառավարում:

Այժմ դիտարկենք երկրորդ ծառային.

> «Հաջորդ ծառան զեկուցեց. «Տե՛ր, ես ներդրեցի քո փողը և աշխատեցի հինգ անգամ ավելի սկզբնական գումարից»:
>
> «Կեցցե՛ս, - ասաց թագավորը: - Դու կլինես հինգ քաղաքի կառավարիչ»» (Ղուկաս 19.18,19, NLT):

Այս ծառան չբազմապատկեց տասն անգամ, այլ՝ հինգ: Նրա հավիտենական վարձատրությունն արտացոլեց նրա ներդրման մակարդակը՝ հինգ քաղաք, ոչ թե տասը: Ինչո՞ւ նա չբազմապատկեց տասն անգամ, ինչպես մյուս ծառան: Միգուցե նա նույնքան ուշադի՞ր չէր Աստծո

իմաստությունը լսելուն: Իսկ եթե նա հնարավորություննե՞ր էր բաց թողել: Հնարավո՞ր է, որ նա կանգ էր առել իր հետագա տարիների վրա, ինչպես մեր առաջին գլխում պատրաստվում էր անել Սթենը: Կամ նա թոշակի անցնելու մտածելակե՞րպ ուներ:

Մի քանի տարի առաջ քարոզում էի բազմապատկման մասին մի առաջնորդական համաժողովի ընթացքում: Կալիֆոռնիայում կոմերցիոն անշարժ գույք կառուցող գլխավոր գործարարներից մեկը, որն արդեն միլիոնավոր դոլարներ էր նվիրաբերել Աստծո թագավորությանը, մոտեցավ ինձ քարոզից հետո: Նա նայեց ինձ ցնցված, բայց նույնպես լուսավորված հայացքով, և ասաց.

- Ջո՜ն, ես սկսել էի մտածել կանգ առնելու մասին, քանի որ հաջողության էի հասել: Կարելի է հեշտորեն տրվել այս մտածելակերպին, բայց այժմ տեսնում եմ, որ դա սխալ է: Ես կշարունակեմ ջանասիրաբար աշխատել և բազմապատկել այն, ինչ Աստված տվել է ինձ:

Հնարավոր է, որ այդ մարդու ի սրտե ապաշխարությունը փոխի նրա ընթացքը, և նա հնգապատիկ բազմապատկողից դառնա տասնապատիկ բազմապատկող:

Իսկ երրո՞րդ ծառան:

> «Բայց երրորդ ծառան վերադարձրեց միայն սկզբնական գումարը և ասաց. «Տե՜ր, ես թաքցրի քո փողը և ապահով պահեցի: Ես վախենում էի, քանի որ դու այնպիսի մարդ ես, որի հետ դժվար է գործ ունենալը. դու վերցնում ես այն, ինչը քոնը չէ, և հնձում ես այն բերքը, որը չես ցանել»»:
>
> «Չա՜ր ծառա, - թնդաց թագավորը: - Քո խոսքերը դատապարտում են քեզ: Եթե դու գիտեիր, որ ես խիստ մարդ եմ, որը վերցնում է այն, ինչն իրենը չէ, և հնձում է այն բերքը, որը չի ցանել, ինչո՞ւ չավանդեցիր իմ փողը բանկում: Ես գոնե կկարողանայի տոկոսներ ստանալ դրանից» (Ղուկաս 19.20-23, NLT):

Ինչպես և Մատթեոսի առակում, այս ծառան ուներ նույն երկու լուրջ խնդիրները: Առաջինը՝ նա վախեցած էր, և երկրորդը՝ նա չէր ճանաչում իր տիրոջ բնավորությունը: Այս առակը ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ Աստծո տվածը *պահպանելը հավատարմություն* չէ, այլ՝ *չարություն:* Դուք նկատեցի՞ք, որ թագավորը *թնդաց:* Ծուլությունը բարկացրեց այդ կառավարչին, և նա ցույց տվեց դա: Շատ սթափեցնող է, եթե մտածեք այդ մասին:

Այն, ինչ տեղի ունեցավ դրանից հետո, է՜լ ավելի է հաստատում մեր հետևությունը Մատթեոսի առակից.

«Եվ, շրջվելով իր մոտ կանգնածներին, թագավորը հրամայեց. «Վերցրե՛ք փողն այս ծառայից և տվե՛ք նրան, ով տասը մնաս ունի»:

«Բայց, տե՛ր, - ասացին նրանք, - նա արդեն տասը մնաս ունի»:

«Այո՛, - պատասխանեց թագավորը, - և ովքեր արդյունավետ են օգտագործում այն, ինչ իրենց տրվել է, է՛լ ավելին կտրվի: Բայց ովքեր ոչինչ չեն անում, նույնիսկ այն փոքրը, որ ունեն, կվերցվի»» (Ղուկաս 19.24-26, NLT):

Եվս մեկ անգամ տեսնում ենք, որ Աստված սոցիալիստական Արարիչ չէ, այլ ավելի «կապիտալիստական» է Իր մտածելակերպով: Հիսուսը հատուկ ընդգծեց, որ այնտեղ գտնվող մարդիկ ընդդիմացան, քանի որ առաջին ծառան արդեն իսկ տասը մնաս արծաթ ուներ, և տերը շտկեց նրանց «արդար» մտածելակերպը. «Ովքեր արդյունավետ են *ներդնում*, ավելին կտրվի»: Եվ հակառակը. «Ովքեր *պահպանում* են, նույնիսկ այն փոքրը, որ ունեն, կվերցվի»:

Ե՜վ զարմանալի է, և՜ զարհուրելի, որ եթե մենք չանենք այն, ինչ արեց Մայքը՝ տևական ժամանակ չտրամադրենք Աստծո Խոսքին և Նրա հետ հաղորդակցվելուն, մենք անկնկատ կսկսենք պատկերացնել Աստծո բնավորությունը այն միջավայրի տեսանկյունից, որտեղ ապրում ենք: Մենք կարող ենք պատկերացնել Նրան մեր հասարակության տեսանկյունից, Հոլիվուդի տեսանկյունից, Ինստագրամի տեսանկյունից, որևէ լրատվական ցանցի տեսանկյունից, խիստ հոր տեսանկյունից, կրոնի տեսանկյունից, ինչպես նաև ցանկացած փորձառության և հասարակական մտածելակերպի տեսանկյունից, որը կա՛մ դուր է գալիս մեզ, կա՛մ դուր չի գալիս: Սակայն երբ մենք մտերմորեն ճանաչենք Աստծուն և Նրա Խոսքը, կբացահայտենք այդ սխալական տեսանկյունները:

## ԲՈԼՈՐՆ ԵՆ ԿԱՆՉՎԱԾ ԲԱՇԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Մայքն ունի *բաշխելու պարգև.* նա ակնառու է դրանում: Այնուամենայնիվ, բոլորս պետք է *բաշխողներ* լինենք:

Որպես պարզաբանում, թույլ տվեք համեմատել սա աշխարհով մեկ գնալու և Ավետարանը քարոզելու Հիսուսի հանձնարարականի հետ (կարդացե՛ք Մարկոս 16.15,16): Այս պատվերը տրված է բոլոր հավատացյալներին: Բոլորս պետք է դեսպաններ լինենք և Ավետարանով կիսվենք կորսվածների հետ: Այս մասին գրում է նաև Պողոսը. «Կատարի՛ր ավետարանչի աշխատանքը» (Բ Տիմոթեոս 4.5, NLT), և նրա խոսքերն ուղղված են յուրաքանչյուր հավատացյալի:

Այնուամենայնիվ, գոյություն ունի առանձին ծառայություն և պարգև, որը կոչվում է *ավետարանիչ:* Պողոսը գրում է. «Եվ Նա... տվեց... *մի*

*քանիսին՝ ավետարանիչներ (լինելու)»* (Եփեսացիների 4.11): Ոչ թե բոլորը, այլ՝ մի քանիսն են կանչված այս ծառայության մեջ: Այս պարգևն աչքի է ընկնում մարդկանց հունձք հավաքելով: Գործք առաքելոց գրքում ավետարանիչ է անվանվում Փիլիպոսը, ոչ թե բոլոր հավատացյալները (կարդացե՛ք Գործք 21.8): Բիլլի Գրեհեմը, Թի Էլ Օսբորնը և Ռեյնհարդ Բոնկեն օժտված ավետարանիչներ էին: Նրանցից յուրաքանչյուրը՝ իր թիմի օգնությամբ, Քրիստոսին է առաջնորդել տասնյակ միլիոնավոր մարդկանց: Նրանք բազմապատկել են Աստծուց իրենց տրված պարգևը ճիշտ նույն կերպով, ինչպես Մայքը և մյուսները, որոնց մասին ավելի վաղ պատմեցի:

Ինչպես և նրանք, բոլորս կանչված ենք *բաշխելու* համար, սակայն կան մարդիկ, որոնք ունեն *բաշխելու խարիզման:* Նրանք աչքի են ընկնում ֆինանսներ բաշխելով ճիշտ այնպես, ինչպես ավետարանիչն աչքի է ընկնում մարդկանց շահելով: Այս գրքի ուղերձը Աստծուց մեզ տրված պարգևները բազմապատկելու մասին է: Այնուամենայնիվ, քանի որ ֆինանսներ բաշխելը բազմապատկման առանցքային կողմերից մեկն է, մինչև այս գլխի ավարտը ես ցանկանում եմ հստակ ցույց տալ, որ մեզնից յուրաքանչյուրը կանչված է բազմապատկման՝ ֆինանսներ բաշխելու բնագավառում:

Ծառայության մեջ 40 տարի լինելու ընթացքում ականատես եմ եղել երկու ծայրահեղության ֆինանսների և բաշխման վերաբերյալ: Այս ծայրահեղություններն ազդում են չափազանց շատ մարդկանց վրա եկեղեցում, և ես իսկապես հուսով եմ, որ այս իրավիճակը կփոխվի: Առաջինը՝ կան մարդիկ, որոնք տալիս են՝ միայն ստանալու համար. նրանք ցանկանում են ավելին՝ եսասիրական շարժառիթներից ելնելով: Եթե անաչառ լինենք և կոչենք երևույթներն իրենց անուններով, այս շարժառիթը կարելի է նկարագրել մեկ բառով՝ *ագահություն:*

Ցավոք, այս սխալական մտածելակերպն օգնել է ծնունդ տալ հակառակ ծայրահեղությանը: Դրա մեջ հիմնականում հայտնվում են մարդիկ, որոնք չեն հետևում Մայքի օրինակին, այսինքն՝ չեն ուսումնասիրում Աստծո Խոսքի ամբողջական խորհուրդը: Նրանք անարգում են ցանկացած ուսմունք, որը կառուցում է մարդկանց հավատքը ֆինանսներ բաշխելու վերաբերյալ: Այս դիրքորոշումը կարող է նույնիսկ հասնել այնպիսի ծայրահեղության, որ մերժի զոհաբերությունների հետ առնչվող ցանկացած բան: Ըստ էության, այս գաղափարը սատարողները սահմանափակում են թե՛ իրենց, թե՛ իրենց ունկնդիրների արդյունավետությունը: Որպես հետևանք, Ավետարանի աշխատանքն ընդհանուր առմամբ սահմանափակվում է:

Հիսուսին ընդունելուց հետո Լիզան և ես մի եկեղեցու անդամներ էինք, որը լայնորեն ուսուցանում էր բաշխման մասին: 1980-ական թվականները մի ժամանակահատված էր, երբ շատերն ավելի կենտրոնացած էին իրենց վրա, քան՝ միսիոներության: Թեև մեր եկեղեցու ուսմունքը հիմնականում ճշգրիտ էր, այնուամենայնիվ, ճիշտ բնավորություն չունենալու պատճառով, շատերը զոհաբերում էին, որպեսզի ստանային ավելի մեծ տներ, վարեին ավելի լավ և ճոխ ավտոմեքենաներ, գնային թանկարժեք արծակուրդների և կատարեին իրենց բազմաթիվ եսակենտրոն ցանկությունները: Նրանց նպատակները գրեթե նույնն էին, ինչպես շատ անհավատների ձգտումները՝ այն տարբերությամբ, որ նրանք հետևում էին սուրբգրային բանաձևի: Լիզան և ես հենց սկզբից գիտեինք, որ այդ մոտեցումն անհավասարակշռված էր, սակայն չէինք կարողանում ձևակերպել, թե որն էր խնդիրը:

Անկեղծ ասած, նման միջավայրում լինելուց հետո Լիզան և ես պետք է մաքրման և հասունության որոշակի ընթացք անցնեինք՝ բաշխումը ողջամիտ կերպով դիտարկելու համար: Ի վերջո, այդ եկեղեցու առաջնորդը տեղի տվեց գայթակղությանը և կորցրեց ամեն ինչ: Նման բան տեսնելուց հետո մեզ համար գայթակղիչ էր հակառակ ծայրահեղությանն անցնելը, սակայն մենք վճռել էինք հավատալ Աստծո Խոսքին, ոչ թե մեր փորձառությանը:

Երկու տարի անց այն բանից հետո, երբ այդ եկեղեցին ուղարկեց մեզ՝ սկսելու մեր ծառայությունը, ինձ հետ տեղի ունեցավ մի գերբնական փորձառություն, որը պատասխանեց շատ հարցերի: Ես հրավիրված էի մի ծառայության և պատրաստվում էի քարոզել, երբ Սուրբ Հոգին հարցրեց ինձ. «Որդի՛ս, դու գիտե՞ս, թե ինչ է *կրոնի հոգին»:*

Ես կարդացել էի, քարոզել էի, լսել էի քարոզներ և նույնիսկ գրել էի կրոնական մտածելակերպի մասին, բայց երբ Սուրբ Հոգին հարցրեց դա, ես անմիջապես հասկացա, որ կար այնպիսի բան, ինչը չէի հասկացել: Եվ պատասխանեցի. «Հավանաբար, չգիտեմ: Այլապես Դու չէիր հարցնի ինձ: Ի՞նչ է այն»:

Ես լսեցի Սուրբ Հոգու պատասխանը. «Կրոնի հոգին այն է, երբ մարդն օգտագործում է Իմ Խոսքը՝ իր կամքը կատարելու համար: Նման մարդը չի կատարում Իմ ցուցումները, և Իմ սրտի ցանկություններն առաջնահերթ չեն նրա համար: Նա կիրառում է Իմ Խոսքը՝ իր շահի համար»:

Այդ խոսքերը խթանեցին այն փոփոխությունները, որոնք պետք է կատարվեին իմ սրտում նման թունավոր մթնոլորտում գտնվելուց հետո: Սուրբ Հոգուց այդ ուղերձը ցույց տվեց, որ մենք կարող ենք բաշխել և նույնիսկ հնձել դրա արդյունքները, սակայն անել դա սխալ

շարժառիթով: Աստծո օրենքներն օգուտ կբերեն, նույնիսկ եթե մարդու շարժառիթը ճիշտ չէ:

Քանի որ Պողոս առաքյալն օգտագործեց հողագործությունը՝ բաշխումը նկարագրելու համար, թույլ տվեք անել նույնը: Հողագործը կարող է սերմ ցանել մեկ նպատակով՝ ամբողջ բերքն իրեն պահելու համար: Նա կկառուցի ավելի մեծ ամբարներ, որպեսզի պահեստավորի այն ամենը, ինչը չի կարողանա սպառել, և կասի ինքն իրեն. «Շատ բարիքներ ունես՝ շատ տարիների համար ամբարված: Հանգստացի՛ր, կե՛ր, խմի՛ր, զվարճացի՛ր» (Ղուկաս 12.19):

Աստծո պատասխանն այդ մարդուն հետևյալն է. «Անմի՛տ» (խոսք 20): Ցանքի և հունձքի սկզբունքը գործեց այդ հողագործի համար, թեև, ինչպես նշում է Հիսուսը, նա ագահ էր:

Մեկ այլ հողագործ կարող է մարդկանց օգնելու և կերակրելու ցանկություն ունենալ: Նա կունենա հունձք՝ որպես հողագործ, բայց նրա արձագանքն այլ կլինի: Նա կասի ինքն իրեն. «Ես ոչ միայն կերակուր ունեմ, այլև կարող եմ օգնել իմ համայնքին ավելի ուժեղ և առողջ լինել: Ես կարող եմ առատաձեռն լինել»:

Ցանելու և հնձելու օրենքը հավասարապես գործում է երկուսի համար էլ: Անհեթեթություն կլիներ, եթե բոլորը դադարեին ցանել և հնձել, քանի որ առաջին հողագործի շարժառիթն ագահությունն էր: Այո՛, շատերը Աստծո թագավորության մեջ հենց այսպես են վարվել բաշխման բնագավառում:

Եկեք ավելի խորը ուսումնասիրենք Պողոսի խոսքերը: Նա սկսում է այսպես.

> «Ես մտածեցի, որ պետք է ուղարկեմ այս եղբայրներին ինձնից առաջ՝ համոզված լինելու համար, որ *այն նվերը*, որը դուք խոստացաք, պատրաստ է: Բայց ցանկանում եմ, որ դա լինի հոժարաբար տրվող *նվեր*, ոչ թե դժկամությամբ տրվող» (Բ Կորնթացիների 9.5, NLT):

Պողոսն ակնհայտորեն խոսում է ֆինանսական նվիրատվության կամ զոհաբերության մասին: Նա շարունակում է օգտագործել հողագործության սկզբունքը՝ պատկերելու համար այն, ինչ Աստված կանի բաշխողների համար.

> «Հիշե՛ք սա. այն հողագործը, որը միայն մի փոքր սերմ է ցանում, քիչ բերք կստանա: Բայց նա, ով առատորեն է ցանում, առատ բերք կստանա» (Բ Կորնթացիների 9.6, NLT):

Եթե բաշխելու միակ շարժառիթը մարդկանց օգնելն է, ինչո՞ւ է Պողոսը խոսում այն մասին, որ բաշխելու արդյունքում մենք հունձք ենք ստանալու: Մի՞թե սխալ է ունենալ բազմապատկման երկրորդական ցանկություն, որը կօգնի բորբոքել և ընդլայնել առաջնահերթ ցանկությունը՝ Աստծո թագավորության համար մարդկանց կյանքերը կառուցելը: Հնարավո՞ր է, որ Պողոսը սովորեցնում էր Կորնթոսի եկեղեցու նորահավատներին բազմապատկել իրենց արդյունավետությունը, ինչպես որ Հիսուսն էր սովորեցնում դա Իր աշակերտներին՝ պատմելով տաղանդների մասին առակը: Կարելի՞ է ասել, որ Պողոսը հորդորում էր նրանց առաջնորդվել գթասրտությամբ, բայց միևնույն ժամանակ ներդրում կատարել՝ ավելի մեծ օրհնություն լինելու համար: Ես համոզված եմ, որ Պողոսի շարժառիթը հենց դա էր, քանի որ նա շարունակում է հետևյալ կերպով.

> «Յուրաքանչյուրն ինքը պետք է սրտում որոշի, թե որքան նվիրաբերի: Եվ մի՛ տվեք դժկամորեն կամ ճնշվելով: «Որովհետև Աստված սիրում է այնպիսի մարդու, ով ուրախությամբ է տալիս»: Եվ Աստված առատորեն կմատակարարի այն ամենը, ինչի կարիքն ունեք: Եվ դուք մշտապես կունենաք *ծեզ անհրաժեշտ ամեն ինչ*, և *առատ ավելցուկ, որպեսզի կիսվեք ուրիշների հետ»* (Բ Կորնթացիների 9.7,8, NLT):

Ուշադրություն դարձրեք, որ կատարվում է երկու բան: Անձնական կարիքները լրացված կլինեն, բայց Պողոսը նաև հատուկ նշում է, որ լինելու է *«առատ ավելցուկ, որպեսզի կիսվեք ուրիշների հետ»:* Մեր առատաձեռն լինելու կարողությունը բազմապատկվում է, քանի որ մենք ներդրում ենք կատարում կամ սերմ ենք ցանում: Հաջորդ խոսքերում այս շարժառիթն է՛լ ավելի է հաստատվում.

> «Որովհետև Աստված է, որ մատակարարում է սերմ՝ հողագործի համար, և հաց՝ ուտելու համար: Նույն կերպով, Նա կմատակարարի և *կավելացնի ծեր միջոցները* և կտա *առատաձեռնության* մեծ հունձք ծեզ: Այո՛, դուք կհարստանաք ամեն առումով, որպեսզի կարողանաք *միշտ առատաձեռն լինել»* (Բ Կորնթացիների 9.10,11, NLT):

Պողոսը հատուկ հայտարարում է, որ բաշխման շնորհիվ Աստված *կավելացնի ծեր միջոցները*, որպեսզի դուք կարողանաք *միշտ առատաձեռն լինել:* Այս ճշմարտությունը վերաբերում է ոչ միայն նրանց, ովքեր օժտված են ֆինանսներ բաշխելու պարգևով. այն վերաբերում է

յուրաքանչյուր հավատացյալի: Սա հոգևոր օրենք է, որն Աստված հաստատել է շատ վաղուց:

Երբ Լիզան և ես սկսեցինք մեր ծառայողական ընթացքը, մեր եկամուտը տարեկան 18.000 դոլար էր: Հազիվ էինք կատարում մեր վճարումները: Ես հիշում եմ մեր առաջին Սուրբ ծնունդը ծառայության մեջ: Մենք ստիպված էինք օգտագործել մեր ունեցած մի փոքր գումարը, որպեսզի նյութեր գնեինք՝ ձեռագործ նվերներով փոքրիկ զամբյուղներ պատրաստելու համար: Մեր ունեցած փողն այլևս բավական չէր ոչ մի բանի համար:

Երկու տարի անց մեր հովիվը հատուկ զոհաբերություն հավաքեց: Լիզան և ես ցանկանում էինք մասնակցել այդ ծառայողական նախաձեռնությանը, որի համար այն հավաքվում էր: Եվ Աստված խոսեց մեզ հետ. «Տվե՛ք 1.000 դոլար»:

Նախորդ երկու տարում հնարավորինս խնայում էինք, որպեսզի կանխավճար կուտակեինք մի փոքր տան համար: Մենք կուտակել էինք 1.800 դոլար, դա մեր ունեցած ամբողջ գումարն էր: Մենք չունեինք կենսաթոշակային միջոցներ, ներդրումներ կամ այլ խնայողություններ, որոնցից կարող էինք օգտվել կարիքի դեպքում: Եթե զոհաբերեինք այդ գումարը, մեր ամբողջ ունեցվածքը կկազմեր 800 դոլար: Ակնհայտ էր, որ մեր երկամյա խնայողությունը զգալիորեն կկրճատվեր այդ մեկ զոհաբերության պատճառով: Պետք է տարիներ անցնեին, մինչև որ մենք բավականաչափ գումար կուտակեինք տան կանխավճարի համար: Այնուամենայնիվ, զոհաբերեցինք, քանի որ ցանկանում էինք ազդեցություն թողնել մարդկանց կյանքերում: Մենք նույնպես ցանկանում էինք ավելի առատաձեռն լինել: Գիտեինք Աստվածաշնչից, որ մեր բաշխելու կարողությունն ավելացնելու միակ միջոցը մեր ունեցած քիչը բազմապատկելն էր:

Անցան տարիներ, և մենք կարողացանք մարդկանց նվիրել ավելին, քան զամբյուղներ, և զոհաբերել ավելի քան 1.000 դոլար: Միայն այս տարի միսիայի համար կարողացել ենք զոհաբերել մեր առաջին մեծ զոհաբերությունից հիսուն անգամ ավելի: Մենք ցանկանում ենք ազդեցություն ունենալ ավելի շատ մարդկանց վրա ամեն օր: Աստված բազմապատկեց մեր կարողությունը և զորություն տվեց՝ առատաձեռն լինելու համար: «Ավյուն» թարգմանությունը գեղեցիկ կերպով ներկայացնում է այս ճշմարտությունը.

> «Առատաձեռն Աստված, որ մատակարարում է առատ սերմ հողագործին, որը դառնում է հաց մեր կերակուրների համար, է՛լ ավելի շռայլ է ձեր հանդեպ: Նախ՝ Նա լրացնում է ամեն կա-

> րիք և ավելին: Իսկ հետո բազմապատկում է սերմը, երբ դուք ցանում եք այն, որպեսզի ձեր առատաձեռնության հունձքն աճի: Դուք առատորեն հարստացած կլինեք ամեն առումով, երբ առատաձեռնությամբ բաշխեք ամեն առիթով» (Բ Կորնթացիների 9.10,11, TPT):

Ուշադրություն դարձրեք՝ Նա շռայլ է մեր հանդեպ: Նա *կբազմապատկի* այն ներդրումը, որը մենք կատարում ենք՝ Իր թագավորությունը կառուցելու համար, որպեսզի *մեր առատաձեռնությունն ավելանա:* Մենք ավելացնում ենք մեր հաշիվները Երկնքում, որտեղ ցեցն ու ժանգը չեն ապականում, և գողերը կոտրանքով ներս չեն մտնում և չեն գողանում: Բայց մենք նույնպես վերցնելու ենք այդ հաշիվներից այս կյանքում: Այո՛, կա հավիտենական վարձատրություն, բայց կա հաշիվ, որը մենք ավելացնում ենք, որպեսզի առատաձեռն լինենք նաև այս աշխարհում: Պողոսը շատ պարզորեն խոսեց այս մասին՝ գրելով Փիլիպեի հավատացյալներին.

> «Ոչ թե՝ որ ես ցանկանում եմ կամ պատրաստակամ եմ ստանալու [ձեր] պարգևը, բայց ես միանշանակ ցանկանում եմ և պատրաստակամ եմ տեսնելու այն պտուղը, որն ավելանում է ձեր հաշվին [օրհնությունների հունձք, որն ավելանում է ձեր հաշվին]» (Փիլիպեցիների 4.17, AMPC):

Լիզան և ես մի ամուսնական զույգի՝ Ֆիլի և Դանայի մտերիմ ընկերներն ենք, որոնք մոլեգին բաշխողներ են: Նրանք զոհաբերում են իրենց եկամտի գրեթե 50 տոկոսը: Միայն վերջերս նվիրաբերեցին մի ծառայությանը 100.000 դոլար՝ ավետարանչական նախագծի համար: Երկու օր անց նրանք նվիրաբերեցին ևս 100.000 դոլար մեկ այլ ծառայության նախագծի համար: Ես գիտեմ դա, քանի որ երկրորդ ծառայությունը «Մեսինջեր ինտերնեյշնլն» էր:

Ֆիլը սկսեց իր գործը շատ տարիներ առաջ: Այն միջին մակարդակի էր և շատ հեռու էր գերազանց լինելուց: Այնուամենայնիվ, 25 տարի առաջ Ֆիլը և Դանան խոստում տվեցին, որ հաջորդ երեք տարվա ընթացքում նվիրաբերելու են մի ծառայությանը 250.000 դոլար: Դա լիովին անհնար էր թվում, բայց նրանք ցանկանում էին, որ Աստված միջամտեր իրենց գործերի մեջ:

Ֆիլի գործը կտրուկ բարելավվեց, բայց նա չէր պատկերացնում, թե իրականում որքան լավ էին իր գործերը: Երեք ամիս անց նա հասկացավ, որ իր հաշվին ուներ հավելյալ 250.000 դոլար: Այնպես որ, նա և

Դանան որոշեցին անմիջապես կատարել իրենց խոստումը՝ այդ գումարը երեք տարվա ընթացքում մաս-մաս տալու փոխարեն: Նա ասաց ինձ. «Ջո՛ն, այդ ժամանակ էր, որ մենք սկսեցինք անհավանական գումարներ նվիրաբերել»:

Ինչպես Մայքը, նրանք նույնպես հրաժարվեցին կանգ առնել: Առաջ գնացին, երբ կանգ առնելն ավելի հեշտ էր, և նրանց երկնային հաշիվը մեծացավ՝ հասնելով այնպիսի չափերի, որոնց մասին չէին էլ կարող երազել: Մի՞թե սա չի վերաբերում նաև ձեզ և ինձ: Պողոսը հստակ ասում է մեզ.

> *«Երբեք մի՛ կասկածեք*, որ Աստծո մեծ զորությունը կգործի ձեզանում և ավարտին կհասցնի այս ամենը: Նա կհասնի անսահմանորեն ավելիին, քան ձեր մեծագույն խնդրանքն է, քան ձեր ամենից անհավատալի երազանքն է, և կգերազանցի ձեր ամենահամարձակ մտքերը: Նա կգերազանցի այդ ամենը, որովհետև Նրա հրաշագործ զորությունը շարունակ ուժ է տալիս ձեզ» (Եփեսացիների 3.20, TPT):

## ՃԵՂՔՈՒՄ

Տարիներ շարունակ, ծառայության մեջ լինելով, ես սովորել եմ, որ մենք փորձվելու ենք և՛ մեր *խարիզմայի*, և՛ *ֆինանսական բաշխման* մեջ: Կարող է լինել ժամանակաշրջան, երբ ոչ մի հրատարակիչ հետաքրքրված չլինի ձեր գրքով, և դա կարող է տևել մի քանի տարի: Դուք կմտածեք ամեն ինչ թողնելու մասին, քանի որ մեծ ու քրտնաջան աշխատանք եք կատարել, իսկ այդ գիրքը, թվում է, չի ընդունվում ոչ ոքի կողմից, և դուք չեք տեսնում ոչ մի փոփոխություն: Այնուամենայնիվ, դուք շարունակում եք հնազանդ սպասել: Եվ հանկարծ ճեղքումը գալիս է:

Կամ դուք զոհաբերում և զոհաբերում եք, սակայն չեք տեսնում արագ հունձք, և թվում է՝ ձեր ֆինանսական վիճակը չափազանց սուղ է, որպեսզի շարունակեք զոհաբերել: Բայց հանկարծ Աստված խոսում է ձեզ հետ, ինչպես Մայքի դեպքում, և դուք հնազանդվում եք, թեև դա անհնար է թվում: Դուք ճեղքման ականատես եք դառնում և մուտք եք գործում բաշխման այլ մակարդակ:

Ի՞նչ է *ճեղքումը:* «Dictionary.com» առցանց բառարանը սահմանում է այն որպես «որևէ խոչընդոտ կամ արգելք հեռացնելու կամ գերազանցելու գործողություն կամ դեպք»[9]: Պատկերացրեք հետևյալը. ջուրը սահմանափակված է ամբարտակով: Ջրի մակարդակը շարունակում է

բարձրանալ, բայց ամբարտակը շարունակում է խոչընդոտել այն: Հանկարծ ամբարտակի վրա ճաքեր են առաջանում. կարճ ժամանակ անց ջուրը հանկարծ դուրս է պրծնում: Ամբարտակը քանդվում է, և ջուրն ազատորեն հոսում է այնտեղ, որտեղ նախկինում դրա հոսքը խոչընդոտվում էր: Սա ճեղքում է:

Դավիթ թագավորը հայտարարում է. «Աստված իմ թշնամիներին Իր ձեռքով պատռեց (կամ՝ «ճեղքեց») ջրերի պատռվածքի (կամ՝ «ճեղքման») պես» (Ա Մնացորդաց 14.11): Բարձրացող ջուրը խորհրդանշում է մեր շարունակական հնազանդությունը ճշմարտությանը, իսկ ճեղքումից հետո ազատորեն հոսող ջուրը խորհրդանշում է պտղաբերությունը կամ առատությունը:

Ինչ վերաբերում է մեր ընկերներ Ֆիլին և Դանային, Ֆիլն ասաց ինձ, որ առաջին 100.000 դոլարը նվիրաբերելուց հետո նրանց գործը ռեկորդային շաբաթ արձանագրեց, որի ընթացքում նրանք վաստակեցին ևս 100.000 դոլար և ավելին: Ահա թե ինչպիսին է ճեղքումը: Սկզբում նրանց կյանքն այդպիսին չէր. նրանք զոհաբերում և զոհաբերում էին, սակայն անմիջապես մեծ հունձք չէին տեսնում: Բայց տարիներ շարունակ ցանելուց հետո ճեղքում ունեցան, և թվում է, թե հունձքը գալիս է գրեթե նույն հաճախականությամբ, ինչ նրանց ցանքն է:

Սա Ամովս մարգարեի խոսքերի իրականացումն է. «Ժամանակը կգա, - ասում է Տերը, - երբ ցորենը և խաղողը կաճեն ավելի արագ, քան դրանք կհասցնեն հավաքել» (Ամովս 9.13, NLT): Այս ճշմարտությունը գեղեցիկ կերպով պատկերված է այլ թարգմանության մեջ.

«Ահա՛, գալիս են օրերը, - ասում է Տերը, -
Երբ հերկողը կհասնի հնձվորին,
Եվ խաղող տրորողը՝ սերմնացանին:
Սարերը կկաթեն քաղցր գինով,
Եվ բլուրները *կհոսեցնեն այն»:*

Հնձվորն այնքա՛ն առատ հունձք է ունենալու, որ սերմնացանը հասնելու է նրան:

Խաղող տրորողները դեռ տրորելու են նախորդ հավաքած բերքը, իսկ հերկողներն արդեն սկսելու են իրենց աշխատանքը՝ հաջորդ տարվա համար: Սա մեծ արդյունքի ակնառու օրինակ է: Ե՛վ հերկողների, և՛ հնձվորների, և՛ խաղող տրորողների ցանկությունը գինի պատրաստելն է: Ահա թե ինչպիսին է նրանց արդյունքը. «Գինին շարունակ կհոսի, այն կանգ չի առնի. այլևս չեն լինի անպտղության ժամանակներ» (հեղինակի շրջասությունը):

Գոյություն ունի այնպիսի փուլ մեր *խարիզմայի* և *ֆինանսական բաշխման* մեջ, երբ սա տեղի է ունենում: Սա տեղի ունեցավ Մայքի հետ, ինչպես նաև Ֆիլի և Դանայի հետ: Ինչ վերաբերում է «Մեսինջեր ինտերնեյշնլ»-ին, այս տարիների ընթացքում մենք ստացել ենք անթիվ վկայություններ այն մասին, որ մարդկանց կյանքերը փոխվել են մեր կողմից ցանվող նյութերի շնորհիվ: Խաղողն աճում է ավելի արագ, քան այն հասցնում են հավաքել:

Շատերը հանձնվում են հունձքից կարճ ժամանակ առաջ: Նրանք վհատվում են հակառակությունների կամ իրենց ցանկալի արդյունքները չստանալու պատճառով: Լիզան և ես կարող էինք հեշտորեն դիմել ողջամտությանը և տրամաբանությանը և անտեսել Աստծո Հոգու ձայնը: Մենք պետք է ունենայինք ամենաքիչը 5.000 դոլար՝ կանխավճարի համար, քանի որ տունը խիստ անհրաժեշտ էր մեզ: Մեր քաղաքի գեղեցիկ բնակարանների մեծ մասը բնակեցված էր միայն չափահաս մարդկանցով, և դրանք հարմար չէին երեխաների հետ ապրելու համար: Մենք կարող էինք մտածել. «Սկզբում մենք տուն ձեռք կբերենք, իսկ հետո կխնայենք և կզոհաբերենք մեկ այլ ծառայողական նախագծի համար»: Մենք կարող էինք բաց թողնել Աստծո թագավորության մեջ ներդնելու և մեր միջոցներն ավելացնելու այդ փայլուն հնարավորությունը:

Այս պատմության զարմանալի կողմն այն է, որ վեց ամիս անց մենք հրաշքով ունեցանք անհրաժեշտ 5.000 դոլարը: Լիզան որոշակի գումար ստացավ մի բանկային հաշվից, որը բացել էր նրա հայրը, սակայն այդ ժամանակ մենք չգիտեինք այդ մասին: Դրա հետ մեկտեղ, երկու մարդ, որոնք գիտեին մեր կարիքը, 2.000 դոլար նվիրեցին մեզ: Մենք մեր նոր տանն էինք մեկ տարուց պակաս ժամանակում: Դա հրաշք էր, և մեր հավատքն ու համբերությունը զարգացնելու համար շատ ավելի լավ էր տեսնելը, թե ինչպես Աստված մատակարարեց մեզ այն պահին, երբ դա «անհնար» էր թվում: Ես չեմ հավատում, որ դա տեղի կունենար, եթե մենք կառչեինք այն 1.000 դոլարից, որը Սուրբ Հոգին պատվիրեց մեզ զոհաբերել:

Այս պահին մենք իմաստությամբ կվարվենք, եթե ընդունենք հետևյալ զգուշացումը: Մենք չպետք է ինքնավստահ լինենք այս հարցում: Ի՞նչ նկատի ունեմ. մենք պետք է փնտրենք մեր ավագ Գործընկերոջ՝ Սուրբ Հոգու խորհուրդը: Նա ասում է մեզ. «Ես եմ քո Աստվածը, որ քեզ սովորեցնում եմ օգտակար եղողը (կամ՝ «շահույթ ստանալը»), որ քեզ առաջնորդում եմ քո գնալու ճանապարհում» (Եսայի 48.17): Զգայուն խիղճ ունենալը (քանի որ Սուրբ Հոգին այդտեղ է լուսավորում մեզ) և Նրա ցուցումներին հնազանդ լինելը անչափ կարևոր է, քանի որ

Սուրբ Հոգին է առաջնորդում մեզ, որ շահույթ ստանանք Իր թագավորության մեջ արված մեր ներդրումներից: Մենք չէինք զոհաբերի այն 1.000 դոլարը, եթե Նա չշշնջար այդ մասին մեր սրտերում:

Ոմանք չեն լսում Նրա խորհուրդը: Ոմանք էլ չեն կարողանում լսել Նրա խորհուրդը, քանի որ չափազանց շատ են «ոչ» ասել Նրան: Նրանց խիղճն այլևս զգայուն չէ: Եթե դուք այդպիսին եք, պարզապես ապաշխարեք և խնդրեք, որ Նա ների ձեզ՝ Իր ձայնը ճնշելու համար: Ձեր զգայունությունն անմիջապես կվերադառնա: Նա արագորեն ներում է: Բայց դրանից հետո լսեք և հետևեք Նրա մղումներին, և թույլ մի՛ տվեք, որ ողջամտության ձայնը տարհամոզի ձեզ:

## ՄՏՈՐԵՔ

1. Աստված դրել է մարդկանց հանդեպ ունեցած Իր սերը մեր սրտերում, և այդ պատճառով, մեր մեջ անձնվիրաբար *բաշխելու* և *ծառայելու* ցանկություն կա: Ներկայումս ի՞նչ կերպով եք դուք բաշխում և ծառայում մարդկանց: Ի՞նչ ստեղծարար ձևերով կարող եք աճ ունենալ բաշխելու և ծառայելու բնագավառներում:

2. Իմաստուն ձևով բաշխողը ոչ միայն դիտարկում է զոհաբերությունը որպես սիրո նվեր և ծառայություն, այլև՝ որպես *ներդրում:* Ներդրումների ինչպիսի՞ վերադարձ դուք կարող եք ակնկալել բաշխելու և ծառայելու արդյունքում: Ի՞նչ կերպով է փոխվում ձեր վերաբերմունքը բաշխելուն և ծառայելուն, երբ դիտարկում եք դրանք որպես ներդրում:

3. Դուք կփորձվեք և՛ ձեր *խարիզմայի*, և՛ *ֆինանսական բաշխման* մեջ: Այդ փորձությունների ժամանակ կլինեն պահեր, երբ կթվա, թե ձեր հունձքն ուշանում է, իսկ աշխատանքն անարդյունք է: Երբ հանձնվելու գայթակղություն եք ունենում, ինչպիսի՞ն պետք է լինի ձեր արձագանքը: Ինչպե՞ս եք խրախուսում ձեզ՝ առաջ գնալու համար:

*«Աստված տվել է ձեզնից յուրաքանչյուրին պարգև՝ Իր հոգևոր պարգևների մեծ բազմազանությունից: Արդյունավե՛տ օգտագործեք դրանք՝ իրար ծառայելու համար»:*

– Ա Պետրոս 4.10, NLT

# 10

# Խթանիչ

Այս առանցքային գլխում ես կխոսեմ այն մասին, ինչը *խթանում է արդյունավետ բազմապատկումը:* Օգտագործելով *«արդյունավետ»* բառը, նկատի ունեմ այնպիսի բազմապատկում, որը մնում է հավիտյան:

*Խթանիչը* որևէ իրադարձություն կամ փոփոխություն գործի դնող կամ արագացնող գլխավոր տարրն է (իմ սահմանումը վերցված է տարբեր բառարաններից): Բոլորս պարգևներ ենք ստացել, բայց դրանց մնայուն ներուժը գործի է դրվում այն բանով, ինչի մասին խոսում է Պետրոս առաքյալը. *«Արդյունավե՛տ օգտագործեք դրանք... ծառայելու համար»: Խթանիչը* ծառայելն է, բայց իրական ծառայությունը մշտապես դրդված է սիրուց: Պողոս առաքյալը գրում է.

> «Որովհետև մենք հիշում ենք մեր Հոր և Աստծո առջև, թե ինչպես եք դուք գործի դնում հավատքը, ինչպես է *ձեր սերը դրդում ձեզ ծառայել ուրիշներին»* (Ա Թեսաղոնիկեցիների 1.3, TPT):

Ճշմարիտ ծառայությունը բխում է սիրով վառվող սրտից: Դա ներքին տրամադրվածություն է, որը չի փոխվում նեղությունների, դժվարությունների կամ ցանկացած այլ անբարենպաստ հանգամանքների պատճառով: Երբեմն այն արտահայտվում է խոսքով, բայց ամենից հաճախ՝ գործողությամբ:

## ՀՆԴԿԱՀԱՎԵՐ ՆՎԻՐՈՂ ԿԻՆԸ

Ես օրինակ կբերեմ ծառայելու մասին՝ մի պատմություն պատմելով: Այն զույգը, որի մասին կպատմեմ, մեր մտերիմ ընկերներն են, և նրանք խնդրեցին անանուն մնալ: Այնպես որ, համաձայն նրանց խնդրանքի, ես կօգտագործեմ հորինված անուններ:

Ռայլին և նրա ամուսինը՝ Դեյվը, ապրում են Միացյալ Նահանգների ամենամեծ քաղաքներից մեկի արվարձաններից մեկում: Նրանց հանդիպումը կանխորոշված էր, քանի որ նրանք ապրում էին կողք կողքի գտնվող բնակարաններում:

Իրենց ամուսնությունից կարճ ժամանակ անց Ռայլին մտածում էր, թե ինչո՞ւ էին գրեթե բոլոր եկեղեցիները, անտուն թափառականների ապաստարանները և այլ բարեգործական կազմակերպություններ ճաշեր և նվերներ տալիս Սուրբ ծննդյան ժամանակ, բայց գրեթե ոչինչ չէին անում Գոհության տոնին: Նա համոզված էր, որ Գոհության տոնը կարևոր է, քանի որ այն ընտանեկան տոն է և ավանդականորեն կենտրոնանում է ընթրիքի սեղանի շուրջ: Շատ միայնակ մայրեր, անդամալույծներ և անտուն թափառականներ չեն կարողանում տոնական սեղան պատրաստել կամ մասնակցել տոնական ճաշկերույթի: Նա համոզված էր, որ տաք կերակուր տրամադրող ճաշարաններն անհրաժեշտ գործ են կատարում, սակայն դրանցում չկա այն մտերմիկ մթնոլորտը, որը կարող է ստեղծել տնային կերակուրը ընտանիքի համար:

Ռայլին ասում էր. «Յուրաքանչյուրս կարող է ազդեցություն թողնել, բայց միասին մեր ազդեցությունն ավելի մեծ է»: Նա քաջ ծանոթ էր Սուրբ գրքին և գիտեր, որ երկուսի ներդաշնակ ջանքերը տասնապատիկ ավելի արդյունավետ են՝ մեկի ջանքերի համեմատ (կարդացե՛ք Երկրորդ Օրինաց 32.30): Նա նույնպես քաջատեղյակ էր, որ երբ ավելի շատ հավատացյալներ են միանում որևէ գործի, դրա արդյունքները շարունակ ավելանում են: Նա ի սրտե համոզված էր ևս մեկ ճշմարտության մեջ. ճշմարիտ ծառայողները պատրաստ են ծառայել թիմում՝ չմտածելով այն մասին, որ աշխատանքը չի վերագրվում անձամբ իրենց: Ռայլիի դիրքորոշումն անձնավորում է բազմապատկման այս կարևոր բաղադրիչները:

Առաջին գոհության տոնին ինչ-որ բան ձեռնարկելու համար Ռայլին գումար հավաքեց իր ընտանիքից և ընկերներից՝ հնդկահավեր գնելու համար: Ունենալով բազմապատկող մտածելակերպ՝ նա և Դեյվը իրենց միջոցներով խոստացան կրկնապատկել յուրաքանչյուր հավաքված դոլարը: Այդ տարի նրանք գնեցին 11 հնդկահավ և անանուն բաժանեցին Ռայլիի մեքենայի բեռնախցիկից: Երկրորդ տարում հնդկահավերի թիվը հասավ 31-ի:

Երրորդ տարում այդ կինն ասաց իր ընտանիքին և ընկերներին, որ նրանք կարող էին պատմել այս տեսիլքի մասին իրենց ընկերներին՝ իրենց մասին չհիշատակելու պայմանով: Նրանք արեցին դա, և այդ ծրագիրն արագորեն տարածվեց: Մինչև հինգերորդ տարին նրանք

ծառայեցին հինգ հարյուր ընտանիքի և կարողացան ավելացնել յուրաքանչյուր նվերին երկու պահածոյի տուփ՝ բանջարեղենով և լցոնով:

Այդ ժամանակ նա ոչ պաշտոնապես *անանուն* տարածման պայմանագիր կնքեց «Փրկության բանակի» հետ: Այդ բարեգործական կազմակերպությունը համագործակցում է պետական սոցիալական ծառայությունների հետ, և այն կազմակերպեց դիմումների ներկայացման գործընթաց՝ իսկապես կարիքավոր մարդկանց գտնելու համար: Ընտրվեցին այնպիսի մարդիկ, որոնք չունեին մատակարարման այլ հնարավորություն (սննդի կտրոններ, պետական ծրագրեր և այլն): Ռայլին և նրա թիմը սննդի բաշխման վայր հիմնեցին «Փրկության բանակի» տարածքում:

Շատերը տարբեր բաներ էին հորինում իրենց անհրաժեշտ կերակուրը վերցնելու համար: Նրանք սայլակ կամ զամբյուղ էին բերում իրենց հետ, խնդրում էին հարևաններին մեքենայով բերել իրենց, գալիս էին հեծանվով կամ պարզապես ոտքով և ստանում էին հնդկահավը, բանջարեղենը և լցոնը: Երբեմն նրանք գալիս էին հեռվից և ստիպված էին լինում երկար ճանապարհ անցնել՝ վերադառնալով դեպի իրենց կցավագոնը, բնակարանը, այգին կամ բացօթյա վայրը, որտեղ ապրում էին: Մի անտուն մարդ սովորել էր դեն նետած տապակման սարքով և գազի բալոնով դրսում հնդկահավ պատրաստել իր և իր անտուն ընկերների համար:

Ի վերջո, տարածումն այնքան մեծացավ, որ անհրաժեշտ էր նոր վայր՝ ավելի շատ մարդկանց ծառայելու համար: Հարևանությամբ գտնվող «Երիտասարդ մարդկանց քրիստոնեական ասոցիացիան» ուներ մեծ, դատարկ տարածք, բայց նրանց և «Փրկության բանակի» հարաբերությունները լարված էին: Այդ կարիքը դրդեց այդ երկու կազմակերպություններին անտեսել իրենց տարբերությունները: Նրանք հաշտվեցին և սկսեցին իրենց համայնքում միասին աշխատել Ռայլիի նախագծի վրա, ինչպես նաև այլ նախագծերի վրա:

Ամեն տարի Ռայլիի և Դեյվի նպատակն էր գերազանցել նախորդ տարվա տարածման ծավալը: Նրանք որոշում կայացրին, որ ոչ ոք իրենց շրջանում չէր մնալու առանց պատշաճ Գոհության ընթրիքի: Որքան ավելի էր մեծանում ստացողների թիվը, այնքան տարածումն ավելի խճճված և դժվարին էր դառնում, հատկապես գների բարձրացման պատճառով, նաև այն պատճառով, որ որոշ ընկերներ դադարում էին մասնակցել իրենց ծրագրին կամ տեղափոխվում էին: Ռայլին և Դեյվը ֆինանսապես ավելի կայուն էին դարձել և չէին ցանկանում, որ իրենց առաջընթացը կանգ առներ. այնպես որ, իրենց միջոցներով

նրանք որոշեցին եռապատկել յուրաքանչյուր նվիրաբերված դոլարը (որպես կողմնակի դիտարկում՝ զարմանալի չէ, որ նրանց ֆինանսական վիճակն ավելի կայուն էր դարձել այդ վեց տարվա ընթացքում: Աստված բազմապատկում էր նրանց բաշխումը, որպեսզի նրանք ավելի արդյունավետ լինեին):

Ռայլիի խոսքով, «Ինչ-որ կերպով Աստված մշտապես ֆինանսներ էր մատակարարում տարբեր աղբյուրներից, և մեր միջոցները մշտապես ավելանում էին»: Ավելի զարմանալի է այն, որ հենց սկզբից այս զույգը որոշեց, որ իրենք չէին ընդունելու ոչինչ պետական ծրագրերից կամ խոշոր ընկերություններից: Բոլոր միջոցները պետք է ստացվեին ընտանիքից, ընկերներից և ընկերների ընկերներից:

Տարածման ծավալները մեծանալու հետ մեկտեղ հայտնվեցին նոր դժվարություններ: Անհնարին դարձավ տարածել բոլոր հնդկահավերը մեկ օրում, քանի որ մարդկանց թիվը շատ մեծ էր: Ռայլին և Դեյվը ստիպված էին ևս մեկ օր ավելացնել տարածմանը, բայց դա ստեղծեց մի էական խնդրողրտ. որտե՞ղ էին պահվելու այն հնդկահավերը, որոնք մնալու էին հաջորդ օրվա տարածման համար: Ռայլին համառորեն պատասխան էր փնտրում: Կեսգիշերին մի խոշոր մթերային խանութների ցանց, որից նրանք գնում էին բոլոր հնդկահավերը, առաջարկեց անվճար օգտագործել իրենց սառնարան-բեռնատարները: Այժմ նրանք կարող էին ծախսել ամբողջ գումարը սնունդի վրա, ոչ թե պահպանման:

Կային անթիվ այլ արգելքներ և խնդրողտներ, որոնք նրանք հաղթահարեցին, դրանք չափազանց շատ են թվարկելու համար: Այդ զույգի հավատքն ուժեղ էր, և նրանք անկոտրում ու վճռական էին: Բախվելով նեղությունների՝ նրանք շարունակ աղոթում էին, աղաղակում էին Աստծուն, ստանում էին ոգեշնչված մարտավարական գաղափարներ և բարեհաճություն էին գտնում այն մարդկանց մոտ, ովքեր կարող էին օգնել:

Նրանք արդեն 26 տարի է՝ կատարում են այս ծառայությունը, և միայն այս տարի՝ երբ գրում եմ այս գիրքը, արդեն կերակրել են 10.500 ընտանիքի (կամ 42.000 մարդու, եթե միջին ընտանիքը բաղկացած է չորս մարդուց): Նրանք կերակրել են յուրաքանչյուր կարիքավոր մարդու իրենց ամբողջ շրջանում և երկու հարակից շրջանների կարիքավորների զգալի մասին (մտապահե՛ք, որ խոսքը Միացյալ Նահանգների խոշոր քաղաքներից մեկի մասին է): Այս աշխատանքը կատարելու համար նրանք հնդկահավերով են լցրել հինգ բեռնատարի կցորդ (յուրաքանչյուրը՝ 15 մետրանոց) և երեք բեռնատարի կցորդ՝ բանջարեղենով և լցոնով: Այս գործին միացել է ավելի քան երկու հարյուր կա-

մավոր, որոնցից շատերը մի քանի օր շարունակ աշխատել են առանց հանգստի: Կամավորներից շատերը Ռայլիի հետ են եղել հենց սկզբից: Եվ զարմանալին այն է, որ նրանց մեծ մասը դեռևս անձամբ չի ճանաչում «հնդկահավեր բաժանող կնոջը»:

Անհնարին կլիներ թվարկել բոլոր հրաշքները, պատմությունները և վկայությունները փոխված կյանքերի մասին, որոնք տեղի են ունեցել այս զույգի բազմապատկման շնորհիվ: Անթիվ մարդիկ ընդունել են Հիսուսին, որոնց թվում է նաև Ռայլիի ամուսին Դեյվը, և շատերը վերադարձել են հավատքին: Ընտանիքները հաշտվել են, և շատերը ոգեշնչվել են, որոնց թվում են պետական աշխատակիցներ, մթերային խանութների աշխատողներ, «Փրկության բանակի» և «Երիտասարդ մարդկանց քրիստոնեական ասոցիացիայի» աշխատակազմի անդամներ և կամավորներ, նաև մարդիկ, ովքեր ապրում են այդ շրջանում:

Թույլ տվեք կիսվել մի քանի կարճ պատմությամբ: Ռայլիի ընկերներից մեկը գանձապահ է տեղական մոտոցիկլետավարների ակումբում: Ամեն տարի նա խնդրում է ակումբի անդամներին նվիրատվություն հավաքել «հնդկահավեր բաժանող կնոջ» համար: Նրանք նույնիսկ մրցակցում են միմյանց հետ՝ տեսնելու համար, թե ով կարող է ավելի շատ նվիրաբերել: Անցած տարի Ռայլին և Դեյվը մի հաղորդագրություն ստացան Գոհության տոնից հետո, որ հաջորդ Գոհության տոնին մոտոցիկլետավարներն ավելացնելու են իրենց նվիրատվությունը 3.000 դոլարով:

Մի տարի «հնդկահավեր բաժանող կնոջ» թիմը որոշեց ավելացած գումարը նվիրաբերել տեղական եկեղեցիներից մեկին: Այդ եկեղեցին ոգեշնչվեց՝ որոշելով օգտագործել Ռայլիի ծրագրի նմուշը և սկսել սեփական ծրագիրը աղքատներին օգնելու համար՝ և՛ Գոհության տոնի ժամանակ, և՛ տարվա ընթացքում:

«Փրկության բանակի» թիմակիցները, որոնց տեղափոխեցին այլ նահանգներ, պատրաստ էին սկսել ծրագրեր՝ ըստ Ռայլիի ծրագրի նմուշի: Այլ մարդիկ, որոնք տեղափոխվել էին այդ բնակավայր, անհամբեր ցանկանում էին իմանալ այդ ծառայության մասին, քանի որ լսել էին Ռայլիի պատմությունը «Փրկության բանակի» ծառայողների միջոցով:

Ռայլին հովիվ չէ. այս կինը չի աշխատում որևէ եկեղեցում, նա գործարար չէ և որևէ խոշոր ընկերության ղեկավար չէ: Նա կին է, մայր և նվիրված հավատացյալ, ով հավատարմորեն եկեղեցի է հաճախում: Նա քաջատեղյակ է այն փաստին, որ ինքը ծառայում է զորավոր Աստծո, Ով բերկրանք է զգում իր բազմապատկման շնորհիվ: Ինձ համար պատիվ է լինել այդ զույգի ընկերը:

# ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԲԱԶՄԱՊԱՏԿՄԱՆ ՄԵԾԱԳՈՒՅՆ ՕՐԻՆԱԿԸ

Սիրուց դրդված ծառայությունը բազմապատկման խթանիչն է: Դիտարկենք բազմապատկման մեծագույն օրինակներից մի քանիսը Աստվածաշնչում: Իհարկե, բազմապատկման ամենաակնառու օրինակը Սուրբ գրքում Հիսուսն է: Նա ասում է.

> «Եթե դուք ցանկանում եք լինել մեծագույնը, ապրեք որպես մարդ, որը կանչված է ծառայելու ուրիշներին: Առաջխաղացում ստանալու և ակնառու դառնալու ուղին սկսվում է ստրուկի սիրտ ունենալուց, որը ծառայում է բոլորին: Որովհետև նույնիսկ Մարդու Որդին ծառայություն ստանալու ակնկալիքով չեկավ, այլ՝ որպեսզի *ծառայի բոլորին* և տա Իր կյանքը որպես փրկագին՝ շատերի փրկության համար» (Մարկոս 10.43-45, TPT):

Հիսուսը ցույց է տալիս ճշմարիտ մեծության ուղին՝ երբ մենք ձգտում ենք ծառայել, ոչ թե ծառայություն ստանալ: Զարմանալի չէ, որ Նա նկարագրում է Իր մեծագույն ծառայությունը հետևյալ կերպով. «Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ՝ եթե ցորենի հատը հողի մեջ չընկնի և չմեռնի, ինքը մենակ կմնա: Բայց եթե մեռնի, շատ պտուղ կբերի» (Հովհաննես 12.24): Կրկին, մենք լսում ենք *ցանելու* (կամ *ներդնելու*) և *հնձելու* մասին: Ինչպես որ մեկ *ներդրված* ցորենի հատը բազմաթիվ ցորենի հատեր է տալիս, այնպես էլ Հիսուսի հնազանդությունը ծառայության մեջ տվեց Աստծո բազմաթիվ որդիների և դուստրերի: Ինչպիսի՜ օրինակ: Նա հարթեց ճանապարհը և դրեց նշաձողը՝ ցույց տալով, թե ինչպես արդյունավետ բազմապատկենք: Հիսուսն ասում է մեզ.

> «Դուք անվանում եք Ինձ «Ուսուցիչ» և «Տեր», և դուք ճիշտ եք, որովհետև Ես դա եմ: Եվ քանի որ Ես՝ ձեր Տերը և Ուսուցիչը, լվացի ձեր ոտքերը, դուք պետք է լվանաք մեկդ մյուսի ոտքերը: Ես տվեցի ձեզ *օրինակ՝ հետևելու համար:* Վարվե՛ք այնպես, ինչպես որ Ես վարվեցի ձեր հանդեպ» (Հովհաննես 13.13-15, NLT):

Որպես առաջնորդ, քարոզիչ և հեղինակ, ես գիտեմ *վերջին խոսքի* կարևորությունը: Սա այն պնդումը կամ ուղերձն է, որը դուք թողնում եք ձեր ընթերցողին, ունկնդրին, աշակերտին, թիմակցին, աշխատակցին, երեխային կամ ցանկացած մարդու: Դա գլխավոր միտքն է, որ ցանկանում եք, որ ձեզ լսողները հիշեն՝ առաջ գնալով:

Ո՞րն էր Հիսուսի վերջին խոսքն այն ժամանակ, երբ Նա այս աշխար-

հում էր: Հետաքրքիր է, որ Իր խաչելությունից առաջ Նա մի ուղերձ քարոզեց՝ գործնական օրինակով. Նա լվաց Իր հետևորդների ոտքերը:

Ես անկեղծ կլինեմ ձեզ հետ. երբ նոր էի հավատացյալ դարձել, տանել չէի կարողանում, երբ ինչ-որ մեկը որևէ փոքր խմբում առաջարկում էր հետևյալը. «Եկեք լվանանք մեկս մյուսի ոտքերը»: Ես անմիջապես մի անհեթեթ պատճառ էի հորինում՝ այդտեղից փախչելու համար. ինձ դուր չէր գալիս, որ տղամարդիկ դիպչում էին իմ ոտքերին:

Տարիներ անց ես թեթևություն ապրեցի՝ հասկանալով, որ ոտքերը լվանալը ավելի շուտ ավանդույթ էր, որին իմ ընկերները հետևում էին: Դրա զուգահեռ օրինակն այն է, երբ Մովսեսը բարձրացրեց օձը ձողի վրա (կարդացե՛ք Թվոց 21.8,9), և ովքեր նայում էին դրան, բժշկվում էին օձերի խայթոցներից: Դա հրաշագործ և ազդեցիկ էր: Այնուամենայնիվ, շատ սերունդներ անց Իսրայելը կուռք դարձրեց այդ օձը (կարդացե՛ք Դ Թագավորաց 18.4): Նրանք ուղղեցին իրենց ուշադրությունն այդ առարկային, փոխարենը հասկանային, որ տարիներ առաջ տեղի ունեցած այդ պատմության իմաստը Տիրոջ պատվերին հետևելն էր:

1980-ական թվականներին մենք գնում էինք այդ ճանապարհով մեր Աստվածաշնչի ուսումնասիրության փոքր խմբերում: Մենք սխալ էինք հասկանում ոտնալվան և սխալ էինք գործածում այն: Ավելի շատ կենտրոնանում էինք այդ գործողության վրա, քան դրա իմաստի: Առաջին դարում ճանապարհները սալարկված չէին, կենդանիները միակ տրանսպորտային միջոցն էին՝ քայլելուց բացի, և չկային սպորտային կոշիկներ՝ «Ադիդասի» և «Նայքի» պես: Մարդիկ կրում էին սանդալներ, և շատ հաճախ բոլորովին կոշիկ չէին հագնում. այնպես որ, ցեխը, կենդանիների աղբը և այլ կեղտեր քսվում էին նրանց ոտքերին: Կարելի է ասել, որ նման պայմաններում ոտքերի կեղտն ու գարշահոտությունը հասնում էր այնպիսի մակարդակի, որն անհայտ է ժամանակակից Արևմուտքի հասարակությանը:

Հարուստ մարդկանց տներում կային ծառաներ կամ ստրուկներ, որոնք պետք է լվանային իրենց տիրոջ, նրա ընտանիքի անդամների և նրանց տուն եկող հյուրերի ոտքերը: Վերնախավի ներկայացուցիչների տանը կային բազում գործեր. անհրաժեշտ էր հետևել ախոռին, կերակուր պատրաստել, մաքրել սենյակները և այլն: Ոտքերը լվանալը ամենացածր ծառայի գործն էր: Այլ շրջաններում մարդիկ ավելի հեռու էին գնում. նրանք հատկացնում էին այդ անվայել պարտականությունը միայն ամենացածր կին ծառաներին, քանի որ միայն նրանք էին, որ համարվում էին «անարժան»՝ նման զզվելի աշխատանք կատարելու համար:

Վերջին ընթրիքի ժամանակ աշակերտները գտնվում էին այդպիսի

տան մեջ, որը բավականին մեծ էր՝ Հիսուսի ամբողջ թիմին առանձին սենյակում տեղավորելու համար: Հավանաբար, դա ամենահարուստ տունն էր այդ քաղաքում: Ժամեր առաջ նրանցից յուրաքանչյուրի ոտքերը լվացել էր ամենացածր ծառան: Բայց, ի զարմանս բոլորի, նույն երեկոյան Հիսուսը ոչ միայն վերցրեց տաշտ և ջրով լի կուժ, այլև հանեց Իր հանդերձը՝ հեռացնելով Իր ուսուցչական դիրքի խորհրդանիշը, և սկսեց լվանալ նրանց ոտքերը: Նրանք շատ լավ գիտեին, թե ինչ էր տեղի ունենում և ինչ էր դա խորհրդանշում: Ի հակադրություն, համալսարանում սովորելու տարիներին այդ սովորույթը շփոթեցնում էր և նույնիսկ վանում էր ինձ, քանի որ իմ ոտքերը մաքուր էին. ես ցնցուղ էի ընդունում անմիջապես Աստվածաշնչի ուսումնասիրության գնալուց առաջ: Դա նույնպես անհանգստություն էր պատճառում ինձ. *«Ինչո՞ւ է մի տղա, որին ես հազիվ եմ ճանաչում, փորձում լվանալ իմ ոտքերը»:*

Եթե կրկին կարդաք Հիսուսի խոսքերը, դրանք շատ ավելի խորը իմաստ կունենան ձեզ համար: Նա անջնջելի տպավորություն թողեց աշակերտների վրա, որը մնալու էր նրանց հետ մինչև կյանքի ավարտը: Դա Նրա *վերջին խոսքն* էր:

Ամփոփենք. մեծ լինելու համար մենք պետք է հոժարաբար զբաղեցնենք ամենացածր ծառայի տեղը: Միգուցե սա՞ է պատճառը, որ Հիսուսն ասում է. «Ես հեզ եմ և սրտով խոնարհ» (Մատթեոս 11.29):

Որոշ ժամանակ պահանջվեց, մինչև որ հասկացա այս ճշմարտությունը: Երբ ես նորահավատ էի, թվում էր՝ շատերս դիտարկում էինք ծառայությունը ճիշտ հակառակ կերպով: Մեր անխոս համոզմունքը հետևյալն էր. *«Դու կարևոր մարդ չես, եթե չես քարոզում և չես առաջնորդում շատերին»:* Այլ տեսակի ծառայությունները նախատեսված էին եկեղեցում ավելի ցածր դիրք ունեցող մարդկանց համար: Եվ եթե դուք շատ աշխատեիք, մեկ օր կարևոր մարդ կդառնայիք: Որքա՜ն խեղաթյուրված էր մեր պատկերացումը:

Ես այնքա՜ն շնորհակալ եմ Սուրբ Հոգու համբերության համար մեր հասունացման ընթացքում: Նա վերափոխեց իմ մտածելակերպը, բայց դրա համար ժամանակ պահանջվեց:

Ինչպես արդեն նշել եմ, իմ ծառայության առաջին չորս տարում ես մեր հովվի անձնական օգնականն էի: Մեկ անգամ, երբ մի փոքր առաջադրանք էի կատարում, Աստծո Հոգին շշնջաց. «Որդի՛ս, եթե Ես առաջխաղացում տամ քեզ, դու *կունենաս ավելի բարձր դիրք՝ ծառայելու համար:* Եթե դու սխալվես հիմա, պարզապես կվնասես չոր մաքրման տրված վերնաշապիկը: Հրապարակային ծառայության մեջ քո սխալը չի վերաբերի վերնաշապիկին, որը կարելի է փոխարինել.

այն կվնասի մարդկանց, որոնց Ես սիրում եմ»: Նրա խոսքերը լրջորեն ազդեցին ինձ վրա: Բացի այն, որ Նա ասաց ինձ, որ բարձր ծառայողական դիրքերը ենթադրում են ավելի մեծ ծառայողական պատասխանատվություն, Նա նույնպես ցույց տվեց, թե որքան կարևոր է մշտապես փոքր բաներում հավատարիմ լինելը: Ես պետք է շարունակեի ծառա լինել նաև այն ժամանակ, երբ ինձ վստահվեր իրական հարստությունը՝ մարդիկ:

## ՌԵԲԵԿԱ

Անձնուրաց ծառայությունից բխող բազմապատկման ուշագրավ օրինակներից մեկը Հին կտակարանում Ռեբեկայի կյանքն է: Եկեք համառոտ վերհիշենք նրա պատմությունը:

Աբրահամն ուղարկեց իր ամենավստահելի ծառային այն երկիրը, որից ինքը դուրս էր եկել՝ իր ժառանգ Իսահակին կին գտնելու համար: Ծառան շտապելով երկար ճանապարհ ընկավ՝ իր հետ տասը ուղտ տանելով:

Երբ նա տեղ հասավ, օրվա այն ժամն էր, երբ երիտասարդ աղջիկները գալիս էին ջրհորի մոտ՝ ջուր տանելու: Նա աղոթեց. «Ահա իմ խնդրանքը. ես կխնդրեմ նրանցից մեկին, որ ջուր տա ինձ իր սափորից: Եթե նա ասի. «Այո՛, խմի՛ր, ես կխմեցնեմ նաև քո ուղտերին», թող նա լինի այն աղջիկը, որին Դու կին ես ընտրել Իսահակի համար» (Ծննդոց 24.14, NLT):

Մինչև նա ավարտեց իր աղոթքը, Ռեբեկան մոտեցավ ջրի սափորով, և նա ջուր խնդրեց նրանից: Այն, ինչ կատարվեց դրանից հետո, տպավորիչ է.

> ««Այո՛, իմ տե՛ր, - պատասխանեց նա, - խմի՛ր»: Եվ նա *արագ* իջեցրեց սափորն իր ուսից և ջուր տվեց նրան: Ջուր տալուց հետո ասաց. «Ես ջուր կհանեմ նաև քո ուղտերի համար, մինչև որ նրանք խմեն և հագենան»: Եվ նա *արագ* դատարկեց իր սափորը ջրոցի մեջ և ետ վազեց դեպի ջրհորը՝ ջուր հանելու նրա բոլոր ուղտերի համար» (Ծննդոց 24.18-20, NLT):

Աբրահամի ծառան լուռ հետևում էր, մինչ աղջիկը խմեցնում էր տասը ուղտերին: Այս մի քանի խոսքում մենք գտնում ենք Ռեբեկայի ծառայությանը վերաբերող բազմաթիվ ակնառու հատկանիշներ: Ես մեկ առ մեկ կթվարկեմ.

- *Եռանդուն*. Նա չէր քայլում՝ ոտքերը հազիվ քարշ տալով: Նա արագ էր անում ամեն ինչ և նույնիսկ վազելով էր գնում-գալիս դեպի ջրհորը: Դանդաղկոտ և ջանքից զուրկ ծառայությունը ճշմարիտ ծառայություն չէ: Դուք նկատե՞լ եք, որ ոմանք ծառայում են, սակայն անում են դա անտարբերությամբ և կարծես ասում են. *«Ես հոգնել եմ ամբողջ այս աշխատանքից»:* Ռեբեկան և ցանկացած ճշմարիտ ծառա այդպես չեն վարվում: Ճշմարիտ ծառաները պատրաստակամ և աշխույժ են, ինչն ակնհայտ է նրանց գործերից:
- *Ավելին անող.* Ծառաները վարվում են գերազանցությամբ: Ռեբեկան մեծապես գերազանցեց այն, ինչ իրեն խնդրեցին: Քանի որ մեզնից շատերը չեն ունեցել ուղտեր և չեն ապրել Մերձավոր Արևելքի անապատում, մենք չենք շեշտադրի այս գործոնը, ինչն է՛լ ավելի ապշեցուցիչ է դարձնում Ռեբեկայի ծառայությունը: Երկար ճանապարհորդությունից հետո ծարաված ուղտը սովորաբար կարող է խմել 120-150 լիտր ջուր: Աբրահամի ծառան 10 ուղտ ուներ: Եկեք հաշվենք. եթե ամեն ուղտը խմեր ընդամենը 120 լիտր, նշանակում է՝ Ռեբեկան պետք է հարյուրավոր լիտրերով ջուր բերեր ջրհորից: Եթե սովորական սափորի տարողությունը 20 լիտր էր, նշանակում է՝ նա պետք է 60 անգամ գնար ջրհորի մոտ և ետ դառնար:

  Սակայն նրա արածն է՛լ ավելի զարմանալի է: Այդ օրերին կային երկու տեսակի ջրհորներ: Մի տեսակի դեպքում սափորին պարան էին կապում և իջեցնում էին փոսը՝ մինչև ջրի մակարդակը: Մյուս տեսակի դեպքում անհրաժեշտ էր 20-30 քայլ ցած իջնել՝ ջրի մակարդակին հասնելու համար: Մենք գիտե՞նք, թե որ տեսակի ջրհորի մոտ էր Ռեբեկան: Անկասկած՝ երկրորդ տեսակի, քանի որ հետագայում, երբ Աբրահամի ծառան Ռեբեկայի արարքի մասին պատմում էր նրա ընտանիքին, նա ասաց. «[Ռեբեկան] իջավ աղբյուրը և ջուր հանեց»: Բացի այն, որ նա 60 անգամ գնաց դեպի ջրհորը և վերադարձավ՝ 20 լիտր ջուրն ուսին, նա նույնպես ստիպված էր այդքան շատ քայլեր անել: Եվ մտապահեք, որ նա անձամբ այդ ամենը անելու պատրաստակամություն հայտնեց, թեև իրեն չէին խնդրել դրա համար: Այս հատկանիշի մասին գրված է մեր հաջորդ կետում:
- *Արձագանքող*. Երբ կա ակնհայտ կարիք, ճշմարիտ ծառան չի սպասում, որ իրեն խնդրեն. նա անմիջապես գործի է անցնում: Իմ փորձառության տարիների ընթացքում ես պարզորեն տեսել

եմ, որ այն մարդկանց կյանքում, որոնք միայն սպասում են հանձնարարությունների, չկա բազմապատկում: Բազմապատկողները նրանք են, ովքեր միշտ առաջինն են գործում:

- *Նվիրված*. Թեև այդ առաջադրանքը բարդ էր, Ռեբեկան ջանասեր էր իր ծառայության մեջ: Տարիների ընթացքում ես տեսել եմ մի օրինաչափություն. որքան դժվար է առաջադրանքը, այնքան պատրաստակամությունն արագ է մարում: Այդպիսին է մարդկային բնությունը: Այնուամենայնիվ, մենք ունենք Հիսուս Քրիստոսի բնությունը: Նա երբեք չհանձնվեց՝ նույնիսկ կրելով աներևակայելի հակառակություն և նեղություն: Ապրե՛ք համաձայն Հիսուսի բնության և ոգեշնչվե՛ք Ռեբեկայով:
- *Գործն ավարտին հասցնող.* Ռեբեկան կանգ չառավ, քանի դեռ չէր ավարտել իր գործը: Նա հանձնվող չէր: Գործի 99 տոկոսն անելը չի նշանակում ավարտել այն: Մենք հիշում ենք, որ այդպես վարվեց Սավուղ թագավորը ամաղեկացիների հետ մարտի ժամանակ: Նա սպանեց տասնյակ հազարավորների, բայց խնայեց մեկին, և Աստված չվարձատրեց նրա ջանքերը (կարդացե՛ք Ա Թագավորաց 15-րդ գլուխը): Ռեբեկան արեց այդ ամենը՝ չիմանալով, որ վարձատրություն էր ստանալու իր գործի համար: Սա ծառա լինելու ճշմարիտ նշանն է. ծառաները չեն գործում հանուն վարձատրության. վարձատրությունը նրանց համար հենց ծառայելն է: Նրանք սիրում են այն ուրախության, բավականության և գոհունակության զգացումը, որը ծառայությունը պարգևում է իրենց: Եթե կա վարձատրություն, դա պարզապես հավելյալ օրհնություն է, ոչ թե նրանց շարժառիթը: Ռեբեկայի վարձատրությունն անասելի էր. նա չէր պատկերացնում, որ այդ տասը ուղտերը թանկարժեք իրեր և նվերներ էին բերել իրեն, և որ ինքն ամուսնանալու էր աստվածապաշտ տղամարդու հետ: Բայց այս երկուսից ոչ մեկը մնայուն վարձատրություն չէր: Մնայուն վարձատրությունն այն էր, որ նա մուտք գործեց այն խոստման մեջ, որն Աստված տվել էր Աբրահամին: Նա շատ ազգերի մայր էր լինելու: Բոլոր ազգերն օրհնվելու էին նրա միջոցով: Ռեբեկան անասելի բազմապատկում ստացավ:

## ԱՅԼ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Գոյություն ունեն բազում այլ սուրբգրային օրինակներ՝ ի սրտե արված ծառայությունից բխող հավիտենական բազմապատկման մասին: Ահա ևս մի քանիսը, որոնք կարող եք ավելի մանրամասն ուսումնասիրել անձամբ՝ ձեր Աստվածաշնչի ուսումնասիրության ժամանակ:

### Հռութ

Նման Ռեբեկային, մովաբացի Հռութի սկեսուր Նոյեմին երեք անգամ խրախուսեց նրան վերադառնալ իր հայրենիքը: Բայց Հռութը հրաժարվեց՝ ասելով.

> «Ինձ մի՛ ստիպիր, որ քեզ թողնեմ և քեզնից ետ դառնամ, որովհետև ուր որ գնաս՝ գնալու եմ, և ուր որ մնաս՝ մնալու եմ: Քո ժողովուրդն իմ ժողովուրդն է, և քո Աստված իմ Աստվածն է» (Հռութ 1.16):

Հռութը՝ Ռեբեկայի պես պատրաստ էր անել ավելին, քրտնաջան աշխատել, նվիրված մնալ՝ նույնիսկ երբ ընթացքը դժվարանում էր: Հռութի ուղին, հավանաբար, ավելի դժվար էր, քան Ռեբեկայինը: Քանի որ նա մովաբացի էր, ամենայն հավանականությամբ, հալածվում էր Նոյեմիի քաղաքի բնակիչների կողմից՝ իր ազգության և հայրենիքի պատճառով: Սակայն նա դիմացավ ցանկացած նեղության՝ իր սկեսրոջը հավատարմորեն ծառայելու համար:

Ի՞նչ տեղի ունեցավ արդյունքում: Նա դարձավ բազում ակնառու մարդկանց նախամայրը, որոնց թվում էին Դավիթ թագավորը, Սողոմոն թագավորը և Հուդայի բոլոր թագավորները: Ամենակարևորը, նա հայտնվեց Հիսուսի սերնդաբանության մեջ: Նա նույնպես մուտք գործեց այն հավիտենական բազմապատկման ուխտի մեջ, որը խոստացված էր Աբրահամին:

### Եղիսե

Եղիսեն վճռեց մնալ Եղիայի հետ և ծառայել նրան, թեև Եղիան երեք անգամ խրախուսեց նրան գնալ: Նույնիսկ երբ մյուս մարգարեներն ավելի քան մեկ անգամ ծաղրեցին նրան՝ ասելով, որ նա վատնում էր իր ժամանակը՝ ծառայելով Եղիային, միևնույն է, Եղիսեն մնաց նրա հետ: Նրանց դատողությունները տրամաբանական էին թվում. նրանք լրիվ դրույքով մարգարեներ էին դարձել՝ ծեռք բերելով կարգավիճակ և փորձառություն: Ի՞նչ կլիներ Եղիսեի հետ, երբ Եղիան վերցվեր: Արդյո՞ք նա վատնել էր իր տարիները՝ ծառայելով Եղիային, և այլևս չուներ հնարավորություն կառուցելու իր ծառայությունը: Դա այդ մարգարեների տրամաբանությունն էր, բայց Եղիսեն չլսեց նրանց: Փոխարենը, նա ամեն անգամ խստորեն պատվիրում էր նրանց լռել (կարդացե՛ք Դ Թագավորաց 2-րդ գլուխը): Նա թույլ չտվեց, որ ինչ որ բան ետ պահի իրեն ծառայությունից, և կատարեց իր առաջադրանքը:

Եղիսեի վարքը նման էր Ռեբեկայի և Հռութի վարքին: Ի՞նչ տեղի ունեցավ արդյունքում: Նա երկու անգամ ավելի շատ հրաշքներ գործեց, քան Եղիան, և կարողացավ անել այն, ինչ չհաջողվեց Եղիային՝ վերջ տալ Հեզաբելի դինաստիային: Նա բազմապատկում ունեցավ:

## Գեեզի

Գեեզին հնարավորություն ուներ բազմապատկելու Եղիսեի գործը, բայց չուներ ծառայի սիրտ: Նա եսակենտրոն և ագահ էր, և նրա կյանքում արդյունավետ բազմապատկում տեղի չունեցավ (կարդացե՛ք Դ Թագավորաց 5-րդ գլուխը):

X

Նոր կտակարանում կարդում ենք այրիների սեղաններին ծառայող տղամարդկանց մասին: Նրանք լրջորեն վերաբերվեցին իրենց պարտականությանը: Նրանց ձեռնադրեցին՝ այդ աշխատանքը պատշաճ կերպով կատարելու համար: Արդյունքը տպավորիչ էր, քանի որ Գործք առաքելոց գրքում գրված է հետևյալ ապշեցուցիչ պնդումը.

> «Եվ Աստծո Խոսքը տարածվեց, և աշակերտների թիվը *մեծապես բազմապատկվեց* Երուսաղեմում» (Գործք 6.7, NKJV):

Ի՞նչն էր այդքան ապշեցուցիչ: Բարձրաձայն ասե՛ք այս բառերը. «Մեծապես բազմապատկվեց»: Մտածե՛ք այս մասին: Այս բառերը չգրվեցին Պենտեկոստեի օրվանից հետո, երբ Պետրոսի դասական դարձած ուղերձի միջոցով մեկ օրում երեք հազար մարդ վերստին ծնվեց: Ո՛չ, այդտեղ օգտագործված է *«ավելացան»* բառը (Գործք 2.41): Երբ նկարագրվում են ամենօրյա դարձի եկածների մասին, կրկին օգտագործվում է *«ավելանալ»* բառը (Գործք 2.47): Նույն բառն օգտագործվում է այն հինգ հազարի վերաբերյալ, որոնք կարճ ժամանակ անց նվիրեցին իրենց կյանքը Հիսուսին (կարդացե՛ք Գործք 4.4):

«Բազմապատկել» բառը չի օգտագործվում մինչև Գործք առաքելոց գրքի վեցերորդ գլուխը, որտեղ ամբողջ եկեղեցին է սկսում գործել՝ Աստծո թագավորությունը կառուցելու համար:

Այսօր բազմապատկումը տեղի է ունենում, երբ Սթենի, Մայքի, Ֆիլի, Ռայլիի և Դեյվի նման մարդիկ զբաղեցնում են իրենց ծառայողական դիրքերը և օգտագործում են իրենց պարգևները: Հենց այս ժամանակ ենք լսում *մեծ բազմապատկման* մասին:

# ՈՐՈՇԻՉ ԳՈՐԾՈՆԸ

Հիմա հասկանո՞ւմ եք, թե որն է արդյունավետ բազմապատկման որոշիչ գործոնը: Կրկին մտածեք իմ ընկերներ Ռայլիի և Դեյվի մասին՝ այն սուրբգրային պատմությունների լույսի ներքո, որոնք դիտարկեցինք: Այս զույգը, որը կիրառել է ոգեշնչումով ստացած մարտավարություններ, արդեն իսկ ազդեցություն է գործել տասնյակ հազարավոր մարդկանց կյանքերում: Նրանք մեծ են դարձել՝ ըստ Հիսուսի խոսքերի: Նույնը վերաբերում է Սթենին, Մայքին, Ֆիլին և Դանային: Բոլոր այս մարդիկ ունեն ճշմարիտ ծառա լինելու հատկանիշը:

Այնուամենայնիվ, խնդրում եմ, որ ուշադրություն դարձնեք այս կարևոր խոսքերին. *դուք կարող եք բազմապատկել եսասիրական շարժառիթներով*, բայց ձեր ազդեցությունը հավիտենական չի լինի: Կան մարդիկ, որոնք բազմապատկում են, սակայն մեկ օր նրանց բոլոր գործերը կայրվեն, քանի որ նրանց շարժառիթն անձնական շահն է: Սա նկարագրվում է ավելի մեծ ամբարներ կառուցող մարդու առակում, որը պատմում է Հիսուսը: Այդ մարդն ինքնագոհ շնորհավորեց իրեն՝ ասելով. «Հանգստացի՛ր, կե՛ր, խմի՛ր, զվարճացի՛ր, որովհետև ես հասել եմ իմ նպատակին և այժմ ունեմ այն ամենը, ինչ պետք է ինձ, և ավելին»: Բայց այս պատմությունը լավ չավարտվեց, քանի որ մի ակնթարթում նրա բոլոր ձեռքբերումներն անհայտացան:

Այս գրքի ուղերձի նպատակն այն չէ, որ հավատաք բազմապատկմանը և սկսեք գանձեր դիզել ձեզ համար: Այս ուղերձի նպատակն է խրախուսել ձեզ, որ նվիրեք ձեր կյանքը մարդկանց ծառայելուն: Հիսուսը հայտարարեց, որ երբ այսպես վարվենք, *այն ամենը*, ինչին ձգտում են անհավատները, պարզապես տրվելու է մեզ (կարդացե՛ք Մատթեոս 6.33): Ես գիտեմ այս մասին, քանի որ անձամբ վերապրել եմ:

Վերադառնանք Լիզայի և իմ պատմությանը՝ մեր առաջին եկեղեցու մասին: Վեց տարի շարունակ նման անառողջ մթնոլորտում լինելու արդյունքում իմ ներսում մնացել էին թյուր պատկերացումներ բազմապատկման մասին: Այդ եկեղեցուց հեռանալուց կարճ ժամանակ անց՝ մի առավոտ, երբ մեքենա էի վարում, տեղի ունեցավ իմ բազմաթիվ վերափոխող և ազատագրող հանդիպումներից մեկը Սուրբ Հոգու հետ: Նա ասաց. «Որդի՛ս, մի՛ փնտրիր Ինձ օրհնությունների համար: Թո՛ւյլ տուր, որ Ե՛ս տամ դրանք քեզ»:

Ես անմիջապես մտաբերեցի Մատթեոս 6.33-ը. «Փնտրե՛ք Աստծո թագավորությունը ամեն ինչից առավել և ապրե՛ք արդար, և Նա կտա ձեզ այն ամենը, ինչի կարիքն ունեք» (NLT): Հոգու խոսքերը տվեցին ինձ ճիշտ պատկերացում և օգնեցին արմատախիլ անել ներսումս մնա-

ցած եսասիրական հակումները:

Ես այնքա՜ն շնորհակալ եմ Նրան: Գիտեմ, թե ինչ է նշանակում եսասեր և ագահ լինել՝ երբ դուք դժբախտ եք, ճնշված եք և հեռու եք Աստծո ներկայությունից: Երբ ես սովորեցի Նրա ճանապարհը և այն, ինչ Նրա սրտում է, երբ սկսեցի առաջին հերթին ձգտել Աստծո թագավորությունը կառուցելուն, ես ձեռք բերեցի անսահման ուրախություն, խաղաղություն և Նրա ներկայությունը իմ ամենօրյա կյանքում:

## X

Այժմ մենք պետք է տանք հետևյալ հարցը. ինչպե՞ս կարող ենք բազմապատկել, եթե չենք ղեկավարում մեր սեփական գործը, այլ ծառայում ենք ինչ-որ մեկի թիմում: Եկեք պատասխանենք այս հարցին հաջորդ գլխում և տեսնենք այն մեծ առավելությունները, որոնց կարելի է հասնել այդ կերպով:

## ՄՏՈՐԵՔ

1. Հիսուսը ցույց է տալիս, որ ճշմարիտ մեծության ուղին ծառայելն է: Ինչպե՞ս Հիսուսը ցուցադրեց ծառայությունը: Որո՞նք էին Նրա ծառայության արդյունքները: Ինչո՞վ է Աստծո մեծության ուղին տարբերվում այս աշխարհի ճանապարհներից:

2. Հիշե՛ք Ռեբեկայի պատմությունը: Որո՞նք էին նրա ծառայության ակնառու հատկանիշները:

3. Դուք կարող եք բազմապատկել եսասիրական շարժառիթներով, բայց ձեր ազդեցությունը հավիտենական չի լինի: Ո՞րն է *եսասեր* և *անձնազոհ* ծառայության տարբերությունը: Ինչո՞ւ է կարևոր ծառայել անձնազոհ:

*«Հորդորում եմ ձեզ՝ նմանակե՛ք ինձ:*
*Այս նպատակով...»:*

– Ա Կորնթացիների 4.16,17, NKJV

# 11

# Նմանակե՛ք ինձ

Մինչև կխոսենք այն մասին, թե ինչն է խոչընդոտում բազմապատկմանը և ինչն է խթանում այն, մենք պետք է քննարկենք ևս մեկ կարևոր բնագավառ: Ինչպե՞ս ենք բազմապատկում, երբ աշխատում կամ ծառայում ենք ինչ-որ մեկի մոտ: Այս հարցը վերաբերում է ընթերցողների մեծ մասին:

Այս հարցին պատասխանելու համար ես կենտրոնանալու եմ ծառայողական ոլորտի վրա, սակայն այն սկզբունքները, որոնք կներկայացնեմ, կիրառելի են ցանկացած պաշտոնի համար ժամանակակից աշխարհի ցանկացած ոլորտում՝ կորպորատիվ, գործարար, կրթական, առողջապահական, պետական, մեդիայի, սպորտի, արվեստի և այլն:

Պողոսը հայտարարում է. «Արդ տնտեսների մեջ այն է պահանջվում, որ մեկը հավատարիմ գտնվի» (Ա Կորնթացիների 4.2): Ինչպես որ ցույց տվեցինք Աստվածաշնչից, հավատարիմ լինելու գլխավոր հատկանիշներից մեկը բազմապատկելն է: Մի քանի խոսք հետո իր նամակում Պողոսը բացահայտում է զանգվածային բազմապատկման հիմնական բաղադրիչներից մեկը: Նա գրում է.

> «Որովհետև թեև տասը հազար վարդապետներ ունենաք Քրիստոսում, բայց ոչ թե շատ հայրեր, որովհետև Քրիստոս Հիսուսում ես ծնեցի ձեզ Ավետարանով» (Ա Կորնթացիների 4.15):

Պողոսը Կորնթոսի եկեղեցու *հայրն* էր: Համաձայն այս խոսքի, *հայրը* նա է, ով դեպի հավատքն է առաջնորդում ինչ-որ մեկին: Այնուամենայնիվ, կան նաև «հայր» բառի այլ սահմանումներ: Աստվածաշնչում հայրը շատ ավելի հաճախ այնպիսի մարդ է, որը ներգրավված չէ ինչ որ մեկին դարձի բերելու մեջ:

Նույն Պողոս առաքյալը, դիմելով Գաղատիայի եկեղեցուն, պնդում

է. «Հրեության մեջ իմ հասակակիցներից շատերից առաջադեմ էի իմ ազգի մեջ, ավելի նախանձավոր լինելով իմ *հայրենական* (կամ՝ *«հայրերի»*) ավանդությունների համար» (Գաղատացիների 1.14): Գրելով *հայրերի* մասին՝ Պողոսը նկատի չուներ մեկ մարդու: Այս պնդումը հաստատվում է նրա՝ «ոչ թե *շատ* հայրեր» արտահայտությամբ: Հունարենում օգտագործված «շատ» բառը նշանակում է «մեծաթիվ». այսինքն, մենք կարող ենք ունենալ ավելի քան մեկ «հայր» մեր կյանքում:

Պողոսը հաճախ էր Տիմոթեոսին անվանում իր «որդին»: Սակայն նա փրկության չէր առաջնորդել նրան, քանի որ գրված է, որ Պողոսը «եկավ-հասավ Դերբե և Լյուստրա, և ահա մեկ աշակերտ կար այնտեղ՝ անունը Տիմոթեոս, որ մի հավատացյալ հրեա կնոջ և հույն հոր որդի էր, որ բարի վկայություն ուներ Լյուստրացի և Իկոնիացի եղբայրներից» (Գործք 16.1,2): Պարզ է, որ Տիմոթեոսն արդեն հաստատված հավատացյալ էր, երբ Պողոսը հանդիպեց նրան առաջին անգամ:

Հին կտակարանում Դավիթն անվանում է իր խիստ և դաժան առաջնորդին «հայր իմ» (կարդացե՛ք Ա Թագավորաց 24.12): Եղիսեն նույնպես անվանում է իր առաջնորդին «հայր իմ» (Դ Թագավորաց 2.12): Եղիան ասաց, որ ինքն իր «հայրերից» լավը չէր (կարդացե՛ք Գ Թագավորաց 19.4). այս ցուցակը դեռ կարելի է երկար շարունակել:

Այս գրքի շրջանակներում իմ նպատակը չէ մանրամասնորեն բացատրելը, թե *ով է հայրը*. ես ցանկանում եմ ցույց տալ, թե *ով կարող է լինել հոր դերում:* Հայրն այն մարդն է, ով առաջնորդում, մատակարարում և ներմուծում է որոշակի մշակույթ որևէ անհատի կամ կազմակերպության կյանքում: Մեր քննարկման շրջանակում հայրը կարող է բազմաթիվ դիրքեր զբաղեցնել՝ այն ձեռնարկատերը, որի մոտ դուք աշխատում եք, ձեր բաժնի ղեկավարը, ձեր հովիվը, ձեր փոքր խմբի ավագը, ձեր շարժման վերակացուն, ձեր ուսուցիչը, ձեր մարզիչը, այն բժիշկը, որի օգնականն եք դուք, ահա հնարավոր դիրքերի շատ կարճ ցուցակ: Իհարկե, դուք, հավանաբար, հասկացաք, որ այս դիրքերը զբաղեցնող «հայրը» կարող է կին լինել: Այնպես որ, խոսելով հայրերի մասին, նկատի ունեմ նաև այս դերում գտնվող կանանց:

## ՏԱՐԲԵՐ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԵՐ

Որպես Կորնթոսի եկեղեցու հայր՝ Պողոսը խրատում է հաջորդ խոսքում. «Ուրեմն, հորդորում եմ ձեզ՝ նմանակե՛ք ինձ» (Ա Կորնթացիների 4.16, NKJV):

Պողոսը չի ասում. «Նմանակե՛ք ինձ, ինչպես որ ես նմանակում եմ Քրիստոսին» (նա անում է այս պնդումն ավելի ուշ՝ 11-րդ գլխում): Այս

խոսքում նա պարզապես պատվիրում է. «Նմանակե՛ք ինձ»: Կա լուրջ պատճառ այդպես վարվելու համար, և այժմ կդիտարկենք այն.

> *«Այս նպատակով* ես ուղարկեցի Տիմոթեոսին ձեզ մոտ, որն իմ սիրելի և *հավատարիմ* որդին է Տիրոջ մեջ, որը կհիշեցնի ձեզ *իմ ճանապարհների մասին Քրիստոսում*, ինչպես որ ես սովորեցնում եմ ամենուր՝ ամեն եկեղեցում» (Ա Կորնթացիների 4.17, NKJV):

Նրա՝ «այս նպատակով» արտահայտությունն այս խոսքի սկզբում, ուշագրավ է: Պողոսը հենց նոր պատվիրեց իր ունկնդիրներին նմանակել իրեն: Եվ, հավաստիանալու համար, որ նրանք չեն ունենա որևէ տարաձայնություն տեսիլքի, մշակույթի և համոզմունքների մեջ, նա ուղարկեց իր *հավատարիմ* որդուն: Ո՞րն է *հավատարիմ* որդու ցուցանիշը: *Հավատարիմ որդին կամ դուստրը բազմապատկում է իր հոր գործելակերպը:* Շուտով ավելի մանրամասն կբացատրեմ սա, բայց, նախ, մտածեք հետևյալը. Պողոսը չի գրում Կորնթոսի եկեղեցուն՝ ասելով, որ Տիմոթեոսը «կհիշեցնի ձեզ Պետրոս առաքյալի ճանապարհների մասին Քրիստոսում»: Կարելի՞ է ասել, որ Պետրոսը հեղինակավոր առաջնորդ էր եկեղեցում: Իհա՛րկե: Կարելի՞ է ասել, որ նա աստվածապաշտ և օծված առաջնորդ էր: Կրկին՝ այո՛: Նա երկու գիրք է գրել Աստվածաշնչում: Կարելի՞ է ասել, որ Պետրոսն ավելի երկար ժամանակ էր առաքյալ եղել, քան Պողոսը: Կրկին՝ այո՛:

Նույնպես, Պողոսը չի գրում, որ Տիմոթեոսը «կհիշեցնի ձեզ Հակոբոս առաքյալի ճանապարհների մասին Քրիստոսում»: Ինչպես և Պետրոսը, Հակոբոսը եկեղեցու ճշմարիտ հայրերից մեկն էր, նա ավելի երկար ժամանակ էր առաքյալ, քան Պողոսը, և հուսալի առաջնորդ էր: Նա նույնպես մեկ գիրք է գրել Աստվածաշնչում և ծառայում էր որպես գլխավոր երեց Երուսաղեմի եկեղեցում:

Արդյո՞ք Պետրոսը և Հակոբոսն այլ կերպ էին ծառայում, քան Պողոսը: Այո՛: Ուրեմն, կարելի՞ է ասել, որ Պողոսի գրքերը և գործելակերպն անվավեր են դարձնում Պետրոսի և Հակոբոսի գրքերը և գործելակերպը: Իհարկե՝ ո՛չ: Այնուամենայնիվ, այդ երկու առաքյալների գործելակերպը հարմար չէր Կորնթոսի եկեղեցու համար, որի հոգևոր հայրը Պողոսն էր:

Պողոսը Կորնթոսի եկեղեցում իր մշակույթը հաստատելու ընթացքի մեջ էր: Նրա մեթոդները տարբերվում էին մյուս «հայրերի» մեթոդներից: Թեև նրանցից յուրաքանչյուրը հավատարիմ էր Քրիստոսի հիմնարար համոզմունքներին և ուսմունքներին, նրանք ունեին տարբեր մեթոդներ, գործելակերպեր և համոզմունքներ, որոնց հարում էին՝ կատարելով բոլոր ազգերն աշակերտելու իրենց առաջադրանքը:

Մենք տեսնում ենք մի ճշմարտություն, որին շատ հավատացյալներ ծանոթ չեն, և այդ անիրազեկությունը հաճախ կործանարար պառակտումների պատճառ է դառնում Քրիստոսի մարմնում: Այդ ճշմարտությունը հետևյալն է. եկեղեցում կան տարբեր *գործելակերպեր:* Գոյություն ունեն տարբեր միջոցներ, որոնցով կարելի է իրականացնել նույն նպատակը՝ Աստծո թագավորությունը տարածելը:

Պողոսը սովորեցնում է Կորնթոսի եկեղեցուն.

> «Եվ ներգործությունները զանազան են, բայց Աստված նույնն է, որ ամենը ամենքի մեջ ներգործում է» (Ա Կորնթացիների 12.6):

Որպես ծառայող, ով 30 տարի շարունակ ճանապարհորդում է, անձամբ հանդիպել եմ բազմապիսի մշակույթների, մեթոդների և համոզմունքների համաշխարհային եկեղեցում: Սակայն զգում էի Հիսուսի ներկայությունը յուրաքանչյուր մթնոլորտում:

Պողոսը հաճախ է օգտագործում ռազմական բառապաշար՝ եկեղեցուն սովորեցնելու համար: Դա միայն այլաբանություն չէ. մենք իրականում Աստծո բանակի զինվորներն ենք այս երկրի վրա: Ես կհետևեմ նրա օրինակին՝ բացատրելու համար ծառայությունների տարբեր գործելակերպերը: Միացյալ Նահանգների զինված ուժերը բաղկացած են տարբեր ստորաբաժանումներից: Դրանք են՝ բանակը, ռազմածովային, օդային և ծովահետևակային ուժերը, առափնյա պաշտպանության ստորաբաժանումը և տիեզերական ուժերը: Այս ստորաբաժանումներն իրականացնում են իրենց գործառույթները և պարտականությունները տարբեր ընթացակարգերով և մեթոդներով: Այնուամենայնիվ, նրանք ունեն նույն նպատակը, երբ խոսքը վերաբերում է մեր երկիրը պաշտպանելուն և մեր երկրին ծառայելուն:

Օդային ուժերի վարժարանի կադետը հատուկ կրթվելու է որպես Միացյալ Նահանգների օդային ուժերի զինվոր: Ուսուցման մեջ մեծ շեշտադրում է արվելու օդային տակտիկական գործողությունների վրա, քանի որ այդ ստորաբաժանման զորքերը հիմնականում պայքարում են օդում: Եթե այդ կադետին վերանշանակեին ռազմածովային ստորաբաժանում, նա կրկին ուսուցման կարիք կունենար: Իհարկե, կան անթիվ հիմքային մեթոդներ, որոնք համընկնում են այդ երկու ստորաբաժանումներում: Սակայն քանի որ ռազմածովային ստորաբաժանումը հիմնականում պայքարում է ծովում, օդային ուժերի նախկին անդամը ստիպված կլիներ սովորել բազմաթիվ նոր գործառնական մանևրներ և ռազմավարություններ:

Սա նման է Աստծո թագավորությանը: Ահա մի ենթադրական օրի-

նակ: Պատկերացրեք, որ ձեր ավագ հովիվների անուններն են Ջո և Տերի Անդերսոններ: Նրանք՝ իրենց առաջնորդական թիմի հետ, Աստծո շնորհքով, եկեղեցին հասցրել են 1.800 անդամի և հաստատել են որոշակի գործելակերպեր՝ մեթոդներ և մշակույթ, որոնք եզակի են իրենց առաջնորդական ոճի համար: Ձեր եկեղեցու պտղաբերությունն ակնառու կերպով ազդել է ձեր բնակավայրի վրա: Այն ունի տեղական ճանաչում, բայց դրանով ձեր եկեղեցու ազդեցությունը սահմանափակվում է:

Ենթադրենք, որ մեկ այլ վայրում կա մի հանրահայտ եկեղեցի՝ մի քանի տասնյակ հազար անդամներով, որը համաշխարհային ճանաչում ունի: Նրանց գլխավոր հովիվների անուններն են Քեվին և Մարիսա Սմիթեր: Նրանք սահմանում են տենդենցներ և առաջնորդում են նոր և թարմ մարտավարություններով, որոնք ազդեցություն են ունենում ավելի շատ մարդկանց վրա, քան ձեր հովիվների ծառայությունը: Ո՞ւմ գործելակերպին եք դուք հետևելու՝ Սմիթերի՞, թե՞ ձեր հովիվներ Անդերսոնների:

Միգուցե գայթակղություն ունենաք հետևելու այդ համաշխարհային համբավ ունեցող առաջնորդների գործելակերպին և փորձեք համոզել ձեր հովիվներին, որ ընդունեն նրանց մեթոդները: Եթե դուք տրվեք այդ գայթակղությանը, ես կասեի, որ դուք Հիսուս Քրիստոսի հավատարիմ ծառաները չեք, այլ ստեղծում եք բաժանություններ, տարաձայնություններ և նույնիսկ կռիվներ: Կորնթացիների նման դուք պետք է ձգտեք ճանաչել ձեր առաջնորդների մեթոդները և մշակույթը և հետևել դրանց՝ հանուն միաբանության: Իրականությունն այն է, որ Սմիթերը ձեր առաջնորդները չեն. ձեր առաջնորդներն Անդերսոններն են:

Դիտարկելով Քրիստոսի մարմինն ընդհանուր առումով՝ աշխարհով մեկ ճանապարհորդելու տարիների ընթացքում, ես ականատես եմ եղել հաճախակի ողբերգությունների, որոնք տեղի են ունեցել այս հիմնարար ճշմարտությունը չիմանալու պատճառով: Տեսել եմ մարդկանց, որոնք հաճախել են այնպիսի առաջնորդական կամ աստվածաշնչյան դպրոցներ, որոնց մշակույթը տարբերվել է այն եկեղեցու մշակույթից, որտեղ իրենք մեծացել են: Հաճախ այդ դպրոցները կապակցված են եղել որևէ խոշոր եկեղեցու հետ, որը թելադրել է տարածաշրջանի ընդհանուր եկեղեցական մշակույթը: Այդ ուսանողները կրել են այդ եկեղեցու գործելակերպի ազդեցությունը՝ թե՛ այդ դպրոցում սովորելու ընթացքում, թե՛ շաբաթավերջի երկրպագության ծառայություններին:

Ավարտելուց հետո այդ ուսանողները վերադառնում են՝ լցված եռանդով, և սկսում են անել ամեն ինչ, որպեսզի փոխեն իրենց եկեղեցու մշակույթը և մեթոդները: Թեև նրանք կարող են իրավացի լինել՝

հավատալով, որ այն գործելակերպը, որն իրենք սովորել են, ավելի հարմար և արդյունավետ է, եթե նրանք չափից շատ համառություն ցուցաբերեն, հեշտորեն կարող են խաթարել միաբանությունը իրենց եկեղեցու առաքելության մեջ:

Եթե այդ նախկին ուսանողների առաջարկած մեթոդները մերժվեն իրենց եկեղեցու կողմից, լավագույն տարբերակը բոլորի համար կլինի այն, որ այդ ուսանողներն աղոթեն և հարցնեն Աստծուն՝ արդյո՞ք իրենք պետք է տեղափոխվեն այլ եկեղեցի, թե՞ ամբողջ սրտով հնազանդվեն իրենց առաջնորդի մշակույթին և մեթոդներին:

Եթե նրանք տեղափոխվեն, պետք է անեն դա այնպես, որ չվնասեն իրենց նախկին եկեղեցուն: Սովորաբար լավագույն տարբերակը կլինի այն, որ նրանք տեղափոխվեն այդ բնակավայրից: Նման առաջնորդներին Աստված միշտ կարող է տանել նոր վայրեր, որտեղ նրանք նորովի կսկսեն ամեն ինչ և չեն փորձի հեռացնել մարդկանց (որոնց հետ իրենք շփվում են) այն եկեղեցուց, որտեղ նրանք հաճախում են:

## ՀԱՎԱՏԱՐԻՄ ՈՐԴԻ

Այժմ խոսենք այն մասին, որ Պողոսն անվանում է Տիմոթեոսին «հավատարիմ որդի»: Ինչպես արդեն ասվեց, հավատարիմ որդին ձգտում է բազմապատկել իր հոր գործելակերպը: Շատ հավանական է, որ դուք ունեք պարգևներ, որոնք ձեր առաջնորդը չունի: Այդ դեպքում, հարցը հետևյալն է. արդյո՞ք դուք բազմապատկում եք ձեր պարգևները նրա սրտի համեմատ: Արդյո՞ք ձեր բազմապատկման ներքին շարժառիթը համընկնում է նրա համոզմունքների և մշակույթի հետ, թե՞ դուք պայքարում եք, որ հաստատեք ձեր գործելակերպը, որը հակարդյունավետ է և հակառակ է այն տեսիլքին, որը նրա սրտում է:

Ինչպե՞ս գործնականորեն բազմապատկել ձեր հոր գործելակերպը: Գոյություն ունի երկու միջոց: Առաջինը՝ ձգտեք օգտագործել ձեր պարգևները, որպեսզի «կրկնօրինակեք» ձեր առաջնորդի ցանկալի արդյունքը, եթե նա լիներ ձեր դիրքում և ունենար ձեր եզակի պարգևները: Սա չի նշանակում, որ դուք պետք է անտեսեք ձեր հատուկ առաջադրանքը՝ դառնալով ձեր առաջնորդի կենսապատճենը: Ես նկատի ունեմ հետևյալը.

Պատկերացրեք, որ դուք երիտասարդական ծառայության հովիվ եք: Դուք չեք հասնի ձեր համայնքի երիտասարդներին, եթե պատճենեք ձեր հովվի կիրակնօրյա ծառայությունը: Այնուամենայնիվ, դուք իմաստությամբ կվարվեք, եթե այնպես կառուցեք ձեր ծառայությունը, որ հասնեք երիտասարդներին՝ ունենալով այն տեսիլքը, որը կա ձեր

իոր սրտում: Սա կարող է տեղի ունենալ միայն, եթե հաղորդակցվեք նրա հետ: Դուք պետք է բաց կերպով քննարկեք նրա հետ ձեր մարտավարությունները և մեթոդները: Լսելով նրա պատասխանները, դուք պետք է հաշվի առնեք, թե որքանով է այն, ինչ կա նրա սրտում, համապատասխանում ձեր ծրագրերի չափանիշներին:

Այս ամենը արդյունավետ կատարելու համար, ձեր միջև պետք է բաց և անկեղծ հաղորդակցություն լինի: Եթե դուք զգում եք, որ փորձում եք անել այնպիսի բան, ինչը «հուսով եք՝ նա չի նկատի կամ չի իմանա», դուք արդեն իսկ կարող եք հասկանալ, որ գնում եք կործանարար ճանապարհով: Եթե կասկածներ ունեք, պատմեք նրան այդ մասին. պարզ խոսեք, որպեսզի նա ճշտորեն հասկանա, թե ինչն է մտահոգում ձեզ: Օրինակ, դուք իմաստությամբ կվարվեք, եթե խնդրեք նրան ներկա լինել ձեր ծառայությանը և գնահատել ձեզ: Եթե նրան դուր չեն գալիս ձեր մեթոդները, բացատրեք, թե ինչու եք այդպես վարվում: Եթե ձեր փաստարկները, միևնույն է, չեն համոզում նրան, անմիջապես փորձեք նրան ընդունելի ծրագիր առաջարկել:

Երկրորդ միջոցը, որով սա հնարավոր է անել, ինքներդ ձեզ «վերարտադրելն» է: Ենթադրենք, ձեր երիտասարդական ծառայությունն ամենամեծն է ձեր քաղաքում: Դա հրաշալի է. Աստված օրհնում է ձեր մեթոդները, և Նրա պարգևը ձեր կյանքում գրավում է մարդկանց: Բայց արդյո՞ք դուք գտնում եք այլ մարդկանց՝ նման պարգևներով, և փոխանցում եք նրանց այն իմաստությունը և գործելակերպը, որը սովորել եք: Արդյո՞ք դուք բարձրացնում եք մի քանի ապագա հովիվների երիտասարդական ծառայության համար: Այդ դեպքում, եթե ձեր «հայրը» հայտարարի, որ եկեղեցին հավաքույթների նոր վայր է հիմնելու ձեր քաղաքի այլ մասում, դուք արդեն կունենաք մարդիկ, որոնք սովորել են և պատրաստ են գնալ: Ես համոզված եմ, որ պատճառներից մեկը, թե ինչու եկեղեցիները չեն կարող հավաքույթներ սկսել իրենց քաղաքի այլ մասերում կամ նոր եկեղեցիներ հիմնադրել այլ շրջաններում, այն է, որ գլխավոր հովվի օգնականները չեն վերարտադրում իրենց:

Դուք կարող եք լինել լավագույն ձայնային ինժեները, վիդեո խմբագիրը, մանկական ծառայության հովիվը, երկրպագության առաջնորդը, կիթառահարը, քարոզիչը, կարգուկանոնի ծառայողը, կամ լավագույն կերպով կկատարեք այլ աշխատանք՝ եկեղեցում առկա բազմաթիվ հաստիքներից, բայց զուտ այդ փաստը չի համարվում ճշմարիտ հաջողություն Աստծո թագավորության մեջ: Ճշմարիտ հաջողությունն ինքներդ ձեզ վերարտադրելու մեջ է: Հարցրեք ձեզ. *«Ես աղոթո՞ւմ եմ, որ գտնեմ այնպիսի մարդկանց, ովքեր ունեն այն պարգևը, որն ունեմ ես»:*

Եվ հենց որ գտնում եք այդպիսի մարդկանց, արդյո՞ք դուք սովորեցնում եք նրանց, մարզում եք և օգնում եք զարգացնել նրանց պարգևները՝ միևնույն ժամանակ փոխանցելով այն, ինչ կա ձեր հոր սրտում:

Ահա այն երկու միջոցները, որոնցով դուք կարող եք հավատարիմ լինել, երբ ծառայում եք ինչ-որ մեկի տեսիլքին: Մենք պետք է հիշենք, որ Հիսուսը հատուկ կերպով շեշտում է. «Եվ եթե օտար բանի մեջ հավատարիմ չեղաք, ձերն ո՞վ կտա ձեզ» (Ղուկաս 16.12):

Կրկնենք Հիսուսի ասածը՝ օգտագործելով «հավատարիմ» բառի Նրա սահմանումը. «Եթե դուք չեք բազմապատկել այն, ինչը պատկանում է այլ մարդու, ձերն ո՞վ կտա ձեզ», կամ՝ «Եթե դուք չեք բազմապատկել ձեր առաջնորդի գործելակերպը, մշակույթը, ուժեղ կողմերը, տեսիլքը, միջոցները և առավել ևս այն, ինչ նրա սրտում է, ձերն ո՞վ կտա ձեզ»: Եկեք օգտագործենք այլ ձևակերպում. «Եթե դուք չեք ներդրել ձեր ամբողջ ուժը, միտքը, կարողությունը և սիրտը՝ ձեր պատասխանատվության շրջանակն ընդլայնելու համար, ո՞վ կտա ձեզ ձեր սեփական ծառայությունը»: Այս ձևակերպումները սթափեցնող են:

Բոլոր հաջողակ մարդիկ, որոնց ես հանդիպում եմ իմ ճանապարհորդությունների ընթացքում, նախկինում հավատարիմ են եղել ուրիշինի մեջ: Ես հաճախ եմ հարցրել հաջողակ մարդկանց իրենց ճանապարհի սկզբի մասին: Ես ոչ մի անգամ չեմ տեսել ներկայումս ճշմարիտ հաջողություն ունեցող մարդու, ով անցյալում հավատարիմ չի եղել այն ամենի մեջ, ինչը պատկանել է իր հորը կամ հայրերին:

## ԻՄ ՄԵԾԱԳՈՒՅՆ ՊԱՅՔԱՐԸ

Երբ նոր էի ծառայող դարձել, իմ մեծագույն պայքարը ներսումս թաքնված անապահովության զգացումի հետ էր, որի պատճառով ես ցանկանում էի ճանաչված և կարևոր լինել: Ջգտում էի ապացուցել մարդկանց, և ավելի շատ՝ ինքս ինձ, որ ես յուրօրինակ գաղափարներ ունեցող առաջնորդ եմ: Հետագայում ես իմացա, որ շատ ապագա առաջնորդներ են պայքարում անապահովության զգացումի հետ, և եթե նրանք չհաղթահարեն դա իրենց սրտում, կարող է դառնալ նրանց անկման պատճառը:

Ես երիտասարդական ծառայության հովիվ էի մի խոշոր քաղաքում գտնվող եկեղեցում, որն ամենից արագ աճող եկեղեցիներից էր Ամերիկայում: Մեր երիտասարդական թիմը կազմել էր մի ծրագիր՝ մեր քաղաքում բարձր դասարանների յուրաքանչյուր աշակերտի հասնելու համար: Այն եզակի և շատ լավ ծրագիր էր: Մեր երիտասարդական թիմի ապագան լիովին կենտրոնանալու էր այդ նախաձեռնության շուրջ:

Ես և իմ օգնականները տրամադրել էինք ութ ամիս՝ մարտավարություն մշակելու համար: Ես ներկայացրել էի այդ տեսիլքը մեր երիտասարդական ծառայությանը, և նրանք ընդունել էին այն:

Այնուամենայնիվ, երբ արդեն պատրաստվում էինք սկսել մեր ծրագիրը, ես իմացա, որ այն հակառակ էր մեր հովվի տեսիլքին: Նա խնդրեց ինձ չսկսել այն: Ես վիճեցի նրա հետ գրեթե քսան րոպե, բայց նա տեղի չտվեց: Իմ փաստարկներն ավարտվեցին, և ի վերջո ես փակեցի բերանս, բայց խիստ բարկացած էի: Ութ ամսվա աշխատանքը զուր անցավ. այդ հրաշալի ծրագիրը ծվեն-ծվեն արվեց: Սակայն ամենավատն այն էր, որ մեր ծառայության տեսիլքն ամբողջությամբ կառուցվել էր այդ ծրագրի շուրջ, և մենք պետք է ամեն ինչ կրկին սկսեինք: Ինչպե՞ս էի ասելու այդ մասին մեր 24 առաջնորդներին և երիտասարդական ծառայությանը: Նրանք այնքա՜ն էին աշխատել դրա վրա:

Հուսալքված՝ ես գնացի Լիզայի մոտ՝ մխիթարություն փնտրելով: Լսելով իմ հիասթափությունները՝ նա մեղմորեն ընդդիմացավ.

- Ջո՛ն, թվում է՝ Աստված փորձում է ինչ-որ բան սովորեցնել քեզ:

Այժմ ես բարկացած էի և՛ իմ հովվի, և՛ իմ կնոջ վրա:

Ես մենակ թողեցի Լիզային, քանի որ, իմ կարծիքով, նա չէր աջակցում ինձ: Ես մտածում էի, որ դա երբևէ կազմված լավագույն ծրագիրն էր, որով կարելի էր հասնել անթիվ կորսված բարձր դասարանցիների: *Թե՛ իմ հովիվը, թե՛ իմ կինը պետք է որ լինեին կույր լինեին.* գոնե ես այդպես էի մտածում: Ես միայնակ, հիասթափված և անմխիթար էի զգում ինձ: Մի պահ նույնիսկ մտածեցի, որ դա մղձավանջ է, և որ շուտով ես կարթնանամ, և ամեն ինչ կրկին լավ կլինի: *«Մի՞թե իրականում այսպիսի բան կարող է տեղի ունենալ»:*

Այդ պահին Աստված շատ պարզ խոսեց սրտիս հետ. «Որդի՛ս, երբ Ես դատեմ քեզ երիտասարդական ծառայության հովիվ լինելու քո ժամանակահատվածի համար, առաջին հերթին չեմ նայելու, թե քանի երիտասարդի առաջնորդեցիր դեպի Ինձ: Ես առաջին հերթին դատելու եմ, թե որքան *հավատարիմ* էիր դու այն մարդուն, ում Ես կարգել էի քեզ վրա»:

Այդ խոսքերը զգաստացրին ինձ, բայց ոչ այնքան ուժգնորեն, որքան Նրա հաջորդ խոսքերը: Նա վճռականորեն ասաց իմ սրտում. «Դու կարող ես դեպի Ինձ առաջնորդել յուրաքանչյուր բարձր դասարանցու ամբողջ քաղաքում, սակայն կորցնել ամբողջ երախտիքը և վարձատրությունը քո գործի համար՝ քո հովվին *անհավատարիմ* լինելու պատճառով»:

Հանկարծ սկսեցի դողալ սուրբ երկյուղից: Ես անմիջապես ապաշխարեցի և ներում խնդրեցի, իսկ հետո զանգեցի իմ հովվին և արեցի նույնը: Երբ ցած դրեցի հեռախոսը և սկսեցի մտածել տեղի ունեցածի

մասին, հանկարծ Տերը մի տեսիլք տվեց: Ես տեսա, որ մելամաղձոտ քայլերով գնում էի հանդիպման մեր 24 ավագների հետ: Ես ծանրություն և տխրություն էի զգում և տհաճությամբ հայտարարեցի. «Տղանե՛ր, դուք գիտեք, որ մենք ամիսներ է, ինչ աշխատում ենք այս ծրագրի վրա. սա մեր երիտասարդական ծառայության տեսիլքն է, բայց մեր ավագ հովիվը քիչ առաջ դադարեցրեց այն: Այն ամենը, ինչի համար մենք աշխատում էինք, ավարտված է»:

Ես տեսա, որ մի քանիսը խորշանքով ցած իջեցրին գլուխները. մյուսների աչքերը և բերանները զարմանքից բաց մնացին: Բոլորը ցնցված և վրդովված էին: Այդ տեսիլքում ես գիտեի, որ բոլորը բարկացած էին մեր ավագ հովվի վրա և մեր թիմը դիտարկում էին որպես նրա ստեղծարարության պակասի զոհ:

Աստված հարցրեց ինձ՝ արդյո՞ք ես այդպես կվարվեի: Ես պատասխանեցի. «Ո՛չ մի դեպքում: Ո՛չ մի դեպքում: Ո՛չ»: Ես գիտեի, որ Նա ստուգում էր իմ վերաբերմունքը և իմ սրտի դիրքը: Այն տեսիլքը, որը Նա տվեց ինձ, ցույց էր տալիս, որ ես դեռ չունեի իմ հոր սիրտը: Անմիջապես ապաշխարեցի ավելի խորը մակարդակի վրա:

Հիշում եմ, որ մի քանի օր անց գնացի հանդիպման իմ ավագների հետ: Այժմ իմ սրտում վառվում էր սուրբ երկյուղը. իմ քայլերը կայտառ էին, աչքերիս մեջ փայլ կար, և ձայնս զրնգում էր: Ես ասացի մեծ ոգեշնչմամբ.

- Տղանե՛ր, ես հրաշալի լո՛ւր ունեմ: Մեր ավագ հովիվը փրկեց մեզ Իսմայել ծնելուց: Նա ասաց, որ այն, ինչի վրա մենք աշխատում ենք, այն ուղղությունը չէ, որով նա ցանկանում է առաջնորդել եկեղեցին. այնպես որ, մենք չեղարկում ենք այս ծրագիրը:

Բոլորն անմիջապես ուրախությամբ արձագանքեցին: Ոմանք ժպտացին, մյուսները ուրախ նայեցին իրար, իսկ մնացածը գոչյուններով հավանություն տվեցին: Յուրաքանչյուրը հասկացավ, թե ինչ կար իմ սրտում, քանի որ ես, ի վերջո, հասկացա, թե ինչ կար իմ հովվի սրտում:

Մեկ տարի անց ես փորձվեցի մեկ այլ կարևոր ծրագրի մեջ, որի վրա մենք մի քանի ամիս աշխատել էինք: Այս անգամ իմ հովիվը տեղյակ էր դրա մասին և համաձայնել էր մեր ընտրած ուղղության հետ: Այնուամենայնիվ, նա մտափոխվեց, երբ մենք արդեն երեք ամիս կատարում էինք այն: Կրկին, դա ուղղության կտրուկ փոփոխություն էր, և նա ներողություն խնդրեց դրա համար: Այդ իրավիճակում ես վարվեցի լիովին այլ վերաբերմունքով, քան նախորդ անգամ: Ես չեղարկեցի այդ ծրագիրը՝ առանց ընդդիմանալու, վիճելու և անհամաձայնություն հայտնելու: Հստակ հիշում եմ այն տարբերությունը, որը զգացի. ես գոհ

էի այն պատճառով, որ կարողացա համաձայնել, այնինչ, իրականում, եթե ընտրությունն իմը լիներ, կգերադասեի շարունակել այդ ծրագիրը:

Եվս մեկ անգամ ներկայացրի իմ ավագներին մեր ծրագրի չեղարկումը, ասես դա իմ գաղափարը լիներ: Աստված օրհնեց մեր երիտասարդական ծառայությունը. դա եռապատկվեց այն երեք տարում, երբ ես երիտասարդական ծառայության հովվի պաշտոնում էի:

Համոզված եմ, որ ես չէի լինի այնտեղ, որտեղ այսօր եմ, եթե ձախողեի այդ փորձությունները: Կարող եմ ասել, թե ինչ տեղի կունենար, քանի որ Սուրբ Հոգին ցույց է տվել ինձ: Ես, միևնույն է, ստիպված կլինեի չեղարկել այդ ծրագիրը: Ես կանեի դա այնպիսի վերաբերմունքով, որը կտարածվեր իմ ավագների վրա և կթունավորեր նրանց: Ի վերջո, ես կհեռանայի իմ եկեղեցուց, և իմ կյանքում գործող պարգևի պատճառով ազդեցություն կունենայի մարդկանց մի փոքրաթիվ խմբի վրա: Բայց ոչ մի դեպքում չէի ստանա այն ծառայությունը, որն ունեմ հիմա, որտեղ ես, որպես քարոզիչ և հեղինակ, ազդեցություն ունեմ միլիոնավոր մարդկանց վրա աշխարհով մեկ: Ինչո՞ւ: Քանի որ ես հավատարիմ չէի լինի այն ամենում, ինչը ուրիշինն էր, Աստծուց տրված առաքելությունը չէր վստահվի ինձ:

Այս բաները սովորելը հեշտ չէր: Որպես առաջնորդ՝ ես հակված էի պայքարելու այն բանի համար, ինչը լավագույնն էի համարում: Բայց հասկացա, որ Աստված ավելի մտահոգված էր իմ բնավորությամբ, քան իմ արդյունքներով: Նա ցանկանում էր հաստատուն հիմք կառուցել, մինչև որ կվստահեր Լիզային և ինձ մեր առաքելությունը:

Թանկագի՛ն ընկեր, դուք նույնպես առաջնորդ եք: Եթե մենք վարվենք Աստծո ճանապարհներով, Նա խոստացել է առաջնորդ լինելու հնարավորություններ տալ Իր բոլոր զավակներին: Մենք գլուխ ենք, և ոչ թե պոչ, և մենք միայն բարձրում ենք, և ոչ՝ ցածրում (կարդացե՛ք Երկրորդ Օրինաց 28.13): Խնդրում եմ, մի՛ հարվածեք խեթանին, ինչպես ես էի անում: Սովորե՛ք ինձնից, որպեսզի դուք նույնպես ավելի մեծ պատասխանատվություն ստանաք Աստծո թագավորության մեջ:

## ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ցանկացած կազմակերպություն պետք է միաբան լինի, որպեսզի բազմապատկում ունենա: Սուրբ գրքի ամենալուսաբանող հատվածներից մեկն այս մասին գրված է Ծննդոց գրքում: Մի խումբ անաստված մարդիկ որոշեցին անել այնպիսի բան, ինչը գրեթե անհնար էր իրենց ժամանակվա մարդկանց համար՝ կառուցել աշտարակ, որը երկինք կհասներ: Այնուամենայնիվ, լսեք, թե ինչ է ասում Ամենակարող Աստված.

«Եվ Տերն ասաց. «Ահա մեկ ազգ է և մեկ լեզու՝ նրանց ամենի համար, և ահա սկսեցին շինել: Եվ հիմա նրանց համար դժվար չի լինի, ինչ որ խորհեցին շինելու»» (Ծննդոց 11.6):

Հիշեք, թե ում են պատկանում այս խոսքերը. անձամբ Աստծուն: Լսե՛ք Նրան. «Նրանց համար դժվար չի լինի, ինչ որ խորհեցին շինելու»: Ինչո՞ւ Աստված նման բան ասաց: Քանի որ նրանք «մեկ» էին և «մեկ» լեզու ունեին: Նրանք միաբան էին: Նրանք համաձայնություն ունեին միմյանց հետ:

Եթե այս խոսքերը դուրս եկան Աստծո բերանից՝ չփրկված մարդկանց վերաբերյալ, ի՞նչ է Նա ասում Իր ուխտի ժողովրդին: Նույնիսկ ավելին, քանի որ, երբ Իր ժողովուրդը միաբանվում է, գրված է, որ «այնտեղ Տերը պատվիրեց օրհնությունը» (Սաղմոս 133.3, NKJV): «Պատվիրել» բառը նշանակում է «հրամայել, ուղղորդել, կարգել»[10]: Այս խոսքն անկարելի է այլ կերպ մեկնել. միաբանությունն օրհնություն է բերում, ինչն ընդգրկում է բազմապատկումը:

Սա ավելի շատ վերաբերում է Նրա զավակներին Նոր կտակարանում: Զարմանալի չէ, որ մենք շարունակ կարդում ենք նման պնդումներ.

«Ճշմարտապես երջանիկ դարձրեք ինձ՝ *ամբողջ սրտով համաձայնելով* մեկդ մյուսի հետ, սիրելով մեկդ մյուսին և գործելով միասին՝ *մեկ մտքով* և *նպատակով»* (Փիլիպեցիների 2.2, NLT):

«Ուրա՛խ եղեք, կատարյա՛լ եղեք, մխիթարվե՛ք, *միաբա՛ն եղեք* և խաղաղությո՛ւն արեք, և սիրո և խաղաղության Աստվածը ձեզ հետ լինի» (Բ Կորնթացիների 13.11):

«Միայն թող որ ձեր վարքն արժանի լինի Քրիստոսի Ավետարանին, որպեսզի թե՛ գամ ու տեսնեմ ձեզ, թե՛ բացակա լինեմ, լսեմ ձեր գործերի մասին, որ դուք հաստատ կանգնած եք *մեկ հոգով*, *մեկ մտքով*՝ միասին պայքարելով Ավետարանի հավատքի համար» (Փիլիպեցիների 1.27, NKJV):

Մենք լսում ենք այս եկեղեցիների *հոր* աղաչանքը: Պողոսն օգտագործում է «ամբողջ սրտով համաձայնել», «մեկ միտք», «մեկ հոգի» արտահայտությունները: Նա ցանկանում էր, որ այդ եկեղեցիները լինեին այնպիսի վիճակում, որ ընդունեին Աստծո պատվիրած օրհնությունը: Նա գիտեր, որ միայն այդ դեպքում նրանք կունենային ճշմարիտ բազմապատկում բոլոր բնագավառներում:

Ահա մի գերազանց օրինակ այն մասին, որ պատվիրած օրհնությունը պահված է միաբան մարդկանց համար. Հիսուսի հավատարիմ

հետևորդները հնազանդվեցին Վերնատանը մնալու Նրա պատվերին (կարդացե՛ք Գործք 1.4): Հիսուսի հարությունից հետո 40 օրվա ընթացքում Նա հայտնվեց ամենաքիչը 500 տղամարդու և կնոջ (կարդացե՛ք Ա Կորնթացիների 15.6), սակայն Նրա համբարձումից 10 օր անց միայն 120-ն էին մնացել Երուսաղեմում: Որտե՞ղ էին մյուսները: Ես եզրակացնում եմ, որ նրանց ավելի քան 75 տոկոսը չհնազանդվեց Հիսուսի խոսքերին: Միգուցե մենք չգիտենք, թե որտեղ էին նրանք, բայց գիտենք, որ Նրա ցանկությունն առաջնահերթ չէր նրանց համար:

Վերնատանը գտնվող տղամարդիկ և կանայք միավորված էին Աստծո Խոսքի իշխանության ներքո: Հաջորդ հարցը հետևյալն էր՝ ինչպե՞ս նրանք կընդունեին Պետրոսին՝ Հիսուսի լիազորած առաջնորդին, այն եկեղեցու *հողը*, որին Նա կարգել էր:

Ավետարաններում Պետրոսը հաճախ էր վարվում հանկարծական մղումով և չէր հասկանում Աստծո կամքը: Երբ Պետրոսը համարձակ պնդեց, որ Հիսուսը Քրիստոսն էր՝ կենդանի Աստծո Որդին, Հիսուսն օրհնված անվանեց նրան: Բայց վայրկյաններ անց Հիսուսը «դարձավ, ասաց Պետրոսին. «Հետի՛ս գնա, սատանա՛, դու գայթակղություն ես Ինձ, որովհետև դու միտք չես անում Աստծո, այլ՝ մարդկանց բաները»» (Մատթեոս 16.23):

Մեկ այլ դեպքում Պետրոսը քայլեց ջրի վրայով, մինչ մյուս աշակերտները պարզապես հետևում էին: Նա կրկին առաջատար դիրքում էր: Բայց մի քանի վայրկյան անց սկսեց սուզվել: Հիսուսն ափսոսանքով ասաց. «Թերահավա՛տ, ինչո՞ւ երկմտեցիր» (Մատթեոս 14.31):

Մեկ այլ պատմության մեջ Պետրոսը, Հովհաննեսը և Հակոբոսն ուղեկցեցին Հիսուսին դեպի այլակերպության սարը: Այնտեղ տեսան, որ Նրա երեսը փայլում էր արևի պես, և նույնիսկ Նրա հագուստը վերափոխվեց: Մովսեսը և Եղիան հայտնվեցին և զրուցեցին Հիսուսի հետ: Ինչպիսի՜ պատիվ: Սակայն մինչև որ Հիսուսը և երեք աշակերտներն իջան սարից, Պետրոսն անսպասելիորեն առաջարկեց վրաններ պատրաստել, որոնցից երկուսը՝ Եղիայի և Մովսեսի համար (կարդացե՛ք Մատթեոս 17-րդ գլուխը): Կրկին, նա չէր հասկանում Աստծո ծրագրերը և նպատակները:

Մտապահելով սա՝ ուսումնասիրենք Պետրոսի առաջին որոշումները՝ որպես նորաստեղծ եկեղեցու առաջնորդ: Սակայն, մինչ սկսելը, մենք պետք է հիշենք ևս մեկ կարևոր փաստ. ընդամենը օրեր էին անցել այն դեպքից, երբ Պետրոսն ուրացել էր, որ նույնիսկ ճանաչում էր Հիսուսին: Շատերի համար դա կարող էր Պետրոսի առաջնորդությանը չհետևելու առիթ լինել, հատկապես եթե նրանք համաձայն չլինեին նրա առաջարկած մեթոդներին և որոշումներին:

Ներկայացնենք այս իրադարձության նախապատմությունը: Անցել էր մի քանի օր Հիսուսի համբարձումից, և Պետրոսը գտավ մի մարգարեական խոսք Սաղմոսների գրքում, որն անմիջականորեն կապված էր Հուդայի կողմից Հիսուսին մատնելու հետ: Պետրոսը կարդաց այն Վերնատանը հավաքված փոքր համայնքին. «Որովհետև Սաղմոսների գրքում գրված է... «Նրա պաշտոնն ուրիշն առնի»» (Գործք 1.20): Պետրոսը կրկին տեսավ այն, ինչ մյուսները չէին տեսնում, բայց արդյո՞ք նա ճիշտ կվարվեր իր տեսածի հետ:

Այն, ինչ կկարդաք, կարող եք դիտարկել որպես ենթադրություն, բայց հուսով եմ՝ ես կներկայացնեմ բավականաչափ հաստատումներ Սուրբ գրքից, որպեսզի վավերացնեմ իմ ասելիքը: Համոզված եմ, որ Պետրոսը կրկին չէր հասկանում Աստծուն իր որոշման մեջ, քանի որ նա առաջարկեց բոլոր տղամարդկանց, ովքեր իրենց հետ էին հենց սկզբից, շրջան կազմել, որպեսզի «վիճակ գցեին» և տեսնեին, թե ում էր Աստված ընտրելու Հուդայի փոխարեն:

Ոչ մի տեղ Նոր կտակարանում չեք տեսնի, որ Աստված վիճակահանությամբ առաքյալ է ընտրում: Հիսուսը ցույց տվեց Իր աշակերտներին Աստծո ճանապարհը՝ նրանց օրինակ թողնելով: Նա աղոթեց ամբողջ գիշեր և լսեց Աստծուց, մինչև որ ընտրեց առաջին 12 առաքյալներին (կարդացե՛ք Ղուկաս 6.12,13): Լավագույն տարբերակը կլիներ, եթե Պետրոսը փորձեր որոշել հաջորդ առաքյալին՝ Հիսուսի օրինակին ավելի նման ձևով:

Հիշեք՝ ընդամենը մի քանի տարի անց Անտիոքի մարգարեները և ուսուցիչները հետևեցին Հիսուսի օրինակին: Նրանք ծոմ պահեցին և աղոթեցին, մինչև որ Բառնաբասն ու Սողոսն առանձնացվեցին առաքելական ծառայության համար (կարդացե՛ք Գործք 13.1-4): Սա ևս մեկ հաստատում է այն մասին, որ Պետրոսի հապճեպ որոշումը սխալ էր:

Վերնատանը գտնվող 120 մարդիկ գտան երկու թեկնածուի՝ Մատաթիային և Հուստոսին: Մատաթիան շահեց վիճակը և համարվեց առաքյալների հետ (կարդացե՛ք Գործք 1.23-26), սակայն դուք այլևս չեք տեսնի Մատաթիայի անունը Նոր կտակարանում: Ինչո՞ւ: Քանի որ Սուրբ գիրքը ցույց է տալիս, որ Աստված Հուդայի փոխարեն ընտրեց Պողոսին, ոչ թե Մատաթիային: Ահա թե ինչու է Պողոսը գրում.

> «Նրան [Հիսուսին] տեսավ Հակոբոսը, իսկ հետո՝ բոլոր առաքյալները: Վերջում, ասես ես սխալ ժամանակ ծնված լինեի, ես նույնպես տեսա Նրան: Որովհետև ես փոքրագույնն եմ բոլոր առաքյալներից» (Ա Կորնթացիների 15.7-9, NLT):

Պողոսն ասաց իր մասին, որ ասես սխալ ժամանակ ծնված լիներ. այլ կերպ ասած, նա, հավանաբար, չափազանց երիտասարդ էր՝ առաջին 12 առաքյալների թվում լինելու համար: Ուսումնասիրելով՝ ես գտա տարբեր կարծիքներ և տարեթվեր Պողոսի ծննդյան վերաբերյալ. տարբեր աղբյուրների գնահատականները տատանվում են մինչև 14 տարով: Մեկ բան հաստատ է. ոչ ոք չգիտի նրա ծննդյան տարեթիվը: Այնպես որ, հետևենք Նոր կտակարանի ժամանակագրությանը, որպեսզի պատկերացում կազմենք նրա տարիքի մասին:

Համաձայն պատմական տվյալների մեծ մասի, Ստեփանոսի նահատակությունը տեղի ունեցավ Հիսուսի հարությունից չորս տարի անց, ինչը նշանակում է, որ Հիսուսն ընտրել էր Իր աշակերտների առաջին խմբին դրանից յոթ տարի առաջ: Ստեփանոսի քարկոծման ժամանակ Սուրբ գիրքն անվանում է Սողոսին (Պողոսին) «երիտասարդ» (կարդացե՛ք Գործք 7.57): Համաձայն *«Հունարեն-անգլերեն բառարանի»*՝ այն հունարեն բառը, որը թարգմանված է «երիտասարդ» բառով, նշանակում է սեռական հասունացման շրջանը նոր անցած անձնավորություն: Այնպես որ, հանելով այդ տարիքից յոթ տարի, կարելի է վստահաբար ենթադրել, որ Պողոսը չափազանց երիտասարդ էր՝ առաջին առաքյալների թվում լինելու համար:

Ես լիովին հավատում եմ, որ Պողոսն Աստծո ընտրությունն էր: Առաքելական պտուղը և իշխանությունը նրա կյանքում ակնհայտ էին՝ ի տարբերություն Մատաթիայի: Իմ հիմնական ասելիքը հետևյալն է: Իմ համոզմամբ, Պետրոսը՝ որպես առաջնորդ, հանկարծական մղումով կայացրեց մի որոշում, որը չէր համապատասխանում Աստծո ծրագրին: Եվ եթե նա այսպես վարվեր մեր ժամանակակից եկեղեցում, մենք, ամենայն հավանականությամբ, կբաժանվեինք երեք խմբի. առաջինը դեմ կլիներ վիճակով առաքյալներ ընտրելուն, երկրորդը կասեր, որ նոր առաքյալների կարիք չկա, իսկ երրորդը կողմ կլիներ վիճակով առաքյալներ ընտրելուն և կմնար Պետրոսի հետ: Այնուամենայնիվ, ահա թե ինչ է գրված Սուրբ գրքում անմիջապես այս դեպքից հետո.

> «Եվ երբ որ Պենտեկոստեի օրերը լրացան, ամենքը *միաբան* մեկտեղ էին» (Գործք 2.1):

*«Միաբան»* բառը հունարենում *«հոմոթումադոն»* բառն է: Այս բառի սահմանումն է. «մեկ՝ մտքով, միասնական համաձայնություն, միաբան, բոլորը միասին»[11]: Այս սահմանումը չի ենթադրում բաժանություն՝ թե՛ մտքով, թե՛ գործերով: Նրանք միաբան էին նպատակով, մտքով, սրտով և հոգով: Ի՞նչ տեղի ունեցավ արդյունքում: Սուրբ գիրքը

պնդում է, որ այդ օրը դարձի եկավ 3.000 մարդ: Եթե բաժանենք այս թիվը 120-ի, կպարզվի, որ նրանք *բազմապատկվեցին* 25 անգամ: Մտածե՛ք այս մասին. եկեղեցին աճեց 25 անգամ ընդամենը մեկ ծառայության ընթացքում: Նրանց միաբանության շնորհիվ Աստված պատվիրեց Իր օրհնությունը: Սա հոգևոր օրենք է:

Համոզված եմ, որ Վերնատանը կային հավատացյալներ, որոնք կվարվեին այլ կերպ, քան Պետրոսը: Անկասկած, ավելի լավ կլիներ հետևել Հիսուսի օրինակին և տևական ժամանակ տրամադրել՝ Աստծուն փնտրելու համար, մինչև նման որոշում կայացնելը:

Թեև գոյություն ուներ այդ ընտրության ավելի լավ միջոց, վերնատանը գտնվող մարդիկ տեսնում էին ավելի մեծ առաջնահերթություն. նրանք մնացին միաբան՝ ընդունելով իրենց առաջնորդի մարտավարությունը: Յուրաքանչյուրը քայլ արեց, ասես այդ գաղափարն իրենը լիներ: Որքա՞ն հաճախ ենք մենք պառակտվում անհեթեթ և աննշան բաների պատճառով, որոնց մենք համաձայն չենք:

(Թույլ տվեք ընդմիջարկել մի կարևոր ճշմարտությամբ. եթե ձեր առաջնորդը կայացնում է որոշում, որը Սուրբ գիրքը որակում է որպես *մեղք,* սա միակ դեպքն է, երբ ձեզ պատվիրված է չհամաձայնել: Այնուամենայնիվ, բազմաթիվ պառակտումներ տեղի են ունենում մեթոդների պատճառով, ոչ թե մեղքի):

# ՍՏՈՐՋՐՅԱ ՀՈՍԱՆՔՆԵՐ

Մենք պետք է հիշենք, որ անհամաձայնությունը չի սահմանափակվում բառերով և գործողություններով: Անհամաձայնությունն ավելի խորն է. այն գտնվում է մտքում, սրտում և հոգում: Կրկին կարդացեք վերևում գրված երեք աստվածաշնչյան հատվածները՝ որպես հիշեցում: Մենք կարող ենք միաբան լինել արտաքուստ, բայց բաժանված լինել մեր շարժառիթներով և մտքերով:

Իմ մայրն ապրում է Ֆլորիդա նահանգի Վերո լողափում: Նրա տնից մոտավորապես 20 կիլոմետր հեռու կա մի վայր, որը կոչվում է Սեբաստիանի խորշ: Այն հայտնի է տեղացիներին իր ուժգին ստորջրյա հոսանքներով: Ստորջրյա հոսանքը մի երևույթ է, որը տեսանելի չէ անզեն աչքով: Օվկիանոսի վերին շերտի ջուրը, թվում է, հոսում է մեկ ուղղությամբ՝ ներդաշնակ մոտենալով լողափին: Սակայն դրա ներքևում գտնվող ջուրն արագորեն հոսում է հակառակ ուղղությամբ: Այս հակառակ հոսանքը քաշում է իր զոհերին և տանում դեպի բաց ծով՝ երբեմն խլելով նրանց կյանքերը:

Արդյո՞ք մեր եկեղեցիներում, ձեռնարկություններում, դպրոցներում,

կառավարություններում, սպորտային թիմերում և ակումբներում կան ստորջրյա հոսանքներ, որոնք կործանարար ձևով խոչընդոտում են բազմապատկումը: Իհա՛րկե: Ո՞րն է պատճառը: Միգուցե այն, որ մենք փորձում ենք կառուցել Աստծո թագավորությունը ժողովրդավարական մտածելակերպով, ոչ թե թագավորության մտածելակերպով: Մենք իրական թագավորության քաղաքացիներ ենք և չենք կարող անտեսել մեր Թագավորի կողմից լիազորված իշխանությունը: Նրա օրհնությունը հայտնվում է, երբ մենք ի սրտե հնազանդվում ենք մեր առաջնորդներին:

Մենք պետք է հարցնենք ինքներս մեզ. *«Ավելի կարևոր է, որ մենք ճի՞շտ լինենք, թե՞ միաբան լինենք»:* Դուք կարող եք լինել 100 տոկոսով ճիշտ և միաժամանակ՝ 100 տոկոսով սխալ: Եթե լիներ մի խմբավորում, որն առաջարկեր չեղյալ հայտարարել Պետրոսի որոշումը վիճակ գցելու մասին և փոխարինել այն ծոմապահությամբ ու աղոթքով (համաձայն այն օրինակի, որը տեսանք Սուրբ գրքում), այդ խմբավորումը 100 տոկոսով ճիշտ կլիներ: Այնուամենայնիվ, նրանց անմիաբանության պատճառով Աստծո օրհնության թափվելը կդադարեր:

Եթե հիշում եք, առաջին *արտասովոր բազմապատկումը* Սուրբ գրքում տեղի ունեցավ այն բանից հետո, երբ հայրերը ծառայողական իրահանգ տվեցին: Դրանից հետո մենք կարդում ենք. «Բոլորը եկեղեցում հավանեցին այս գաղափարը» (Գործք 6.5, TPT): Ո՞րն էր դրա արդյունքը: «Աշակերտների թիվը *մեծապես բազմապատկվեց* Երուսաղեմում» (Գործք 6.7, NKJV): Բոլորը եկեղեցում ընդունեցին դա, ասես իրենց մարտավարությունն էր: Կրկին, համոզված եմ, որ մարդիկ կարող էին առարկել, բայց նրանք հայտնաբերել էին մի ճշմարտություն. *«Ավելի լավ է օրհնված լինել, քան ճիշտ լինել»:* Այնպես որ, նրանք ընդունեցին այդ մեթոդը այնպես, ասես այն իրենց գաղափարը լիներ:

Այժմ մենք պետք է տանք ամենաբարդ հարցը. քանի՞սը մեզնից կկանգնեն Հիսուսի ատյանի առջև՝ ցնցված և հանկարծակիի եկած այն բանից, ինչ Նա կհայտնի: Արդյո՞ք Նա արցունքներով ցույց կտա մեզ, թե ինչպես մեր հակառակությունը կանգնեցրեց Նրա պատվիրած օրհնությունը: Արդյո՞ք մենք կտեսնենք մարդկանց, որոնք պետք է կրեին հավիտենության ազդեցությունը, և լաց կլինենք Նրա հետ՝ գիտակցելով բազմապատկման բաց թողնված հնարավորությունները: Քանի՛սը մեզնից կերազեն վերադառնալ և ձգտել միաբանության, ոչ թե ճիշտ լինելուն, բայց արդեն բավականին ուշ կլինի:

## ՄՏՈՐԵՔ

1. Հայրն այն մարդն է, ով առաջնորդում, մատակարարում և ներմուծում է որոշակի մշակույթ որևէ անհատի կամ կազմակերպության կյանքում: Հայրը կարող է բազմաթիվ դիրքեր զբաղեցնել՝ տնօրեն, հովիվ, փոքր խմբի առաջնորդ, բաժնի վարիչ, ղեկավար, ուսուցիչ, մարզիչ (ահա ընդամենը մի քանի օրինակ): Ովքե՞ր են ձեր կյանքի հայրերը: Ի՞նչ կերպով են նրանք հայրություն արել ձեզ:

2. Հավատարիմ որդին կամ դուստրը կբազմապատկի իր հոր գործելակերպը: Ինչո՞ւ է կարևոր նմանակել ձեր առաջնորդների գործելակերպին: Ի՞նչ կերպով է սա բացառում տարաձայնությունները տեսիլքի, մեթոդների և մշակույթի մեջ:

3. Այլ մարդու ունեցածը բազմապատկելու համար դուք պետք է «վերարտադրեք» ինքներդ ձեզ: Արդյո՞ք գտնում եք նման պարգևներ ունեցող մարդկանց և փոխանցում եք նրանց այն իմաստությունը և գործելակերպը, որոնք սովորել եք: Արդյո՞ք բարձրացնում եք այլ մարդկանց՝ կատարելու այն աշխատանքը, որը դուք կատարում եք հիմա: Եթե ոչ, ինչպե՞ս կարող եք սկսել դա:

*«Տե՛ր, ես գիտեի, որ դու խիստ մարդ ես. հնձում ես այն բերքը, որը չես ցանել, և հավաքում ես այն բերքը, որը չես աճեցրել: Ես վախեցա, որ կկորցնեի քո փողը, և թաքցրի այն հողի մեջ»:*

– Մատթեոս 25.24,25, NLT

# 12

# Բազմապատկման խոչընդոտներ Ա

Այժմ ավելի մանրամասն կուսումնասիրենք Հիսուսի առակի ծույլ ծառայի շարժառիթները և մտքերը: Ինչո՞ւ մյուս երկու ծառաները բազմապատկեցին, իսկ նա միայն պահպանեց: Ինչո՞ւ մյուս երկու ծառաները կոչվեցին «բարի և հավատարիմ», իսկ նա՝ «չար և ծույլ»:

Մինչև շարունակելը, խոսենք մի ճշմարտության մասին. *երբ ինչ-որ մեկը կանգնում է Հիսուսի ներկայության մեջ, չի կարող ստել:* Ինչո՞ւ եմ հիշատակում սա: Թույլ տվեք բացատրել մի օրինակով: Դուք երբևէ դիտե՞լ եք ֆիլմեր լրտեսների մասին, որոնցում հարցաքննության տեսարանի մեջ լրտեսին ներարկում են «ճշմարտության շիճուկ»՝ նրա գաղտնիքներն իմանալու համար: Լրտեսը կամ կրկնակի գործակալը պատմում է այն, ինչ երդվել էր չհայտնել ոչ ոքի. ամբողջ ճշմարտությունը բացահայտվում է:

Թույլ տվեք բերել իրական օրինակ: Մեր ամուսնության վաղ տարիներին ես ոչ հասուն էի և անապահովության զգացում ունեի: Որոշ դեպքերում ընդունելի էի համարում իմ վարքը, մինչև որ Լիզան չէր ընդդիմանում ինձ: Երբ մենք խոսում էինք այդ մասին, ես վճռականորեն պաշտպանում էի իմ գործողությունները և շարժառիթները և հաճախ համարձակ պնդում էի, որ իմ խոսքերը քննարկման ենթակա չեն: Ավելի ուշ, երբ աղոթում էի և հայտնվում Աստծո ներկայության մեջ, հասկանում էի, որ Լիզան լիովին իրավացի էր: Ես խոնարհաբար վերադառնում էի նրա մոտ և ընդունում իմ սխալը:

Իրականում, խաբեությունը, անազնվությունը, խորամանկությունը, կեղծավորությունը և այլ նման վարքագծեր չեն կարող մնալ Աստծո

արքայական ներկայության մեջ: Հիսուսը հայտարարում է.

> «Գալիս է ժամանակը, երբ այն, ինչ ծածկված է, կհայտնվի, և ամեն գաղտնի բան կիմացվի բոլորին: Այն ամենը, ինչ դուք ասել եք խավարում, կլսվի լույսում, և այն ամենը, ինչ շշնջացել եք փակ դռների ետևում, կազդարարվի կտուրներից՝ ի լուր բոլորի» (Ղուկաս 12.2,3, NLT):

Հիսուսը հատկապես նկատի ուներ դատաստանը, որի ժամանակ անհնարին կլինի խաբեությամբ մտածել և խոսել, քանի որ այդտեղի մթնոլորտն ամբողջովին հագեցած կլինի ճշմարտությամբ, և ոչ մի սուտ ու խաբուսիկ խոսք հնարավոր չի լինի ասել: Այն փաստը, որ տնտեսության մասին մեր առակում ներկայացվում է դատաստանը, նշանակում է, որ մենք կարող ենք վստահ լինել, որ ծույլ ծառայի պատասխանը ճիշտ էր: Նա բացահայտեց ինքն իրեն, և հենց իր խոսքերը մեղադրեցին իրեն:

Կա երկու կարևոր գործոն, որոնց պատճառով նա չունեցավ *հավիտենական* բազմապատկում.

- Նա չէր ճանաչում իր տիրոջ բնավորությունը:
- Նա վախենում էր:

Այս երկու պատճառները բերված են ճիշտ հերթականությամբ: Երկրորդը հաճախ, բայց ոչ միշտ, բխում է առաջինից, քանի որ Աստծո բնավորությունը չճանաչելը հեշտորեն խթանում է վախը: Սա հստակ կերևա, երբ մենք շարունակենք բացահայտել այս երկու սխալմունքները:

## «ԻՆՉԻՆ ԵՄ ԵՍ ՀԱՎԱՏՈՒՄ»

Սկսենք բացահայտել առաջին սխալմունքը մի պատմությամբ: Իմ ութժամյա թռիչքը դեպի Հավայան կղզիներ նոր էր ավարտվել: Ես դեռ իմ ճանապարհորդական հագուստով էի և սպասում էի մինչ հյուրանոցային համարս կպատրաստեին: Նստեցի լողավազանի մոտ գտնվող հովանոցներից մեկի տակ՝ հանգստանալու: Այդտեղ սպասում էր նաև մի գործարար կին, որը եկել էր մասնակցելու այլ համաժողովի: Մենք զրույցի բռնվեցինք, և երբ նա իմացավ, որ ես քրիստոնյա հեղինակ և ծառայող եմ, սկսեց խոսել Աստծո հետ իր փոխհարաբերությունների մասին:

Պահանջվեց ընդամենը մեկ-երկու րոպե՝ հասկանալու համար, որ նա չէր ճանաչում Աստծուն: Նա վստահությամբ ասում էր այնպիսի բաներ, որոնց *հավատում* էր, թեև դրանք գրեթե չէին համապատասխանում Սուրբ գրքում հայտնված ճշմարտությանը: Մինչ նա խոսում էր

իր համոզմունքների մասին, ես խնդրեցի Սուրբ Հոգուն իմաստություն տալ ինձ, և Նա ցույց տվեց, թե ինչ պետք է ասեմ:

Երբ այդ կինն ավարտեց, ես հարցրի.

- Դուք տեսնո՞ւմ եք լողավազանի մյուս կողմում նստած տղամարդուն:

- Այո՛, - պատասխանեց նա:

- Թույլ տվեք պատմել ձեզ նրա մասին: - ասացի ես: - Նա ծայրահեղ աստիճանի բուսակեր է. չի ուտում կենդանական ծագում ունեցող ոչինչ, նույնիսկ՝ մեղր: Նա երազում է լինել Միացյալ Նահանգների Լողի օլիմպիական թիմում և մարզվում է օրական երեք ժամ: Նրա նախասիրություններն են բադմինտոնը, թենիսը, թռիչքները պարաշյուտով և նկարչությունը: Ամուսնացած է ջակուզիի մոտ կանգնած այն կնոջ հետ, և այդ կինը տասը տարով երիտասարդ է նրանից:

Այդ կնոջը հետաքրքրեց իմ ասածը, բայց նա մի փոքր զարմացավ, որ ես հանկարծակի փոխեցի թեման: Նա կիսվում էր ինձ հետ Աստծո մասին իր խորը մտքերով, և հանկարծ, ի պատասխան, ես սկսեցի նկարագրել լողավազանի մյուս կողմում նստած մի տղամարդու: Նրա հետաքրքրությունը հաղթեց, և նա հարցրեց.

- Նա նո՞ւյնպես հաճախում է այն համաժողովին, որ դուք եք հաճախում:

- Ո՛չ, տիկի՛ն:

- Այդ դեպքում, որտեղի՞ց գիտեք նրա մասին, - հարցրեց նա՝ ավելի հետաքրքրված:

- Ես առաջին անգամ եմ տեսնում նրան:

Այժմ, շփոթված և մտահոգված, նա հարցրեց, թե որտեղի՞ց այդքան բան գիտեի նրա մասին: Ես չեմ կարող վստահաբար ասել, բայց, դատելով նրա հայացքից, նա մտածում էր, որ ես կա՛մ Կենտրոնական հետախուզական վարչության աշխատակից եմ, կա՛մ Հետախուզական դաշնային բյուրոյի գործակալ, կա՛մ խուզարկու, կա՛մ պարզապես կնամոլ: Նրա հետաքրքրասիրությունը հասել էր գագաթնակետին:

Մի պահ դադարից հետո ասացի.

- Ես *հավատում եմ*, որ նա այդպիսին է:

Նա զարմանքից լռեց:

- Դուք հենց նոր մեծ վստահությամբ պատմում էիք, թե ինչպիսին է Աստված՝ ձեր համոզմամբ, - շարունակեցի ես: - Բայց գրեթե այն ամենը, ինչ դուք ասացիք Նրա մասին, ճիշտ չէ: Ես գիտեմ դա, քանի որ ճանաչում եմ Նրան:

Դրանից հետո ես շրջվեցի, նայեցի ուղիղ նրա աչքերին և ասացի.

- Իմ խոսքերն այն մարդու մասին, որին ես առաջին անգամ եմ տեսնում, ոչնչով չեն տարբերվում Աստծո մասին ձեր պատմածից: Լողավազանի մոտ նստած մարդու մասին պատմելիս ասացի ձեզ, թե ինչին էի *հավատում*, և խոսում էի շատ համոզիչ ձայնով: Բայց շատ հավանական է, որ իմ ասածի մեծ մասը ճիշտ չէ, քանի որ ես երբեք ժամանակ չեմ տրամադրել, որպեսզի ճանաչեմ նրան:

Այդ կինը լսում էր, բայց մի թեթև ցնցված տեսք ուներ:

- Աստված տվեց մեզ Իր Խոսքը՝ գրված Աստվածաշնչի էջերում, որը հայտնում է, թե ով է Ինքը, - հանդարտ ասացի ես: - Նա նույնպես ուղարկեց Իր Հոգուն, որպեսզի Հոգին հայտնի մեզ Հիսուսին, իսկ Հիսուսն, Իր հերթին, հայտնում է մեզ Ամենակարող Աստծուն, քանի որ Ինքը մարմնով հայտնված Աստված է:

Ես կանգ առա, իսկ հետո մեղմորեն հարցրի.

- Կարծում եք՝ հնարավո՞ր է, որ ձեր մտքում ստեղծել եք երևակայական Աստծո, որ իրականում գոյություն չունի:

Ցավոք, նա կա՛մ պատրաստ չէր ընդդիմանալ Աստծո գիտելիքի բացակայությանը իր կյանքում, կա՛մ վախենում էր և իրականում չէր ցանկանում հանդիպել Նրան: Մենք ևս մի քանի րոպե զրուցեցինք և շուտով հրաժեշտ տվեցինք:

Միգուցե դուք ժպտում եք՝ կարդալով այս պատմությունը, և մտածում եք. *«Ես ճանաչում եմ Աստծուն: Ես եկեղեցի եմ հաճախում և կարդացել եմ Աստվածաշունչը»:* Այնուամենայնիվ, քանի դեռ մենք չենք մխիթարվել այդ մտքով, եկեք հիշենք փարիսեցիների ցավալի դրությունը: Նրանք բաց չէին թողնում ոչ մի հավաքույթ, մշտապես աղոթում և ծոմ էին պահում և կարող էին անգիր ասել Աստվածաշնչի առաջին հինգ գրքերը (անկասկած՝ ես չունեմ նման առաջադիմություն): Այնուամենայնիվ, նրանք չճանաչեցին մարմնով հայտնված Աստծուն՝ Հիսուսին, Ով կանգնած էր ուղիղ նրանց դիմաց:

## ՃԱՆԱՉԵԼ ԱՍՏԾՈՒՆ

Ո՞վ է ստանում Աստծուն ճանաչելու արտոնությունը: Հրավերն ուղղված է բոլորին, սակայն կան հստակ չափանիշներ: Իրական շփման դուռը բաց է մեզ համար, երբ մեր էության խորքում որոշում ենք կայացնում լիովին հանձնել մեր կյանքերը Նրան: Ոչ թե ձևական որոշում, այլ այնպիսի, որն ուղեկցվում է համապատասխան գործողություններով: Հիսուսն ասում է. «Եթե կորցնես քո կյանքն Ինձ համար, դու կփրկես այն» (Մատթեոս 16.25, NLT): Ի՞նչ Նա նկատի ունի՝ խոսե-

լով կյանքը փրկելու մասին: Պատասխանը պարզ է. ճշմարիտ կյանքը միայն *Նրան ճանաչելու* մեջ է:

Մենք չենք ճանաչում Աստծուն՝ եկեղեցի հաճախելով, շրջապատվելով քրիստոնյա ընկերներով, երկրպագության երաժշտություն լսելով, «փրկության աղոթքը» կրկնելով կամ, նույնիսկ, բարի գործեր անելով: Աստվածաշնչում Հիսուսը հաճախ կոչվում է Փեսա, իսկ մենք՝ հարս: Երբ փեսան և հարսը միանում են, երկուսը մեկ են դառնում: Պողոսը գրում է. *«Սա օրինակ է* այն մասին, թե ինչ կերպով են Քրիստոսը և եկեղեցին մեկ» (Եփեսացիների 5.32, NLT): Որպեսզի բացատրի մեզ, թե ինչ է նշանակում ճանաչել Իրեն, Աստված տվեց *պատկերավոր քարոզ*՝ ամենատարածված երևույթը մարդկության մեջ: Ամեն օր մենք կարող ենք տեսնել Նրա հետ հարաբերության պարզ օրինակը *ամուսնության՝ Սուրբ պսակի* միջոցով:

Երբ կինը, սպիտակ զգեստ հագած, քայլում է եկեղեցու շարքերով՝ հարսանեկան քայլերգի հնչյունների ներքո, նա շատ ազդեցիկ հռչակում է անում. հրաժեշտ է տալիս այս աշխարհի բոլոր 3.930.000.000 տղամարդկանց: Նա նվիրում է իր ամբողջ սիրտը, անձը, մարմինը և կյանքը այն տղամարդուն, ով սպասում է իրեն խորանի մոտ: Հետաքրքիր է, որ նրա որոշումը խորհրդանշում է ճշմարիտ «ապաշխարությունը»: Նա մերժում է այս աշխարհում ապրող ցանկացած տղամարդու հետ ամուսնական միություն կնքելու հնարավորությունը: Նա և իր ընտրյալ ամուսինն ուխտի մեջ են մտնում. իր ամուսինը լիովին իրենն է, իսկ ինքը՝ իր ամուսնունը: Երկուսը սկսում են մի ընթացք, որը հնարավորություն է տալիս խորը փոխհարաբերություն կառուցել՝ ճանաչել միմյանց ավելի, քան երբևէ կկարողանան ճանաչել ցանկացած այլ մարդու:

Այժմ ցանկանում եմ ասել հետևյալը, ինչը կարող է հակասական թվալ, բայց լսե՛ք ինձ մինչև վերջ: Անձամբ ես հավատում եմ, որ մեծագույն խոչընդոտներից մեկը, որը մենք ստեղծել ենք Աստծուն *ճանաչելու* հարցում, «մեղավորի աղոթքն» է: Սովորաբար մենք անում ենք հետևյալը. վաճառում ենք հարաբերությունն Աստծո հետ այնպես, ասես որևէ ապրանք ենք գովազդում սպառողին: Ավետարանչական ուղերձից կամ անձնական զրույցից հետո ասում ենք. «Դուք ցանկանո՞ւմ եք ճանաչել Աստծուն: Դուք ցանկանո՞ւմ եք հաղորդակցվել ձեր Արարչի հետ: Այդ դեպքում, պարզապես աղոթե՛ք այս աղոթքը. «Հիսո՛ւս, ե՛կ իմ կյանքի մեջ: Ես ապաշխարում եմ իմ մեղքերից: Ընդունում եմ Քեզ՝ որպես իմ Փրկչի: Շնորհակալություն, որ ներում ես ինձ և դարձնում ես Աստծո զավակ»»:

Հաջորդը՝ մենք հայտնում ենք ուրախալի լուրը վերստին ծնվելու մասին բոլոր ներկաներին, ցնծում ենք այն պատճառով, որ մեր նորադարձները հավիտյան ապահով են Աստծո մեջ, և հրավիրում ենք նրանց մեր հավաքույթներին: Այնուամենայնիվ, մենք ոչինչ չասացինք ապաշխարության մասին՝ այն մասին, որ նրանք պետք է մեկընդմիշտ հրաժարվեն եսակենտրոն կենսաոճից և նվիրեն իրենց կյանքերը Աստծուն: Սակայն, լսե՛ք Հիսուսի պնդումն ամբողջությամբ.

> «Եթե դուք ճշմարտապես ցանկանում եք հետևել Ինձ, պետք է անմիջապես լիովին մերժեք և ուրանաք ձեր կյանքը: Եվ դուք պետք է պատրաստակամ լինեք վերցնելու Իմ խաչը և ընդունելու այն ինչպես ձերը՝ շարունակ անձնատուր լինելով Իմ ճանապարհներին: Որովհետև եթե դուք ընտրեք անձնազոհությունը և կորցնեք ձեր կյանքերը՝ Իմ փառքի համար, դուք շարունակաբար կբացահայտեք ճշմարիտ կյանքը: Բայց եթե որոշեք պահել ձեր կյանքը ձեզ համար, դուք կզրկվեք այն բանից, ինչը փորձում եք պահել» (Մատթեոս 16.24,25, TPT):

Մենք կարող ենք ճշմարտապես ճանաչել Աստծուն, եթե սկսենք ճշմարտապես հաղորդակցվել Նրա հետ, ինչը Հիսուսը նկատի ուներ այս խոսքերում: Աստծուն ճանաչելը մեկանգամյա իրադարձություն չէ, այլ՝ հաստատուն որոշում՝ հնազանդվելու Նրա ճանապարհներին և հետևելու դրանց, ոչ թե այն բանին, ինչը դուք լավագույնն եք համարում ձեզ համար: Այս որոշումը կայացվում է ամեն օր, ամեն պահ: Եթե Նրա խոսքը պարզորեն բացահայտում է որևէ խնդիր ձեր կյանքում, դուք չպետք է վիճեք կամ խուսափեք հնազանդվելուց: Հիսուսին հետևելը նշանակում է, որ ձեր սրտի խորքում դուք որոշում եք կայացրել մերժել այն ամենը, ինչը վիրավորում է Նրան, և մշտապես ծառայել Նրան:

Հակոբոս առաքյալը գրում է. «Բայց պարզապես մի՛ լսեք Աստծո Խոսքը: Դուք պետք է կատարեք այն, ինչ Խոսքն ասում է: Հակառակ դեպքում դուք միայն խաբում եք ձեզ» (Հակոբոս 1.22, NLT): Այն մարդը, ով լսում է Աստծո Խոսքը, սակայն չի արձագանքում դրան մտքով, խոսքով և գործով, խաբել է իրեն: «Ավյուն» թարգմանությունն անվանում է դա «ինքնախաբեություն», ինչը, կարծում եմ, ճշգրտորեն նկարագրում է երրորդ տնտեսին, փարիսեցիներին, Հավայան կղզիներում լողավազանի մոտ գտնվող այդ կնոջը և անթիվ մարդկանց, որոնց ես հանդիպել եմ, որոնք լիովին համոզված են, որ ունեն փոխհարաբերություն Աստծո հետ, քանի որ եկեղեցի են հաճախում և անգիր գիտեն

սուրբգրային հատվածներ, բայց, որպես կանոն, խոսում են և ապրում են հակառակ Նրա Խոսքին: Նրանք ցավալիորեն մոլորված են: Դա կոչվում է *ինքնախաբեություն:*

Թույլ տվեք արագորեն մի կարևոր բան ասել: Լիզան կասի ձեզ, որ նա շատ սխալներ է գործել մեր ամուսնության ընթացքում (ես ավելի շատ եմ սխալվել, բայց այս դեպքում խոսում եմ հարսնացուի մասին), բայց նա երբեք չի ձգտել միտումնավոր կատարել իր ցանկությունները՝ մեր ամուսնական ուխտի հաշվին: Նրա վարքը կատարյալ չի եղել, բայց նրա սիրտը երբեք չի հեռացել հավատարմությունից:

Նմանապես, Աստծո հետ մեր հարաբերության մեջ, եթե մենք պարբերաբար չենք հնազանդվում, Նա ներում է: Սա կարելի է համեմատել այն բանի հետ, որ ամուսինը և կինը չեն խախտում իրենց ուխտը, երբ նրանցից մեկը սխալվում է: Փոխհարաբերությունը մեր Արարչի հետ կառուցված է սրտից բխող ճշմարիտ հավատարմության վրա. այն շուրթերի ծառայություն չէ՝ զուրկ համապատասխան գործերից:

Հիսուսը խիստ ակնառու մի պնդում է անում. «Եթե մեկը *կամենում է* Նրա կամքն անել, նա *կիմանա...»* (Հովհաննես 7.17): Ամեն ինչ սկսվում է մեր էության խորքում, երբ մենք խորապես ցանկանում ենք գործել, ոչ թե միայն լսել: Մենք *կատարում* ենք այն, ինչ Նա ասում է, և այդ ժամանակ *իմանում* ենք: Մենք իմանում և *ճանաչում* ենք Աստծուն և Նրա Խոսքը: «Ավյուն» թարգմանությունը գեղեցիկ կերպով է վերծանում Հովհաննես 7.17-ը. «Նախ՝ ջերմեռանդորեն ձգտեք կատարել Աստծո կամքը, ապա կկարողանաք զանազանել՝ արդյո՞ք Իմ ուսմունքներն Աստծո սրտից են»:

Տաղանդների առակում երեք տնտեսներն էլ լսեցին ճիշտ նույն հրահանգները մինչև իրենց տիրոջ մեկնելը: Երկուսը գործի դրեցին նրա ցուցումները, իսկ մեկը ոչինչ չարեց: Զուգադիպություն չէ, որ հենց երրորդ տնտեսն իրականում չէր ճանաչում իր տիրոջը, և այդ պատճառով էլ լրջորեն չվերաբերվեց նրա հրահանգներին: Այդ տնտեսը գտնվում էր ինքնախաբեության մեջ:

## ՍՈՒՐԲ ԵՐԿՅՈՒՂ

Մեր քննարկումը, մինչև այս պահը, կարելի է նկարագրել մի աստվածաշնչյան արտահայտությամբ՝ *«Տիրոջ երկյուղ»:* Քանի որ գոյություն ունեն բազմաթիվ վախեր, հատկապես՝ մեր օրերում, մենք խուսափում ենք այս արտահայտությունից: Այնուամենայնիվ, գոյություն ունի *երկու տեսակի վախ*, որոնք լիովին հակառակ են իրար: Դրանցից մեկը *վախի հոգին* է, իսկ մյուսը *Տիրոջ երկյուղը:* Սուրբ գիրքը տարբերակում է

մտցնում այս երկուսի միջև: Մովսեսն ասաց Աստծո ժողովրդին անմիջապես այն բանից հետո, երբ նրանք հեռացան Աստծո ներկայությունից.

> «Եվ Մովսեսն ասաց ժողովրդին. *«Մի՛ վախեցեք,* որովհետև Աստված ձեզ փորձելու համար է եկել՝ այնպես, որ *Նրա վախը* ձեր առջև լինի, որ չմեղանչեք»: Եվ ժողովուրդը *հեռու կանգնեց,* և Մովսեսը *մոտեցավ* այն թանձր խավարին, ուր որ Աստված էր» (Ելից 20.20,21):

Առաջին հայացքից թվում է, թե Մովսեսը հակասում է ինքն իրեն: Թույլ տվեք շրջասության ենթարկել նրա պնդումը՝ պարզ դարձնելու համար. «Մի՛ *վախեցեք*, որովհետև Աստված եկել է՝ տեսնելու, թե արդյո՞ք Իր *վախը* ձեզանում է»: Նրա պնդումը հակասական չէ. նա տարբերակում է «Աստծուց սարսափած լինելու» և «Տիրոջ երկյուղի» միջև, քանի որ այս երկուսի միջև տարբերություն կա: Այն մարդը, որը սարսափած է Աստծուց, թաքցնելու բան ունի: Հիշեք՝ Ադամը թաքնվեց Տիրոջ ներկայությունից, երբ մեղանչեց Նրա դեմ (կարդացե՛ք Ծննդոց 3.8): Իսկ Աստծո երկյուղն ունեցող մարդը թաքցնելու բան չունի. նա ավելի շուտ սարսափած է Աստծուց հեռու լինելուց:

Այնպես որ, թույլ տվեք հենց սկզբից անել հետևյալ պնդումը. *«Տիրոջ երկյուղը չի նշանակում սարսափած լինել Աստծուց»:* Ինչպե՞ս կարող ենք մտերմորեն հաղորդակցվել նրա հետ, ումից վախենում ենք: Ինչպես արդեն նշեցի, ճշմարիտ սուրբ երկյուղը նշանակում է զարհուրանք՝ Աստծուց հեռու լինելուց: Դուք չեք ցանկանում լինել հեռու Նրա ներկայությունից, հոգատարությունից և սիրուց: Դուք անսասան եք՝ անկախ այն բանից, թե ինչպիսին են հանգամանքները, կամ՝ որքան դժգույն է ամեն ինչ թվում: Դուք գիտեք, որ չկա ավելի լավ վայր, քան Նրան մոտ լինելը: Այս դիրքորոշումն ունեցող մարդը հնազանդ է Նրան:

Աստծուց երկյուղ ունենալը նշանակում է ունենալ պատկառանք, ակնածանք, պատիվ և հարգանք Նրա հանդեպ ավելի, քան ցանկացած այլ անձի կամ երևույթի: Այն նշանակում է տալ Նրան ամենաբարձր գնահատանքը և համարել Նրա սրտի ցանկություններն ավելի թանկ և արժեքավոր, քան մերը: Մենք սիրում ենք այն, ինչ Նա է սիրում, և մենք ատում ենք այն, ինչ Նա է ատում: Այն, ինչը կարևոր է Նրա համար, կարևոր է դառնում մեզ համար. այն, ինչն այնքան էլ կարևոր չէ Նրա համար, այնքան էլ կարևոր չէ մեզ համար:

Ունենալով այս դիրքորոշումը՝ մենք հայտնվում ենք այն մարդկանց թվում, որոնք հրավիրված են մոտ լինելու Նրան: Մենք տեսնում ենք, որ Իսրայելի զավակների սերն Աստծո հանդեպ պայմանական էր: Երբ

հանգամանքները բարենպաստ էին, նրանք երկրպագում էին, հնազանդվում էին և սիրում էին Աստծուն: Անբարենպաստ հանգամանքների դեպքում նրանք տրտնջում էին: Անվերապահորեն չէին վստահում Նրան, այլ հակված էին ինքնապահպանման: Ջգտելով փրկել իրենց կյանքերը՝ նրանք վարվեցին հակառակ այն պնդմանը, որը Հիսուսն արեց Ավետարանում. նրանք թողեցին Աստծո հետ ճշմարտապես հաղորդակցվելու փառավոր արտոնությունը: Մովսեսն ուներ երկյուղ Աստծուց, իսկ նրանք՝ ոչ:

Նրանց շարժառիթները համապատասխանաբար բացահայտվեցին. ժողովուրդը *հեռու կանգնեց,* իսկ Մովսեսը *մոտեցավ* Աստծո ներկայությանը: Նրանք ապրում էին՝ կուրորեն չտեսնելով լավագույնը: Ի հակադրություն՝ Մովսեսը հստակ տեսնում էր: Մովսեսը ճանաչում էր Աստծուն՝ Նրա Խոսքը, ճանապարհները և իմաստությունը: Իսկ նրանք միայն գիտեին Աստծուն այնքանով, թե ինչպես էր Նա պատասխանում իրենց աղոթքներին:

Մենք երկյուղ ունենք Տիրոջից, երբ անմիջապես հնազանդվում ենք Նրան, նույնիսկ եթե դա անիմաստ է թվում, ակնհայտորեն օգտակար չէ մեզ կամ, միգուցե, կարող է վնաս հասցնել մեր բարեկեցությանը: Մենք ճանաչում ենք Նրա բնավորությունը և այդ պատճառով էլ վստահ ենք: Նույնիսկ եթե ինչ-որ բան կործանարար է թվում, մենք ոչ մի դեպքում չենք գնա կործանման, եթե հնազանդվենք Աստծուն:

Վերջինը՝ Տիրոջ երկյուղի մեջ վարվելը դրսևորվում է Նրան մինչև վերջ հնազանդվելով: Աբրահամը հենց այսպես վարվեց, երբ Աստված պատվիրեց նրան թողնել այն, ինչն ամենակարևորն էր նրա համար, ինչին նա սպասել էր 25 տարի: Նա պատվիրեց Աբրահամին զոհաբերել նրան, ում սիրում էր ավելի, քան ցանկացած մարդու կամ ցանկացած բան. Նա պատվիրեց զոհաբերել իր որդի Իսահակին: Աբրահամը դուրս եկավ վաղ առավոտյան և երեք օրվա ճանապարհ անցավ, որ կատարեր Աստծո խնդրանքը: Աստված չներկայացրեց նրան որևէ պատճառաբանություն, և թվում էր՝ այդ զոհը կկործաներ այն ամենը, ինչի համար Աբրահամն ապրում էր: Այն կործանարար էր թվում: Բայց նա անվերապահորեն վստահեց Աստծո *բնավորությանը* (ինչն ուղղակիորեն հակադրվում է ծույլ տնտեսի վարքին):

Հենց որ Աբրահամը բարձրացրեց դանակը՝ Իսահակին սպանելու համար, Տիրոջ հրեշտակը կանգնեցրեց նրան և ասաց. «Մի՛ վնասիր նրան ոչ մի ձևով, որովհետև հիմա Ես գիտեմ, որ դու *ճշմարտապես վախենում* ես Աստծուց: Դու չխնայեցիր Ինձնից նույնիսկ քո որդուն՝ քո միակ որդուն» (Ծննդոց 22.12, NLT): Նման սերը, վստահությունը

և հավատքն այն մարդու սրտում են, ով ճշմարտապես երկյուղ ունի Աստծուց:

Գրված է. «Տիրոջ երկյուղը գիտելիքի սկիզբն է» (Առակաց 1.7, NKJV): Ո՞ր գիտելիքի: Մենք գտնում ենք պատասխանը մի քանի խոսք անց, բայց կարդանք նաև այդ պատասխանի նախապայմանի՝ Նրա Խոսքն ամենից վեր դասելու մասին, ինչն, ըստ էության, արեց Աբրահամը.

> «Որդի՛ս, եթե դու ընդունես Իմ խոսքերը և գանձի նման պահես Իմ պատվերները քո ներսում, որպեսզի ականջ դնես իմաստությանը և ուղղես քո սիրտը հասկացողությանը, այո՛, եթե դու աղաղակես՝ զանազանություն խնդրելով, և բարձրացնես քո ձայնը՝ հասկացողություն խնդրելով, եթե փնտրես նրան արծաթի պես, և որոնես նրան թաքնված գանձերի պես, այդ ժամանակ դու կհասկանաս Տիրոջ երկյուղը և *կգտնես գիտելիքն Աստծո մասին»* (Առակաց 2.1-5, NKJV):

Պատասխանը շատ պարզ է. Տիրոջ երկյուղը՝ *Աստծո մասին գիտելիքի սկիզբն է:* Այսօր մի փոքր այլ կերպ կարտահայտեինք այս միտքը: Մենք կարող էինք ասել. «Դու կհասկանաս Տիրոջ երկյուղը և կսկսես մտերմորեն ճանաչել Աստծուն»: Այժմ մենք հասկանում ենք ծույլ ծառայի սխալմունքի արմատը: Նա չուներ սուրբ երկյուղ, ինչն ակնհայտ էր նրա անգործությունից և նրա վերջին պատասխանից: Այդ ծառան բռնապետ էր համարում իր տիրոջը՝ նման Իսրայելին, որը երբեմն հենց այդպես էր մտածում Աստծո մասին: Նա լիովին կույր էր իր առաջնորդի բնավորության հանդեպ:

Սուրբ երկյուղը՝ Աստծուն ճանաչելու սկզբնակետն է: Սաղմոսերգուն հաստատում է սա՝ հայտարարելով. «Տերը նրանց ընկերն է, ովքեր վախենում են Իրենից» (Սաղմոս 25.14, NLT): Ընկերներն այն մարդիկ են, որոնց մենք *մտերմորեն* ճանաչում ենք: Հիսուսը մի պնդում է անում. «Դուք ցույց եք տալիս, որ Իմ *մտերիմ* ընկերներն եք, երբ հնազանդվում եք այն ամենին, ինչ Ես պատվիրում եմ ձեզ» (Հովհաննես 15.14, TPT):

Մեզնից շատերը հաճախ ասում են, որ «սիրում» են Հիսուսին նույն կերպով, ինչպես մենք ասում ենք, որ սիրում ենք որևէ հանրահայտ կինոաստղի, մարզիկի կամ ցանկացած հայտնի անձնավորության: 2020 թվականի սկզբում, երբ հանրահայտ ամերիկացի բասկետբոլիստ Կոբի Բրայանտը և նրա դուստր Ջիաննան զոհվեցին ուղղաթիռի ողբերգական վթարի պատճառով, ամբողջ Ամերիկան սգում էր, և շատերը լաց էին լինում: Մարդիկ անթիվ փուչիկներ, բացիկներ և ծաղիկներ էին

բերում Լոս Անջելեսի «Սթեյփլս Սենթրի» մոտ, որտեղ նա բասկետբոլ էր խաղում: Ես նույնպես սգում էի այդ ողբերգության պատճառով և շատ էի մտածում այդ մասին:

Այնուամենայնիվ, մեզնից շատերը, ովքեր սգում էին, չէին ճանաչում Կոբիին այնպես, ինչպես ճանաչում էին նրա կինը, ընտանիքը և մտերիմ ընկերները: Եթե նա տեսներ մեզ փողոցում, չէր իմանա, թե ով ենք: Ես երբեք չէի շփվել նրա հետ, սակայն սգում էի նրա մահը, ասես ճանաչում էի նրան: Ինչպես որ Կոբին չէր ճանաչի ինձ իր կենդանության ժամանակ, այնպես էլ կլինեն բազմաթիվ տղամարդիկ և կանայք, որոնք պնդում են, թե ճանաչում են Հիսուսին, քանի որ իրենք եկեղեցի են հաճախել, գրել են Նրա մասին սոցիալական ցանցերում, լսել են երգեր Նրա մասին, ինչ-որ բաներ են արել Նրա անունով և նույնիսկ դավանել են, որ Նա իրենց Տերն է: Բայց Հիսուսի պատասխանը կլինի. «Ես երբեք չեմ ճանաչել ձեզ»: Ահա թե ինչու.

> «Բոլորը չէ, որ եթե կանչում են Ինձ «Տե՛ր, Տե՛ր», կմտնեն Երկնքի թագավորություն: Կմտնեն միայն նրանք, ովքեր իրականում կատարում են Իմ երկնային Հոր կամքը: Դատաստանի օրը շատերը կասեն Ինձ. «Տե՛ր, Տե՛ր: Մենք մարգարեացանք Քո անունով և դևեր հանեցինք Քո անունով և շատ հրաշքներ գործեցինք Քո անունով»: Բայց Ես կպատասխանեմ. «Ես երբեք չեմ ճանաչել ձեզ: Հեռացե՛ք Ինձնից, դուք, որ զանց եք անում Աստծո օրենքները»» (Մատթեոս 7.21-23, NLT):

Մենք ոչ մի դեպքում չենք ցանկանա, որ Տերը նման բան ասի մեզ: Եթե ուշադրությամբ ուսումնասիրեք այս սուրբգրային հատվածը, այս մարդիկ վստահ էին, որ հարաբերություն ունեին Հիսուսի հետ, և նույնիսկ զգացմունքորեն ոգևորված էին այդ պատճառով: Կոբին կասեր ինձ. «Ո՞վ եք դուք: Որտեղի՞ց եք: Ի՞նչ է ձեր անունը»: Այս կերպով Հիսուսը կասի շատերին, որոնք պնդում են, թե ճանաչում են Նրան. «Ես չեմ ճանաչում ձեզ և չգիտեմ, թե որտեղից եք դուք» (Ղուկաս 13.25, NLT):

## ԺԱՄԱՆԱԿ ԱՆՑԿԱՑՐԵՔ ՆՐԱ ՀԵՏ

Տիրոջ երկյուղը՝ Նրան մտերմորեն ճանաչելու սկզբնակետն է, բայց ինչո՞ւ հաստատվել սկզբնակետում: Ավելի՛ խորասուզվեք ձեր հարաբերությունների մեջ, քանի որ Նա կանչում է ձեզ ավելի մոտենալու Իրեն: Մեզ տրված է հետևյալ պատվերը. «Մոտեցե՛ք Աստծուն, և Նա կմոտենա ձեզ» (Հակոբոս 4.8): Զարմանալին այն է, որ մենք ենք որոշում մեր մտերմության աստիճանը Նրա հետ:

Ես զարմանում եմ, որ բազմաթիվ դավանող հավատացյալներ գրեթե ոչնչով չեն տարբերվում այն կնոջից, որին հանդիպեցի Հավայան կղզիներում: Նրանք ստանում են իրենց «գիտելիքն Աստծո մասին» սոցիալական ցանցերից, երկրպագության երգերից, բլոգներից, ընկերների հետ զրույցներից և շաբաթը մեկ անգամ՝ իրենց հովվից, երբ խոսում է Նրա մասին: Բայց նրանք ժամանակ չեն անցկացնում Աստծո հետ:

Ամենաթարմ վիճակագրությունները ցույց են տալիս, որ 15-25 տարեկանում մարդիկ անցկացնում են շաբաթական 53.7 ժամ էկրանների առջև՝ սմարթֆոնների, պլանշետների, համակարգիչների և հեռուստացույցի[12]: Հետաքրքիր է, թե որքա՞ն ժամանակ են անցկացնում Աստծո Խոսքի հետ: Եվ այս հարցը վերաբերում է ոչ միայն երիտասարդներին:

Ես արդեն 40 տարուց ավելի է կարդում եմ իմ Աստվածաշունչը, և դա դեռ իմ ամենասիրելի զբաղմունքներից է: Մինչև ընթերցանությունը սկսելը, ես միշտ խնդրում եմ Սուրբ Հոգուն նորովի հայտնել ինձ Հիսուսին: Տարիներ շարունակ ես արթնանում եմ վաղ առավոտյան և ժամանակ եմ տրամադրում, որպեսզի քայլեմ մեր տան նկուղում կամ դրսում՝ մեկուսի վայրում, երբեմն էլ հյուրանոցային համարում, և պարզապես կարդամ, աղոթեմ և լսեմ: Ես չեմ ցանկանում լինել այն մարդկանցից մեկը, ով քարոզել է Ավետարանը աշխարհով մեկ՝ ապավինելով միայն իր պարգևին, և այդպես էլ չի ճանաչել Պարգևողին:

Աստված ցանկանում է մտերմորեն հաղորդակցվել ձեզ հետ: Նրա կատարյալ սերը հեռացնում է վախը: Չափազանց հաճախ մենք հայտնաբերում ենք, որ վարվել ենք այն տնտեսի պես, ով կույր էր իր տիրոջ բարության հանդեպ: Ահա թե ինչու եմ խրախուսում աղոթել, որ Աստված լցնի ձեզ Իր սուրբ երկյուղով: Աղոթե՛ք այս ամենի համար, որակյալ ժամանա՛կ անցկացրեք Նրա հետ և բացահայտե՛ք Նրա ճշմարիտ ինքնությունը՝ Սերը:

Աստված գտավ մեզ, սիրեց մեզ և մահացավ մեզ համար ավելի վաղ, քան մենք ճանաչեցինք Նրան: Նա էր, որ նախաձեռնեց այս զարմանալի հաղորդակցությունը: Նա ձեր կողմից է: Նա փափագում է մտերմորեն ճանաչել ձեզ: Այնուամենայնիվ, Նա այնքա՜ն խորն է սիրում մեզ, որ հրաժարվում է հարկադրել մեզ հաղորդակցվել Իր հետ:

Այնպես որ, որոշում կայացրեք հիմա՛: Ընտրեք կյա՛նքը: Որոշո՛ւմ կայացրեք մտերմորեն ճանաչել Նրան...

## ՄՏՈՐԵՔ

1. Աստծո բնավորությունը չիմանալը մշտապես վախի պատճառ է դառնում: Արդյո՞ք ոչ ճշգրիտ պատկերացումն Աստծո բնավորության մասին ազդել է այն բանի վրա, թե ինչպես եք դուք տնօրինել ձեր պարգևները և կոչումը, և ի՞նչ կերպով:

2. Իրական հարաբերությունն Աստծո հետ հնարավոր է դառնում, երբ լիովին հանձնում եք ձեր կյանքը Նրան և ապրում եք՝ հնազանդվելով Նրա Խոսքին: Ձեր կյանքում կա՞ որևէ մտածելակերպ կամ վարքագիծ, որը խոչընդոտում է Աստծո հետ ձեր հարաբերությանը:

3. Կա մեծ տարբերություն *Աստծուց վախենալու* և *Աստծո երկյուղն ունենալու* միջև: Ո՞րն է այդ տարբերությունը: Ինչո՞ւ է Աստծո երկյուղն ունենալը որոշիչ գործոն՝ Աստծուն մտերմորեն ճանաչելու համար:

# X

*«Տե՛ր, ես գիտեմ, որ Դու ունես բարձր չափանիշներ և ատում ես անփույթ գործելակերպը, որ Դու պահանջում ես լավագույնը ու զիջումներ չես անում սխալի դեպքում: Եվ ես վախեցա»:*

Մատթեոս 25.24,25, MSG

# 13

# Բազմապատկման խոչընդոտներ Բ

Այժմ մենք պատրաստ ենք ուսումնասիրել ծույլ տնտեսի երկրորդ պնդումը. «Ես վախեցա»: Վախը կաթվածահար էր արել նրան: Ինձ դուր է գալիս երրորդ ծառայի խոսքը *«Ուղերձ»* թարգմանությունից. «Ես գիտեմ, որ Դու ունես բարձր չափանիշներ... Դու պահանջում ես լավագույնը և զիջումներ չես անում սխալի դեպքում»:

Սա մի պատմություն է հիշեցնում ինձ: Ես բասկետբոլ եմ խաղացել երկու տարբեր մարզիչների թիմերում: Երկու թիմերում էլ հարձակվող պաշտպան էի, քանի որ գնդակը հինգ մետրից, այսինքն՝ երեք միավորանոց նետումների գոտուց զամբյուղի մեջ նետելուն լավ էի տիրապետում:

Իմ առաջին մարզիչը ցանկանում էր ստանալ լավագույն արդյունքը մեզնից և օգտագործում էր խրախուսանք և կառուցողական շտկում՝ դրան հասնելու համար: Ես գիտեի, որ նա ոչ թե իմ դեմ էր, այլ՝ իմ կողմից: Ես վստահությամբ նետումներ էի կատարում դաշտի տարբեր հատվածներից: Նրա հավատքն իմ հանդեպ բորբոքում էր իմ վստահությունը:

Իմ հաջորդ մարզիչն այլ տեսակի էր: Նրա խոսքով, նա «բարձր չափանիշներ ունեցող և սխալի դեպքում զիջումներ չանող» մարդ էր: Երբ նետում էի կատարում և վրիպում էի, նա խստորեն կշտամբում էր ինձ հաջորդ ընդմիջման ժամանակ, և դրանից հետո հաճախ հայտնվում էի պահեստայինների նստարանին: Ես չէի կարողանում հաջողակ նետումներ կատարել, երբ նա մարզում էր մեզ: Երբ մենակ էի մարզվում, և նա ներկա չէր, ես դիպուկ նետումներ էի կատարում դաշտի բոլոր

հատվածներից: Ես նույն խաղացողն էի՝ նույն տաղանդով, բայց չէի կարողանում օգտագործել այդ տաղանդը, երբ նա խաղադաշտում էր:

Եթե կարդաք երրորդ ծառայի պատասխանը վերոնշյալ սուրբգրային հատվածում, կտեսնեք, որ նրա *պատկերացումն* իր տիրոջ մասին ճիշտ նույնն էր, ինչ իմ պատկերացումն այդ քննադատող մարզչի մասին: Այնուամենայնիվ, կա մի մեծ տարբերություն. *իրականում* այդ ծառայի տերը բոլորովին նման չէր իմ երկրորդ մարզչին:

Կրկին, հաշվի առնելով այն ամենը, ինչ սովորեցինք նախորդ գլխից, անչափ կարևոր է, որ մենք ժամանակ հատկացնենք՝ Աստծուն ճանաչելու համար: Նա ընդհանրապես նման չէ այդ ծույլ ծառայի *պատկերացմանը:* Աստված մեր կողմից է. Նա հավատում և վստահում է մեզ: Եթե մենք *չդիտարկենք* Նրան այս կերպով, կարող ենք հեշտորեն տեղի տալ վախին, և մեր պարգևները թաղված կմնան:

Այս ամենը նկարագրելուց հետո եկեք անդրադառնանք անպտղաբերության բոլորովին այլ սկզբնապատճառի: Ինչպես նշեցի նախորդ գլխում, կան մարդիկ, ովքեր ճանաչում են Աստծուն, բայց, միևնույն է, պայքարում են վախի հետ և նույնիսկ տեղի են տալիս դրան: Սուրբ գիրքը նշում է այս երևույթի պատճառները, և մենք կխոսենք այս մասին մինչև այս գլխի ավարտը: Սակայն մինչ սկսելը, կարդանք մի քանի խորաթափանց մտքեր վախի և դրան առնչվող թեմաների վերաբերյալ.

> «Մարդը պետք է վախենա ոչ թե մահից, այլ՝ որ այդպես էլ չի սկսել ապրել»:
>
> – Մարկոս Ավրելիոս

> «Երբեք մի՛ վախեցեք նոր բան փորձելուց: Հիշեք՝ տապանը կառուցեցին ոչ մասնագետները, իսկ *Տիտանիկը*՝ արհեստավարժ մասնագետները»:
>
> – Անհայտ հեղինակ

> «Մեծագույն սխալը, որը մենք գործում ենք, մշտապես սխալվելու վախի մեջ ապրելն է»:
>
> – Ջոն Կ. Մաքսվել

> «Մարդու մեծագույն բացահայտումներից և անակնկալներից մեկն այն է, որ ինքը հասկանում է, որ կարող էր անել այն, ինչը վախենում էր, որ չէր կարող»:
>
> – Հենրի Ֆորդ

Սկսենք մեր քննարկումը մի անհերքելի ճշմարտությամբ. *անառողջ*

*վախի հակադրությունն Աստծո սերն է:* Երբ մենք անպայմանական սիրում ենք Աստծուն և մարդկանց, վախն ի չիք է դառնում: Ինչպես գրում է Հովհաննես առաքյալը. «Կատարյալ սերը լիովին վտարում է վախը» (Ա Հովհաննես 4.18, NLT):

Ինչ վերաբերում է այս ճշմարտությանը, ես երբեք չեմ մոռանա մի հանդիպում Սուրբ Հոգու հետ Սան Դիեգո քաղաքում, որը մեծ հայտնություն տվեց ինձ: Նոր էի ավարտել հերթական ծառայությունը և մենակ էի իմ հյուրանոցային համարում: Ես փորձում էի վանել ինձ պաշարած վախը որդիներիս համար: Ես լսել էի ծառայողների երեխաների մասին, որոնք ողբերգական մահ էին ունեցել, մեկը՝ էլեկտրահարումից, շատերը՝ ավտովթարներից, մի քանիսը՝ թմրանյութերի չարաշահումից կամ ջրում խեղդվելուց, և մյուսները՝ տարատեսակ պատճառներով: Քիչ առաջ իմացա ևս մեկ ողբերգության մասին և փորձում էի ազատվել այն անհանգստությունից, որը համակել էր ինձ: Հանկարծ լսեցի իմ սրտում. «Որդի՛ս, վախը ցուցիչ է: Վախն ընդամենը ցույց է տալիս քո կյանքի այն բնագավառը, որը դու չես հնազանդեցրել Ինձ. քո կյանքի այդ բնագավառը դեռևս պատկանում է քեզ»:

Նրա խոսքերը հանկարծակիի բերեցին ինձ: Ես հասկացա, որ հանձն էի առել այն, ինչն անզոր էի պահպանել: Այդ լուսավորումից վայրկյաններ անց գոչեցի.

- Հա՛յր, այդ որդիներն իմը չեն: Ես պարզապես նրանց տնտեսն եմ, և նրանք պատկանում են Քեզ: Այնպես որ, ես ցանկանում եմ, որ նրանց կյանքում կատարվի այն, ինչ Դու ես ցանկանում, ինչ էլ որ դա լինի: Դու կարող ես տանել նրանց աշխարհի մյուս ծայրը և Երկինք, երբ պատրաստ լինես ընդունել նրանց, բայց ես խիզախորեն խնդրում եմ քեզ, որ նրանք կատարեն այն ամենը այս աշխարհում, ինչի համար Դու ստեղծել ես նրանց:

Եվ ես գոչեցի ավելի բարձր.

- Սատանա՛, Հիսուսի անունո՛վ, ես արգելո՛ւմ եմ քեզ դիպչել նրանց: Ես հայտարարում եմ, որ նրանք Աստծունն են, և արգելո՛ւմ եմ քեզ սպանել, գողանալ և կործանել այն, ինչն Աստծունն է:

Իմ սիրտը լցվեց մեծ խաղաղությամբ, և դրանից հետո ես այլևս չեմ անհանգստացել իմ չորս որդիների համար: Երբ անհանգստությունը փորձում է կրկին սողոսկել, ես խստորեն ասում եմ.

- Որդիներիս համար իմ հոգատարությունը ես հանձնել եմ Աստծուն, երբ Սան Դիեգոյում էի, և ետ չեմ վերցնելու այն:

Ամեն անգամ վախն անմիջապես մարում է, և խաղաղությունը վերադառնում է:

Վախը զարհուրելի վերակացու է: Այն նենգ է, այն ձգտում է վերահսկել ձեզ, և հենց որ բռնում է, դուք հայտնվում եք դրա ճնշման ներքո: Եթե սխալ արձագանքեք վախին, այն կշեղի ձեր կյանքի ընթացքը: Սակայն գոյություն ունի բարի լուր. վախը կարելի է հաղթահարել, բայց դրա համար անհրաժեշտ է ճիշտ մոտեցում:

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁՐԵՔ ՁԵՐ ՊԱՐԳԵՎԻՆ

Պողոսը գրեց երկու նամակ իր «հոգևոր որդի» Տիմոթեոսին: Երկուսում էլ նա խոսեց այն մասին, որ Տիմոթեոսի պարգևը *(խարիզման)* անտեսվում էր և անգործության էր մատնվում: Եկեք հենց սկզբից նշենք մի շատ կարևոր ճշմարտություն. Տիմոթեոսն աստվածապաշտ մարդ էր: Իր նամակներում Պողոսը պարծենում էր նրա փորձված բնավորությամբ: Տիմոթեոսն, անկասկած, չէր գտնվում այն մարդկանց ցուցակում, որոնք կաթվածահար էին եղել վախից՝ Աստծո բնավորությունը չճանաչելու պատճառով: Պողոսի առաջին նամակում գրված է. *«Անուշադրության մի՛ մատնիր* այն պարգևը, որը քեզանում է» (Ա Տիմոթեոս 4.14, NKJV):

*«Անուշադրության մատնել»*-ը թարգմանված է հունարեն *«ամելե՛ո»* բառից: Ահա դրա սահմանումներից երկուսը՝ «անտեսել կամ կարևորություն չտալ»[13]: Եվս մեկ աղբյուր սահմանում է այս բառը որպես «չմտածել և արդյունքում պատշաճ կերպով չարձագանքել, այսինքն՝ անուշադրության մատնել»[14]:

Ինչո՞ւ Տիմոթեոսը կամ մեզնից որևէ մեկը պետք է անտեսի կամ անուշադրության մատնի Աստծուց տրված պարգևը և, ծայրահեղ դեպքում, նույնիսկ չմտածի դրա մասին: Հնարավոր պատճառներից մեկը հետևյալն է.

### *Այն չի գործում կամ արդյունք չի տալիս՝ համաձայն մեր սպասումների*

Դուք մտածում եք. *«Ես փորձեցի, և ոչինչ չստացվեց»:* Ես հաճախ էի այդպես մտածելու գայթակղություն ունենում իմ կյանքի երկրորդ և երրորդ տասնամյակների ընթացքում: Այդ դեպքերից մեկն այն էր, որ մեկ օր, երբ քարոզում էի, Լիզան և ընկերուհին քնեցին այդ ընթացքում, դրա մասին ես գրել եմ ավելի վաղ այս գրքում: Ես մտածում էի. *«Ո՞վ կցանկանա լսել ինձ, եթե նույնիսկ ամենամոտ մարդիկ չեն կարողանում արթուն մնալ»:*

Գրեթե նույն ժամանակ տեղի էր ունենում ևս մեկ բան, ինչի պատճառով ես ավելի շատ էի պայքարում ծախողմանը վերաբերող մտքերի

հետ: Իմ ընկերը և ես կիրակնօրյա դպրոցի դասեր էինք անցկացնում: Նրա դասերին, որոնք անցկացվում էին նստարաններ չունեցող սրահում, հաճախում էր ավելի քան 200 մարդ: Նույն ժամանակահատվածում իմ դասերին հաճախում էր մոտավորապես 20 մարդ: Մի անգամ իմ դասին եկավ միայն մեկ մարդ:

Կային այլ դեպքեր, չափազանց շատ՝ թվարկելու համար, որոնց արդյունքում իմ պարգևները վիճարկելու գայթակղություն էի զգում: Այժմ ես գիտակցում եմ, որ եթե տեղի տայի չիրականացված սպասումների և ակնհայտ ձախողումների մասին մտքերին, ես կդադարեի քայլեր անել ծառայության մեջ, կընտրեի այլ ուղի և, ի վերջո, կդժբախտանայի՝ իմ կյանքի կոչումը թողնելու պատճառով:

Մենք կարող ենք անտեսել կամ անուշադրության մատնել Աստծուց մեզ տրված պարգևը նաև հետևյալ պատճառով.

## *Մարդկանց քննադատությունը*

Անկասկած, ես գրելը թողնելու սաստիկ գայթակղություն էի զգում այն բանից հետո, երբ իմ առաջին ձեռագիրն անտեսվեց, քննադատվեց և մերժվեց առաջին խմբագրի, իսկ հետո նաև հրատարակիչների կողմից: Ավելի ուշ՝ անմիջապես գրքիս ինքնահրատարակումից հետո, իմ ընկերներից մեկն արհամարհանքով արտահայտվեց իմ գրելաոճի վերաբերյալ: Այդ երեկո՝ նրա մեկնաբանությունները լսելուց հետո, ես 20-30 րոպե անշարժ պառկեցի մեր հյուրասենյակում՝ հայացքս հառելով առաստաղին: Սաստիկ հուսալքություն էի զգում և մտածում էի, որ միգուցե վատնել էի մի ամբողջ տարի իմ կյանքից և մեծ գումարներ՝ այդ գրքի պատճառով: Ես մտածում էի. *«Առաջին խմբագիրը, հրատարակիչները, իսկ հիմա նաև իմ ընկերները քննադատեցին այն: Արթնացի՛ր, Ջո՛ն: Ինչո՞ւ չես խոստովանում, որ այն անպետք է, և որ դու ձախողվել ես»:*

Եթե ես տրվեի այդ մտքերին և այլ կարծիքների, չէի գրի իմ երկրորդ գիրքը, որը նույնպես ձախողված էր թվում: Ես հիշում եմ, որ ուղարկեցի այն իմ Աստվածաշնչյան դպրոցի ուսուցչուհիներից մեկին: Այդ կինը կոպտորեն քննադատեց իմ գիրքը, և ես ավելի խորտակված զգացի ինձ: Անցել էր ավելի քան երկուսուկես տարի, և իմ երկու գրքերից ոչ մեկը, թվում էր, չուներ հաջողության հասնելու ոչ մի հնարավորություն:

Եթե ցանկացած պահին ես ուշադրություն դարձնեի մարդկանց քննադատությանը և իմ իսկ հուսալքված մտքերին, ամեն ինչ թողնելը շատ հեշտ կլիներ: Եվ ես չէի գրի իմ երրորդ գիրքը, որը, իհարկե, *«Սատանայի խայծն»* էր:

Մենք կարող ենք անտեսել կամ անուշադրության մատնել Աստծուց մեզ տրված պարգևը մեկ այլ պատճառով.

## *Ձախողման վախը*

Այս վախի հեգնական իրողությունը հետևյալն է. մենք ակնկալում ենք ձախողում՝ նույնիսկ մինչև սկսելը, և պաշտպանում ենք մեզ՝ նույնիսկ չփորձելով: Գաղափարը հետևյալն է. *«Ինչո՞ւ փորձել, եթե ոչինչ չի ստացվելու»:* Քանի՜ երազանքներ և տեսիլքներ են խափանվել ձախողման վախի պատճառով: Որքա՜ն ողբերգական է, որ Աստծուց տրված պարգևները վատնվում են նույն կերպով, որով դա արեց ծույլ ծառան:

Իմ ընկեր Մայլս Մոնրոն, *«Բացահայտի՛ր քո ներուժը»* գրքում, ձախողման վախի մասին գրել է հետևյալը.

> «Գերեզմանոցն այս աշխարհի ամենահարուստ վայրն է, քանի որ այնտեղ կարելի է գտնել բոլոր հույսերը և երազանքները, որոնք այդպես էլ չեն իրականացել, գրքերը, որոնք այդպես էլ չեն գրվել, երգերը, որոնք այդպես էլ չեն երգվել, գյուտերը, որոնք այդպես էլ չեն պատմվել, բուժումները, որոնք այդպես էլ չեն բացահայտվել, միայն որովհետև ինչ-որ մեկը չափազանց վախեցած է եղել *առաջին քայլն անելու համար»*[15]:

Համաձայնելով Մայլսի հետ՝ ես լրջորեն հորդորում եմ ձեզ. թույլ մի՛ տվեք, որ Աստծուց ձեզ տրված պարգևները չարտահայտվեն այս կյանքում:

Այն, ինչ հիմա կասեմ, կարող է զարմացնել ձեզ, քանի որ բոլորս բարձր ենք գնահատում Տիմոթեոսին: Այնուամենայնիվ, մենք տեսնում ենք Պողոսի նամակներից, որ Տիմոթեոսը գնում էր նույն ուղղությամբ, ինչ ծույլ ծառան: Նրա՝ Աստծուց տրված պարգևն անգործության և անուշադրության էր մատնված: Բարեբախտաբար, նա ուներ լավ հավատքի հայր, ով թույլ չտվեց նրան մնալ այդ վիճակում:

Երկրորդ նամակում, որը Պողոսը գրեց իր «որդուն», նա այլևս ժամանակ չծախսեց և անմիջապես խոսեց այդ խնդրի մասին. «Ես հիշեցնում եմ քեզ, որ բորբոքես Աստծո այն պարգևը, որը քո մեջ է» (Բ Տիմոթեոս 1.6, NKJV): *«Բորբոքել»* բառը հունարեն *«անազոպուռե՛ո»* բառն է, որի սահմանումն է «կրկին վառել կրակը»[16]: Բայց *«Հունարեն-անգլերեն բառարանը»* փոխանցում է այս բառի իմաստն ավելի ամբողջական. «նոր սկիզբ տալ ինչ-որ բանի. վերագործարկել»[17]: Աստծո պարգևը Տիմոթեոսի մեջ անգործության էր մատնվել և

նոր մեկնարկի կարիք ուներ: Իսկ ո՞րն էր այդ թմրության պատճառը: Պողոսը բացատրում է անմիջապես հաջորդ խոսքում.

«Որովհետև Աստված չտվեց մեզ *երկչոտության* հոգի, այլ՝ զորության և սիրո և զգաստության» (Բ Տիմոթեոս 1.7):

Հունարեն *«դեիլիա»* բառը կարող է թարգմանվել նաև որպես «վախ», բայց դրա առավել ճշգրիտ թարգմանությունը *«երկչոտություն»* է: Պողոսը նկատի ունի հետևյալը. «Տիմոթեո՛ս, Աստծուց քեզ տրված պարգևը թմրության մեջ է՝ *վախի* հոգու պատճառով», կամ, եթե ավելի պարզ ասենք. «Տիմոթեո՛ս, Աստծուց քեզ տրված պարգևը չի գործում՝ *երկչոտության* հոգու պատճառով»:

Մենք հեշտորեն կարող ենք ընկալել այս բառը: Երկչոտությունը նշանակում է «ետ կանգնել գործողությունից՝ վախի պատճառով»: Բայց ավելի կարևոր է այն, որ երկչոտության հիմքում *հոգի* է: Այն հոգևոր ուժ է, և եթե մենք չհակառակվենք վախին՝ հոգևոր մակարդակի վրա, դրա արմատներն ամբողջովին չեն հեռացվի:

## ԻՄ ՊԱՅՔԱՐԸ ԵՐԿՉՈՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Ես շատ լավ տեղյակ եմ այս մասին, քանի որ տարիներ շարունակ պայքարել եմ այս հոգու հետ: Ես ենթադրում էի, որ պատճառն իմ անձի թուլությունն էր: Բայց 1990-ական թվականների սկզբում մի շարք հավաքույթներ անցկացնելու ժամանակ բացահայտեցի, որ իմ կարծիքը լիովին սխալ էր: Ես պետք է չորսօրյա հավաքույթներ անցկացնեի մի փոքրիկ քաղաքում գտնվող եկեղեցում, սակայն դրանք վերածվեցին Աստծո շարժման, որը տևեց երեք շաբաթ: Ամեն երեկո դահլիճը լեփ-լեցուն էր. շատերը փրկվում էին, բժշկվում էին և ազատագրվում էին: Աստծուց տրված իմ պարգևը, որը քարոզելն էր, գործում էր շատ ազդեցիկ և ակնառու: Մարդիկ գալիս էին մինչև 150 կիլոմետր հեռավորությունից, որպեսզի մասնակցեին երեկոյան ծառայություններին: Ես հստակորեն հիշում եմ, որ մտնում էի դատարկ եկեղեցական շենքը ցերեկվա ժամերին, և թվում էր՝ Աստծո ներկայությունը բնակություն էր հաստատել այնտեղ:

Բայց մի երեկո՝ վերջին շաբաթվա ընթացքում, ամեն ինչ փոխվեց: Նախորդ երեկոյան երկրպագության թիմի առաջնորդներից մի քանիսը քննադատել էին իմ ծառայությունը: Եկեղեցու առաջնորդներից մեկը պատմեց ինձ նրանց ասածն անմիջապես ծառայությունից առաջ: Այն, ինչ նրանք ասել էին, կողմնակալ էր, բայց անվնաս էր: Այնուամենայնիվ, ես չէի կարողանում հեռացնել դա իմ մտքից: Իմ ուշադրությունը

շեղվեց գալիք ծառայությունից դեպի իմ նախորդ երեկոյի ուղերձի քննադատությունը: Եկեղեցու հովիվը չէր ընդունել նրանց դիտողությունները. մենք աղոթեցինք և գնացինք եկեղեցու դահլիճ, ինչպես որ անում էինք բոլոր նախորդ ծառայությունների ժամանակ:

Այդ երեկո ամեն ինչ չոր էր թվում: Ես փորձում էի ծառայել այնպես, ինչպես նախորդ երկու շաբաթվա ընթացքում, բայց շփոթված էի, չէի կարողանում կենտրոնանալ և չէի ուզում մնալ ամբիոնի ետևում: Ես ուզում էի փախչել դահլիճի ետևի դռնից: Թվում էր՝ ես անզոր էի, ինչպես իմ դեռահաս տարիներին, երբ ցավալիորեն ձախողում էի իմ ելույթները դպրոցում՝ դասարանցիներիս առջև: Ես բոլորովին օծություն չէի զգում. ես չէի զգում, որ Աստծո ներկայությունն ինձ վրա էր: Իրավիճակն անտանելի էր: Ես վաղ ավարտեցի հավաքույթը և վերադարձա այնտեղ, որտեղ իջևանել էի:

Ես բարկացած էի Աստծո վրա: *«Ինչո՞ւ Դու չօգնեցիր ինձ: Ինչո՞ւ այս ծառայությունը նման չէր մյուսներին: Ինչո՞ւ էի լքված զգում ինձ»:* Ես մտածում էի. *«Այդ ուղերձը և ծառայությունն անհեթեթ էին: Վաղը երեկոյան ոչ ոք չի վերադառնա: Ես նույնպես չեմ ուզում վաղն այնտեղ գնալ»:*

Պառկեցի քնելու՝ հույս ունենալով, որ հաջորդ օրը ամեն ինչ այլ կլիներ:

Հաջորդ առավոտյան արթնացա ծանրության, ճնշվածության և վհատության զգացումով: Ես փորձեցի աղոթել, բայց ապարդյուն: Մտահոգությունը տեղի ունեցածի մասին՝ ավելացավ: Այդ օրը երեք ժամ շարունակ աղոթեցի: Ամբողջ այդ ընթացքում ես պայքարում էի ձախողման մտքերի հետ: Ես աշխուժություն զգացի, հեռացրի ինձնից այդ ծանրությունը և մտովի պատրաստվեցի գալիք ծառայությանը:

Այդ երեկո եկեղեցում երկրպագությունը նույնքան չոր էր թվում, որքան նախորդ երեկոյան, և թվում էր՝ չէի կարող ոչինչ տալ նրանց: Կրկին, ես ուզում էի փախչել դահլիճի ետևի դռնից: Բեմ կանչվելուն պես բարձրացա և մի քանի րոպե շփոթված խոսեցի: Ես չէի կարողանում կենտրոնանալ: Հանկարծ մի ձայն լսեցի իմ մտքում. «Ինչո՞ւ ասացիր դա: Ո՞րն է քո ուղերձի նպատակը: Դու անհեթե՛թ ես»:

Ես այլևս չէի պատրաստվում հանդուրժել դա: Հանկարծ հավաքված վեց հարյուր մարդկանց ասացի.

- Չգիտեմ, թե ինչ է կատարվում, բայց ինչ-որ բան տարօրինակ է վերջին երկու երեկոյի ընթացքում: Կարո՞ղ եք կանգնել և աղոթել ինձ հետ:

Երբ բոլորս աղոթում էինք, Աստված խոսեց ինձ հետ. ես լսեցի Նրա

ձայնը առաջին անգամ ավելի, քան 24 ժամվա ընթացքում: Նա հիշեցրեց ինձ այն, ինչ Պողոսը գրում է Բ Տիմոթեոս 1.7-ում, Նա ասաց. «Որդի՛ս, դու երկչոտություն ես զգում քո ետևում՝ բեմահարթակի վրա կանգնած երկրպագության թիմի պատճառով: Կոտրի՛ր *երկչոտության հոգին* և խոսի՛ր այն, ինչ Ես տալիս եմ քեզ»:

Ես վարվեցի այնպես, ինչպես Նա ասաց, և դրան հետևեց մի համարձակ ուղերձ Սուրբ գրքից: Այդ օրն ամենից ազդեցիկն էր բոլոր 21 ծառայություններից: Ներկաների 75 տոկոսն առաջ եկավ՝ խոստովանելով, որ իրենք նույնպես պայքարում էին երկչոտության հետ: Նստարանների միջև գտնվող շարքերը լի էին մարդկանցով, ովքեր ցանկանում էին, որպեսզի աղոթեին իրենց ազատագրման համար:

Այդ եկեղեցու հովիվը կապ հաստատեց ինձ հետ մի քանի շաբաթ անց, որպեսզի պատմեր, թե որքան արդյունավետ էր այդ օրվա ծառայությունը: Այն առաջնորդները, որոնք քննադատական խոսքեր էին ասել իմ հասցեին, ապրում էին բացահայտ մեղքի մեջ՝ շնության, պոռնկության և հարբեցողության: Այդ ամենը բացահայտվեց հաջորդ երկու շաբաթվա ընթացքում, և բոլորը՝ բացի մեկից, հեռացան եկեղեցուց: Այդ հովիվը պատմեց, որ նրա երկրպագության թիմը երբեք այդքան միաբան և արդյունավետ չէր եղել, որքան այդ իրադարձություններից հետո: Այդ օրվա վերապրումը փոխեց այդ եկեղեցու կյանքը և ծառայությունը:

Իմ կյանքում այդ վերապրումը վերջ դրեց ընկճվածության հետ տարիներ տևող պայքարին, նաև այն բանին, որ երբեմն ես փորձում էի ծառայություններ անցկացնել իմ ուժերով՝ չօգտագործելով Աստծուց ինձ տրված պարգևը: Ամենակարևոր բացահայտումը, որը ես արեցի, այն էր, որ պետք է ուղղակիորեն հակառակվել *երկչոտության հոգուն* ճիշտ այնպես, ինչպես Հիսուսը հակառակվեց սատանային Աստծո Խոսքով Իր անապատային փորձությունների ժամանակ: Հիսուսը չխնդրեց *Աստծուն* հեռացնել այդ հարձակումները. Նա անձամբ հրամայեց սատանային՝ հաստատակամ և միանշանակ կերպով:

## ԵՂԻԱՅԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ

Ես խրախուսում եմ, որ կարդաք Գ Թագավորաց 17-19 գլուխները: Դուք կտեսնեք Եղիա մարգարեի բախումը երկչոտության հետ (նման իմ փորձառությանը)՝ Իսրայելի Հեզաբել թագուհու պատճառով:

Այդ մեծ մարգարեն խիզախորեն ընդդիմացավ Իսրայելի ժողովրդին Կարմեղոս սարի վրա. նրան հակառակվում էին 850 սուտ մարգարե, Աքաաբ թագավորը և թագավորի ծառաները: Աստված կրակով պա-

տասխանեց Եղիայի աղոթքին՝ ամբողջ ազգի ներկայությամբ: Եղիան նույնիսկ պատվիրեց ժողովրդին մահապատժի ենթարկել բոլոր սուտ մարգարեներին: Նա ազդեցիկ կերպով գործում էր իր պարգևով: Դրանից հետո աղոթեց, և երեք ու կես տարի տևող երաշտն ավարտվեց: Որպես եզրափակում՝ նա վազելով առաջ անցավ թագավորական կառքից: Այդ ամենը տեղի ունեցավ մեկ օրում: Ինչպիսի՜ ծառայողական օր:

Բայց մինչև արևամուտը Հեզաբելը լսեց տեղի ունեցածի մասին, և սկսվեց իրական պայքարը.

> «Հեզաբելն ուղարկեց Եղիային հետևյալ ուղերձը. «Թող որ աստվածները զարկեն ինձ և նույնիսկ սպանեն, եթե վաղը մինչև այս ժամը ես սպանած չլինեմ քեզ, ինչպես որ դու սպանեցիր նրանց»» (Գ Թագավորաց 19.2, NLT):

Մինչև Հեզաբելի սպառնալիքը մեկնաբանելը, թույլ տվեք ասել, որ հոգիները նման են ալեվարողների: Ալեվարողներին հարկավոր են ալիքներ՝ սահելու համար. հոգիներին հարկավոր են բառեր՝ գործելու համար: Գրված է. «Ոչ մի զենք՝ ուղղված քո դեմ, հաջողություն չի ունենա: *Դու կլռեցնես* ամեն մի ձայն, որը բարձրանում է՝ քեզ մեղադրելու համար: Տիրոջ ծառաներն են վայելում այս առավելությունները» (Եսայի 54.17, NLT): Ուշադրություն դարձրեք, որ մենք պետք է լռեցնենք ամեն մի ձայն, որը բարձրանում է մեր դեմ: Սա մեր գործն է, ոչ թե Աստծունը: Հիսուսը չխնդրեց Աստծուն լռեցնել սատանային անապատում: Մենք նույնպես չպետք է այդպես վարվենք, երբ մեզ վրա հարձակում է գալիս:

Ակնհայտ է, որ Հեզաբելի խոսքերում երկչոտության ազդեցիկ հոգի կար: Ուշադրություն դարձրեք, թե ինչպես արձագանքեց Եղիան, հենց որ այդ խոսքերը հասան նրան. «Եվ այս բանը տեսնելով՝ վեր կացավ գնաց՝ իր անձն ազատելու համար» (Գ Թագավորաց 19.3):

Այն մարդը, որն ընդդիմացել էր ամբողջ ազգին, սուտ մարգարեներին և թագավորին, փախուստի դիմեց: Նա ճանապարհվեց Իսրայելի մի ծայրից մյուսը և գնաց անապատ՝ մեկ օրվա ճանապարհ անցնելով՝ նստեց մի ծառի տակ և *աղոթեց՝ մահ խնդրելով:*

Մի՞թե խոսքը նույն մարդու մասին է: Ի՞նչ է տեղի ունենում: Ակնհայտ է, որ նա շփոթված էր, ճնշված էր, անհույս էր և կորցրել էր իր տեսիլքը: Սրանք երկչոտության հոգու ախտանիշներն են: Ցավալի իրականությունն այն է, որ շատերը պայքարում են ախտանիշների հետ, փոխարենը ընդդիմանան դրանց ետևում կանգնած հոգուն:

Անտեղյակության պատճառով, ես նույնպես տարիներ շարունակ պայքարում էի այս ախտանիշների հետ, մինչև այն երեկոն, երբ Աստված բացահայտեց այդ չար հոգու ճանապարհները: Ես չէի կարողանում օգտագործել իմ պարգևը և չէի հասկանում, թե ինչու:

Եղիան հանձնվել էր, և Աստված ճանապարհորդության ուղարկեց վհատված մարգարեին: Մի հրեշտակ հայտնվեց և կերակուր տվեց նրան՝ դեպի Սինա սարը 40 օր տևող ճանապարհորդության համար: Հենց որ նա տեղ հասավ, Աստծո առաջին հարցը հետևյալն էր. «Ի՞նչ ես անում այստեղ, Եղիա՛» (Գ Թագավորաց 19.9, NLT):

Ի՞նչ: Սպասե՛ք: Աստված պատվիրեց մի հրեշտակի կերակուր տալ Եղիային ճանապարհի համար, որպեսզի Եղիան տեղ հասներ: Բայց տեղ հասնելուն պես, Աստված հարցրեց, թե ինչու էր նա այդտեղ: Մի՞-թե Աստված տառապում է շիզոֆրենիայով:

Ո՛չ. մենք պետք է հասկանանք, որ երբ երկչոտությունը հաղթում է մեզ, Աստված հաճախ ուղարկում է մեզ չեզոք վայր, որպեսզի ծառայի մեզ, քանի որ Նա սիրում է մեզ: Ես տեղյակ չէի, թե ինչ էր կատարվում ինձ հետ այդ հավաքույթների ժամանակ, բայց չեմ կարծում, որ Եղիան նույնպես տեղյակ չէր: Նա գիտեր, թե ինչպես համարձակ ընդդիմանալ հակառակությանը, բայց նա սարսափած էր այդ թագուհուց:

Մենք պետք է հասկանանք, թե ինչ նկատի ուներ Աստված Իր հարցմամբ: Նա հարցրեց, թե ինչու Եղիան չընդդիմացավ այդ թագուհուն, քանի որ հենց Հեզաբելն էր հրահրում ամբողջ չարիքը: Անհրաժեշտ էր կանգնեցնել հենց նրան, բայց փոխարենը՝ Եղիան փախուստի դիմեց նրանից:

Փոխարենը ենթատեքստում գտնվող հարցին պատասխանելը, Եղիան փոխեց թեման՝ տրտնջալով, որ նա միակ մնացած մարդն էր, ով ճշմարտապես ծառայում էր Աստծուն: Նա ներկայացրեց մի դասական զգայացունց պատմություն.

> «Ես նախանձավոր կերպով ծառայեցի Ամենակարող Տեր Աստծուն: Բայց Իսրայելի ժողովուրդը խախտեց իր ուխտը Քեզ հետ, նրանք քանդեցին Քո զոհասեղանները և սպանեցին Քո մարգարեներից յուրաքանչյուրին: Ես միակն եմ, որ մնացել եմ, և հիմա նրանք փորձում են ինձ էլ սպանել» (Գ Թագավորաց 19.10):

Աստված լիովին անտեսեց այս պատասխանը և կրկին տվեց նույն հարցը. «Ի՞նչ ես անում այստեղ, Եղիա՛» (Գ Թագավորաց 19.13, NLT): Եվ կրկին, Եղիան ներկայացրեց նույն զգայացունց պատմությունը (կարդացե՛ք 14-րդ խոսքը): Նա հանձնվել էր և չէր ցանկանում գործ

ունենալ ներկա չարիքի ետևում կանգնած իրական չարիքի հետ:

Աստված ևս մեկ անգամ ոչ մի ուշադրություն չդարձրեց նրա՝ «վա՜յ ինձ» ոճով ներկայացված պատմությանը և տվեց մի ապշեցուցիչ պատվեր.

> «Վերադարձի՛ր նույն ճանապարհով, որով եկար, և ճանապա՛րհ ընկիր դեպի Դամասկոսի անապատ: Երբ տեղ հասնես, օծի՛ր Ազայելին՝ որպես Ասորեստանի թագավոր: Դրանից հետո օծի՛ր Նամեսիի թոռ Հեուին՝ որպես Իսրայելի թագավոր, և օծի՛ր Սափատի որդի Եղիսեին՝ Աբել-մաուլա քաղաքից, *քեզ փոխարինելու համար՝ որպես Իմ մարգարե»* (Գ Թագավորաց 19.15,16, NLT):

Դուք ուշադրություն դարձրի՞ք «քեզ փոխարինելու համար՝ որպես Իմ մարգարե» բառերին: Աստված կարգեց Եղիսեին՝ Եղիայի փոխարեն, քանի որ Եղիան տեղի էր տվել երկչոտությանը և պարտվել էր: Եթե շարունակեք կարդալ Դ Թագավորաց գիրքը, դուք կտեսնեք, որ Եղիան անցկացրեց իր հաջորդ չորս տարվա մեծ մասը՝ սովորեցնելով իրեն փոխարինողին: Եվս մեկ ցնցող լուրն այն է, որ նա չօծեց Ազայելին և Հեուին: Դա արեց Եղիսեն՝ նրան փոխարինողը:

Եղիսեն տեղի չտվեց ոչ մի տեսակի երկչոտության: Նա համարձակ էր և չէր նահանջում ոչ մի չարիքի առջև: Աստված ասաց նրա մասին. «Հեուի սրից ազատվողին Եղիսեն կմեռցնի» (Գ Թագավորաց 19.17): Հեուն և Եղիսեն գահընկեց արեցին Աքաաբի և Հեզաբելի չար դինաստիան: Ես համոզված եմ, որ սկզբնականորեն դա Եղիայի առաջադրանքն էր, բայց երկչոտության պատճառով այդ ծրագիրը փոխվեց:

Մենք գիտակցում ենք, որ Եղիան, ի տարբերություն ծույլ ծառայի, ճանաչում էր Աստծո բնավորությունը: Այնուամենայնիվ, նրա պայքարը հստակ ցույց է տալիս, թե ինչ կարող են անել վախը և երկչոտությունը մեր պարգևի և կոչման հետ:

Անչափ կարևոր է հաստատական որոշում կայացնել, որ մենք չենք նահանջելու, երբ բախվենք վախին և երկչոտությանը: Աստված կաստարի մեզ, երբ դուրս գանք այս ուժերի դեմ: Վախը կարելի է պարտության մատնել, բայց մենք պետք է ճակատային հարված հասցնենք դրան՝ օգտագործելով Աստծո Խոսքը և խոստումները:

Ես կրկնում եմ. Աստված ձեր կողմից է: Նա հավատում է ձեզ: Նա ցանկանում է, որ դուք բարգավաճեք այն պարգևներով, որոնք տվել է ձեզ: Մի՛ նահանջեք: Թույլ մի՛ տվեք ոչ մի մարդու կամ երևույթի ետ պահել ձեզ ձեր առաքելությունից և կոչումից:

## ՄՏՈՐԵՔ

1. Վախը գողացել է բազմաթիվ երազանքներ: Այն նենգ է, ձգտում է վերահսկել ձեզ, և եթե դուք սխալ կերպով արձագանքեք վախին, այն կշեղի ձեր կյանքի ընթացքը: Ինչպե՞ս է վախը փորձել շեղել ձեր կյանքի ընթացքը:

2. Տիմոթեոսին զգուշացում տրվեց իր պարգևը չանտեսելու մասին: Ինչո՞ւ է վտանգավոր ձեր պարգևն անտեսելը: Համաձայն բերված օրինակների, այն անտեսելու պատճառներից ո՞րն ավելի մեծ արձագանք գտավ ձեզանում: Ինչո՞ւ:

3. Երկչոտությունը հոգի է: Ի՞նչ կերպերով եք դուք հանդիպել այդ հոգուն: Ի՞նչ է պետք անել՝ այդ հոգուն հաղթելու և պարտության մատնելու համար:

*«Մանրակրկիտորեն հետազոտեք, թե ով եք դուք և ինչ աշխատանք է տրվել ձեզ, իսկ հետո խորասուզվեք դրանում: ...Ձեզնից յուրաքանչյուրը պետք է պատասխանատվություն ստանձնի՝ իր կյանքում հնարավորինս լավագույն ստեղծարար աշխատանք կատարելու համար»:*

– Գաղատացիների 6.4,5, MSG

# 14

# Բացահայտե՛ք և զարգացրե՛ք ձեր պարգևները

Այժմ կխոսենք Աստծուց մեզ տրված պարգևները բացահայտելու և զարգացնելու մասին: Ինչպես արդեն նշել եմ, իմ նպատակը բնական պարգևների և կարողությունների զարգացման մասին խոսելը չէ: Բավականաչափ սովորելու դեպքում գրեթե յուրաքանչյուրը կարող է մասնագիտանալ գրեթե ցանկացած բնագավառում:

Իմ ընտանիքը կարող է վիճարկել այս պնդումը, հատկապես երբ խոսքը երգելու մասին է, և միգուցե նրանք ճիշտ են: Այնպես որ, թույլ տվեք ավելի իրատեսական օրինակ բերել: Եթե ես սովորեի տասը հազար ժամվա ընթացքում որևէ երաժշտական գործիք նվագել, ես կարող էի վերածվել սարսափելի երաժիշտից միջին երաժշտի: Իմ ծախսած ժամանակի և ջանքերի շնորհիվ, իմ դաշնամուր կամ կիթառ նվագելը կարող է հաճելի դառնալ, բայց նույնիսկ այդ կենտրոնացած պարապմունքներից հետո այն չի դառնա *խարիզմա*, որը կխթանի Աստծո թագավորությունը կառուցելու իմ կոչումը:

## ԱՍՏԾՈ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Այս գլխի առաջին մասում կքննարկենք Պողոսի հետևյալ խոսքերը. «Մանրակրկիտորեն հետազոտեք, թե ով եք դուք և ինչ աշխատանք է տրվել ձեզ»: Չկան բանաձևեր՝ ձեր կոչումը և դրան ուղեկցող պարգևները բացահայտելու համար: Թեև կան բազմապիսի ձեռնարկներ, որոնք կարող են օգնել ձեզ, որ բացահայտեք, թե ինչն է ձեզ մոտ ավելի

լավ ստացվում: Երբ խոսքը հավիտենական ազդեցություն թողնելու մասին է, անհրաժեշտ է մեր Արարչի աջակցությունը՝ ձեր *կոչումը* և *խարիզման* բացահայտելու համար:

Երբեմն հեշտ է հասկանալ Աստծո անմիջական գործակցությունը ձեր պարգևները բացահայտելու հարցում, ինչպես, օրինակ, երբ Նա պատվիրեց ինձ գրել: Ես երբեք չէի փորձի գրել, եթե խոսք չստանայի աղոթքի ժամանակ՝ 1991 թվականի ամռանը: Ոչ մի գիրք կամ դասընթաց չէր կարող համոզել ինձ գրել, և, անկասկած, ես պատահաբար չէի հանգի այդ մտքին: Որպես օրինակ, Դավիթ թագավորը երբեք չէր իմանա, որ ինքը պատերազմող էր, եթե չպաշտպաներ իր ոչխարներին արջից և առյուծից: Այդ դեպքերից հետո անհրաժեշտություն առաջացավ, որ ինչ-որ մեկն ազատեր Իսրայելին փղշտացիներից: Դավթին նախկինում հանդիպած վտանգավոր գիշատիչները պարզապես աստիճաններ էին, որոնք մոտեցրին նրան Գողիաթի հետ կռվելուն այն ժամանակ, երբ ամբողջ Իսրայելը թաքնված էր: Աստված թույլ տվեց Դավթին բացահայտել իր պարգևները՝ իրեն շրջապատող հրատապ կարիքների միջոցով:

Մտածե՛ք Գեդեոնի մասին: Նա ավելի շուտ նման էր ինձ: Աստված պետք է մի քանի անգամ համոզեր նրան՝ բրդերի միջոցով, որ նա կանչված էր՝ որպես պատերազմող:

Սկսենք հենց սկզբից: Անչափ կարևոր է փնտրել Աստծո գործակցությունը և հավատալ դրան ձեր *խարիզման* բացահայտելու հարցում: Սուրբ գիրքը պնդում է, որ Աստված վարձատրում է նրանց, ովքեր ջանասիրաբար և հավատքով փնտրում են Իրեն: Գրված չէ, որ Աստված վարձատրում է նրանց, ովքեր անփութորեն են փնտրում Իրեն՝ տարակուսելով և կասկածելով (Եբրայեցիների 11.6-ի հեղինակի շրջասությունը): Նույնպես, Հիսուսը պատվիրում է մեզ.

> «Շարունակեք խնդրել և կստանաք այն, ինչ խնդրում եք: Շարունակեք փնտրել և կգտնեք: Շարունակեք թակել, և դուռը կբացվի ձեզ համար: Որովհետև յուրաքանչյուրը, ով խնդրում է, ստանում է: Յուրաքանչյուրը, ով փնտրում է, գտնում է: Եվ յուրաքանչյուրին, ով թակում է, դուռը կբացվի» (Մատթեոս 7.7,8, NLT):

Մենք պետք է ամբողջ սրտով ցանկանանք իմանալ մեր *խարիզման:* Հուսով եմ՝ այս գիրքը ձեր մեջ բորբոքում է կրակոտ ցանկություն՝ ձեր պարգևները բացահայտելու և օգտագործելու համար: Այն թույլ չի տա ձեզ անհոգ կերպով խնդրել, փնտրել և թակել. փոխարենը, դուք

հաստատական կլինեք, ինչպես որ Հիսուսը պատվիրում է այս խոսքում: Այնպես չէ, որ Աստված ինչ-որ բան է պահում ձեզնից: Նա ցանկանում է, որ ձեզանում ձևավորվի ջերմեռանդություն այն բանի հանդեպ, ինչ դուք խնդրում եք:

Բարձր դասարաններում ես ցանկանում էի մեծ հզորություն ունեցող աստղադիտակ ունենալ, քանի որ սիրում էի աստղագիտությունը և ցանկանում էի ուսումնասիրել գիշերային երկինքը: Որակյալ աստղադիտակը ֆինանսական առումով լիովին անհասանելի էր ինձ համար, բայց ես շարունակ աստղագիտության մասին գրքեր և ամսագրեր էի կարդում: Ես ամեն անգամ չորս-հինգ գիրք էի վերցնում գրադարանից, կարդում էի, երբ ազատ ժամանակ էի ունենում, երբեմն՝ մի քանի անգամ, իսկ հետո վերադարձնում էի և վերցնում էի այլ գրքեր: Այդ ընթերցանությունը աստղադիտակ ունենալու գրեթե հուսահատության հասնող ցանկություն ձևավորեց իմ մեջ:

Ի վերջո, իմ ձգտումը դրդեց ինձ մի անսովոր գաղափարի, որպեսզի գումար կուտակեի իմ երազանքի աստղադիտակի համար: Ես թենիսի մարզիչ էի մի լողի և թենիսի ակումբում և դասեր էի տալիս միայն ամառային արձակուրդների ժամանակ: Ես արեցի այնպիսի բան, ինչը ոչ ոք երբեք չէր արել մեր ակումբում: Ակումբի խորհրդի թույլտվությամբ որոշեցի մասնավոր դասեր տալ աշնան ամիսներին՝ իմ դպրոցական դասերից հետո: Եթե իմ ծրագիրը հաջողվեր, ես կվաստակեի բավականաչափ գումար՝ աստղադիտակ գնելու համար: Եվ ամեն ինչ ստացվե՛ց: Հավատացե՛ք ինձ, ես երբեք անփութորեն չէի վերաբերվում այդ աստղադիտակին: Եթե ինչ-որ մեկը պարզապես աստղադիտակ նվիրեր ինձ, մինչև որ իմ ցանկությունն այդ աստիճան ուժգնանար, միգուցե այն ծանձրացներ ինձ, երբ իմ սկզբնական ոգեշնչումն անցներ:

Աստված դժվարությամբ չի լսում: Եվ Նա ոչինչ չի պահում ձեզնից: Նա ցանկանում է, որ դուք սովորական չհամարեք այն պարգևները, որոնք տալիս է ձեզ՝ Իր ժողովրդին կառուցելու համար: Ձեր ձգտումը պետք է լինի ավելի ուժգին, քան այն հակառակությունը, որին դուք բախվում եք ձեր երազանքների ճանապարհին: Այնպես որ, թույլ տվեք, որ այդ ցանկությունն ավելանա և ինքնաբերաբար դրդի ձեզ, որ ջերմեռանդորեն ձգտեք իմանալ ձեր *խարիզման* և տաղանդները:

Հաջորդը՝ մենք պետք է հասկանանք, որ չկա որևէ նախորոշված հաջորդականություն, որով Աստված պատասխանում է մեզ. Նրա պատասխանն այլ է յուրաքանչյուր զավակի համար: Երբեմն ինձ համար տարօրինակ է, որ մենք շարունակ խոսում ենք Հիսուսի հետ «անձնական հարաբերություն» ունենալու մասին, բայց երբ անհրաժեշտ է

լսել Աստծուն, մեր դեպքում՝ որպեսզի իմանանք մեր *խարիզմայի* կամ պարգևների մասին, մենք ցանկանում ենք բանաձև ունենալ: Աստված ցանկանում է անձնապես հաղորդակցվել մեզ հետ: Նա ցանկանում է գաղտնի պահել դա ձեր և Իր միջև: Նա նույն ձևով չի պատասխանում Իր թանկ զավակներից յուրաքանչյուրի աղոթքներին: Ահա թե ինչու է Հիսուսը պատվիրում մեզ շարունակել խնդրել, փնտրել և թակել: Գոյություն ունի Նրա կամքի «որոնում», ինչն իրականում շատ օգտավետ է մեզ համար:

Մեր որոնման մեջ մենք պետք է հարցեր տանք ինքներս մեզ և այլ մարդկանց: Այս ամենը որոնման ընթացքի մասն է: Մենք չենք փնտրում մարդկային իմաստություն, այլ ցանկանում ենք լսել Աստծո ձայնը այն մարդկանց ձայների մեջ, որոնց հետ խոսում ենք:

Կարևոր է, որ իմանանք, թե ում հետ խոսենք: Մենք պետք է գտնենք այնպիսի մարդկանց, ովքեր խրախուսում են մեզ, բայց չեն վախենում խոսել ճշմարտությունը: Ես կցանկանայի ասել, որ նման մարդիկ շատ են, սակայն նրանք հազվագյուտ են: Ես ճանաչում եմ մարդկանց, որոնց կարող եմ այցելել, և նրանք միշտ կասեն ինձ այն, ինչ ես ուզում եմ լսել: Կան նաև մարդիկ, որոնք, թվում է, վատատես են, քննադատող են և բացասաբար են տրամադրված գրեթե ամեն ինչի հանդեպ: Այս երկու տեսակի մարդիկ էլ չունեն տեսիլք. այնպես որ, խուսափե՛ք նրանցից: Գտե՛ք հոր կամ մոր՝ հավատքի մեջ, կամ որևէ իմաստուն մարդու, ով ավելի երկար ճանապարհ է անցել, քան դուք, ով սխալներ է գործել և սովորել դրանցից:

Կարևոր է, որ մարդիկ, ում դուք կվստահեք, չնայեն կյանքին անտարբերությամբ կամ ցինիզմով, քանի որ նման արհամարհական և կասկածամիտ վերաբերմունքը հատուկ է իրենց ներսում վիրավորանք պահող մարդկանց: Փնտրե՛ք այնպիսի մարդու, ով արագորեն ներում է, ով կանգ չի առել միատեսակ կրոնական կյանքի մեջ, այլ առաջադիմում է Աստծո Հոգու ժամանակների և թարմ շարժումների մեջ: Ամենից կարևորը, այդ մարդը պետք է նայի կյանքին հավիտենության տեսանկյունից: Երբ գտնեք նման մարդու, արեք ամեն ինչ, որպեսզի պահպանեք և արժևորեք հարաբերությունը նրա հետ:

Կան շատ մարդիկ, որոնք ունեն այս աշխարհի իմաստությունը, բայց զուրկ են հավիտենական տեսանկյունից: Դուք կարող եք վստահել նրանց խորհուրդներին միայն որոշակի չափով: Զգույշ եղեք, երբ լսում եք նրանց, և մշտապես զտեք նրանց խորհուրդներն Աստծո Խոսքով և աղոթքով:

Ձեր ծնողները, կողակիցը և հովիվներն ի սրտե շահագրգռված են

ծեր բարեկեցությամբ և սովորաբար իմաստուն խորհուրդներ են տալիս, թեև լինում են բացառություններ: Երբ երիտասարդ էի, ասում էի հորս, որ երազում եմ ծառայող դառնալ: Նրա սերունդը հակված էր ձգտել ապահով կյանքի (ինչը թուլություն է հավատքի կյանքի դեպքում): Հայրս ասաց. «Որդի՛ս, այդ ճանապարհի մեջ չկա ապահովություն»: Նա առաջարկեց ինձ ինժեներ դառնալ, քանի որ ես բարձր առաջադիմություն ունեի մաթեմատիկայից և բնագիտական առարկաներից, և ինքն էլ 40 տարի ինժեներ է աշխատել: Դա անվտանգ կարիերա էր: Ես չէի պատկերացնում, որ համաձայնում էի վեց թշվառ տարիների համալսարանում: Թեև օժտված էի այդ բնագավառում, այնուամենայնիվ, դժբախտ էի զգում ինձ, քանի որ Աստված չէր կանչել ինձ դրա համար:

Իմ առաջին աշխատանքը՝ որպես ինժեներ, «IBM» ընկերությունում էր: Մեկ անգամ տնօրենս տարավ ինձ իր գրասենյակ և ասաց.

- Բիվե՛ր, ինչո՞ւ ես ինժեներ դարձել: Դու հաղորդակցվող մարդ ես. դու պետք է զբաղվես այնպիսի գործով, որտեղ կա շփում մարդկանց հետ:

Հայտնի ծառայողները նույնպես մի կողմ էին տանում ինձ բազմաթիվ հավաքույթների ժամանակ և ասում էին.

- Որդի՛ս, ես տեսնում եմ, որ քո կյանքում կանչ կա Աստծուց. դու պետք է քարոզես Ավետարանը:

Իմ անձնական աղոթքների ժամանակ Աստված շարունակ մղում էր իմ սիրտը ծառայության, թեև ես չէի ցանկանում որևէ կապ ունենալ դրա հետ: Բոլոր ծառայողները, որոնց ես հանդիպել էի, տարօրինակ էին թվում ինձ: Բայց իմ սիրտը, միևնույն է, զգայուն էր մեր Արարչի հանդեպ: Իմ փրկվելուց առաջ ես մեկ շաբաթ հաճախել էի կաթոլիկ սեմինարիա, և ինձ իսկապես թվացել էր, թե կանչված էի ծառայության համար: Բայց ես սարսափում էի այն մտքից, որ, դառնալով կաթոլիկ քահանա, երբեք չէի ամուսնանալու:

Այնուամենայնիվ, ես շարունակ հաստատություններ էի ստանում, ինչն ի վերջո օգնեց ինձ մի կողմ դնել հորս խորհուրդը: Ես անչափ հարգում էի նրան, ինչը հաճեցնում էր Աստծուն, բայց իմ ուսման և որպես ինժեներ աշխատելու ընթացքում գիտակցում էի, որ ինչ-որ բան սարսափելիորեն սխալ էր: Քանի որ շարունակ խնդրում և որոնում էի Աստծո առաջնորդությունը, Նա թույլ չտվեց հետևել սխալ առաջնորդության (նույնիսկ իմ բարի կամեցող հոր խորհրդին) և հստակ հայտնեց Իր կամքը:

Երբ ես արդեն համոզված էի իմ կոչման մեջ, ներսումս առաջացավ

կրակոտ ցանկություն, որն ավելի քան մեկուկես տարի տևող որոնումների արդյունքն էր: Մնացել էր երեք եռամսյակ՝ իմ ինժեներական կրթությունն ավարտելու համար: Ես որոշեցի ավարտել ուսումս և ծառայող դառնալ: Դա ճիշտ որոշում էր, քանի որ ես սովորեցի այնպիսի մարտավարություններ, որոնք ինձ չէր սովորեցնի Աստվածաշնչյան դպրոցը: *Աստված կօգտագործի բոլոր փորձառությունները՝ մեզ կրթելու համար:*

Գոյություն ունի ձեր պարգևը բացահայտելու ևս մեկ անչափ կարևոր գործոն՝ լինել տնկված առողջ տեղական եկեղեցում: Սուրբ գիրքը հայտարարում է. «Տիրոջ տան մեջ *տնկվածները* մեր Աստծո սրահներում *կբուսնեն»* (Սաղմոս 92.13): Եթե բամբակի սերմ ցանեք, հողից դդում դուրս չի գա: Հողն առողջ տեղական եկեղեցին է, և երբ դուք նվիրվեք, Աստծուց ձեզ տրված պարգևները կարտահայտվեն այնտեղ: Անկախ այն բանից՝ դուք կանչված եք գործարար, կրթական, կառավարական, սպորտի, թե այլ ոլորտներում, դուք ծաղկունք կապրեք: Դա Աստծո ծրագիրն է:

## ՀԱՐՑԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՔ ՏԱԼ ԻՆՔՆԵՐԴ ՁԵԶ ԵՎ ԻՄԱՍՏՈՒՆ ԸՆԿԵՐՆԵՐԻ

Խոսենք հարցեր տալու մասին՝ թե՛ ինքներդ ձեզ, թե՛ իմաստուն ընկերների: Ճիշտ մարդկանց տրված ճիշտ հարցերը կօգնեն ձեզ հասկանալ, թե ինչով եք դուք օժտված: Ահա որոշ օրինակներ:

### Ի՞նչն է բնականորեն լավ ստացվում ձեզ մոտ

Սա լավ սկզբնակետ է: Միգուցե ձեր պարգևը թվերի աշխարհն է, պերճախոս կերպով նախադասություններ կառուցելը, շինարարությունը, տեսահոլովակներ ստեղծելը, հագուստ մոդելավորելը կամ միջոցառումներ կազմակերպելը: Միգուցե դուք ունեք բնական սպորտային կարողություններ, բույրեր տարբերող նուրբ հոտառություն կամ մանրուքներ նկատող սուր աչք: Ինչպիսի ուժեղ կողմեր էլ ունենաք, բացահայտե՛ք դրանք:

Եթե դուք երաժշտական լսողություն ունեք և ցանկանում եք առաջնորդել մարդկանց Աստծո ներկայության մեջ, դա կարող է նշանակել, որ միգուցե կանչված եք երկրպագելու համար կամ պետք է ներգրավված լինեք որևէ երաժշտական ծառայության մեջ: Նույնպես, եթե հետաքրքրված եք բժշկությամբ, դուք պետք է հարցնեք Աստծուն՝ արդյո՞ք կանչված եք առողջապահության բնագավառում: Այս ցուցակն անվերջ է:

Բայց այս կռահումները չպետք է վերջին խոսքը լինեն ձեզ համար: Ես շատ լավ թենիսիստ էի: Ես սկսեցի թենիս խաղալ մի թիմում, որը Միացյալ Նահանգների «Ուսանողական սպորտաձևերի ազգային ասոցիացիայի» Առաջին դիվիզիոնի կազմում էր: Ես նաև մասնակցել եմ «Միացյալ Նահանգների թենիսի ասոցիացիայի» և «Պատանեկան Դեվիսի գավաթի» մրցաշարերին: Ինչպես արդեն նշեցի, երեք տարի թենիսի պրոֆեսիոնալ մարզիչ էի: Բացի այդ, ես հաղթել էի Արևմտյան Վիրջինիա նահանգի բարձր դասարանցիների թենիսի մրցաշարը: Բայց երբ աղոթում էի, ես գիտեի, որ իմ կոչումը պրոֆեսիոնալ թենիսը չէր:

Սակայն ես մի ընկեր ունեմ, որի անունը Աարոն Բեդլի է: Նա ականառու գոլֆ խաղացող է և մասնակցում է «Պրոֆեսիոնալ գոլֆ խաղացողների ընկերակցության» մրցաշարին: Բայց 2004 թվականին, երբ դեռ երկրորդ տարին էր, ինչ նա այդ մրցաշարում էր, բախվել էր դժվարությունների (նա հազիվ կարողացավ կրկին որակավորում ստանալ և վերադառնալ 2005 թվականին, քանի որ հայտնվել էր այդ մրցաշարի ցուցակի 124-րդ տեղում): Երբ նրա ծանր տարին մոտենում էր ավարտին, նա որոշ ժամանակ մեր տանն էր՝ այլ մրցաշարում խաղալու ընթացքում, որից, ցավոք, դուրս մնաց: Մենք միասին ինքնաթիռով ուղևորվեցինք Լաս Վեգաս, որտեղ ես պետք է քարոզեի մի համաժողովում: Այդ ծառայությանը Աստված չորս անգամ խոսեց նրա սրտի հետ. «Ես չեմ կանչել քեզ ծառայության մեջ. Ես կանչել եմ քեզ *գոլֆի մեջ»:*

Աարոնը չէր ներդնում իր բոլոր ուժերը գոլֆի մեջ, քանի որ ցանկանում էր զբաղվել նույն բանով, ինչով ես էի զբաղվում: Նա ցանկանում էր օգտագործել իր ժամանակի կեսը, որպեսզի ճանապարհորդեր և քարոզեր համաժողովներում և եկեղեցիներում, և մյուս կեսը, որպեսզի գոլֆ խաղար: Այդ երեկո նա հստակ որոշեց իր սրտում, որ լիովին տրվելու է իր կոչմանը և պարգևին: Երկու տարի անց նա արդեն 16-րդ տեղում էր գոլֆ խաղացողների համաշխարհային վարկանիշային աղյուսակում, իսկ հետագայում նա չորս անգամ հաղթեց «Պրոֆեսիոնալ գոլֆ խաղացողների ընկերակցության» մրցաշարը, ինչպես նաև «Ավստրալիան մասթերս» մրցաշարը: Նա 15 տարուց ավելի է, որ մասնակցում է մրցաշարերի և դեռ շարունակում է խաղալ: Նրա ազդեցությունը մեծացել է, և նա ունեցել է անթիվ հնարավորություններ ծառայելու և քարոզելու նրանց, ովքեր ոչ մի եկեղեցի չեն հաճախում:

Ես Ալ անունով մի հովիվ ընկեր ունեմ: Տարիներ առաջ նրա եկեղեցում կար մի մարդ, ով սիրում էր սովորեցնել Աստծո Խոսքը և շատ հմուտ էր դրանում: Նա ցանկանում էր աշխատել եկեղեցում որպես

հովիվ և ուսուցիչ: Նա նույնպես եզակիորեն օժտված էր ավտոմեքենաներ նորոգելու մեջ: Իրենց քաղաքի մյուս մասում գտնվող մի մեծ եկեղեցի հովվական և ուսուցչական պաշտոն խոստացավ նրան: Նա հրավիրեց Ճաշի հովիվ Ալին՝ նրան այդ մասին պատմելու համար: Ալն իմաստուն անձնավորություն է, և նա ասաց այդ մարդուն.

- Ես աղոթել եմ քեզ համար և չեմ զգում, որ դու կանչված ես սովորեցնելու Աստծո Խոսքը լրիվ դրույքով: Դու մեքենաների հետ աշխատելու բացառիկ տաղանդ ունես:

Այդ մարդը չլսեց իր հովվի խորհուրդը և գնաց այդ եկեղեցի:

Մեկ տարի անց նա հայտնվեց թշվառ վիճակում: Նրան դեռ պաշտոնապես չէին առաջարկել այդ ուսուցչական աշխատանքը, և նա հայտնվել էր լուրջ ամուսնական և ֆինանսական խնդիրների մեջ: Մի կիրակի եկեղեցում Տերը խոսեց նրա հետ. «Ես երբեք չէի կանչել քեզ հովիվ լինելու համար: Ես կանչել էի քեզ որպես մեխանիկ, ով կսովորեցներ Աստծո Խոսքն իր տեղական եկեղեցում»:

Այդ մարդը գնաց հովիվ Ալի մոտ, ապաշխարեց՝ նրա խորհրդին չհետևելու համար, և վերադարձավ իր տեղական եկեղեցի: Նա կրկին կենտրոնացավ մեքենաներ նորոգելու իր աշխատանքի վրա:

Մի երեկո Աստված երազ տվեց նրան այն մասին, որ կարելի է միացնել համակարգիչը մեքենային՝ շարժիչի խնդիրներն ախտորոշելու համար: Նա մի ընկեր ուներ, ով հասկանում էր համակարգիչներից, և երկուսով համակարգչային ախտորոշման ստուգիչ սարք ստեղծեցին: Պարզվեց, որ այդ ստուգիչ սարքը կարող է որոշել մեքենայի խնդիրները սովորական մեթոդներից չորս անգամ արագ: Ժամանակի ընթացքում այդ մարդն ավտոնորոգման կետեր բացեց ամբողջ Հյուսիսային Կարոլինա նահանգում՝ իր նոր գյուտի շնորհիվ: Մեկ օր նա մոտեցավ հովիվ Ալին, ժպտաց և ասաց.

- Ես կանչված եմ մեքենաներ նորոգելու համար:

## Ի՞նչն է առույգություն հաղորդում ձեզ

Մեկ օր իմ օգնականը խնդրեց ինձ գրանցել իմ սովորական աշխատանքային շաբաթվա պարտականությունների «առույգության չափը»: Նա առաջարկեց հետևյալ սանդղակը. այն առաջադրանքները, որոնք խլում էին իմ ուժերը, գնահատվելու էին -2-ով. այն առաջադրանքները, որոնք լիովին չէին խլում իմ ուժերը, գնահատվելու էին -1-ով. այն առաջադրանքները, որոնք մի փոքր առույգություն էին հաղորդում ինձ, գնահատվելու էին 1-ով, և, ի վերջո, այն առաջադրանքները, որոնք մեծ առույգություն էին հաղորդում ինձ, գնահատվելու էին 2-ով:

Կային մի քանի առաջադրանքներ, օրինակ՝ հանդիպումները ծառայության բաժինների հետ, ուղևորությունները, թղթաբանությունը, ճամպրուկ հավաքելը՝ ճանապարհորդելու համար, և այն ամենը, որոնք գնահատվեցին -2-ով և -1-ով: Մի քանիսը գնահատվեցին +1-ով, բայց ես անկեղծորեն +2-ով գնահատեցի միայն երկու բան՝ քարոզելը և գրելը: Արդյունքները զարմացրին ինձ:

Մտորելով այս բացահայտումների շուրջ՝ ես հասկացա, որ հաճախ, երբ գրում եմ, ես լիովին կորցնում եմ ժամանակի զգացողությունը: Երբեմն սկսում եմ գրել վաղ առավոտյան և չեմ հասկանում, որ արդեն ցերեկ է: Սովորաբար ես մտովի հոգնում եմ այդքան շատ գրելուց հետո, բայց նաև առույգ եմ:

Նույնը տեղի է ունենում, երբ քարոզում եմ: Անցյալում, երբ մենք չունեինք ժամանակային սահմանափակումներ, ես հաճախ քարոզում էի ավելի քան երկու ժամ: Ինձ համար դա ասես 30 րոպե լիներ, բայց չգիտեմ, թե ինչ էր մտածում իմ լսարանը:

Ես հետևում եմ, թե ինչպես է Ալեքը՝ մեր ստեղծարար որդին, ժամեր շարունակ աշխատում նորարարական նախագծերի վրա՝ լիովին կորցնելով ժամանակի զգացողությունը: Նա գերազանց արդյունքների է հասել մեր ծառայության ստեղծարար բաժնում: Ես հետևում եմ, թե ինչպես է Լիզան ժամեր շարունակ շփվում կանանց հետ հավաքույթներից հետո՝ լիովին մոռանալով ժամանակի մասին: Նա առույգանում է, երբ օգնում և վերականգնում է նրանց՝ զրույցների միջոցով:

Երբեմն Ալբերտ Էնշտեյնն աշխատում էր ժամեր շարունակ: Երբ նա ուժգին հոգնածություն էր զգում, վերցնում էր մի մետաղյա սկուտեղ և նստում էր աթոռին՝ պահելով այն ձեռքերով և հենելով ձեռքերն իր ծնկներին: Երբ խորը քուն էր մտնում, սկուտեղը սահում էր նրա ձեռքերից և ընկնում էր հատակին: Բարձր շրխկոցն արթնացնում էր նրան, և նա վերադառնում էր աշխատանքի:

Սա շատ հեշտ միջոց է՝ ձեր կոչումը որոշելու համար: Ձեր իրական պարգևները կոգեշնչեն ձեզ, նույնիսկ եթե դուք մտովի կամ ֆիզիկապես հոգնեք երկարատև աշխատանքից: Այն մարդկանց համար, որոնք բացահայտել են իրենց իրական պարգևը, մարզումների, մրցման կամ աշխատանքի ժամերը կարող են րոպեներ թվալ: Այնպես որ, հարցրեք ձեզ. «Ի՞նչն է առույգություն հաղորդում ինձ և պարբերաբար դրդում կորցնել ժամանակի զգացողությունը»:

Ձեր պատասխանը հավաստի ցուցիչ է ձեր պարգևի մասին:

## Ի՞նչն է գրավում ձեզ

Ի՞նչն է գրավում ձեր ուշադրությունը: Ի՞նչն է աշխուժացնում ձեզ: Երբ դուք երգում եք, ձեր սիրտն ուրա՞խ է: Դուք երգո՞ւմ եք, երբ ոչ ոք չի ուզում երգել: Ես գիտեմ, որ երբ ես եմ երգում, դա նման է ծանր աշխատանքի, որն արագ հոգնեցնում է ինձ: Դա իմ պարգևը չէ: Ես չեմ կարող նստել մի սենյակում և երգ կամ երաժշտություն գրել այլ մարդկանց հետ: Դա չի հետաքրքրում ինձ, բայց ես ճանաչում եմ մարդկանց, ովքեր սիրում են դա:

Ի՞նչ տեսակի ամսագրեր են հետաքրքրում ձեզ: Ի՞նչ տեսանյութերից եք դուք ոգեշնչվում «Յութուբ»-ում: Ի՞նչն է գրավում ձեր ուշադրությունը, երբ «Պինտերեստ»-ում եք: Ո՞ր առարկաներն էիք դուք ամենից շատ սիրում դպրոցում: Ի՞նչ գրքեր են գրավում ձեզ, երբ գրախանութ եք գնում:

Եվս մեկ կարևոր հարց. ի՞նչ կցանկանայիք անել, նույնիսկ եթե իմանայիք, որ ձեզ չեն վճարելու դրա համար: Պրոֆեսիոնալ մարզիկներից շատերը կմրցեին իրենց սպորտաձևում, նույնիսկ եթե նրանց չվճարեին: Ամեն շաբաթ առավոտյան հայրս նստեցնում էր ինձ և պատմում, թե ինչպես է աշխատում շոգեշարժիչը կամ որևէ այլ սարք: Հիշում եմ, որ մի շաբաթ առավոտյան նա շոգեկաթսա պատկերեց և ավելի քան մեկ ժամ բացատրեց դրա աշխատանքի ձևը: Ես լաց լինելու չափ ձանձրացել էի: Արդեն այդ ժամանակ պետք է հասկանայի, որ ինժեներ լինելն իմ կոչումը չէր: Ես այնքա՜ն էի սիրում հորս, որ չէի համարձակվում ասել նրան, որ տանել չէի կարողանում այդ դասերը: Ես մեծ սխալ գործեցի, երբ ինժեներ դարձա՝ ֆինանսական ապահովություն ունենալու համար: Մի՛ գործեք նույն սխալը:

Որքա՜ն մարդիկ են դժբախտ իրենց աշխատանքի մեջ, քանի որ կատարում են այն մեկ պատճառով՝ աշխատավարձ ստանալու համար:

Ինչպես արդեն նշեցի, տարիներ առաջ, երբ իմ հովվի կինն ասաց, որ նրանք չեն կարող պատշաճ կերպով վարձատրել ինձ, ես պատասխանեցի. «Միևնույն է՝ ես համաձայն եմ»: Ես պատրաստ էի աշխատել սովորականից ցածր վարձատրությամբ, քանի որ ինձ գրավում էր այդ ծառայությունը: Երբ ստացա այդ աշխատանքը, շաբաթական 70 ժամը, որի ընթացքում ես ծառայում էի իմ հովիվներին և նրանց հյուրերին, թռչում էր: Ես հաճախ էի ասում Լիզային, որ ոչ թե իմ հովիվները պետք է վճարեին ինձ, այլ ինքս պետք է վճարեի նրանց այն բանի համար, որ թույլ էին տալիս ինձ ծառայել իրենց:

Ես վարանում եմ՝ գրելով այս մասին, քանի որ դուք կարող եք

մտածել, որ պարծենում եմ, սակայն հուսով եմ, որ կհավատաք, որ իմ շարժառիթը նրանց օգնելն էր: Երբ մենք նոր էինք սկսել մեր ծառայությունը, Լիզան և ես որոշեցինք, որ իմ գրքերի վաճառքի հոնորարները փոխանցվելու են «Մեսինջեր ինտերնեյշնլ» ծառայությանը: Այժմ ես գրել եմ ավելի քան 20 գիրք և յուրաքանչյուրին տրամադրել եմ միջինը 400-450 ժամ՝ գրելու և խմբագրելու համար: Սա նշանակում է, որ գրելու մեջ ես ներդրել եմ 9.000 ժամ: Սա հավասար է ավելի քան երեք տարի շարունակ, օրական ութ ժամ գրելուն՝ ներառյալ շաբաթ և կիրակի օրերը: Ես արել եմ դա, քանի որ դա իմ պարգևն է, որն ընդլայնում է իմ կոչումը:

Կարող եմ անկեղծորեն ասել, որ եթե ես ընտրեի՝ կատարե՞լ այս աշխատանքը, թե՞ ստանալ տարեկան 200.000 դոլար՝ աշխատելով որպես ինժեներ, ես կրկին կանեի նույնը՝ առանց մեկ վայրկյան մտածելու: Ահա թե ինչու է Պողոս առաքյալը գրում.

> «Ինձ վստահվել է Ավետարանի տնտեսությունը, անկախ այն բանից՝ ես վճարվո՞ւմ եմ դրա համար, թե՞ ոչ: Ուրեմն, ինչո՞ւմն է իմ վարձատրությունը: Այն ամենում, որ շարունակ ավանդեմ Բարի լուրը մարդկանց սրտերում՝ առանց պարտավորության, անվճար և չպահանջելով ֆինանսական աջակցություն ստանալու իմ իրավունքները» (Ա Կորնթացիների 9.17,18, TPT):

## Ինչպիսի՞ մարդիկ են գրավում ձեզ

Հասկանալով, թե ինչպիսի մարդիկ են գրավում ձեզ, դուք շատ բացահայտումներ կանեք ձեր կոչման և պարգևների մասին: Մարդիկ կարող են արթնացնել ձեր պարգևները և սովորեցնել ձեզ օգտագործել դրանք: Գտեք յուրայինների՝ այնպիսի մարդկանց, որոնք ունեն նման պարգևներ և կոչումներ: Այդ մարդիկ մեծ դեր կխաղան ձեր կյանքում՝ օգնելով ձեզ հասկանալ, թե ով եք դուք, և ինչ պարգևներով է Աստված օժտել ձեզ: Յուրայինները մարդիկ են, ովքեր ընդունում և հասկանում են ձեզ:

Ինձ դուր է գալիս հանդիպել այլ ծառայողների հետ և խոսել ծառայության արկածների և դժվարությունների մասին և, իհարկե, զրուցել Աստծո Խոսքի շուրջ: Ինձ նույնպես դուր է գալիս հանդիպել ձեռնարկատերերի և գործարարների հետ: Այս ոլորտներն իմ ուժեղ կողմերն են:

Ծառայողական կազմակերպություն ղեկավարելը շատ առումներով նման է ձեռնարկություն ղեկավարելուն: Լիզան և ես ստիպված էինք ձեռնարկատերեր լինել: Երբ մենք երիտասարդ էինք, հայտնի ծառայություններից ոչ մեկը չէր գործում այնպես, ինչպես մենք էինք ցանկա-

նում գործել. չկար այնպիսի ծառայություն, որի օրինակին մենք կարող էինք հետևել: Մենք պետք է նոր արահետ բացեինք: Այդ իսկ պատճառով, գործարար աշխարհի մարդիկ մշտապես արթնացրել են իմ մեջ այնպիսի բաներ, որոնք օգնել են ինձ ավելի հմտորեն կատարել այն աշխատանքը, որի համար մենք կանչված ենք:

Եթե դուք հետաքրքրված եք ներքին ձևավորմամբ, ձեզ հարմարավետ կզգաք այլ դիզայներների հետ: Եթե դուք բժիշկ եք, կոգևորվեք՝ շփվելով այլ բժիշկների հետ: Եթե դուք երաժիշտ եք, այլ երաժիշտները կօգնեն ձեզ բորբոքել ձեր պարգևը: Ես կարող եմ անդադար շարունակել. յուրայիններ գտնելը կօգնի ձեզ ճանաչել և նույնիսկ բացահայտել ձեր պարգևները:

Կրկին, կարևոր է հիշել, որ այս հարցերի պատասխաններից ոչ մեկը չի կարող ինքնին որոշիչ լինել, եթե դուք ժամանակ չտրամադրեք Աստծուն, որպեսզի փնտրեք Նրան և իմանաք, թե ինչի համար է Նա կանչել ձեզ: Եթե ես լսեի այն ծառայողների մեծամասնությանը, որոնք խրատում էին ինձ իմ հոգևոր կազմավորման տարիներին, ես ինչ-որ քաղաք կգնայի և եկեղեցի կհիմնեի՝ դառնալով հովիվ: Շատ քչերն էին հստակորեն տեսնում այն եզակի կոչումները և պարգևները, որոնք կային Լիզայի և իմ կյանքում: Մյուս կողմից, կային մի քանի իմաստուն ծառայողներ, որոնք օգնեցին մեզ շարժվել այն ուղղությամբ, որը մենք զգում էինք մեր սրտում:

## ԶԱՐԳԱՑՐԵՔ ՁԵՐ ՊԱՐԳԵՎԸ

Այժմ ուշադրություն դարձնենք մեր բացման խոսքի երկրորդ կեսին. «Ձեզնից յուրաքանչյուրը պետք է պատասխանատվություն ստանձնի՝ իր կյանքում հնարավորինս լավագույն ստեղծարար աշխատանք կատարելու համար» (Գաղատացիների 6.5, MSG): Աստված տվել է յուրաքանչյուրիս ներուժ, որն օգնում է կառուցել թե՛ մեր կյանքը, թե՛ Իր թագավորությունը: Այնուամենայնիվ, գալիս է մի պահ, երբ բոլորս ստիպված ենք առերեսվել այն փաստի հետ, որ պարզապես ներուժ ունենալը բավական չէ. այն պետք է իրագործվի:

Որքա՜ն ցավալի կլինի հասնել մեր կյանքի ավարտին և գիտակցել, որ մեզանում դեռ շատ բաներ են մնացել, որոնք չեն իրագործվել: Դատաստանի գահի առջև զղջման ցավն անտանելի կլինի, երբ իմանանք, թե որքան բաներ տեղի չունեցան մեր կյանքում, և ամենավատը՝ թե որքան մարդիկ այդպես էլ չկրեցին Աստծո թագավորության ազդեցությունը, քանի որ մենք անփութորեն վերաբերվեցինք Աստծուց մեզ վստահված պարգևներին և չզարգացրինք դրանք:

*Հենց հիմա որոշում կայացրեք, որ մահանալու եք դատարկ՝ ոչինչ չպահելով ձեզանում:* Որոշում կայացրեք, որ դուրս եք բերելու այն ամենը, ինչ ձեզանում է, մինչև որ դատարկվեք: *Այս աշխարհին պետք է այն, ինչ ունեք՝ Աստծուց ձեզ տրված պարգևները:*

Առակաց 18.16-ում գրված է մի հետաքրքիր միտք Աստծուց մեզ տրված պարգևների մասին.

> «Մարդու պարգևը տեղ է բացում նրա համար և բերում է նրան կարևոր մարդկանց առջև» (NKJV):

Ձեր պարգևը «տեղ է բացում» ձեզ համար և բերում է ձեզ «կարևոր մարդկանց» առջև: «Տեղ բացելը» նշանակում է «տարածություն ստեղծել»: Այն «տարածությունը», որը մենք նկատի ունենք, երկակի իմաստ ունի: Առաջինը՝ ձեր պարգևը տեղ է բացում, որ իրագործեք ձեր ներուժը և տեղափոխվեք այնտեղից, *որտեղ գտնվում եք,* այնտեղ, *որտեղ դուք կարող եք լինել:* Երկրորդը՝ ձեր պարգևը տեղ է բացում, որպեսզի դուք առաջխաղացում ստանաք դեպի ձեր կոչման նորանոր մակարդակներ: Մտապահեք, որ յուրաքանչյուր առաջխաղացման համար պահանջվում են ավելի մեծ հմտություններ: Կրկին, Սողոմոնը գրում է.

> «Եթե դուք եզակիորեն օժտված եք ձեր գործի մեջ, դուք կբարձրանաք և առաջխաղացում կստանաք: Ձեզ ետ չեն պահի» (Առակաց 22.29, TPT):

Մտածե՛ք Դավթի մասին: Առաջին Թագավորաց 16-րդ գլխում գրված է մի պատմություն այն մասին, որ Սավուղ թագավորը չարչարվում էր չար հոգուց, քանի որ Տիրոջ Հոգին հեռացել էր նրանից: Հուսահատորեն ձգտելով թեթևություն ստանալ՝ Սավուղը պատվիրեց իր ծառաներին մի երաժիշտ գտնել և բերել իր մոտ:

Նրա երիտասարդ ծառաներից մեկը պատասխանեց. «Ես տեսել եմ Հեսսեի որդիներից մեկին Բեթլեհեմում, ով *հմտորեն* նվագում է» (Ա Թագավորաց 16.18, AMPC): Դավիթը ոչ միայն *օժտված* երաժիշտ էր, այլև *հմուտ* էր: Ի՞նչն էր *հմուտ* դարձրել նրան: Նա զարգացրել էր իր պարգևը և այդ պատճառով տեղ էր բացվել կամ հնարավորություն էր ստեղծվել, որպեսզի նա առաջանար իր կոչման մեջ:

Հնարավո՞ր է, որ շատերը չունեն առաջխաղացում իրենց կոչման մեջ, քանի որ բավականաչափ չեն զարգացրել իրենց պարգևները: Հնարավո՞ր է, որ մեր պարգևների զարգացվածության չափն է որոշում, թե որքանով մենք *կարող ենք* առաջխաղացում ստանալ:

Վերադառնանք Տիմոթեոսին ուղղված Պողոսի խոսքերին՝ մեր նախորդ գլխից: Բայց այս անգամ մենք կշարունակենք՝ դիտարկելով այն լուծումը, որը նա առաջարկեց իր հոգևոր որդուն.

> «Մի՛ անտեսիր այն պարգևը, որը քեզանում է [այն հատուկ ներքին օժտվածությունը], որը փոխանցվեց անմիջապես քեզ... *Վարժվի՛ր* այս պարտականությունների մեջ և *զարգացրո՛ւ* դրանք և *մտորի՛ր* դրանց շուրջ. *լիովին տրվի՛ր դրանց* [որպես քո ծառայություն], որպեսզի քո *առաջադիմությունն ակնհայտ լինի* բոլորին» (Ա Տիմոթեոս 4.14,15, AMPC):

Այնքա՜ն բան կարելի է սովորել այս իմաստուն խոսքերից: Մենք նայում ենք այն տղամարդկանց և կանանց, որոնք գերազանցության են հասնում իրենց ոլորտներում: Երբեմն հեշտ է արժեզրկել նրանց հաջողությունը՝ ասելով. «Նրանք ծնվել են հատուկ պարգևով»: Այո՛, նրանք, ինչպես և դուք, իսկապես ծնվել են հատուկ պարգևով և որոշել են զարգացնել այն: Այլ կերպ ասած, թեկուզ մենք չենք տեսել, թե ինչպես են նրանք կատարելագործել իրենց պարգևը, չի նշանակում, որ նրանք քրտնաջան չեն աշխատել դրա վրա:

Ինչպես որ նշեցի նախորդ գլխում, Պողոսը սկսում է՝ զգուշացնելով Տիմոթեոսին, որ չանտեսի Աստծուց իրեն տրված պարգևը: Մենք անտեսում ենք մեր պարգևը, երբ անուշադրության ենք մատնում այն: Պողոսը գրում է Տիմոթեոսին, որ նրա առաջադիմությունն ակնհայտ կլինի բոլորին, եթե նա լիովին ներդնի իր կյանքն իր պարգևը զարգացնելու մեջ, ինչը, Պողոսի խոսքերով, կատարվում է *վարժվելու*, *զարգանալու* և *մտորելու* միջոցով: Եկեք հակիրճ քննարկենք այս երեքից յուրաքանչյուրը:

## Վարժվել

Վարժվելը նշանակում է «կրկնողաբար որևէ գործողություն կամ աշխատանք կատարել՝ հմուտ դառնալու համար»՝ ըստ *«Մերիամ-Վեբսթեր»* բառարանի: Մեր հմտությունը որոշում է մեր հրապարակային գործունեության մակարդակը, քանի որ մենք մշտապես կգործենք այն մակարդակով, որին վարժվել ենք: Հեշտ է տպավորվել ազդեցիկ կատարումով, բայց և անտեսել շաբաթներ, ամիսներ և տարիներ տևող մարզումները և քրտնաջան աշխատանքը, որը մարդուն հասցրել է նման բարձր մակարդակի:

Համաձայն մարդու վարքի և գործունեության մասնագետների, անհրաժեշտ է վարժվել մոտավորապես 10.000 ժամ՝ որևէ գործում

իմտանալու կամ այն յուրացնելու համար: Այնուամենայնիվ, Ֆլորիդայի պետական համալսարանի պրոֆեսոր Կ. Անդերս էրիկսոնը վիճարկում է ավանդական համոզմունքն այն մասին, որ «վարժությունը կատարելագործում է»: Այս պրոֆեսորը մեկ քայլ առաջ է գնում՝ ցույց տալով, որ 10.000 ժամ վարժվելը բավական չէ, եթե այդ ժամեր տևող վարժությունները կատարվում են ոչ թե իմտությունները բարելավելու կենտրոնացված մտադրությամբ, այլ, պարզապես, անհրաժեշտ շարժումներ կատարելով: Նա անվանում է այս տեսակի վարժությունը «նպատակաուղղված վարժություն»: Նա գրում է.

> «Ես կներկայացնեմ նպատակաուղղված վարժությունը երկու խոսքով. դուրս եկեք ձեր հարմարավետության գոտուց, սակայն արեք դա կենտրոնացված՝ ունենալով պարզ նպատակներ, այդ նպատակներին հասնելու ծրագիր և ձեր առաջընթացը վերահսկելու միջոց»[18]:

Մինչև մեզ դուրս չիրենք մեր հարմարավետության գոտուց և իմտությունների ներկա մակարդակից, մենք այդպես էլ աճ չենք ունենա: Եթե մենք նպատակաուղղված չլինենք, կա վտանգ, որ երբ հասնենք այնպիսի մակարդակի, որը կգոհացնի մեզ, մենք հեշտորեն ինքնաբավ կդառնանք: Դրանից հետո ընդամենը ժամանակի հարց է, թե երբ կսկսենք անփութորեն կատարել մեր գործը, ինչն, ի վերջո, բացասաբար կազդի մեր աշխատանքի որակի վրա և կխոչընդոտի հետագա բազմապատկմանը:

Ձեր ուժեղ կողմերը զարգացնելը ազատություն է տալիս ձեզ, ոչ թե սահմանափակում է: Դրա շնորհիվ ավելանում է ձեր բազմապատկման ներուժը: Դա չի նշանակում, որ մենք չենք աշխատում մեր թույլ կողմերի վրա և նոր իմտություններ ձեռք չենք բերում, այլ՝ որ մենք կենտրոնացած ենք և ներդնում ենք այն բնագավառներում, որոնց շնորհիվ մեր ներուժը առավելագույն արդյունք կտա:

Ես առաջարկում եմ սովորել նոր իմտություններ, բայց ոչ մի դեպքում չանել դա ձեր կոչման հետ առնչվող բնագավառները զարգացնելու հաշվին:

Գլխավոր գաղափարն այն է, որ աճն ինքնաբերաբար տեղի չի ունենում. այն պահանջում է դիտավորություն: Եթե մենք շարունակ չվարժվենք, որպեսզի «իմուտ» դառնանք մեր պարգևների մեջ, երբեք չենք գործի մեր ամբողջական ներուժով: Ահա թե ինչու մենք պետք է մշտապես զբաղվենք մեր անձնական աճով: Մարդկանց մեծ մասը ցանկանում է մեծ գործեր կատարել կյանքում: Այնուամենայնիվ, ոչ բո-

լորն են պատրաստ կատարել այն աշխատանքը, որն անհրաժեշտ է՝ մեծության հասնելու համար: Վարժվելով՝ մենք վճարում ենք այն գինը, որը մեծ արդյունքներ է տալիս:

## Զարգանալ

Վարժվելը գործնական բնույթ է կրում, իսկ զարգանալը՝ ավելի ուսումնական: «Զարգանալ» բառը նշանակում է «առաջադիմել կամ կատարելագործվել՝ ուսանելու կամ մարզվելու միջոցով. նպաստել աճին և առաջադիմությանը»[19]:

*Զարգացումն* անմիջականորեն առնչվում է աշակերտության հետ: Աշակերտությունն անչափ կարևոր է ձեր անձնական աճի և առաջադիմության համար, քանի որ դրա միջոցով դուք ստանում եք կառուցողական քննադատություն և առաջնորդություն, որն ինքներդ չեք կարող ձեռք բերել: Յուրաքանչյուրը, ով գերազանցության է հասել իր պարգևների մեջ, աշակերտություն և առաջնորդություն է ստացել իր կյանքի տարբեր փուլերում: Ձեր կյանքի ուսուցիչների հրաշալի կողմն այն է, որ նրանք տեսնում են ձեր ներուժը և ձգտում են դուրս բերել այն ձեզնից, նույնիսկ եթե դրա համար երբեմն անհրաժեշտ է խիստ վարվել ձեզ հետ:

Դուք կարող եք աշակերտություն ստանալ խորհրդատու-խնամակալ, հայր-երեխա, մայր-երեխա, ուսուցիչ-աշակերտ հարաբերություններից, հրահանգավորման, պրակտիկայի և աշխատափորձ ձեռք բերելու միջոցով, ինչպես նաև ոչ ուղղակի կերպով՝ գրքերից, դասընթացներից և նյութերից, որոնք առատորեն հասանելի են մեզ:

Ձեր պարգևների ոլորտում կրթվելու ևս մեկ միջոց է պարբերաբար հավաքվել այն մարդկանց հետ, որոնք նման պարգևներ ունեն: Կրկին, ինչպես արդեն նշեցի, սա հաճախ անվանում են «գտնել յուրայիններին»: Երբ դուք նման տաղանդներ և ձգտումներ ունեցող մարդկանց հետ եք, դուք համագործակցելու և համատեղ ստեղծագործելու հնարավորություն եք ստանում:

1930-ական և 40-ական թվականներին մի խումբ ստեղծարար գրողներ, որոնք հայտնի էին «Ինկլինգներ» անվամբ, հանդիպում էին Օքսֆորդի համալսարանի տարածքի մոտ գտնվող մի գինետան առանձին սենյակում: Այդ գրականության սիրահարների թվում էին Կ.Ս. Լյուիսը և Ջ.Ռ.Ռ. Թոլքինը: Այդ հանդիպումների նպատակն էր կարդալ և քննադատել խմբի անդամների անավարտ գրքերը: Այդ հանդիպումները ոգեշնչեցին Թոլքինի *«Մատանիների տիրակալը»* և Լյուիսի *«Նարնիայի ժամանակագրությունները»* գրքերը: Յուրայինների հետ շփման ինչպիսի՜ օրինակ:

## Մտորել

Մտորելը նշանակում է «խորհել, խորհրդածել»: Աճը հնարավոր է, երբ մենք ժամանակ ենք հատկացնում, որպեսզի խորհենք մեր սովորած դասերի շուրջ: Երբ մենք հավասարակշռված կերպով վերահսկում ենք մեր աճը և ժամանակ ենք տրամադրում՝ մեր առաջընթացը և գործունեությունը գնահատելու համար, մենք տեսնում ենք այն բնագավառները, որոնք ուշադրության կամ բարելավման կարիք ունեն:

Իմ ընկեր Ջոն Մաքսվելը հաճախ հիշեցնում է իր լսարաններին և ընթերցողներին, որ լավագույն ուսուցիչը ոչ թե փորձն է, այլ *գնահատված փորձը:* Խորհելով ձեր առաջընթացի շուրջ՝ ի սրտե ընդունեք այն կարծիքները, որոնք լսում եք ձեր ուսուցիչներից և ընկերներից, ինչպես նաև մտածեք ձեր պարգևները բարելավելու և գործածելու նորարար միջոցների մասին: Ճիշտ հարցեր տվեք ձեզ և Աստծուն. «Ի՞նչ պետք է փոխեմ», «Ո՞ր բնագավառում ունեցա առավելագույն աճ», «Ո՞ր բնագավառներին պետք է ավելի շատ ուշադրություն դարձնեմ», «Ի՞նչ է անհրաժեշտ, որպեսզի հասնեմ նոր մակարդակի»:

Խորհելու ժամանակը երբեք ժամանակի վատնում չէ:

## ՈՉԻՆՉ ՄԻ՛ ՊԱՀԵՔ

Եվս մեկ անգամ կարդանք Պողոսի խոսքերը Տիմոթեոսին.

> «Վարժվի՛ր այս պարտականությունների մեջ և զարգացրո՛ւ դրանք և մտորի՛ր դրանց շուրջ. *լիովին տրվի՛ր դրանց* [որպես քո ծառայություն], որպեսզի քո առաջադիմությունն ակնհայտ լինի բոլորին» (Ա Տիմոթեոս 4.14,15, AMPC):

Այն ամենը, ինչ քննարկեցինք, ունի մեկ վերապահում. մենք պետք է լիովին տրվենք այն գործին, որի համար Աստված կանչել և օժտել է մեզ: Ձեր կոչումը պահանջում է լիարժեք նվիրում: Երբ մենք ամբողջ սրտով տրվենք այն բանին, ինչ Աստված վստահել է մեզ, մեր առաջընթացն ակնհայտ կդառնա բոլորին, և մենք կբազմապատկենք մեր ներուժը:

Յուրաքանչյուրս պետք է պատասխանատվություն ստանձնենք մեր պարգևները տնտեսելու և մեր կյանքում հնարավորինս լավագույն ստեղծարար աշխատանք կատարելու համար: Ինչպես պարզեցինք, մեր պարգևների մեջ հմուտ լինելու չափն է որոշում, թե որքանով կարող ենք առաջադիմել մեր կոչման ոլորտում և բազմապատկել մեր արդյունավետությունը:

Այս կյանքում ունենք մեկ հնարավորություն, որի համար կարող ենք ներդնել մեր բոլոր ուժերը: Եկեք չպահենք ոչինչ, եկեք դատարկվենք՝ լիովին նվիրվելով Աստծուն: Ահա թե ինչպես պետք է ապրել: Ահա թե երբ մենք ճշմարտապես կկենդանանանք և լիարժեք կերպով կճաշակենք կյանքը:

## ՄՏՈՐԵՔ

1. Չկան բանաձևեր՝ ձեր կոչումը բացահայտելու համար: Թեև կան բազմապիսի ձեռնարկներ, որոնք կարող են օգնել ձեզ բացահայտել, թե ինչն է ձեզ մոտ ավելի լավ ստացվում: Ձեր կոչումը և պարգևները գտնելու համար անհրաժեշտ է Աստծո գործակցությունը: Դուք փնտրե՞լ եք Աստծուն, որպեսզի իմանաք ձեր կոչման և պարգևների մասին: Ի՞նչ է Նա ցույց տվել ձեզ:

2. Մեր որոնման մեջ պետք է հարցնենք ինքներս մեզ և այլ մարդկանց: Այս ամենը որոնման ընթացքի մասն է: Գտե՛ք մարդկանց, որոնց վստահում եք, և հարցրեք նրանց, թե ինչ են տեսնում ձեր կյանքում և ձեր ներսում:

3. Պարզապես ներուժ ունենալը բավական չէ. այն պետք է իրագործվի: Ինչո՞ւ է կարևոր, որ զարգացնեք ձեր պարգևները: Ի՞նչ է տեղի ունենում, երբ դուք նպատակաուղղված զարգացնում եք ձեր պարգևները:

*«Բայց մեզ ձեզ հետ Քրիստոսում հաստատողը և մեզ օծողը Աստված է»:*

– Բ Կորնթացիների 1.21

# 15

# Օծված

Վերջին Գոհության տոներից մեկի ընթացքում մեր ընտանիքը նստած էր ճաշասեղանի շուրջ: Լիզան ուշագրավ խնջույք էր պատրաստել: Մենք արդեն այդ իրադարձության հետվայելքի մեջ էինք և հաճույքով շփվում էինք: Ես զգացի, որ որպես հայր՝ պետք է ինչ-որ բան ասեմ իմ ընտանիքին, նաև մեր թիմի անդամներից մի քանիսին, որոնք միացել էին մեզ:

Մտովի կարճ աղոթելուց հետո սրտումս մի խոսք ստացա:

- Ես արդեն 60 տարեկան եմ և շատ առումներով զգում եմ, որ պետք է հայրաբար իմաստությամբ կիսվեմ ձեզ հետ: Եթե հարցնեիք ինձ, թե ինչն է ամենակարևոր բանը, որը Լիզան և ես արել ենք՝ վարվելով Աստծո հետ վերջին 40 տարում, ես կպատասխանեմ այսպես. *«Հետևողակա՛ն եղեք»:*

Այդ տարիների ընթացքում մենք շատ անգամներ կարող էինք թողնել ամեն ինչ: Նույնպես, ունեցել ենք փոխզիջման գնալու բազմաթիվ հնարավորություններ՝ անձնական շահի, առաջխաղացման կամ նեղությունից ազատվելու համար: Բայց մենք որոշում ենք կայացրել ճշմարտությունը դարձնել մեր խարիսխը և բռնվել դրանից՝ անկախ այն բանից, թե որքան ցավոտ են հանգամանքները:

Իր արհավիրքի մեջ Հոբի իմաստուն խոսքերից մեկը հետևյալն էր. «Ես կարող եմ մխիթարվել սրանում. չնայած իմ ցավին, ես չեմ ուրացել Սուրբի խոսքերը» (Հոբ 6.10, NLT): Երբ սխալներ եմ գործել (իսկ ես շատ եմ սխալվել), արագորեն ապաշխարել եմ և ներում եմ խնդրել թե՛ Աստծուց, թե՛ մարդկանցից: Այժմ նայում եմ ճշմարտությանը մշտապես հնազանդվելու օրհնություններին, և դրանք աներևակայելի են: Աստված այնքա՛ն շնորհառատ է:

# ՕԾՈՒԹՅՈՒՆ

Հետևողականորեն ճշմարտությանը հնազանդվելու մեծ օրհնություններից մեկը օծությունն է: Որպեսզի հասկանանք սա, եկեք կարդանք Մեծ գահակալության արարողության մասին՝ այն օրվա, երբ Հայր Աստված հանդիսավոր կերպով հաստատեց Հիսուսին՝ որպես երկնքի և երկրի Թագավոր.

> «Որովհետև Դու փայփայեցիր արդարությունը և խորշեցիր անօրինությունից: *Այս պատճառով,* Աստված՝ Քո Աստված, *օծեց* Քեզ և թափեց երանության յուղը Քեզ վրա *ավելի, քան Քո ընկերներից որևէ մեկի»* (Եբրայեցիների 1.9, TPT):

Ուշադրություն դարձրեք *«այս պատճառով»* բառերին, քանի որ դրանք անչափ կարևոր են մի առանցքային ճշմարտություն հասկանալու համար: Հիսուսի անսասան դիրքորոշումը երկու հարցում մեծ օգուտ տվեց, և Նրա օրինակը պետք է լինի մեր չափանիշը: Հիսուսը սիրեց *արդարությունը:* Հունարենում այն *«դիկաիոսո՛ւնե»* բառն է, որի սահմանումն է «համաձայնություն ավելի բարձր իշխանության պահանջներին»[20]: Բայց, միևնույն ժամանակ, նա ատեց *անօրինությունը:* Կան շատ քրիստոնյաներ, որոնց *դուր չի գալիս* անօրինությունը, բայց Հիսուսի սիրտն այսպիսին չէ. Նա *ատում* է այն: Հունարենում այն *«անոմիա»* բառն է, որն, ըստ էության, նշանակում է «անհնազանդություն Աստծո իշխանությանը»: Նա ատելությամբ էր վերաբերվում ցանկացած բանի, ինչը հեռացնում է Աստծո իշխանությունից, և վերջ: Հիսուսի հաստատակամ հնազանդությունը՝ անկախ դժվարություններից, պատճառ դարձավ, որ օծությունն Իր կյանքում ավելին լինի, քան Իր ընկերներից որևէ մեկի կյանքում:

Ինչո՞ւ եմ ես ավարտում բազմապատկման մասին գիրքը՝ խոսելով օծության մասին: Պատասխանը պարզ է, սակայն՝ կարևոր. *օծության շնորհիվ է, որ Աստծուց մեզ տրված կարողությունները բազմապատկվում են՝ թողնելով հավիտենական ազդեցություն:* Պատկերացրեք օծությունը՝ որպես ձեր պարգևների ուժեղացուցիչ: Թույլ տվեք երկու կարճ օրինակ բերել:

Ես լսել եմ հրաշալի ձայն ունեցող մարդկանց, որոնց գնահատանքով եմ վերաբերվել, բայց նաև լսել եմ ոչ այդքան հոյակապ ձայն ունեցող մարդկանց, որոնք հպվել են իմ սրտին և փոփոխություն են բերել իմ կյանքում: Տարբերությունն այս երկուսի միջև *օծությունն* է: Ես նույնպես լսել եմ մարդկանց, որոնք խորը բովանդակություն ունեցող ու-

ղերձներ են քարոզել, բայց եղել են պակաս ակնառու ուղերձներ, որոնք ազդել են իմ սրտի վրա և փոխել են իմ վարքը: Տարբերությունն այս երկուսի միջև կրկին *օծությունն* է:

Նույնը վերաբերում է Աստծո բոլոր ճշմարիտ ծառայողներին՝ անկախ նրանց կոչման ոլորտից՝ կառավարական, գործարար, արվեստի, կրթության և այլն: Դավիթ թագավորն ասաց հետևյալը.

> «Բայց իմ եղջյուրը (չափազանց մեծ ուժի և վեհապանծ շնորհալիության խորհրդանիշը) Դու բարձրացրիր՝ վայրի ցլի եղջյուրի պես. ես *օծված* եմ թարմ յուղով» (Սաղմոս 92.10, AMPC):

Նրա խոսքերն այնքա՜ն բան են հայտնում: Ուսումնասիրելով այս խոսքի մի քանի առաջատար մեկնաբանություններ, ես գտա ընդհանուր համաձայնություն, որ վայրի ցուլն այս խոսքում խորհրդանշում է Աստծուց չափազանց մեծ ուժ ստանալը: Օծությունն ուրախություն է բերում. Աստված անվանում է այն *երանության* կամ *ուրախության յուղ,* ինչը, համաձայն Սուրբ գրքի, մեր *զորությունն* է (կարդացե՛ք Նեեմիա 8.10): Ըստ էության, սաղմոսերգուն հայտարարում է, որ օծությունն ուժեղ է դարձնում մեզ: Այն ընդարձակում և զորացնում է մեր պարգևները՝ հավիտենական պտուղ բերելու համար:

Ես հավատում եմ, որ օծությունը փոփոխության անխոս գործոններից մեկն է տաղանդների և մնասների առակներում, և որ երկու բազմապատկող ծառաների աշխատանքն ընդարձակվեց օծության շնորհիվ: Ես օգտագործում եմ «անխոս» բառը, քանի որ քաղել եմ այս ճշմարտությունը վերևում բերված խոսքերից: Բազմապատկման համար անհրաժեշտ էր, որպեսզի նրանք հետևողականորեն հնազանդվեին իրենց տիրոջ ցուցումներին և ատելությամբ վերաբերվեին դրանց անհնազանդ լինելուն: Այդ վերաբերմունքի շնորհիվ նրանք օծություն ստացան, որի արդյունքը նրանց պարգևների ընդարձակումն էր:

Դավիթը խոսում է *թարմ* յուղի մասին: Օծությունը մեկանգամյա իրադարձություն չէ. այն օրհնություն է, որն ունի սկիզբ և շարունական ընթացք Աստծուն հետևողականորեն հնազանդվող մարդու կյանքում: Օծությունն այնպիսի բան չէ, ինչը մենք ստանում ենք մեկ անգամ և անուշադրության ենք մատնում՝ ասելով. «Ես ունեմ այն»: Սամսոնն ուներ օծություն, բայց չպահեց այն թարմ վիճակում: Նա փոխզիջման էր գնում և անհնազանդ էր. նա չէր ատում անօրինությունը: Դա անհետևանք մնաց մի քանի անգամ, բայց, ի վերջո, նրա մեղքը հաղթեց նրան: Սուրբ գիրքն ասում է.

> *«Եվ նրա ուժն իրենից գնացել էր:* Եվ կինը (Դալիլան) ասաց. «Սամսո՛ն, փղշտացիները քեզ վրա եկան»: Եվ նա, քնից զարթնելով, ասաց. «Դուրս գամ և առաջին անգամների պես թոթափվեմ», բայց *չգիտեր*, որ Տերն իրենից գնացել էր» (Դատավորաց 16.19բ, 20):

Սամսոնը չգիտեր, որ օծությունը վերցվել էր: Սա է պատճառը, որ Դավիթը, չհնազանդվելով Աստծուն Բերսաբեի դեպքում, ջերմեռանդորեն աղոթեց.

> «Ստեղծի՛ր ինձանում մաքուր սիրտ, ո՛վ Աստված: Նորոգի՛ր *հավատարիմ* հոգի իմ ներսում: Մի՛ վտարիր ինձ Քո ներկայությունից և մի՛ վերցրու Քո Սուրբ Հոգին ինձնից: Վերականգնի՛ր ինձ համար Քո փրկության *ուրախությունը* և դարձրո՛ւ ինձ *հոժար*՝ Քեզ *հնազանդվելու համար»* (Սաղմոս 51.10-12, NLT):

Դավթի սրտի աղաղակը՝ նրա մեծ աղաչանքը, այն էր, որ օծությունը չվերցվեր իր կյանքից, և նա գիտեր, որ դա կախված էր Աստծուն հավատարմորեն կամ *հետևողականորեն* հնազանդվելուց:

Շարունակենք ուսումնասիրել, թե ինչ է օծությունը և ում է այն տրվում: Կրկին կարդացե՛ք Պողոսի խոսքերը, որոնք բերված էին այս գլխի սկզբում:

> «Բայց մեզ ձեզ հետ Քրիստոսում հաստատողը և *մեզ օծողը* Աստված է» (Բ Կորնթացիների 1.21):

Այս խոսքում «օծող» բառը հունարենում *«քրի՛ո»* բառն է: Այն սահմանվում է որպես «որևէ մեկին որևէ առաջադրանք հանձնարարել՝ գերբնականորեն *վավերացնելու*, օրհնելու և օժտելու վերապահումով. օծել, կարգել, *նշանակել»[21]:*

Այս սահմանումի մեջ կան կարևոր բառեր, որոնց մենք պետք է ուշադրություն դարձնենք: *«Վավերացում»* բառը սահմանվում է որպես «պաշտոնական թույլտվություն կամ հավանություն՝ որևէ գործողության համար»: Պարզ ասած, օծությունը *Աստծո հավանությունն է՝ գործելու համար:* Հիսուսն ասում է. «Տիրոջ Հոգին Ինձ վրա է, որովհետև Նա *օծել է Ինձ...*» (Ղուկաս 4.18, NLT): Նշանակում է՝ Աստված հավանություն էր տվել, որպեսզի Հիսուսը գործեր: Պետրոս առաքյալն անդրադառնում է նույն գաղափարին. «Այն Հիսուսին, որ Նազարեթից է... Նրան Աստված Սուրբ Հոգով և զորությամբ *օծեց*, որ ման եկավ... *անելով...»* (Գործք 10.38): Կրկին, այն տրվում է՝ գործելու համար:

*«Քրի՛ո»* բառի ևս մեկ կարևոր իմաստ արտահայտվում է *«կարգել»* և *«նշանակել»* սահմանումներով: Աստծուն ծառայելու մեջ մշտապես կա փորձաշրջան: Մենք փորձվում ենք հնազանդության մեջ, մինչև նշանակվելը կամ օծվելը:

Իններորդ գլխում գրված Մայքի պատմության մեջ նրա գլխավոր փորձությունը տեղի ունեցավ, երբ Աստված խնդրեց նրան զոհաբերել իր վերջին 200 դոլարը: Լիզայի և իմ դեպքում մեր փորձությունն այն էր, որ նվիրված մնայինք գրելու աստվածային ցուցմանը, նույնիսկ այն դեպքում, երբ ոչ մի հրատարակիչ չհետաքրքրվեց մեր առաջին երկու գրքերով, և դրանք չարժանացան գրեթե ոչ մի հասարակական ուշադրության:

Հիսուսն ասում է ավելի քան մեկ անգամ. «Շատերն են կանչված, բայց քչերն են ընտրված» (Մատթեոս 20.16 և 22.14): Ես համոզված եմ, որ *«շատերը»* բառը վերաբերում է նրանց, ովքեր պատկանում են Իրեն: Մեզնից յուրաքանչյուրն աստվածային կոչում ունի: Այնուամենայնիվ, *«ընտրված»* բառը նշանակում է «կարգված» կամ «նշանակված»: Հիսուսի խոսքերով, նման մարդկանց թիվը, ցավոք, «քիչ» է: Ինչո՞ւ: Գոյություն ունի հավանություն ստանալու ընթացք, որն անհրաժեշտ է անցնել: Ուշադիր կարդացե՛ք այս խոսքը. «Ողջունի՛ր Ապելեսին, որը *փորձված* և *հավանություն ստացած* է Քրիստոսում» (Հռոմեացիների 16.10, AMPC):

Ապելեսը փորձվել էր, ինչպես և բոլորս, ովքեր ցանկանում են մուտք գործել իրենց կոչման մեջ: Ակնհայտ է, որ նա անցել էր իր փորձությունը, և այդ պատճառով ընտրվել էր կամ հավանություն էր ստացել: Համաձայն աստվածաշնչյան սկզբունքների, մենք գիտենք, որ Ապելեսն օծվել էր, թեև այդ մասին հստակորեն գրված չէ. նրա պարգևը ստացել էր Աստծո ընդարձակող հպումը:

Կան այնքա՜ն մարդիկ, որոնք ժամանակից շուտ նշանակում են իրենց այն բնագավառում, որտեղ կանչված են: Սակայն նրանք պետք է ձգտեն ոչ թե իրենց հանձնարարելուն, այլ աստվածային հավանությանը.

> «Որովհետև ոչ թե իր անձը հանձնարարողն է ընտիր, այլ նա, որին Տերն է հանձնարարում» (Բ Կորնթացիների 10.18):

Վերադառնանք մեր Գոհության տոնի ընթրիքին: Ես ցանկանում էի, որ իմ ընտանիքի և թիմի անդամները, որոնք ներկա էին, իմանային, որ *հետևողական հնազանդությունը,* այսինքն՝ արդարությունը սիրելը և անօրինությունը ատելը, առանցքային նշանակություն ունի մեր կոչումը

կատարելու համար, քանի որ այս հետևողականության շնորհիվ է, որ մենք ստանում ենք Նրա օծությունը:

Ետ նայելով մեր կյանքին, Լիզան և ես հնազանդվեցինք Աստծուն որոշ շատ դժվարին պահերին: Հաճախ մեր հնազանդությունը հակարդյունավետ և նույնիսկ կործանարար էր թվում մեր աճի, բարեկեցության, համբավի և այլ անձնական շահերի համար, որոնցից մենք ասես ավելի էինք հեռանում: Բայց այն, ինչն անբարենպաստ էր թվում կարճաժամկետ տեսանկյունից, հետագայում դարձավ այն բանալին, որն արդյունավետ դուռ բացեց մեր կոչման համար:

## ՁԵՐ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԸ

*Դուք կանչված եք* նույնքան, որքան յուրաքանչյուրը, նույնիսկ այն մարդիկ, որոնց դուք հավատքի մեծագույն հերոսներ եք համարում: Ավելի քան հավանական է, որ ձեր կոչումը չի գտնվում եկեղեցական միջավայրում, քանի որ միայն փոքրաթիվ մարդիկ են կանչված այս ոլորտում: Դուք արտոնված եք գերազանցության հասնելու և ակնառու դառնալու կյանքի այն ոլորտում, որտեղ ուղարկվել եք:

- Դանիելն ակնառու դարձավ Բաբելոնի կառավարական պաշտոններում (կարդացե՛ք Դանիել 6.3):
- Հովսեփն ակնառու դարձավ մեծ Եգիպտոսում (կարդացե՛ք Ծննդոց 41.39):
- Փիբեն Կենքրայի եկեղեցու ակնառու ծառայող էր (կարդացե՛ք Հռոմեացիների 16.1):
- Ձեր կոչումը նույնպես ակնառու է:

*Դուք եզակի կերպով օժտված եք:* Աստված տվել է ձեզ անհրաժեշտ կարողություններ՝ ձեր առաքելությունը կատարելու համար:

Կարդացեք, թե ինչ է ասում Աստվածաշունչը Բեսելիելի և նրա աշխատանքային թիմի մասին. «Տերն օժտեց Բեսելիելին, Ողիաբին և մյուս *հմուտ* վարպետներին *իմաստությամբ* և *կարողությամբ*՝ կատարելու սրբարանի կառուցման հետ կապված ցանկացած աշխատանք» (Ելից 36.1, NLT): Նրանք չունեին Աստծո Խոսքը քարոզելու և մարդկանց ծառայելու կարողություն, ինչպես Մովսեսը, Ահարոնը և նրա որդիները: Այդ վարպետներն օժտված էին, որ աշխատեին իրենց ձեռքերով՝ սրբարանը կառուցելու համար:

Դուք նույնպես օժտված եք՝ կառուցելու Աստծո սրբարանը այն հմտություններով, որոնք Նա տվել է ձեզ: Այնուամենայնիվ, այս սրբարանը պատրաստված չէ ոսկուց, արծաթից, բրոնզից, թանկարժեք քա-

րերից, այծերի մորթիներից, բարակ քթանից, սատիմի փայտից և այլ նյութերից, որոնք օգտագործվում էին՝ կառուցելու համար Հին կտակարանի խորանը և Երուսաղեմի տաճարը: Այսօր Աստծո խորանը պատրաստվում է կենդանի քարերից՝ մարդկանցից, և այս կենդանի քարերը կառուցվում են որպես Աստծո բնակարան (կարդացե՛ք Ա Պետրոս 2.5 և Եփեսացիների 2.20-22): Դուք օժտված եք՝ կառուցելու մարդկանց Աստծո փառքի համար:

*Դուք զորություն եք ստացել՝ բազմապատկման համար:* Մենք Աստծուց մեզ տրված պարգևների տնտեսներն ենք, և Նա ցանկանում է, որ վերադարձնենք Իրեն բազմապատիկ պտուղ՝ ստացված այդ պարգևների միջոցով: Մենք պետք է փնտրենք մարտավարություններ Երկնքից՝ բազմապատկման համար: Առաջնորդները կարող են սովորեցնել մեզ սկզբունքներ, բայց եզակի երկնային մարտավարությունները տրվում են անձամբ յուրաքանչյուրին. դրանք անկարելի է սովորել որևէ գրքից կամ որևէ լսարանում:

Մենք՝ առաջնորդներս, կարող ենք միայն խրախուսել ձեզ, որ փնտրեք Նրան և լսեք Նրա ձայնը: Հնազանդվե՛ք Նրան, նույնիսկ եթե դա անկարևոր է թվում: Ձեր բազմապատկման գործոնը սովորաբար աննշան է թվում: Հիշեք՝ մանանեխի սերմն է, որ ամենափոքրն է մյուս բոլոր սերմերից, որից աճում է ամենամեծ ծառերից մեկը:

*Դուք բազմապատկում եք՝ ներդնելու միջոցով:* Ներդրումն արտահայտվում է բազմաթիվ կերպերով, բայց երբ տալիս ենք, մենք օրհնությունների հունձք ենք ստանում: Եթե սերմը չի ցանվում (չի ներդրվում), այն մենակ է մնում, բայց երբ այն ներդրվում է, բազմապատիկ հունձք է տալիս: Ցանկացած պահին դուք կարող եք կա՛մ պահել, կա՛մ ներդնել ձեր սերմը: Երբեք մի՛ դադարեք ներդնելուց. այն ձեր արդյունավետության հաջորդ մակարդակի բանալին է:

*Ձեր խթանիչը ծառայելն է:* Եթե ձեր շարժառիթը ցանկացած այլ բան է՝ ծառայելուց բացի, դուք կհայտնվեք այնպիսի վիճակում, որում չեք ցանկանա լինել: Միգուցե դուք լավ տեսք ունենաք մարդկանց առջև, բայց կզրկվեք ձեր եռանդից: Ձեր ճրագը կշարունակի թուլանալ՝ նույնիսկ մարելու աստիճան: Բայց մի՛ վհատվեք, քանի որ Նա չի մարի հանգչող պատրույգը. Նա շարունակ կձգտի գրավել ձեր ուշադրությունը և կրկին կբորբոքի ձեր կրակը (կարդացե՛ք Եսայի 42.3): Անկախ այն բանից, թե ինչ եք անում, ձգտեք ծառայել, սիրեք առանց կեղծավորության և դիմացեք այն նեղությանը, որին կբախվեք:

*Ձգտե՛ք օծությանը:* Այն կմեծացնի ձեր ազդեցությունը: Այն հավիտենական կդարձնի ձեր աշխատանքը: Այն ուժ կհաղորդի ձեզ և ակնառու

կդարձնի այն ոլորտում, որտեղ կանչված եք: Այն կառանձնացնի ձեզ այս աշխարհում և նույնիսկ եկեղեցում գտնվող այնպիսի մարդկանցից, որոնք օգտագործում են Աստծուց իրենց տրված պարգևները եսասիրական կամ աշխարհիկ նպատակների համար:

*Դուք պետք է հավատք ունենաք:* Հավատքը՝ Աստծուց ձեզ տրված ներուժը բազմապատկելու միակ միջոցն է: Առանց հավատքի «անկարելի է հաճելի լինել» Աստծուն (Եբրայեցիների 11.6): Որպեսզի ձեր հավատքն աճի, դուք պետք է լսեք Նրա Խոսքը: Գրված է. «Հավատքը *գալիս է* լսելուց, իսկ լսելը՝ Աստծո Խոսքից» (Հռոմեացիների 10.17, NKJV): Լսելը, լսելը և կրկին լսելն է, որ թույլ է տալիս, որ Աստծո Խոսքն ամուր հաստատվի մեր սրտում: Ահա թե ինչու դուք իմաստությամբ կվարվեք, եթե ընթերցեք այս գիրքը ևս մեկ անգամ, իսկ հետո՝ ևս մեկ անգամ: Բայց պարզապես մի՛ ընթերցեք այն: Մտորե՛ք այն ամենի շուրջ, թե ինչպես են այս ճշմարտությունները վերաբերում ձեզ, իսկ հետո գործեք դրանց հիման վրա: Աստծո Խոսքը, որը համակարգված կերպով զետեղված է այս գրքում, ընդունե՛ք ձեր հոգու մեջ՝ ընթերցելու, մտորելու և աղոթքի միջոցով, մինչև որ հավատաք, որ դուք կանչված եք բազմապատկելու համար՝ անկախ ձեզ շրջապատող հանգամանքներից: Բազմապատկման մասին ձեր ներքին համոզմունքը պետք է ավելանա՝ գերազանցելով ձեր արտաքին հանգամանքների թելադրանքը:

Ի վերջո, հիշե՛ք. *Աստված ձեր կողմի՛ց է:*

> «Որովհետև Ես գիտեմ այն ծրագրերը, որ ունեմ ձեզ համար, - ասում է Տերը, - դրանք ծրագրեր են բարու համար» (Երեմիա 29.11, NLT):

Եվ կրկին, Աստծո Խոսքը վստահաբար ասում է մեզ.

> «Եթե Աստված մեր կողմից է, ո՞վ կարող է մեզ դեմ լինել: Քանի որ Նա չխնայեց նույնիսկ Իր Որդուն, այլ մատնեց Նրան բոլորիս համար, մի՞թե Նա նույնպես չի տա մեզ ամեն ինչ» (Հռոմեացիների 8.31,32, NLT):

Լսեք ա՛յս խոսքերը, ոչ թե այն հուսալքող պնդումները, որոնք գալիս են *այս աշխարհի աստծուց*՝ գլխավոր մեղադրողից և հիասթափեցնողից: Ձեր Արարիչը՝ ձեր Հայրն է, և Նա ցանկանում է ձեր հաջողությունը այն գործի մեջ, որի համար կանչել է ձեզ:

Որպես հայր հավատքի մեջ, ով արդեն բոլորել է իր վաթսունամյա-

կը, ես նույնպես ձեր կողմից եմ: Ես խրախուսում եմ ձեզ, որ գնաք ավելի հեռու, քան գնացել են իմ հասակակիցները և ես: Մենք ծառայում ենք մեկ Թագավորի, մենք մեկ թագավորության քաղաքացիներ ենք, մենք մեկ ընտանիքի անդամներ ենք, մենք ունենք մեկ հավատք և մեկ առաքելություն՝ կառուցել Աստծո տունը, որտեղ Նա կբնակվի ամբողջ հավիտենության ընթացքում:

Եկեք գործենք միասին: Եկեք միասնական դառնանք և պահպանենք միաբանությունը: Եկեք ականատես լինենք, թե ինչպես է Նրա փառքը կրկին լցնում Նրա բնակավայրը: Չկա այլ լուծում այս աշխարհի խնդիրների համար:

Ես սիրում եմ ձեզ, բայց ամենակարևորը՝ Հայր Աստված, Որդի Հիսուս Քրիստոսը և Սուրբ Հոգին խորապես սիրում են ձեզ: Եվ *Նրանց սերը ձեր հանդեպ մնում է հավիտյան:*

> «Նրան, որ կարող է պահել ձեզ՝ առանց սայթաքելու *կամ* գայթելու *կամ* ընկնելու, և ներկայացնել [ձեզ] անբիծ (անմեղադիր և անսխալ) Իր փառքի ներկայության մեջ՝ հաղթական ուրախությամբ *և* հրճվանքով [անասելի, հիացական բերկրանքով]՝ միակ Աստծուն՝ մեր Փրկչին, Հիսուս Քրիստոսի՝ մեր Տիրոջ միջոցով, լինի փառք (վեհություն), մեծություն, կարողություն *և* տիրապետություն և զորություն *և* իշխանություն, բոլոր ժամանակներից առաջ և՛ հիմա, և՛ հավիտյան (հավիտենության բոլոր դարերում): Ամե՛ն (թող այդպես լինի)»:
>
> – Հուդա 24,25, AMPC

## ՄՏՈՐԵՔ

1. Օծության շնորհիվ է, որ Աստծուց մեզ տրված կարողությունները բազմապատկվում են՝ թողնելով հավիտենական ազդեցություն: Ինչպե՞ս է գալիս օծությունը: Ի՞նչ կերպով է օծությունը գերազանցության հասցնում ձեր պարգևները:

2. Ինչպե՞ս օծությունը կարող է թարմ մնալ ձեր կյանքում: Ի՞նչ է տեղի ունենում, երբ օծությունն անուշադրության է մատնվում:

3. Այս կյանքի ո՞ր ոլորտում եք դուք կանչված՝ ազդեցություն թողնելու համար: Ինչպե՞ս կարող է օծությունը ակնառու դարձնել ձեզ այդ ոլորտում:

*«Եթե բերանովդ Հիսուսին Տեր դավանես և սրտումդ հավատաս, թե Աստված հարություն տվեց Նրան մեռելներից, կապրես: Որովհետև սրտով հավատում ենք արդարանալու համար, և բերանով դավանում ենք փրկվելու համար»:*

–Հռոմեացիների 10.9,10

Հավելված

# Փրկություն բոլորի համար

Աստված ցանկանում է, որ դուք լիարժեք կյանք ունենաք: Նա ի սրտե մտահոգված է ձեզնով և ցանկանում է, որ կատարեք Իր ծրագիրը ձեր կյանքի համար: Այնուամենայնիվ, կա միայն մեկ ճանապարհ դեպի ձեր նախասահմանությունը. դուք պետք է ընդունեք փրկությունն Աստծո Որդու՝ Հիսուս Քրիստոսի միջոցով:

Հիսուսի մահվան և հարության շնորհիվ Աստված ճանապարհ պատրաստեց, որ մտնեք Իր թագավորության մեջ՝ որպես Իր սիրելի որդի կամ դուստր: Հիսուսի զոհը խաչի վրա ձրիաբար պարգևել է ձեզ հավիտենական և առատ կյանք: Փրկությունը Աստծո պարգևն է ձեզ. դուք չեք կարող որևէ բան անել, որ վաստակեք փրկությունը կամ արժանանաք դրան:

Այս թանկ պարգևը ստանալու համար առաջին հերթին պետք է խոստովանեք ձեր Արարչից անկախ ապրելու մեղքը, քանի որ սա ձեր գործած բոլոր մեղքերի արմատն է: Ապաշխարությունը փրկություն ստանալու խիստ կարևոր պայման է: Պետրոսը հստակ նշեց սա Գործք առաքելոց գրքում այն օրը, երբ հինգ հազար մարդ փրկություն ստացավ. «Ուրեմն, զղջացե՛ք և ե՛տ դարձեք, որ ձեր մեղքերը ջնջվեն» (Գործք 3.19): Աստվածաշունչը հայտնում է, որ մեզնից յուրաքանչյուրը ծնվել է որպես մեղքի ստրուկ: Այս ստրկությունը սկիզբ է առել Ադամի մեղքից, որն առաջինը գիտակցաբար անհնազանդ եղավ Աստծուն: Ապաշխարելով՝ դուք որոշում եք կայացնում այլևս չհնազանդվել ձեր անձին և սատանային, որը ստի հայրն է, այլ հնազանդվել ձեր նոր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին, Նրան, Ով տվեց Իր կյանքը ձեզ համար:

Դուք պետք է հանձնեք ձեր կյանքը Հիսուսի իշխանությանը: Հիսուսին որպես Տեր ընդունելը նշանակում է, որ դուք թույլ եք տալիս Նրան ղեկավարել ձեր ամբողջ կյանքը (հոգին, անձը և մարմինը), նաև այն,

ինչ պատկանում է ձեզ. Նա բացարձակ իշխանություն է ստանում ձեր կյանքում: Այն պահին, երբ անեք սա, Աստված կազատի ձեզ խավարից և կտեղափոխի Իր թագավորության լույսի և փառքի մեջ: Պարզ ասած՝ դուք անցում կկատարեք խավարից դեպի լույսը և կդառնաք Նրա զավակը:

Եթե ցանկանում եք փրկություն ստանալ Հիսուսի միջոցով, կրկնե՛ք այս աղոթքը.

*«Երկնային Աստվա՛ծ, ես գիտակցում եմ, որ մեղավոր եմ և ընկել եմ Քո արդարության չափանիշից: Ես արժանի եմ հավիտյան դատապարտվելու իմ մեղքերի համար: Շնորհակալություն, որ չթողեցիր ինձ այս վիճակում, քանի որ ես հավատում եմ, որ Դու ուղարկեցիր Հիսուս Քրիստոսին՝ Քո միածին Որդուն, Ով ծնվեց կույս Մարիամից, որպեսզի մահանար ինձ համար և կրեր իմ դատավճիռը խաչի վրա: Ես հավատում եմ, որ Նա հարություն առավ երրորդ օրը և այժմ նստած է Քո աջ կողմը՝ որպես իմ Տեր և Փրկիչ: Այսօր ես ապաշխարում եմ, որ եղել եմ Քեզնից անկախ, և իմ կյանքը լիովին հանձնում եմ Հիսուսի իշխանությանը:*

*Հիսո՛ւս, ես դավանում եմ, որ Դու իմ Տերն ու Փրկիչն ես: Ե՛կ իմ կյանքի մեջ Քո Հոգով և դարձրու ինձ Աստծո զավակ: Ես ուրանում եմ խավարի գործերը, որոնց մի ժամանակ հարում էի, և այսօրվանից այլևս չեմ ապրի ինձ համար: Քո շնորհքով ես կապրեմ Քեզ համար, քանի որ Դու տվել ես Քո կյանքն ինձ համար, որ ես հավիտյան ապրեմ:*

*Շնորհակալություն, Տե՛ր: Այժմ իմ կյանքը լիովին Քո ձեռքերում է, և համաձայն Քո Խոսքի՝ ես երբեք չեմ ամաչի: Հիսուսի անունով, ամե՛ն»:*

Բարի գալո՛ւստ Աստծո ընտանիք: Ես խրախուսում եմ ձեզ պատմել այս հրաշալի լուրը որևէ հավատացյալի: Նույնպես կարևոր է, որ դուք միանաք որևէ տեղական եկեղեցու, որը հավատում է Աստվածաշնչին, և հաղորդակցվեք այլ մարդկանց հետ, որոնք կխրախուսեն ձեզ հավատքի մեջ: Դուք կարող եք կապ հաստատել մեր ծառայության հետ (այցելե՛ք MessengerInternational.org), և մենք կօգնենք ձեզ եկեղեցի գտնել այնտեղ, որտեղ ապրում եք:

Դուք հենց նոր սկսեցիք ամենաուշագրավ ճանապարհորդությունը: Մաղթում եմ ձեզ առատ հայտնություններ, շնորհք և ընկերություն Աստծո հետ ձեր ամենօրյա կյանքում:

# ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ

Ձեր ձեռքում գտնվող գիրքը թիմային աշխատանքի արդյունք է, և ես ցանկանում եմ հայտնել իմ երախտիքը մեր աշխատակիցներից մի քանիսին՝ նրանց ավանդի համար.

**Բրյուս Նիգրեն.** Շնորհակալություն քո խմբագրական փորձառության և վարպետության համար: Եվս մեկ անգամ դու վերցրիր իմ ձեռագիրը և, առանց կորցնելու իմ ձայնը, շատ ավելի ընթեռնելի դարձրիր այն: Եվ շնորհակալություն այն բարդ հարցերի համար, որոնք դու տալիս էիր, և որոնց շնորհիվ այս գիրքն ավելի ճշգրիտ ու ազդեցիկ դարձավ:

**Կորի Էմբերսոն, Լորա Վիլբուր և Լորեն Ջոնսոն.** Շնորհակալություն, որ ապահովեցիք այս ուղերձի ուղղագրական, կետադրական և ոճային ճշգրտությունն ու հետևողականությունը: Ես հիանում եմ ձեր պարգևով:

**Քրիս Փեյս.** Շնորհակալություն քո անվերջ խրախուսանքի համար՝ այս գրքի ձեռագիրը գլուխ առ գլուխ ընթերցելու ընթացքում: Շնորհակալություն, որ օգնեցիր ինձ կազմել 14-րդ գլուխը: Քո ներդրումն անգնահատելի է:

**Էդիսոն Բիվեր.** Շնորհակալություն քո խմբագրական հմտությունների և բարդ հարցերի համար, որոնք շատ ավելի հասանելի և ճշգրիտ դարձրին այս ուղերձը: Ամենից առավել շնորհակալություն հավատարիմ և խրախուսող որդի լինելու համար:

**Ալան Նիգրեն.** Շնորհակալություն այս գրքի էջերը և կազմը փայլուն կերպով ձևավորելու համար: Ես հիանում եմ քո պարգևով:

**«Մեսինջեր ինտերնեյշնլ»-ի թիմ.** Ձեզնից յուրաքանչյուրն աՀռելի աննկատ աշխատանք է կատարում՝ Աստծո թագավորությունը կառուցելու համար: Ես կցնծամ ձեզ հետ այն օրը, երբ տեսնենք, թե ինչպես է Հիսուսը վարձատրում ձեր անձնազոհ ծառայությունը:

**Աստծո Սուրբ Հոգի.** Իմ մեծագույն գոհությունն ուղղված է Քե՛զ: Այս ուղերձը երբեք չէր ստացվի՝ առանց Քո առաջնորդության և իմաստության: Ես անսահման շնորհակալ եմ Քեզ՝ իմ Տիրոջ և մեծագույն սիրո՝ Հիսուս Քրիստոսի շարունակական հայտնության համար: Ես խորապես սիրում եմ Քեզ, ինձ համար պատիվ է ծառայել Քեզ և համագործակցել Քեզ հետ:

# ՆՇՈՒՄՆԵՐ


1. Զոդհիաթես, Սփիրոս. «Բառերի ուսումնասիրության ամբողջական բառարան. Նոր կտակարան» (Չատանուգա, Տեննեսի, «AMG Publishers», 2000):

2. Արնդտ, Վիլյամ, Ֆրեդրիկ Վ. Դանկեր և Ուոլտեր Բաուեր. «Նոր կտակարանի և այլ վաղ քրիստոնեական գրականության հունարեն-անգլերեն բառարան» (Չիկագո. «University of Chicago Press», 2000):

3. Լուվ, Յոհաննես Պ., և Յուջին Ալբերտ Նայդա. «Նոր կտակարանի հունարեն-անգլերեն իմաստաբանական բառարան», (Նյու Յորք. «United Bible Societies», 1996):

4. Լուվ, Յոհաննես Պ., և Յուջին Ալբերտ Նայդա. «Նոր կտակարանի հունարեն-անգլերեն իմաստաբանական բառարան», (Նյու Յորք. «United Bible Societies», 1996):

5. Լուվ, Յոհաննես Պ., և Յուջին Ալբերտ Նայդա. «Նոր կտակարանի հունարեն-անգլերեն իմաստաբանական բառարան», (Նյու Յորք. «United Bible Societies», 1996) և Զոդհիաթես, Սփիրոս. «Բառերի ուսումնասիրության ամբողջական բառարան. Նոր կտակարան» (Չատանուգա, Տեննեսի, «AMG Publishers», 2000):

6. Զոդհիաթես, Սփիրոս. «Բառերի ուսումնասիրության ամբողջական բառարան. Նոր կտակարան» (Չատանուգա, Տեննեսի, «AMG Publishers», 2000):

7. Լուվ, Յոհաննես Պ., և Յուջին Ալբերտ Նայդա. «Նոր կտակարանի հունարեն-անգլերեն իմաստաբանական բառարան», (Նյու Յորք. «United Bible Societies», 1996):

8. Զոդհիաթես, Սփիրոս. «Բառերի ուսումնասիրության ամբողջական բառարան. Նոր կտակարան» (Չատանուգա, Տեննեսի, «AMG Publishers», 2000):

9. Լուվ, Յոհաննես Պ., և Յուջին Ալբերտ Նայդա. «Նոր կտակարանի հունարեն-անգլերեն իմաստաբանական բառարան», (Նյու Յորք. «United Bible Societies», 1996):

10. Լուվ, Յոհաննես Պ., և Յուջին Ալբերտ Նայդա. «Նոր կտակարանի հունարեն-անգլերեն իմաստաբանական բառարան», (Նյու Յորք. «United Bible Societies», 1996):

11. «Խանդավառություն» (Enthusiasm), Merriam-Webster.com, մուտքը՝ մարտի 18, 2020: https://www.merriam-webster.com/dictionary/enthusiasm:

12. «Ճեղքում» (Breakthrough), Dictionary.com, մուտքը՝ մայիսի 5, 2020: https:// www.dictionary.com/browse/breakthrough.

13. Բեյքեր, Ուորեն, և Յուջին Է. Կարպենտեր. «Բառերի ուսումնասիրության ամբողջական բառարան. Հին կտակարան» (Չատանուգա, Տենեսի, «AMG Publishers», 2003):

14. Զոդհիաթես, Սփիրոս. «Բառերի ուսումնասիրության ամբողջական բառարան. Նոր կտակարան» (Չատանուգա, Տենեսի, «AMG Publishers», 2000):

15. https://www.barna.com/research/digital-babylon/, մուտքը՝ հունվարի 10, 2020:

16. Զոդհիաթես, Սփիրոս. «Բառերի ուսումնասիրության ամբողջական բառարան. Նոր կտակարան» (Չատանուգա, Տենեսի, «AMG Publishers», 2000):

17. Լուվ, Յոհաննես Պ., և Յուջին Ալբերտ Նայդա. «Նոր կտակարանի հունարեն-անգլերեն իմաստաբանական բառարան», (Նյու Յորք. «United Bible Societies», 1996):

18. Մայլս Մոնրո. «Բացահայտի՛ր քո ներուժը», Ընդլայնված հրատարակություն, «Kindle» (Շիփենսբուրգ, Փենսիլվանիա, «Destiny Image», 2013), էջ 145:

19. Զոդհիաթես, Սփիրոս. «Բառերի ուսումնասիրության ամբողջական բառարան. Նոր կտակարան» (Չատանուգա, Տենեսի, «AMG Publishers», 2000):

20. Արնդտ, Վիլյամ, Ֆրեդրիկ Վ. Դանկեր և Ուոլտեր Բաուեր. «Նոր կտակարանի և այլ վաղ քրիստոնեական գրականության հունարենանգլերեն բառարան» (Չիկագո. «University of Chicago Press», 2000):

21. Անդերս, Էրիկսոն. «Ճանապարհ դեպի բարձունք. Գիտական խորհուրդներ պրոֆեսիոնալիզմի հասնելու մասին» (Նյու Յորք, «Houghton Mifflin Harcourt», 2016), էջ 22:

22. «Զարգանալ» (Cultivate) Dictionary.com, մուտքը՝ փետրվարի 2020: https:// www.dictionary.com/browse/cultivate:

23. Զոդհիաթես, Սփիրոս. «Բառերի ուսումնասիրության ամբողջական բառարան. Նոր կտակարան» (Չատանուգա, Տենեսի, «AMG Publishers», 2000):

24. Լուվ, Յոհաննես Պ., և Յուջին Ալբերտ Նայդա. «Նոր կտակարանի հունարեն-անգլերեն իմաստաբանական բառարան», (Նյու Յորք. «United Bible Societies», 1996):

# ՍՈՒՐԲ ՀՈԳԻ

*Դուք գիտեք Նրա մասին. բայց դուք ճանաչո՞ւմ եք Նրան*




Աշակերտները անցկացրին երեք տարի Հիսուսի հետ՝ քայլելով Նրա հետ և լսելով այն ամենը, ինչ Նա ցանկանում էր ասել: Սակայն Հիսուսն ասաց Իր ամենամոտ ընկերներին, որ պետք է թողներ նրանց, որպեսզի Սուրբ Հոգին գար, և որ դա ավելի լավ կլիներ նրանց համար (Հովհաննես 16.7,13,14): Եթե սա ճշմարիտ էր աշակերտների համար, որոնք ամեն օր Հիսուսի հետ էին, ապա որքա՜ն ավելի մենք կարիք ունենք, որ այսօր Սուրբ Հոգին գործուն մասնակցություն ունենա մեր կյանքերում:

Ցավոք, հաճախ Հոգին սխալ հասկացված է: Շատերը նույնիսկ գաղափար չունեն, թե ով է Նա և ինչպես է հայտնվում մեզ: Սուրբ Հոգուն հաճախ պատկերում են շատ տարօրինակ կերպով: Բայց Աստվածաշունչը պարզ ասում է, որ Հոգին ինչ-որ երևույթ չէ: Նա Անձ է, Ով խոստացել է երբեք չլքել ձեզ: Այս ինտերակտիվ գրքում Ջոն Բիվերը հրավիրում է անձամբ բացահայտել Եկեղեցում ամենից անտեսված և սխալ հասկացված Անձնավորությանը՝ Սուրբ Հոգուն:

Բաց մի՛ թողեք այս զարմանալի հնարավորությունը:

Հասանելի է MessengerX.com կայքում

# ԱՖԱԲԵԼ

*Պատուհան դեպի հավիտենություն.*
*աուդիո թատրոն*




Դուք հաճա՞խ եք մտածում հավիտենության մասին: Միգուցե դուք գիտեք, թե որտեղ եք անցկացնելու այն, բայց արդյո՞ք գիտեք, թե ինչպես:

Անչափ կարևոր է, որ հավատացյալներն ապրեն՝ մշտապես հիշելով հավիտենության մասին, սակայն հավիտենությունը դժվար է ընկալել: Այս առասպելական աուդիո թատրոնը՝ ըստ Ջոն Բիվերի «Հավիտենությամբ շարժվողները» գրքի, լույս է սփռում այն ամենի վրա, ինչ կատարվում է մեր երկրային իրականությունից այն կողմ:

Միացե՛ք փառահեղ Թագավոր Ջեյլոնին, խավարի տիրակալ Դագոնին, Բարեգործին, Անկախին և այլ հերոսներին՝ հետազոտելով զարմանալի Աֆաբել երկիրը և սարսափելի Լոն երկրի արտաքին սահմանները: Ձեր կյանքը կվերափոխվի, երբ այս հերոսները բացահայտեն, թե ինչ կա ձեր սրտում:

Հասանելի է MessengerX.com կայքում

# ՀԱՎԻՏԵՆՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԺՎՈՂՆԵՐԸ

*Կյանք, որը նշանակություն ունի այսօր և հավիտյան*




Կյանքն այս երկրի վրա ընդամենը գոլորշի է, սակայն շատերն այնպես են ապրում, ասես դրանից հետո ոչինչ չի լինելու: Բայց այն, թե ինչպես ենք ապրում այս կյանքը, կորոշի, թե ինչպես ենք անցկացնելու հավիտենությունը: Սուրբ գիրքը հայտնում է մեզ, որ կան վարձատրության տարբեր աստիճաններ հավատացյալների համար. ոմանց ձեռքբերումներն ամբողջովին կայրվեն դատաստանի ժամանակ, իսկ մյուսներին կշնորհվի Քրիստոսի հետ թագավորելու արտոնությունը:

Ջոն Բիվերը, համաձայն Բ Կորնթացիների 5.9-ի սկզբունքների, հիշեցնում է, որ բոլոր հավատացյալները կկանգնեն Քրիստոսի առջև, որպեսզի ընդունեն այն, ինչին արժանացել են իրենց կյանքի ընթացքում: Մեզնից շատերը ցնցված կլինեն՝ իմանալով, որ մեր ժամանակի մեծ մասը ծախսվել է այնպիսի բաների վրա, որոնք չեն արժանանալու հավիտենական վարձատրության:

Այդ դեպքում, ինչպե՞ս մենք կարող ենք արդյունավետ կյանք ունենալ: «Հավիտենությամբ շարժվողները» գիրքը կսովորեցնի բացահայտել ձեր կոչումը և բազմապատկել այն, ինչ Աստված տվել է ձեզ: Նայելով կյանքին հավիտենության տեսանկյունից՝ դուք զորություն կստանաք, որպեսզի գործեք մնայուն նպատակների համար:

Հասանելի է X MessengerX.com կայքում

# ԿՈՐԾԱՆԵԼ ԿՐԻՊՏՈՆԱՔԱՐԸ

*Կործանի՛ր այն, ինչ խլում է քո ուժը*




Ինչպես Սուպերհերոսը, որը կարող է ցատկել ամեն արգելքի վրայով և հաղթել բոլոր թշնամիներին, Քրիստոսի հետևորդները նույնպես կյանքի դժվարությունները հաղթահարելու գերբնական կարողություն ունեն: Այնուամենայնիվ, և՛ Սուպերհերոսը, և՛ մենք մի խնդիր ունենք. գոյություն ունի կրիպտոնաքար, որը խլում է մեր ուժերը:

Իհարկե, Սուպերհերոսը և կրիպտոնաքարը հորինված են: Բայց հոգևոր կրիպտոնաքարը՝ ոչ:

Այս գիրքը պատասխանում է այն հարցին, թե ինչու են մեզնից շատերն անկարող վերապրել այն աստվածային զորությունը, որն ակնհայտորեն դրսևորվում էր առաջին դարի քրիստոնյաների կյանքում:

«Կործանել կրիպտոնաքարը» գրքում Ջոն Բիվերը ցույց է տալիս, թե ինչ է կրիպտոնաքարը, ինչու է այն խլում մարդկանց ուժերը մեր եկեղեցիներում, և ինչպես ազատվել դրա կապանքներից:

«Կործանել կրիպտոնաքարը» գիրքը հոգևոր թմրեցուցիչ չէ և նախատեսված չէ թուլասիրտների համար: Այս լուրջ ճշմարտությունը նախատեսված է Քրիստոսի այն հետևորդների համար, որոնք ցանկանում են անցնել անձի վերափոխման դժվարին, բայց պտղաբեր ընթացքը:

Հասանելի է X MessengerX.com կայքում

# ԱՍՏՎԱ՛Ծ, ՈՐՏԵ՞Ղ ԵՍ

*Գտի՛ր զորություն և նպատակ քո անապատում*




Միգուցե անցյալում Աստված խոսում էր ձեզ հետ, բայց այժմ Նա լռում է: Միգուցե անցյալում դուք առաջ էիք շարժվում հավատքի մեջ, բայց այժմ չեք գտնում Նրա ներկայությունը: Բարի գալո՛ւստ անապատ՝ այն վայրը, որը գտնվում է Աստծուց խոստում ստանալու և դրա իրականացման միջև:

Այնուամենայնիվ, կա մի բարի լուր. անապատը պարզապես ամայի և աննպատակ վայր չէ: Աստված օգտագործում է անապատը, որպեսզի պատրաստի և սպառազինի ձեզ ձեր կոչման համար՝ այն դեպքում, եթե ճիշտ անցնեք այն: Հակառակ ընդունված կարծիքին, դուք չեք անցնում ձեր կյանքի այս փուլը՝ պարզապես սպասելով Աստծուն: Դուք պետք է կատարեք ձեր բաժին աշխատանքը, որպեսզի անցնեք այն, և ձեր աշխատանքը շատ մեծ է: Եթե դուք չեք ցանկանում ժամանակ վատնել՝ շարունակ նույն տեղում դոփելով, կարևոր է իմանալ, թե ինչ է անապատը:

Այս բացահայտումներով լի գրքում հանրաճանաչ հեղինակ Ջոն Բիվերը կրթում է ձեզ՝ օգտագործելով կարևոր աստվածաշնչյան հայտնություններ և խորիմաստ պատմություններ, որոնք կօգնեն ձեզ անցնել ձեր կյանքի ամայի և դժվարին փուլերը և ստանալ այն ամենը, ինչ Աստված պատրաստել է ձեզ համար:

Հասանելի է X MessengerX.com կայքում

# ԲԱՐԻ՞, ԹԵ՞ ԱՍՏՎԱԾ

*Ինչո՞ւ բարին առանց Աստծո բավական չէ*




Եթե ինչ-որ բան բարի է, դա պետք է որ Աստծուց լինի, այնպես չէ՞

Մեր օրերում «բարի» և «Աստված» բառերը կարծես հոմանիշներ են դարձել: Մենք հավատում ենք, որ այն, ինչն ընդհանուր առմամբ բարի է համարվում, պետք է որ համապատասխանի Աստծո կամքին: Առատաձեռնությունը, խոնարհությունը և արդարությունը բարի են: Եսասիրությունը, ամբարտավանությունը և դաժանությունը չար են: Թվում է՝ այս տարբերակումը շատ հասարակ է:

Բայց մի՞թե ամեն ինչ այդքան պարզ է: Եթե բարին այդ աստիճան ակնհայտ է, ինչո՞ւ է Աստվածաշունչն ասում, որ մեզ զանազանություն է հարկավոր՝ այն ճանաչելու համար:

*«Բարի՞, թե՞ Աստված»* գիրքը հերթական ուղերձը չէ՝ խնդիրներն անձամբ լուծելու մասին: Այս գիրքը պարզապես չի առաջարկի փոխել ձեր վարքը, այլ՝ կանի ավելին. այն կտա ձեզ կարողություն՝ հաղորդակցվելու Աստծո հետ այնպիսի մակարդակի վրա, որը կփոխի ձեր կյանքի ամեն մի բնագավառը:

Հասանելի է MessengerX.com կայքում

# MessengerX

*Աշակերտական ընթացք յուրաքանչյուրի համար, ամենուր*




- **Անվճար ավելի քան 110 լեզուներով**
- Հասանելի որպես հավելված և առցանց
- Նյութեր՝ նախատեսված ձեր աճի համար
- Հետևե՛ք ձեր դիտումներին և աշակերտական ուղուն




Ստացե՛ք «Messenger»-ի աշակերտական նյութերի ամբողջական դարանը՝ էլեկտրոնային գրքեր, աուդիո գրքեր, կարճամետրաժ ֆիլմեր, վիդեո ուսուցումներ, Աստվածաշնչեր և ավելին. դիտե՛ք, կարդացե՛ք և լսե՛ք ձեր բոլոր սարքերով:




## MessengerX.com

Download on the App Store

GET IT ON Google Play

Հասանելի է աշխարհով մեկ «App Store»-ում և «Google Play»-ում

# ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒՄ

## ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ

Այս գիրքը, որը ձեր ձեռքում է, Ջոն Բիվերի *«Բազմապատկում»* ուսումնական դասընթացի մի մասն է: Կարդալով գիրքը և օգտագործելով օժանդակ ուսումնական նյութերը, որոնք կարող եք գտնել գրքին կից DVD սկավառակում կամ ներբեռնել MessengerX.com կայքից՝ դուք ամբողջովին կուսումնասիրեք այս դինամիկ և կյանք փոխող դասընթացը: Շնորհիվ այս դասընթացի՝ ձեր քրիստոնեական ընթացքը կզորանա, և դուք կկարողանաք ավելին անել Աստծո համար:

*«Բազմապատկում»* Ուսումնական դասընթացը բաղկացած է հետևյալ մասերից, որոնք կարող եք բեռնել ձեր անձնական սարքերի վրա.

- *«Բազմապատկում»* գիրք
  Այս դասընթացի միակ տպագրված մասը: Գիրքը նույնպես առկա է DVD սկավառակում՝ էլեկտրոնային ձևաչափով:

- *«Բազմապատկում»* DVD սկավառակ
  Կից սկավառակը պարունակում է այս դասընթացի բոլոր նյութերը՝ թվային ձևաչափերով: Դուք չեք կարող նվագարկել այս DVD սկավառակը ձեր տնային DVD նվագարկիչով: Այնուամենայնիվ, բոլոր ֆայլերը կարելի է բեռնել ձեր պլանշետի, համակարգչի և սմարթֆոնների մեջ:

- *«Բազմապատկում»* աուդիո գիրք
  «*Բազմապատկում*» գրքի բոլոր բաժինները՝ ընթերցված հայերենով, MP3 ձևաչափով:

- *«Բազմապատկում»* վիդեո դասեր
  Բոլոր 12 վիդեո դասերը՝ MP4 ձևաչափով:

- Այս DVD սկավառակը նույնպես պարունակում է այլ գրքեր և նյութեր, ներառյալ *«Աստվա՛ծ, որտե՞ղ ես»* և *«Հավիտենությամբ շարժվողները»* էլեկտրոնային գրքերը:

Դուք կարող եք անվճար ներբեռնել տարատեսակ ուսումնական նյութեր, էլեկտրոնային գրքեր և Աստվածաշնչեր

MessengerX.com կայքում

# ԱՅՍ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԲՈԼՈՐ ՆՅՈՒԹԵՐԸ ՆՎԵՐ ԵՆ ՁԵԶ ՀԱՄԱՐ




Ազատորեն կրկնօրինակե՛ք այս DVD սկավառակը, պատճենե՛ք դրանում առկա նյութերը, ուղարկե՛ք դրանք ձեր ընկերներին էլեկտրոնային փոստով, պատճենե՛ք տեքստը և տեղադրե՛ք «Word» ֆայլերի մեջ, տրամադրե՛ք այս ուսմունքները ձեր եկեղեցուն, վերբեռնե՛ք դրանք ինտերնետային կայքերի մեջ, որպեսզի այլ մարդիկ կարողանան օգտվել: Տարածե՛ք այս նյութերն այնտեղ, որտեղ մարդիկ քաղց ունեն Աստծո Խոսքի ողջամիտ ուսմունքների հանդեպ և ցանկանում են ապրել զորացված քրիստոնեական կյանքով:
Հավելյալ տեղեկություն «Բազմապատկում» հավաքածուի նյութերի մասին.



Դուք չեք կարող նվագարկել այս DVD սկավառակի նյութերը սովորական վիդեո նվագարկիչով: Քանի որ DVD սկավառակը պարունակում է տարատեսակ նյութեր, օրինակ՝ վիդեո, աուդիո և տեքստային ֆայլեր, դրանք կարելի է նվագարկել և դիտել միայն համակարգչի կամ այլ թվային սարքի միջոցով:

Դուք կարող եք բեռնել և նվագարկել MP4 ձևաչափի վիդեո ֆայլերը ձեր պլանշետի կամ համակարգչի մեջ:

Դուք կարող եք բեռնել MP3 ձևաչափի ֆայլերը ձեր աուդիո նվագարկչի, սմարթֆոնի կամ համակարգչի մեջ:

Դուք կարող եք բեռնել էլեկտրոնային գրքերը ձեր սմարթֆոնի, պլանշետի կամ համակարգչի մեջ՝ հեշտորեն կարդալու, տպելու կամ կրկնօրինակելու համար: Դուք կարող եք պատճենել նաև հատվածներ տեքստից և տեղադրել ձեր անձնական ֆայլերի մեջ:

Հավելյալ ուսումնական նյութեր բազմաթիվ լեզուներով հասանելի են

MessengerX.com կայքում և MessengerX հավելվածում




Դուք կարող եք դիտել և ներբեռնել այս դասընթացը, ինչպես նաև Ջոն և Լիզա Բիվերների բազմաթիվ այլ ուսմունքներ, «Մեսինջեր ինտերնեյշնլ» ծառայության անվճար շարժական հավելվածի և ինտերնետային կայքի միջոցով:

MessengerX.com

Download on the App Store

GET IT ON Google Play

Ամենօրյա աշակերտություն յուրաքանչյուրի համար, ամենուր:
Լիովին անվճար ավելի քան 110 լեզուներով:
Դարձրե՛ք հոգևոր աճը ձեր առօրյայի մասը:

**«ԵԿԵՔ ՉՊԱՀԵՆՔ ՈՉԻՆՉ ԵՎ ՄԱՀԱՆԱՆՔ ԴԱՏԱՐԿ՝ ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՎ ՄԵԶ ԱՍՏԾՈՒՆ... ՀԵՆՑ ԱՅՍ ԴԵՊՔՈՒՄ ՄԵՆՔ ՃՇՄԱՐՏԱՊԵՍ ԿԿԵՆԴԱՆԱՆԱՆՔ ԵՎ ԼԻԱՐԺԵՔ ԿՃԱՇԱԿԵՆՔ ԿՅԱՆՔԸ»:**

**- ՋՈՆ ԲԻՎԵՐ**

Երբևէ զգացե՞լ եք ձեզ որպես դիտորդ Աստծո Թագավորության մեջ: Միգուցե գիտեք, որ կա ինչ-որ բան, ինչը դուք պետք է անեք, բայց չեք կարողանում վերջնականորեն որոշել, թե ինչ է դա: Մեզնից շատերը ցանկանում են մեծ ազդեցություն թողնել, բայց միգուցե ձեր ներսում կան չպատասխանված հարցեր, օրինակ՝

- Ինչպե՞ս համոզված լինեմ, որ բաց չեմ թողնում Աստծո կամքն իմ կյանքում:
- Ի՞նչ դեր են կատարում իմ եզակի պարգևները Աստծո թագավորությունը կառուցելու մեջ:
- Ինչպե՞ս վստահ լինեմ, որ օգտագործում եմ Աստծուց ինձ տրված ներուժը:
- Իմ կոչումը պակա՞ս կարևոր է, եթե ես «ծառայության» մեջ չեմ:
- Ինչպե՞ս հավասարակշռություն պահպանել Աստծո շնորհքի մեջ հանգստանալու և Նրա Թագավորության համար գործելու միջև:
- Ինչպե՞ս վանել վախը և առաջ գնալ՝ նույնիսկ անորոշության և վտանգի դեպքում:

Այս խորիմաստ գրքում հանրաճանաչ հեղինակ Ջոն Բիվերը հիմնվում է Սուրբ գրքի մանրակրկիտ ուսումնասիրության վրա և օգտագործում է ազդեցիկ պատմություններ, որպեսզի օգնի ձեզ այլ կերպ մտածել ձեր կոչման մասին և հասկանալ, թե ինչու է այն կարևոր Աստծո համար: Ընթերցելով այս գրքի էջերը՝ դուք կսովորեք, թե ինչպես բազմապատկել Աստծուց ձեզ տրված պարգևները և օգտագործել ձեր ներուժը:

Եթե դուք պատրաստ եք փոխարինել անգործությունը ավելի մեծ նպատակով, սա ձեր ընթացքի սկիզբն է:

**Ընդգրկում է «*Բազմապատկում*» DVD հավաքածուն**





**ՋՈՆ ԲԻՎԵՐԸ** միջազգային ճանաչում ունեցող քարոզիչ և հանրաճանաչ հեղինակ է, ով համարձակ և առանց փոխզիջման քարոզում է Աստծո Խոսքը: Ջոնը և նրա կինը՝ Լիզան, հիմնադրել են «Մեսինջեր Ինտերնեյշնլ» ծառայությունը, որի նպատակն է՝ պատրաստել Քրիստոսի հետևորդներին, որոնք փոխզիջման չեն գնում և վերափոխում են այս աշխարհը: Երբ Ջոնը տանն է՝ Կոլորադոյում, նա սեղանի քարտային խաղեր է խաղում չորս որդիների հետ կամ փորձում է համոզել Լիզային գոլֆ խաղալ իր հետ:

Անվճար ներբեռնումների և տեսանյութեր դիտելու համար այցելե՛ք **MessengerX.com** կայքը:

MessengerX

MESSENGER INTERNATIONAL
MessengerInternational.org

Այս գիրքը նվեր է Հեղինակից
և ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ

Ցանկանում եք ավելի՞ն:
Տեսածրե՛ք պատկերակը: